

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՊԱՅՄԱՆԱՐԱՆԱԿԱՆ  
ՈՐՄԱՒԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՐԱՆՏ ԱՐԱՎԱՅՄՅԱՆ

ԱՐՑԱՆԱՎԱՅՑՈՒԹՅԱՆ  
ՀԱՅՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿՅԱՆ-ՔՅԵՎ ԱՐՑԱՆՈՒԹԵՄԸ

(1901 - 1933)



Յ. ԷՏՅՈՒՅՈՒՆ - 2009

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա  
Պատմության ինստիտուտ

## **ՀՐԱՆՏ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ**

# **ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ (1901-1933)**

ԵՐԵՎԱՆ-2008

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա  
Պատմության ինստիտուտ

*Տպգրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝ Է.Լ.Դանիելյան, պատմագիտության դոկտոր

Հ. Աբրահամյանի այս աշխատությունը նվիրված է ժամանակակից հնչեղություն ունեցող մի թեմայի, որը հայ պատմագրության մեջ քննարկվում է առաջին անգամ: Արխիվային հարուստ նյութերի և հրատարակված գրականության հիման վրա շարադրված են 1901-1933 թվականներին Արցախում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադարձությունները և այդ ժամանակաշրջանում Արցախի թեմի ձեռնարկումները:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ Հայքի թագավորության 10-րդ նահանգ Արցախի սահմանները արևմուտքում հասնում էին մինչև Սևանա լճի արևելյան ափը, արևելքում ներառում էին Մուխանք (այժմ՝ Մուղան) դաշտի մի զգալի մասը՝ հասնելով Կուր գետին, հարավից Արցախը սահման ուներ Երասխ (Արաքս) գետը, հյուսիսից՝ Արցախյան (այժմ՝ Ղարաբաղյան) լեռնաշղթան:

Հետագայում՝ 1920-ական թվականների սկզբներին, Ադրբեջանի խորհրդային իշխանության քաղաքականության հետևանքով և Մոսկվայի աջակցությամբ, Արցախի տարածքից անջատվեց նրա հյուսիսային շրջանը՝ Դաշտային Ղարաբաղը: 1990-ական թվականներին այն լրիվ հայաթափվեց: Նույն ճակատագրին արժանացան նաև Հայաստանի հետ մեկ միասնություն կազմած Ուտիքը և Գանձակը (Կիրովաբադ)<sup>1</sup>:

Արցախահայությունը դարեր շարունակ հերոսաբար մարտնչել է օտար նվաճողներից իր հայրենիքը, հավատքը, ավանդույթը, ազգային մշակույթը պաշտպանելու համար: Գրիգոր Լուսավորիչն էր Արցախ աշխարհում առաջինը քրիստոնեությունը տարածողը:

XX դարի սկզբին Արցախ-Ղարաբաղը ցարական Ռուսաստանի ծայրամասային մի տարածք էր, որտեղ կյանքն առաջ էր գնում կայսերապետության օրենքներով և պահանջներով: Ջրկված լինելով պետականությունից՝ այստեղ հասարակական-քաղաքական կյանքին տոն տվողը եկեղեցին էր: 1836 թ. մարտի 11-ին Բարձրագույն իշխանությունը հաստատել էր հայ-լուսավորչական եկեղեցու կառավարման վերաբերյալ օրենքները («Պոլոժենիե»), որի համաձայն՝ Ռուսաստանում բնակվող հայությունը բաժանվում էր վեց հոգևոր թեմերի, որոնցից մեկն էլ Ղարաբաղի կամ Արցախի թեմն էր: Թեմի առաջնորդի նստավայր ճանաչվեց Շուշին, որտեղ և հաստատվեց թեմական ատյանը՝ կոնսիստորիան: 1840 թ. տվյալներով, Ղարաբաղի թեմի մեջ ընդգրկվել էին Շուշի, Նուխի և Լենքորան քաղաքներն ու 156 գյուղ, որոնք բոլորը միասին ունեին 7167 հայ ընտանիք<sup>2</sup>:

Ղարաբաղի թեմի առաջին թեմակալն էր Բաղդասար Մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը: Թե՛ նրա և թե՛ հաջորդների օրոք արցախահայությունն ապավինել էր եկեղեցուն, որը, անկասկած, շատ

<sup>1</sup> Բարխուդարյան Մ., Արցախ, Ե., 1996, էջ 1, Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 9:

<sup>2</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 97:

ժամանակներ «ինչ-որ չափով փոխարինել է պետականությանը»<sup>3</sup>: Եվ պատահական չէ, որ օտար իշխանությունները հայ եկեղեցու առաջնորդին «դարեր շարունակ ճանաչել են իբրև ազգի ղեկավար և նրա հետ են գործ ունեցել»<sup>4</sup>:

Արցախի թեմի դերը առանձնապես մեծ է եղել XX դարի առաջին տասնամյակներին, երբ տեղի էին ունենում ազգամիջյան բախումներ: Արցախահայությունը, պայքար մղելով ցարական բռնատիրության, ապա՝ թուրք-թաթարների բարբարոսությունների դեմ, միշտ էլ ձգտել է միավորվել Մայր Հայաստանին: Հայության այդ քայլերին հիմնականում նպաստում էր հայ եկեղեցին, որը հետո խորհրդային իշխանությունների կողմից ենթարկվեց տարատեսակ ճնշումների: Փակվեցին հարյուրավոր եկեղեցիներ և շատ հոգևորականներ ենթարկվեցին հալածանքների:

Սույն աշխատանքը նախաձեռնելով՝ մեր առաջ խնդիր ենք դրել ցույց տալ XX դարի առաջին տասնամյակներին արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած մի շարք բարդություններ և դրանց լուծման հարցում Արցախի թեմի ունեցած կարևոր դերը:

---

<sup>3</sup> Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, Ե., 2003, էջ 729:

<sup>4</sup> Նույնը, էջ 732:

## 1. ԱՐՑԱԽՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (1901-1904 ԹԹ.)

Արցախ-Ղարաբաղը սակավահող երկրամաս է, որով Ռուսաստանում զբաղեցնում էր վերջին տեղերից մեկը: Ահա այդ պայմաններում արցախահայությունը ստիպված էր ամենածանր պարտավորություններով դիմել հողի վարձակալության: Գյուղացու կողմից վճարվող հարկը՝ բահրան, կազմում էր բերքի մեկ տասներորդ մասը և գանձվում էր հացահատիկով կամ դրամով: Բեկերը և կալվածատերերը պարբերաբար բարձրացնում էին բահրան և հասցնում բերքի մեկ երրորդին, հաճախ էլ նույնիսկ կեսին: Երկրամասի սակավահողությունը գյուղացիներին ստիպում էր շատ դեպքում համաձայնվել նման ծանր պայմանների հետ: Արցախում գյուղացին շարունակում էր վճարել նաև այնպիսի հարկեր, որոնց մասին վաղուց էին մոռացել, ինչպես օրինակ՝ գլխահարկ, ծխահարկ, օջախի հարկ, անասունների հարկ և այլն:

Դաժան ճնշման էին ենթարկվում նաև պետական հողերի վրա ապրող գյուղացիները, որոնք նույնպես գոյատևում էին կիսաքաղց կյանքով: Նման ծանր պայմաններում, անկասկած, քայքայվում էին գյուղական տնտեսությունները, և գյուղացիները ստիպված էին հեռանալ տարբեր ուղղություններով:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, այնուամենայնիվ, Արցախ-Ղարաբաղում նկատվում էր կյանքի որոշ աշխուժացում: Այստեղ առաջին արդյունաբերական ձեռնարկությունը՝ մետաքսագործական ֆաբրիկան, կառուցվել էր դեռևս 1865 թվականին: Արդեն Առաջին աշխարհամարտից առաջ Արցախում կենտրոնացված էր Անդրկովկասի մետաքսաարդյունաբերության բոլոր ձեռնարկությունների 35 տոկոսը: Այստեղ գործում էին 46 մետաքսագործական կիսատնայնագործական բնույթի ֆաբրիկաներ, որոնցում աշխատում էր մոտ 3500 մարդ: Արցախի ֆաբրիկաները տարեկան արտադրում էին 120 տոննա մետաքսաթել և 22 տոննա ոլորաթել: Երկրամասում արտադրվում էին մետաղ, ջրաղացքարեր, գինի, սպիրտ-օղի և այլն:

Կապիտալիստական արտադրության մուտքը նկատելիորեն քայքայում էր երկրամասի բնատնտեսությունը: Արցախը ևս աստիճանաբար ներքաշվեց ապրանքային արտադրության ոլորտ: Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման ազդեցության տակ, ինչպես հայտնի է, գյուղում տեղի էր ունենում գյուղացիության շերտավորում, որի հետևանքով ձևավորվում են չքավորությունը և կուլակը: Վերջինս իրենից ներկայացնում էր գյուղական բուրժուազիան:

Ասեմք նաև, որ XIX դարի վերջերին գյուղացիներից խլված հողատարածքներում և արքունական հողերում հիմնվում էին ռուս գյուղացիներով բնակեցված գյուղեր<sup>1</sup>, որոնք, անկասկած, բացասական հետք էին թողնում արցախահայության կյանքի վրա:

Լեռնային Ղարաբաղում հետզհետե ընդլայնվում էր վաշխառությունը, որոնցից վերցված դրամական պարտքերը էլ ավելի էին խորացնում նրանց փաստական ստրկությունը:

Ամեն կողմից հալածված գյուղացիները ստիպված դիմում էին արտագնացության (պանդխտության): Նրանք հիմնականում զնում էին արդյունաբերական կենտրոններ՝ ապրելու միջոցներ հայթայթելու համար: Այդ տեսակետից Արցախի վրա իր ազդեցությունն ունեցավ բանվորական Բաքուն, որը կլանում էր հազարավոր արցախցիների:

Արցախ-Ղարաբաղի գյուղացիությունը, ինչպես կայսերապետության մյուս շրջանների գյուղացիները, տառապում էին ազգային-գաղութային ճնշումից: Տեղական մարմինները գործերը վարում էին ռուսերենով, որը անհասկանալի էր բնակչության մեծամասնության համար: Ցարիզնը դաժանորեն հալածում էր ազգային մշակույթը, ազգային լեզուն, արգելակում ազգային մտավորականության կազմավորումը: Դրա ապացույցն է այն, որ XIX դարի 80-90-ական թթ.-ին բազմիցս փակվեցին հայկական դպրոցները կամ էլ ռուսականացվեցին:

Արցախահայության արդյունաբերական և մշակութային կենտրոնը Շուշին էր, որը XIX դարի վերջին Անդրկովկասում բնակչությամբ երրորդն էր՝ Բաքվից և Թիֆլիսից հետո: Որպես պաշտպանական ամրոց՝ այն հիմնադրվել է վաղ միջնադարում: Ըստ աշխարհագրի՝ 1886 թ. Շուշին ունեցել է 5779 ծուխ, խաներ, մելիքներ, աղալարներ՝ 478, հոգևորականներ՝ 116, հարկատու՝ 5185: Բնակիչների ընդհանուր թիվը հասնում էր 26806-ի, որից հայ լուսավորչական 15160, թուրքեր՝ 11595: Քաղաքի արևելյան մասում ապրում էին թուրք-թաթարները, արևմտյանում հայերը: Շուշին բաժանված էր 35 թաղերի, որոնցից 18-ը՝ հայկական, 17-ը՝ թաթարական<sup>2</sup>: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Շուշիում գործում էին հայոց թեմական, ռեալական, քաղաքային ռուս-մուսուլմանական ուսումնարաններ, Մարիամ-Ղուկասյան օրիորդաց

<sup>1</sup> Այդ գյուղերն էին՝ Ալեքսեևկա, Կոտլյարովկա, Նիկոլանկա, Կուրոպատկինո, Սկոբլևկա, Լըսագորսկի, Սունժենսկոյե և Սունժենսկի խուտոր:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այնուհետև՝ ՀԱԱ), ֆ. 319, ց. 1, գ. 1, ք. 52, Հայկական մասի թաղերն էին 1. Մելիքենց թաղ, 2. Քամու աղացի թաղ, 3. Գանձակեցոց թաղ, 4. Կազարմաների թաղ, 5. Վերին թաղ, 6. Փոշտին թաղ, 7. Վանքին թաղ, 8. Աղբյուրի թաղ, 9. Ներքին թաղ, 10. Աղաբեկենց հորին թաղ, 11. Ագուլեցոց թաղ, 12. Ղազանչեցոց թաղ, 13. Մեղրեցոց թաղ, 14. Գիավոր դալին թաղ, 15. Հին հանգատարանի թաղ, 16. Դաբաղների ձոր, 17. Բաղունց հորերի թաղ, 18. Դինջին թաղ: Շոշիի հայերը մեծ մասամբ եկել էին

գիմնագիան, Նիկիտա Ղանդամիրյանի թատրոնը, տպարան, հայ բարեգործական ընկերության գրադարանը, հիվանդանոց: 1897 թ. մարդահամարի տվյալներով, Շուշիում բնակվում էր 34118 մարդ, որի ճշտող մեծամասնությունը հայեր էին:

Արցախում առաջինը քաղաքական գործունեություն ծավալեց Հայ հեղափոխական դաշնակցությունը: 1902 թ. սկզբին կազմակերպվեց սոցիալ-դեմոկրատական խումբ, որի անդամների մեծամասնությունը կազմում էին Շուշիի ուսումնարաններում սովորող երիտասարդներ: Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ «տոգորված վառ ցնորքներով, լի եռանդով, պատրաստ ամեն գոհաբերության» Շուշիի «հեղափոխական» երիտասարդությունը հղի էր «հանդուգն ծրագրերով»: Նա նշում է, որ «Սոցիալական ընդհանուր շաղախից ծնված, «ուխտի» ընդհանուր ավագանուն մկրտված, խանդավառ այդ պատանիների շրջանում էին Մենակը, Իսաջանը, Թորգոմը, Իշխանը, Արամը, Կոստյան, Շիրինյանը, Արաբին, Լետան, Սնարյանը և վերջապես՝ Ծատուրը»<sup>3</sup>: Հեղինակը վկայում է, որ հենց նրանք էին խմբագրում ձեռագիր թերթը՝ «Կոկոն»-ը, որի անունով էլ մկրտվեց նրանց ստեղծած խմբակը: Այն գոյություն ունեցավ հինգ տարի և եական դեր խաղաց մանավանդ Շուշիում հեղափոխական և ազատագրական գաղափարների տարածման գործում<sup>4</sup>:

XX դարի սկզբներին Արցախ-Ղարաբաղում գործում էին մի խումբ գործիչներ, որոնք հետագայում դարձան երևելի հեղինակություններ: Նրանցից էին Բոգդան Կնունյանցը, Լյուդվիգ Ստաբրովսկին, Սլավա Կասպարովը, Փառանձեն Կնունյանցը և ուրիշներ:

XIX դարի վերջին տասնամյակներում հայ ժողովրդի դեմ սկսված

---

Նախիջևանից, Ագուլիսից, Ղազանչից, Մեղրից, Վարանդայից, Դիզակից, Խաչենից և այլ տեղերից: Շուշիում հայերն ունեին 4 եկեղեցի և 1 կուսանոց՝ 1. Ագուլեցոց (Նախիջևանցոց), 2. Ղազանչեցոց, 3. Մեղրեցոց, 4. Վերին թաղի եկեղեցի և 5. Հոփսիսմեի: Հայոց թաղամասում նաև կային 1 հոգևոր դպրոցանոց-սեմինարիա, 1 Սարիանյան օրհորդաց ուսումնարան, 1 թատրոն:

Թուրքական թաղամասերն էին՝ 1. Քեօչարլու, 2. Սաաթլու, 3. Սամայի, 4. Խոջա ավրջանլու, 5. Սարագլու, 6. Վերին Դամիրչիլու, 7. Համամի ասաջ, 8. Նոր թաղ, 9. Ջուրթլար, 10. Սեյրիլու, 11. Ջուլֆա, 12. Գույլուղ, 13. Ներքին Դամուրչիլար, 14. Չուխուր մանլու, 15. Դիորտու ջուրտի, 16. Հաջի խսուփլու և 17. Չեօլգալու: Շուշիի թուրքերը մեծամասամբ գաղթել էին Թավրիզից, Ջուլֆայից և Շիրվանից: Յուրաքանչյուր թաղ ուներ թաղական մեջիդ: Թուրքերն ունեին երկու մեծ մեջիդ՝ Ջամի՝ վերին և ներքին: Թաղերն իրարից բաժանվում էին մեկ-մեկ չինարի ծառերով և երկար ծողի փայտով: Թուրքերի թաղամասում կային 6 կամուրջ, 8 քարվանսարա և 10 բաղնիք: Թուրքաց հրապարակի մոտ գտնվում էր ռուսաց եկեղեցին, որի մոտ էին գտնվում արքայական գանձարանը, հաշտարար դատարանը և բանտը (մույն տեղում):

<sup>3</sup> Հովհաննիսյան Ա., Հուշեր և բնութագրումներ, Ե., 1969, էջ 68, 69:

<sup>4</sup> Նույնը, թ. 69:

ցարական ինքնակալության ճնշիչ և հայաստանի քաղաքականությունը XX դարի սկզբներին նոր թափ էր առել: Ամեն տեղ լցվել էին ցարական լրտեսներով, որոնք վերև էին հասցնում բոլոր այն արարքները, որոնց մեջ ցարիզմը տեսնում էր հակակառավարական միտում: Էջմիածնի Սինոդի դատախազը, որը կառավարության լրտեսն էր, 1910 թ. դատական քննիչին տված ցուցմունքում նշել է, որ լայնորեն իրագել էր հայ հոգևորականության բարոյական և քաղաքական անձանց մասին, որոնք առնչություն ունեին եկեղեցու կառավարման և կրթական հաստատությունների հետ<sup>5</sup>:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ի 1897 թ. ապրիլի 24-ի կոնդակով հետ է կանչվում Արցախի թեմի կառավարիչ Անանիա Եպիսկոպոս Համազասպյանը: Որոշ ժամանակ Ղարաբաղի թեմը մնացել էր առանց թեմական առաջնորդի: Ի վերջո, 1900 թ. Արցախի թեմի առաջնորդ է նշանակվում Գրիգոր Եպիսկոպոս Գառնակերյանը: Նա համաձայնվում է թեմական հոգևոր դպրոցի տեսուչ նշանակել Բենիկ վարդապետին, որն այդ ժամանակ ազատ ունկնդիր էր Օդեսայի համալսարանում: Նա Շուշի է ժամանում 1900 թ. օգոստոսին և անցնում պաշտոնավարության: Բենիկ վարդապետը, ըստ ժամանակակիցների վկայության, նախորդ տեսուչ Տիրայրի գործի շարունակողն էր և ուներ ավելի մեծ իրավունքներ: Նրա տեսչության օրոք թեմականի դասարանների թիվը հասել էր 14-ի, աշակերտներինը՝ 588-ի, ուսուցիչներինը՝ 19-ի: Ղարաբաղի թեմի դպրոցների պատմության մեջ առաջին անգամ Բենիկ վարդապետի օրոք ուսուցչին (Ուսպեյան) նշանակվել է թոշակ<sup>6</sup>:

Բենիկ վարդապետը թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոսի և նորընտիր հոգաբարձուների հետ ձգտում էր աշխատել համերաշխ<sup>7</sup>: Նա դպրոցը շրջապատել էր «այնպիսի պատուարներով», որոնք արգելում էին «ժամանակի ոգու մոտքը»: Ժամանակակիցները վկայում են, որ Բենիկ վարդապետը արհամարհում էր ուսուցիչներին և որոշում կարգ

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 4, էջ 2659-2660:

<sup>6</sup> Լեռ, նշվ. աշխ., էջ 560, Բենիկ վարդապետ, Տեղեկագիր 1900/1901 ուսումնական տարվա, կարդացած 1901 թ. հունիսի 10-ին տարեկան հանդեսի ժամանակ, Թիֆլիզ, 1901, էջ 6-11:

<sup>7</sup> Ղեռնա 1900 թ. հուլիսին Բաքվից Շուշի էր ուղարկվել Արսեն վարդապետ Ղևոնյանը: Այդ ժամանակ, Սուլթանյան վարդապետից հետո, Ղարաբաղի թեմը առաջնորդ կամ կառավարիչ չի ունեցել: Արսեն վարդապետն անցկացրել էր հոգաբարձուների ընտրություն, որը հաստատվել էր հուլիսի 24-ի կոնդակով: Հոգաբարձուներ էին ընտրվել Բախշի բեկ-Ասրիբեկյանը, Ջավադ բեկ-Իշխանյանը, Աղաջան ժամհարյանը, Դավիթ Ներսիսյանը, Իվան Ջուրաբյանը և Սահակ Դաղևոսյանը, անձնափոխանորդներ են ընտրվել Խաչատուր Խաչատրյանը, Մովսես Յուզբաշյանը, Բախշի Սուրադյանը և Սարգիս Յուզբաշյանը (Լեռ, նշվ. աշխ., էջ 557):

ու կանոն պահպանել միայն խստության միջոցով, որը չէր բխում թեմականի շահերից: Թեմականի աշակերտները խիստ դժգոհ էին տեսուչ Բենիկ վարդապետից: 1900 թ. նոյեմբերի 11-ին թեմականի երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարաններից 52 աշակերտների ստորագրությամբ բողոք-խնդրագիր է ներկայացվում տեսուչ Բենիկ վարդապետին, որտեղ ասված էր. «Փոքրիկ դասարաններից սկսած ուսուցիչները մեզ սովորեցրել են մեր իրաւունքների մոլեռանդ պաշտպաններ լինել, եթէ նոքա իրաւոտնատակ են տրուած: Այսօր մենք ևս մեր իրաւունքներից մի քանիսը ոտնատակ տրուած տեսնելով, որի հետ և ընդհանուր դպրոցական գործի յաջողութիւնը խախտուած համարելով, դիմում ենք ձեզ իբրև դպրոցի գլխի և իբրև պատասխանատուի, դպրոցական գործերի վերաբերմամբ և միահամուռ խնդրում աշակերտութեան մաքուր սրտից բխած հետևյալ պահանջները...»: Ապա շարադրված է աշակերտների պահանջները. ռուսաց լեզու, ռուսաց պատմություն, հանրահաշիվ, երկրաչափություն և թվաբանություն դասավանդելու համար հրավիրել որակյալ դասատուներ, կրկին մտցնել այն առարկաները, որոնք հանվել էին ուսումնական պլաններից, որոշ առարկաներից ժամեր կրճատել ու տալ տիեզերագիտություն և գյուղատնտեսություն առարկաներին: Ապա պահանջում են թեմականից ազատել ուսուցիչներ Արշակ Տեր-Միքեյանին և Ալեքսանդր Թարխանյանին, որոնք կոպիտ էին, աշակերտներին անտեղի վիրավորում էին և չէին տիրապետում իրենց կողմից դասավանդվող առարկաներին<sup>9</sup>:

Փոխանակ աշակերտների այդ բողոքը լրջորեն քննարկելու՝ մանկավարժական խորհուրդն այն համարեց «անլուր յանդգնութիւն, յանցանք, որ պիտի պատժուի ամենայն խստութեամբ»: Մանկավարժական խորհուրդը որոշում է «պատժել միայն պարագլուխներին»: Հեռացվում են Ս. Մալխասյանը (III դասարան), Բ. Տոշեյանը (IV դասարան), Գ. Գորգեյանը (VI դասարան) և Դ. Տեր-Մկրտչյանը (V դասարան): Տեսուչը խնդրում է թեմի առաջնորդի միջոցով քաղաքից հեռացնել թեմականի շրջանավարտ Գևորգ Առնամայանին իբրև բողոքող աշակերտներին ոգևորողի. սա չէր համապատասխանում իրականությանը<sup>10</sup>: Եվ ահա 1901 թ. հունիսի 11-ին թեմականի տարեկան շքեղ հանդեսում Բենիկ վարդապետը հպարտությամբ էր պատմում աշակերտների բողոքը ճնշելու մասին:

<sup>8</sup> Լեօ, նույնը, էջ 561:

<sup>9</sup> Նույնը, էջ 562-564:

<sup>10</sup> Նույնը, էջ 565: Աքսորվածները քաղաքից դուրս են տարվել ոստիկանների հսկողությամբ: Նրանց ընկեր աշակերտները թողել էին դասերը և գնացել նրանց ճանապարհելու (նույնը, էջ 566):

Աշակերտների նկատմամբ նրա հայտարարած զրպարտանքն արժանացավ աշակերտների դժգոհությանը, որն ավարտվեց ցույցով: Սակայն Բենիկ վարդապետը հեշտ նահանջողներից չէր: Նա նոր բողոքներ է ուղարկում գավառապետին և թեմապետին: Գավառապետի հրամանով քաղաքից արտաքսվում են աշակերտներ Յովակիմ Ստեփանյանը, Դուկաս Վարդապետյանը, Ալեքսանդր Տեր-Թոնասյանը և Դավիթ Տեր-Մկրտչյանը<sup>11</sup>:

Այնուամենայնիվ, հարցը չկարգավորվեց: Թեմական դպրոցի ղեկավարության դեմ ուղղված բողոքները շարունակվում էին: Կամա թե ականա սովորողների այդ շարժումը և դրա դեմ կիրառվող քաղաքականությունն ազդում էին ոչ միայն հոգևոր դպրոցի, այլև թեմի հեղինակության վրա: Ասենք նաև, որ այդ ժամանակ հայ եկեղեցու դեմ իշխանությունների դժգոհությունները խորանում էին: Իսկ այս վերջիններից էլ դժգոհ էին հեղափոխական ուժերը, որոնք պայքարի էին ելել հանուն «ժողովրդական բռնաբարւած իրավունքի»<sup>12</sup>: Անժխտելի է, որ հայ ժողովուրդը սիրում է իր եկեղեցին և միշտ էլ իր հարգանքն ու հավատարմությունն է արտահայտել նրա նկատմամբ: Հայ եկեղեցին, լինելով հոգևոր մեծ ուժ, դարերի ընթացքում ամրապնդել է և իր հերթին պաշտպանել ժողովրդի շահերը: Այս ամենը, ինչ խոսք, դուր չէր գալիս ցարական իշխանությանը: Ահա թե ինչու նա որոշեց «ցնցել» հայ «եկեղեցու հիմքը»:

Այդ ահավոր վիճիկ կար՝ սկսած 1896 թվականից, երբ Անդրկովկասի կառավարչապետ էր նշանակվել իշխան Գ. Գոլիցինը: Նա իր հայատյաց քաղաքականությամբ ավելի բորբոքեց հայ ժողովրդին: Վերջինս ավելի խոր գիտակցեց իր իրավունքները և իրեն դրսևորեց իբրև իր եկեղեցու պաշտպան: Պետք է պատշաճ գնահատել հայության այդ մեծագույն նվիրվածությունը և պատրաստակամությունը՝ եկեղեցին պաշտպանելու և հեղինակությունը ավելի բարձրացնելու համար: Հայությունն իր արյամբ սրբագործեց հայ եկեղեցու պատվի փրկությունը:

Բենիկ վարդապետի պաշտոնագրկությունը դարձել էր անխուսափելի: Դա հարկավոր էր նաև թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոսին: Բենիկ վարդապետի վերոհիշյալ քայլերը խիստ ազդել էին թեմակալի հեղինակության վրա: Վերջինիս և Բենիկ վարդապետի միջև հակասություններն ավելի խորանում էին մասնավաճառ 1902 թ. վերջերից սկսած: Թեմակալը բողոքում է Մկրտիչ Խրիմյան

<sup>11</sup> Այդ աշակերտները տեղափոխվեցին Երևանի թեմական դպրոց և ավարտեցին հաջողությամբ: Դրան օժանդակել էր թեմապետ Գրիգոր Եպիսկոպոսը:

<sup>12</sup> Ակնունի Է., Դեպի կռիվ, Ժնև, 1904, էջ 7:

կաթողիկոսին, որ Բենիկ վարդապետը չի կատարում իր հրամանները: Իրոք, վերջինս, ինչպես նկարագրել է Լեոն, փոխում է իր լեզուն եպիսկոպոսի նկատմամբ և մոռանում նախկին հաճոյախոսությունները նրա վերաբերյալ: Այդ ամենի համար 1903 թ. մայիսի 7-ին թեմակալ Գրիգոր եպիսկոպոսը հոգաբարձությանը գրած բացատրականում անհնարին է համարում «թույլ տալ նրան ոչ եթէ տեսչական պաշտօնում, այլ նոյն իսկ մեր վիճակում մնալու»<sup>13</sup>:

Թեմի առաջնորդը թեմականի տեսուչ ընտրելու համար հոգաբարձուների խորհրդին առաջարկում է երեք թեկնածու՝ Մատթէս, Մեսրոպ և Եզնիկ վարդապետներին: Սակայն հոգաբարձուների խորհուրդը պաշտպանում է Բենիկ վարդապետին: Բենիկի օգտին հանդես են գալիս նաև որոշ խավեր և փորձում նրա օգտին Շուշիում կազմակերպել ցույց: Բենիկ վարդապետը նույնիսկ բողոք է ուղարկում Էջմիածին և կոպտում նրանց, ովքեր պաշտպանում էին թեմապետի դիրքորոշումը: 1903 թ. հունիսի 12-ին Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը, վերջ տալով այդ վեճերին, Բենիկ վարդապետին տեղափոխում է Գանձակ, միևնույն ժամանակ հանդիմանում է Գրիգոր եպիսկոպոսին, որովհետև «մի ուխտի և մի տան զաւակներ եղող մի առաջնորդ և մի տեսուչ չը կարողացան հաշտ ու միաբան ապրել»<sup>14</sup>:

Բենիկ վարդապետի հեռանալուց հետո առաջարկված թեկնածուներից Մատթէս վարդապետը համաձայնվեց վարել տեսչական պաշտոնը, սակայն նա ստիպված էր շուտով հրաժարվել: Թեմապետի առաջարկությամբ տեսուչ չհրավիրվեց, և թեմականի կառավարումը հանձնվեց տեսչի օգնական Իշխան Զուրաբյանին՝ որպես պաշտոնակատարի: Սակայն 1903 թ. դեկտեմբերի 3-ի հրամանի համաձայն՝ փակվում է թեմականը, որի բարձր դասարանների աշակերտների մի մասը փորձում է ուսումը շարունակել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում կամ Երևանի թեմականում: Սակայն ազատ տեղեր չլինելու պատճառով ոչ բոլոր աշակերտները կարողացան իրենց ուսումը շարունակել այդ երկու դպրոցներում: Խրիմյան կաթողիկոսը հույս ուներ, որ շուտով կվերաբացվի Շուշիի հոգևոր թեմականը: Իրոք, այն բացվեց 1905 թվականի սեպտեմբերի սկզբին:

\*\*\*

<sup>13</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 572:

<sup>14</sup> Նույնը, էջ 573:

1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ 2-րդ ցարը ստորագրեց հրամանագիր՝ հայ լուսավորչական եկեղեցու կալվածքները գրավելու մասին: Այդ հրամանը պայթեց ռուսի պես: Ակնունին բացատրում է, որ կովկասյան կառավարչապետը յոթ ամիս շարունակ ձգտում էր «իր փայփայած ծրագիրը յաղթանակով պսակելու համար», որին քաջալերում էին «միապետության դաստիարակ Պրեդոնսոցովը» և ներքին գերծերի նախարար Պլենն<sup>15</sup>: Երբ նախարարները երկրորդ անգամ քննարկում էին հրամանի նախագիծը, այդ ժամանակ էլ բացահայտվեց, որ դեռևս 1897 թ., երբ հայ եկեղեցական ծխական դպրոցները հանձնվել էին լուսավորության նախարարությանը, իբրև նույն նախարարությանն են հանձնվել նաև դպրոցական կալվածքները, սակայն հայ հոգևորականությունը ներկայացրել է «մի շարք դատաստանական պահանջներ»: Պարզվում է, որ Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը դեռևս 1898 թ. հարց էր դրել հայոց եկեղեցու բոլոր կալվածքներն ու դրամագումարները բռնագրավելու մասին: Այն ժամանակ այդ առաջարկությանը դեմ էին ֆինանսների և երկրագործության նախարարները: Վերջիններս այն համոզմանն էին, որ այդ գործողությունը կառաջացներ հուզումներ «հայ հասարակության մեջ»: Ըստ էության, Նիկոլայ 2-րդը կողմնակից էր «հայոց հոգևորականության օրինազանց գործողությունը դադարեցնելուն»: Իսկ երբ հարցը քննվում էր 1901 թ. հուլիսի 26-ին նախարարների խորհրդում, ներքին գործերի նախարարության ստատուս-քարտուղար Պլենն պաշտպանեց Գոլիցինի առաջարկությունը. հարցը գնաց կայսերական պալատ, որտեղ և Պլենն կայսրին համոզեց ստորագրել թուղթը: Դրանով իսկ «բարձրագույնը հաստատեց թալանի օրենքը»<sup>16</sup>: Նիկոլայ 2-րդի կողմից հրամանը ստորագրվելուց մի քանի օր անց Գոլիցինը, այդ մասին հրապարակելով պաշտոնական հաղորդագրություններում, փորձեց արդարացնել արվածը: Իսկ պաշտոնական հաղորդագրություններում և հրատարակված հոդվածներում փորձում էին ցույց տալ, թե իբր դրանով մեծացվում են լուսավորչական եկեղեցու եկամուտները, որի նպատակն է նպաստել նրա բարգավաճմանը, մեծացնել չափազանց ողբալի վիճակում գտնվող աղքատ ու չքավոր հոգևորականների եկամուտը, եկեղեցին և նրա կալվածքներն ազատել հափշտակումներից: Ըստ ցարական ինքնակալության տեղեկատվության՝ հայ եկեղեցին ուներ մեծ հարստություն, որից իբր հոգևորական վերնախավը ստանում էր մեծամեծ եկամուտներ և դրանով իսկ ապահովում անկախ ու

<sup>15</sup> Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 10:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 12-13:

ինքնուրույն դիրքը: Դա թույլ չտալու համար որոշում էին կայացնում պետական այրերը. պետք է հայ եկեղեցուց խլել նրա ձեռքի տակ եղած հարստությունը: Դրանով իբր հնարավորություն կստեղծվեր եկեղեցին կախման մեջ դնելու պետությունից, որին կարելի կլիներ թելադրել այն, ինչ անհրաժեշտ է: Կովկասյան կառավարչապետը նույնիսկ չի զլացել կայսրին տեղյակ պահել, որ հայ եկեղեցու ցանկությունն է «Մեծ և միացյալ Չայաստան» ունենալը: Իբրև դա էլ հայ կղերին հնարավորություն է տվել անցնելու «շարժման գլուխ»: Կար նաև մեկ այլ մեկնաբանություն, թե իբր հայ եկեղեցին ամեն տարի «անսպառ դրամ է տալիս հայկական գործին» և այդ քաղաքական շարժման նեցուկն ու աջակիցն է: Նույնիսկ թվեր էին բերվում, թե արևմտյան Չայաստան գաղթելու համար կաթողիկոսը տարեկան տրամադրում է կես միլիոն ռուբլի, սինոդականները՝ 100 հազար, թեմական առաջնորդները՝ 50 հազար, վարդապետներն ու քահանաները՝ առնվազն 1000 ռուբլի: Նաև այն կարծիքին էին, թե իբր այդ գումարները «զենք դարձած մուտք են գործում Արևմտյան Չայաստան»<sup>17</sup>:

Այդ հարցը Դավիթ Անանունը մեկնաբանել է այսպես՝ մեջ բերելով վերոնշյալ էջմիածնի սինոդի դատախազի ցուցմունքը՝ «Շատ տասնյակ տարիների գործոն պայքարը թուրք կառավարության դեմ ստեղծել է հայերի մեջ հնուտ հեղափոխականների ընդարձակ շրջան, ընտելացրել նրանց գաղտնի գործունեության և հակակառավարական արտահայտությունների», որի հետևանքով հետագայում «երիտասարդության մեջ ծագեց բնական ու գայթակղեցուցիչ մի միտք՝ դուրս հրել հետամնաց ազգայնական-կղերականներին, օգտվել նրանց հավաքած զենքով, դրամով և կազմակերպված տեղական խմբակներով, իսկ որ գլխավորն է, ժառանգաբար ազդեցություն ձեռք բերել ժողովրդի վրա»: Հենց այդ վերջին նպատակի համար է, որ «հեղափոխական երիտասարդության մի բազմություն հոգևորական դարձավ, լցրեց իրանով էջմիածնի վանական միաբանության շարքերը, հեշտությամբ ահաբեկեց բարեհույս տարրերին և տիրապետեց ժերունի Մկրտիչ պատրիարքի կամքին, որն ինքն էլ ինձ հեղափոխական էր»<sup>18</sup>: Անանունը հարցնում է. «Այդ որտեղի՞ց հայ եկեղեցուն հսկայական գումարներ, որ նա օգտագործի հեղափոխական շարժման համար»: Պարզապես ցարական միապետությունը փորձում էր անդամալուծել հայ եկեղեցին և տիրանալ նրա ունեցվածքին<sup>19</sup>:

Անտարակույս, ցարիզմը ձգտում էր ոչնչացնել բոլոր այն ուղիները,

<sup>17</sup> Նույնը, էջ 16-24:

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 4, ք. 2660:

որոնք տանում էին դեպի քաղաքական իշխանություն, հարվածել Հայ լուսավորչական եկեղեցուն, սահմանափակել հայերի իրավունքները և նվազեցնել նրանց թիվը: «Դրա համար էլ,- նկատել է Ակնունին,- ամեն ինչ ուժեղացվում էր՝ գրաքննությունից մինչև սահմանների ամրապնդումը»<sup>20</sup>:

Կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանը 1903 թ. օգոստոսին ստորագրեց 3 կոնդակ, որոնցից մեկն ուղղված էր հայոց թեմերին: Նա փորձում էր դիմադրել հունիսի 12-ի օրենքին: Երկու օր անց՝ օգոստոսի 5-ին, ներքին գործերի նախարար Պլևեն Ամենայն Հայոց կաթողիկոսին հեռագրել է. «Տեղեկանալով, որ եկեղեցական կալվածքների վերաբերմամբ հունիսի 12-ի բարձրագույն հրամանի գործողությունը հանդիպում է հապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբության հոգալ անհապաղ կարգադրություն անել այս մասին: Ամեն մի հետաձգում, իբրև անհնազանդություն թագավորական կամքին, առաջ կբերի ծանր հետևանքներ: Ներքին գործերի մինիստր Պլևե»<sup>21</sup>:

Հայոց կաթողիկոսը նախարար Պլևեին օգոստոսի 6-ին ուղարկված պատասխանում դժգոհում է ցարի հրամանից, որն ընդունվել էր առանց իրեն նախօրոք տեղյակ պահելու: Նույնիսկ օգոստոսի 10-ին նամակ է հղում ցարին, իսկ օգոստոսի 12-ին՝ Պլևեին, որոնցում հաղորդվում է, որ ցարը մերժել է օգոստոսի 6-ի իր հեռագիր-խնդրագիրը՝ «հունիսի 12-ի որոշման գործադրության մասին»: Վերջապես, զեներալ-ադյուտանտ իշխան Գուլիցինը սեպտեմբերի 5-ին կաթողիկոսին հղած հեռագրով պահանջել էր հունիսի 12-ի օրենքի «ի կատարում ճշտությամբ և առանց հետաձգման»: Աննահանջ կաթողիկոսը սեպտեմբերի 12-ին ցարին գրած նոր նամակում աղերսում է թույլ տալ իրեն գնալ Ս.Պետերբուրգ՝ թագավորի առաջ «իր սիրտը բացելու»: Նման բովանդակությամբ նամակ ուղարկվեց նաև նախարար Պլևեին<sup>22</sup>:

Սակայն այդ ամենն անօգուտ էր: Ոչ ցարը և ոչ էլ մյուսները հունիսի 12-ի օրենքից հրաժարվելու միտում չունեին: Պետերբուրգում և թե Թիֆլիսում մման բողոքներ ստանում էին շատ տեղերից, որոնց հեղինակները խարազանում և անարդարացի էին համարում հունիսի 12-ի օրենքը: Հայ ժողովուրդը խիստ ըմբոստացել էր, բոլշևիկ Բոգդան Կնունյանցի բնորոշմամբ՝ ցարի այդ նոր կողոպուտի դեմ: Հայ եկեղեցական թեմերից բողոքներ էին հասնում Էջմիածին, որտեղ նկարագրված էր, թե ցարական հանձնաժողովները ինչպես էին առանց

<sup>19</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երրորդ (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 23-24:

<sup>20</sup> Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 29-30:

<sup>21</sup> Նույնը, էջ 43:

<sup>22</sup> Նույնը, էջ 49:

որևս մեկի կամքը հարցնելու ուժով խլում եկեղեցիների ունեցվածքը: Այդ արարքների դեմ ապստամբություններ բռնկվեցին Գանձակում և Շուշիում: 1900 թ. տվյալներով, հայ եկեղեցու կալվածքներն ու դրամագլուխը կազմում էր 175000 դեսյատին հող և մոտ 100 միլիոն ռուբլի: Մինչդեռ այդքան ունեցվածք կարող էր ունենալ ռուսական ներքին նահանգների հողի մի մագնատ: Հայոց եկեղեցու սեփականությունը դարերի ընթացքում գոյացել էր նվիրատվություններով և խնայողություններով<sup>23</sup>:

Ավելի նվազ հարստություն ուներ Արցախի թեմը: 1901 թ. էջմիածին ուղարկված Գրիգոր եպիսկոպոսի զեկուցագրից իմանում ենք, որ այդ ժամանակ, այսինքն՝ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի նախօրյակին, Արցախի թեմն ուներ 208 եկեղեցի, 244 քահանա, 31 եկեղեցական սպասավոր, 45285 ռ. դրամագլուխ: Ուներ նաև 5 վանք, 1 սեմինարիա: Թեմի տղամարդկանց թիվը 89470 էր, իսկ կանանցը՝ 73216<sup>24</sup>: Լինում էին տարիներ, երբ առանց էջմիածնի օգնության հնարավոր չէր լինում փակել տարվա ծախսերը: Այդ մասին, անշուշտ, գիտեին նաև պետական իշխանությունները: Արցախահայությունը, ինչ խոսք, չէր կարող չվրդովվել ցարի վերոնշյալ հրամանից. նա փորձում էր հրաժարվել՝ կատարելով ցարի հրամանագիրը: Առաջինն ապստամբեց Հյուսիսային Արցախի հայությունը, որը բոլորին կոչ էր անում չհրաժարվել բողոքից և պայքարից: «Այդ որոշմամբ էլ, - նկարագրում է Ակնունին, - Գանձակի հայությունը՝ մոտ 6-7, իսկ «Դրոշակի» հաղորդմամբ՝ մոտ 10 հազար մարդ<sup>25</sup>, հավաքվելով Վերի եկեղեցու մոտ, ապա շարժվելով դեպի Վարի եկեղեցի, որտեղ գտնվում էր առաջնորդարանը, հակացարական կոչերով պահանջում էին վերացնել հունիսի 12-ի հրամանագիրը»: Նրանք որոշել էին Բենիկ վարդապետին հայտնել, որ իրենք պատրաստ են բացահայտ դիմադրության: Ոստիկանությունը կես ճանապարհին փակում է ճանապարհը և բնակչությունից պահանջում ցրվել: Սակայն ըմբոստ ամբոխը չենթարկվելով շարունակում է ճանապարհը դեպի առաջնորդարան: Հոգևորականության պաշտոնական ներկայացուցիչը փորձում էր հանգստացնել նրանց՝ վստահեցնելով, որ հոժարական ոչինչ չի հանձնի, ինչպես հրահանգել է Վեհափառ կաթողիկոսը: Ամբոխը պատրաստ էր ցրվելու, երբ հասավ ոստիկանությունը և հայտարարեց, թե այդ ամենը հոգևորականության ծրագրած գործն է: Լուր է հասնում,

<sup>23</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 43:

<sup>24</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Ե., 2001, էջ 403-418:

<sup>25</sup> «Դրոշակ», 1903, N 7:

թե ցարական զորքը արդեն անցել է կամուրջը և բարձրանում է դեպի հայկական թաղը: Հավաքված ամբոխը խիստ անհանգստանում է: Ոստիկանությունը ստիպված էր հետ ուղարկել զինվորների վաշտը: Բայց այդ ժամանակ վրա է հասնում փոխգնդապետ Անդրեևը և հրամայում վերադարձնել զինվորականներին: Այդ կարգադրությունը ավելի է վրդովեցնում ժողովրդին, և վերջինս որոշում է դիմադրել: Փոխգնդապետ Անդրեևը հավաքված ամբոխից պահանջում է ցրվել: Ոչ մեկը տեղից չի շարժվում: Անդրեևի պահանջին և սպառնալիքներին բնակչությունը պատասխանում է քարի կարկտով: Փոխնահանգապետ Անդրեևը զինվորներին հրամայում է կրակել անզեն ամբոխի վրա: Նա առաջինն է հանում ատրճանակը և գնդակահարում մի երիտասարդի: Ապա հաջորդեց հրացանների որոտը: Աղաղակ, լաց ու կոծ. ընկան 13 տարեկան մի աղջիկ և փոքրիկ մի երեխա: Տասը սպանված, ավելի քան 70 վիրավոր, որոնց թվում էին մի զինվոր և մի քանի ոստիկան: Հաջորդ օրերին քաղաքը լցվեց զորամասերով: Կարգադրվեց երկաթուղու կայարանում թիֆլիս մեկնող հայերին տոմսակ չտալ: Ոստիկանությունը դարձել էր անսամբ: Մարդկանց բանտ չուղարկելու համար նրանցից ստանում էին կաշառքներ<sup>26</sup>:

1903 թ. սեպտեմբերի սկզբներին Կովկասի շատ հայաբնակ վայրերում տեղի էին ունենում համանման ցույց-բողոքներ: Բաքվում տեղի ունեցած ցույցի ժամանակ 100 հոգի ձերբակալվում է, իսկ 85 հոգի սպանվում և վիրավորվում<sup>27</sup>:

Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ տեղերում բռնկված հակացարական ելույթները ոտքի հանեցին նաև շուշեցիներին:

Շուշիի և Նուխիի գավառներում փորձում էին թուրք-թաթարներին գրգռել հայերի դեմ: Օրինակ՝ Շուշիի գավառապետը հավաքել էր թուրքերին և ակնարկել. «Լսել եմ, որ դուք զինել էք և պատրաստել էք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու: Անչափ շնորհակալ եմք, բայց առայժմ մենք զօրքի ուժով էլ կարող ենք պաշտպանել», իսկ թուրքերը պատասխանել են, թե «Մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դեմ, նրանք մեր լաւ դրացիներն են»<sup>28</sup>:

«Դրոշակ»-ի 1903 թ. N 9-ում ասված է, որ Արցախում եկեղեցական կալվածքների գրավումը նշանակված էր սեպտեմբերի 10-ին, երբ պիտի Գանձակից գար նահանգապետը և անձամբ ղեկավարեր հանձնաժողովի անելիքները: Ժողովրդին ահ ու սարսափ ներշնչող

<sup>26</sup> Ալևուհի Է., նշվ. աշխ., էջ 218-221, «Դրոշակ», 1903, N 7:

<sup>27</sup> «Դրոշակ», 1903, N 8, էջ 115:

<sup>28</sup> Նույնը, էջ 119:

Նահանգապետը եկավ սեպտեմբերի 8-ին: Եվ ահա հանձնաժողովը, նահանգապետ Լուցաույի գլխավորությամբ, հաջորդ օրը սկսեց իր գործունեությունը:

Անշուշտ, ոստիկանությունը նախապատրաստվել էր այդ ամենին: Գանձակից տեղափոխել էր Ասլանդուզի վաշտի կեսը՝ մոտ 500 կազակ, և նրանց տեղավորել քաղաքի հայկական թաղամասում: Մինչ այդ Շուշիում կազմակերպվել էր մի կոմիտե, որի կոչով քաղաքի բնակչությունը չէր գնացել զորքին դիմավորելու: Ասենք նաև, որ կառավարական շրջանները բանակի մեջ սարսափ էին տարածել, թե Շուշին «հեղափոխական արժիվների բուն է» և զուրկ չէ գեներից:

Նահանգապետին դիմավորելու էին գնացել ոստիկանությունը և մի քանի թաթար պաշտոնյաներ: Ոչ մի հայ չէր գնացել նահանգապետին դիմավորելու: Շուշի ժամանած նահանգապետ Լուցաուն անմիջապես իր մոտ է կանչում քաղաքագլխին, մի շարք հայ պաշտոնյաների, համքարների ներկայացուցիչներին և այլոց ու հայտնում, որ ինքը հրահանգ է ստացել «անողոք լինել և կոտորել բոլոր դիմադրողներին»<sup>29</sup>: Ներկաներից մեկը բողոքում է նահանգապետին և հիշեցնում, որ մինչև հիմա Շուշին կառավարության աչքում անվստահելի չի եղել և այժմ զարմանալի է, որ քաղաքը լցվել է զորքով, ու ժողովրդին ստիպում են զինվորներին կերակրել:

Նահանգապետի հետ հանդիպումից մեկ ժամ անց քաղաքում դժգոհություններ սկսվեցին. փակվեցին խանութները՝ որոշելով չբացել մի ամբողջ շաբաթ: Շուկան փակվեց: Գրադարան, դումա, ակումբ գնացող չկար: Քաղաքի կյանքը կանգ առավ, ժողովուրդը փակվեց տներում: Կատաղած նահանգապետը կարգադրեց ցուցակագրել եկեղեցիների գույքը: Այն սկսվեց Ազուլեցոց եկեղեցուց: Այդ մասին իմանալով՝ ժողովուրդը թափվեց փողոց: Եկեղեցիները փակ էին, պարիսպները՝ բարձր: Բնակչությունը հանձնախմբին հեզմուն էր ծաղրական բացականչություններով: Հանձնաժողովը հեռացավ դեպի կենտրոնական շուկա: Ժողովուրդը հետևեց նրան:

Նրանք, հասնելով Փոստի փողոցին, թեքվեցին ռեալական դպրոցի կողմը: Ջայրացած բնակչությունը գրոհեց այն հյուրանոցը, որտեղ իջևանել էր նահանգապետը: Քարեր էին նետում, ջարդում հյուրանոցի ապակիները: Սարսափահար նահանգապետի պահանջով կազակները հասան, և պայթեց հրացանների առաջին որոտը: Ժողովուրդը պատասխանեց ատրճանակների կրակոցներով: Կռիվը հետզհետե թեժացավ և լայնածավալ բնույթ ստացավ: Կրակոցները շարունակվեցին մի քանի ժամ: Գիշերային ընդհարման ժամանակ

<sup>29</sup> Ակունցի Է., նշվ. աշխ., էջ 237, «Դրոշակ», 1903, N 9, էջ 135:

սպանվեց մեկ արհեստավոր, և վիրավորվեց ռեալականից մեկ աշակերտ: Կազակներից վիրավորվել էր 3 հոգի:

Սեպտեմբերի 10-ի առավոտյան զինվորական ուժը գնաց առաջնորդարան և ավելի քան 200 կազակներով շրջապատեց այն: Ոչ ոքի չէին թողնում մոտենալ, նույնիսկ դատարկել էին հարևան փողոցները: Նահանգապետը անստորագիր նամակ էր ստացել, որը զգուշացնում էր, որ խուզարկության ժամանակ ուժանակով օդ կհանվի եկեղեցին: Սակայն եկեղեցում ոչ ոք չկար, դռները փակ էին: Հանձնախումբը կոնսիստորիայի անդամներից պահանջեց եկեղեցու բանալին, սակայն նրանք պատասխանեցին, թե կաթողիկոսական կոնդակի համաձայն՝ իրավունք չունեն բանալի տալու: Կատաղած հանձնախումբը սկսեց ջարդել եկեղեցու, դրամարկղի և դիվանատան դռները: Կազմվեց արձանագրություն, սակայն բնակիչներից ոչ մեկը չստորագրեց: Երկու օր անց ժողովրդական հուզումները նվազել էին: Ոստիկանությունը փորձեց մի անգամ ևս ժողովրդին ցույց տալ իր «ուժը»: Կազակները, խմբերի բաժանված, պտտվում էին հայկական թաղամասում: Նրանք մտրակում էին պատահած հայի: Ձինված բռնության հանդեպ ազգաբնակչությունը ստիպված էր նահանջել, կրկին փակվել տներում. մի քանի օր շարունակ քաղաքը գտնվում էր հանգած վիճակում: Ձերբակալվեց ավելի քան 120 մարդ, և անչափահաս բազմաթիվ աշակերտներ նետվեցին բանտ: Ձերբակալվեցին նաև տասնյակ մտավորականներ: Խուզարկություններին հաջորդեց աքսորը: Առաջին զոհը եղավ քաղաքագլուխ Բախշի Իշխանյանը: Ամենուր վխտում էին ցարական լրտեսները: Թեմական դպրոցը փակվեց, քաղաքում մտցվեց ռազմական դրություն<sup>30</sup>: Երեկոյան ժամը 18-ից հետո քաղաք դուրս եկողները ձերբակալվում էին: Փակ էին բոլոր խանութները, դատարանը, քաղաքային ինքնավարությունը: Շատ ծանր և լարված իրադրություն էր: Լուր էր տարածվել, թե նահանգապետ Լուցաուի կարգադրությամբ զավառի թուրք-թաթարներին զենք է բաժանվում, և նրանց գրգռում էին հայերի դեմ<sup>31</sup>:

Սա այսպիսին էր վիճակը Արցախ-Ղարաբաղի կենտրոն Շուշի քաղաքում:

Մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 14-ին, երեք հնչակյաններ ահաբեկեցին կառավարչապետ իշխան Գուլիցիին: Այդ օրերին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կովկասյան կոմիտեն, հանդես գալով «Գազանը վիրավորված է» կոչով,

<sup>30</sup> Ակնունի Է., նշխ., էջ 235-241, «Դրոշակ», 1903, N 9, էջ 135:

<sup>31</sup> «Դրոշակ», 1903, N 9, էջ 135-136:

նշում է, որ ցարի սատրապ Գոլիցինի վիրավորվելու մասին լուրը հրճվանքով լցրեց հազարավոր սրտեր: Գոլիցինը արժանի էր դրան, որովհետև «ինքնակալության այդպիսի առանձին ներկայացուցիչները, ինչպիսին են սատրապ Գոլիցինը, ոչ այլ ինչ են, եթե ոչ մի պտուտակ այն վիթխարի մեքենայի, որ կոչւում է ցարի ինքնակալութիւն»:<sup>32</sup> Ապա ասված է. «Հայերից եկեղեցական կալւածքների խլելը, որը անմիջական առիթ եղաւ այդ ահաբեկիչների յայտնւելուն, կառաւարութեանը վատ ծառայութիւն մատուցին: Նա միայն յեղափոխականացրեց հայկական մասսան»<sup>32</sup>:

Զնայած վրիժառուները զոհվեցին, սակայն կառավարչապետը օր ու գիշեր հանգիստ չուներ: Նա 1904 թ. հունիսի 28-ին ստիպված հեռանում է Անդրկովկասից, իսկ 1905 թ. հունվարի 1-ին ցարը նրան ազատում է կառավարչապետի պաշտոնից: Գոլիցինն այն չինովնիկն էր, որի նկատմամբ կիրառվեց ահաբեկչություն: Հետո Շուշիում 1904 թ. սեպտեմբերի 3-ին սպանվեց ցարական լրտես «Զուխուր» Արշակը, նույն թվականի դեկտեմբերի 15-ին նորից Շուշիում ոստիկանապետ Սախարովը, 1905 թ. սկզբին՝ հարկային տեսուչ Շչերբակովը, նույն թվականի ապրիլի 28-ին՝ զավառապետ Շումակովիչը, մայիսի 21-ին՝ զավառապետի օգնական Ֆեոդորովը, հետո սպանվեցին ժանդարմ Պողշիվալովը, գաղտնի ոստիկան Խասիևը, գանձարանի պաշտոնյաներ Բադիևը և Կոպրունովը: Սպանվում է նաև մի հայ ոստիկան, ձերբակալվում են մատնիչ Իսրայելը և Շուշիի զավառից 6 վաշխառուներ<sup>33</sup>:

Դրանք հիմնականում իրագործում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը, որովհետև նա արցախահայությանը պաշտպանելու և նրան ինքնապաշտպանության կոչելու այլ ելք չուներ: ՀՀԴ-ն 1905 թ. մայիսի 8-ին արձակեց հետևյալ հրամանը, որը ստեղծված պայմանների արդյունք էր. «ՀՀԴ սրանով յայտարարում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետներին, զավառապետներին, ժանդարմներին և խուզարկու ոստիկանության անդամներին, որ այսուհետև նրանցից յուրաքանչյուրը անխնա կերպով կոչնչացվի, եթե համարձակվի հայերի ձեռքից զենք խլել, խուզարկություն կատարել կամ բանտարկել այդ նպատակով...»<sup>34</sup>: Պարզվում է, որ մի ամբողջ պետական ապարատ իր պայքարն ուղղել էր հայ ժողովրդի դեմ: Երկրի մամուլը, սկսած Անդրկովկասից մինչև Պետերբուրգ, վարկաբեկում էր հայերին, իսկ թուրք-թաթար բեկերն ու

<sup>32</sup> ՀԱԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 17, թ. 1:

<sup>33</sup> «Դրոշակ», 1905, N 2, էջ 31:

կալվածատերերը, հնարավոր բոլոր միջոցներով օգնում էին նրանց: Շուշի գավառից Իսկանդար-բեկ Ռուստամբեկովը, Ազադ-աղա Ջիվանշիրը, Ֆարուխ-բեկ Վեզիրովը և այլ խաներ ու բեկեր 1904 թ. հունվարի 14-ին, հավաքվելով իր պաշտոնավարության վերջին օրերն ապրող իշխան Գուլիցինի մոտ, ուղերձով դիմելով նրան, զովերգում են նրա գործունեությունը և քաջալերում նրան<sup>35</sup>: Թուրք ունևորների այդ քայլն ուղղված էր նախ և առաջ հայության դեմ:

Անդրկովկասում Շուշիի դերը բարձր էր մնում: Դեռ նախորդ դարից սկսած՝ շուշեցի շատ երիտասարդներ իրենց ուսումը շարունակում էին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Շուշիում և Անդրկովկասի այլ քաղաքներում ու կառույցներում աշխատում էին ծագումով արցախցի տաղանդավոր գիտնականներ, բժիշկներ, ինժեներներ, կրթության գործի կազմակերպիչներ, գրողներ, արվեստագետներ: Ծագումով արցախցի էին նաև բազմաթիվ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչներ, որոնք պատրաստ էին բոլոր հնարավորությունները ներդնել իրենց հայրենիքի փրկության և այնտեղ ազատ հասարակություն ստեղծելու համար:

Շուշիի քաղաքային դպրոցը, ռեալականը և թեմականը մեծ հեղինակություն ունեին Անդրկովկասում: Դրանք լույսի օջախ էին Արցախի սրտում: Թեմականը, որը բացվել է 1838 թվականին, տվել է հարյուրավոր շրջանավարտներ:

Շուշիի ուսումնական հաստատություններում լույս էին տեսնում խմորատիպ ամսաթերթեր՝ «Искра» (ռեալականում), «Կոկոն» ու «Ծիածան» (թեմականում) և այլն, որոնք կարևոր դեր են խաղացել սովորողներին հայրենասիրության և ազգային-ազատագրական պայքարի ոգով դաստիարակելու գործում<sup>36</sup>:

Շուշիի դպրոցներում գործում էին նաև աշակերտական միություններ, որոնք կազմակերպում էին բազմաթիվ միջոցառումներ և «ինքնազարգացման խմբակային ժողովներ»: Այդ խմբակներից մեկը ղեկավարում էր բարձրդասարանցի Սարգիս Յովհաննիսյանը, որը Շուշիում ճանաչված հեղափոխական էր: Հետագայում նա գործել է Բաքվում և հայտնի էր Սերգեյ անունով: Իսկ երբ 1903 թ. հունիսի 12-ի ցարական որոշման դեմ ոտքի էր կանգնել հայ ժողովուրդը, Սարգսին տեսնում ենք Գանձակում, Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում:

Ինչպես նշվել է, 1900-ական թվականների սկզբից Արցախի թեմը

<sup>34</sup> Լույս տեղում, N 7, էջ 32, ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 2, էջ 1865:

<sup>35</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 63:

<sup>36</sup> «Հայրենիք» (Բոստոն), 1958, N 10, էջ 66:

կառավարում էր Գրիգորի եպիսկոպոս Գառնակերյանը: Ակնհայտ է, որ թեմական տեսուչ Բենիկ վարդապետի վարմունքը, որի մասին ասվեց, բացասաբար է ազդել թեմի առաջնորդի գործունեության վրա: Չնայած արխիվային նյութերը և ժամանակի մամուլը գրեթե եական ոչինչ չեն հաղորդում այդ մասին, սակայն մեզ հասած կցկտուր տեղեկություններն ինչ-որ բան հուշում են: 1903 թ. հունիսի 12-ի ցարի հրամանագրից հետո Արցախի թեմի գլխավոր ուշադրությունը կենտրոնացած էր այդ հարցի շուրջ: Խոհեմորեն կատարելով կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի պահանջը՝ ինքնական ոչինչ չհանձնել հանձնաժողովին, թեմի առաջնորդը նույնը պահանջում է թեմի եկեղեցիների հոգևորականներից: Այդ պահանջը կատարվում էր ամենայն ճշտությամբ: Ահա թե ինչու Գանձակից և Շուշիից բացի, ընդհարումներ տեղի ունեցան նաև Նուխիում, Արեշում, Արցախի մի շարք խոշոր բնակավայրերում, երբ հանձնաժողովը գնացել էր այդ բնակավայրերի եկեղեցիների ունեցվածքը հաշվառելու:

Շուշիում տեղի ունեցած ընդհարումների համար գավառի պաշտոնյաները, նահանգապետը և ցարական ոստիկանությունը մեղադրում էին թեմի առաջնորդին, եկեղեցու սպասավորներին և մի շարք հասարակական-քաղաքական գործիչների: Անկասկած, արցախցիները պաշտպանում էին եկեղեցուն, որի նկատմամբ ցարիզմի գործողություններն անօրեն էին: Թեմն իր հերթին պաշտպանում էր երկրամասի բնակչությանը, սակայն հորդորում էր չօգտագործել զենք, լինել զուսպ և հեռու մնալ ոստիկանության ու զինվորականների հետ հնարավոր ընդհարումներից:

Արցախի թեմը բազմիցս բողոք էր ներկայացրել գավառապետին և ոստիկանությանը ու պահանջել հրաժարվել բնակչության նկատմամբ իրագործվող բռնարարքներից: Սակայն ցարական պաշտոնյաները և ժանդարներիան նահանջելու տրամադրություն չունեին: Հակասությունները գնալով ավելի էին սրվում: Եկեղեցին և հասարակությունը դարձել էին մեկ միասնություն և միասնական պայքար էին մղում ցարական ինքնակալության դեմ:

## **2. ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ 1905-1906 ԹԹ. ԵՎ ԱՐՑԱՆԻ ԹԵՄԻ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅՆԵՐԸ**

1905 թ. հունվարին Ռուսաստանում սկսվեց հեղափոխություն: Ամբողջ երկիրը համակված էր հեղափոխական պայքարով և տրամադրություններով: Ցարական միապետությունը ձգտում էր հեղափոխությունը ճնշել՝ կազմակերպելով ազգամիջյան ընդհարումներ:

Ամերկովկասը հեղափոխական օջախներից մեկն էր: Ինքնակալության ուշադրությունն ուղղված էր հայ-թաթարական (թուրքական) ընդհարումներ կազմակերպելու վրա: Հայերն ու թաթարները վերջին դարերում ապրել են հարևանությամբ: Նրանց միջև, անշուշտ, եղել են ազգամիջյան ընդհարումներ, սակայն ոչ այն մակարդակի, ինչ տեղի ունեցան 1905-1906 թթ.: Հայ-թաթարական բախումներ տեղի են ունեցել Բաքվում, Գանձակում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Երևանում և այլուր, որտեղ խառն ապրել են հայեր և թուրք-մուսուլմաններ:

1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների պատճառների և բնույթի մասին խոսել են թե՛ ժամանակի և թե՛ հետագայի բազմաթիվ հեղինակներ: Այդ պայքարում մեղադրվել է նախ և առաջ Հայ հեղափոխական դաշնակցությունը<sup>1</sup>:

Այդ հեղինակները, ըստ երևույթին, չէին ցանկանում ասել ողջ ճշմարտությունը, որ հայերը ստիպված էին դիմել ինքնապաշտպանության, մահավանդ 1903 թ. հունիսի 12-ի ցարի հրամանից հետո: Ակնհայտ է, որ հայ բուրժուազիան երբեք ազգայնամուլ չի եղել, ազգայնամուլ չի եղել նաև հայ լիբերալիզմը<sup>2</sup>: Ցարիզմի այդ դաժան քաղաքականությունը հայությանը մղեց դեպի պայքար:

Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի և այլ նահանգներում հայերը կարևոր տեղ ունեցին: 1897 թ. մարդահամարի տվյալներով, Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգում բնակվում էր 878415 մարդ, իսկ Բաքվի նահանգում՝ 826716, ընդ որում, առաջինում հայերը և այլազգիները կազմում էին 39, իսկ երկրորդում՝ 40 տոկոս: Այդ նույն մարդահամարի տվյալներով, Շուշիի գավառում ապրում էր 112890 մարդ, որից հայ՝ 59542: 1905 թ. տվյալներով, Շուշիի գավառում բնակվում էր 122803 մարդ, որից հայ՝ 63748, Ջիվանջիի գավառում՝

<sup>1</sup> Հովհաննիսյան Մ., Կովկասյան Վանդեա, Թիֆլիս, 1907, էջ 8:

<sup>2</sup> Նույնը, էջ 28:

76239 մարդ, որից 23663-ը՝ հայ, Ջեբրայիլի (Կարյոագիճոյի) գավառում՝ 70313 մարդ, որից 17576-ը՝ հայ<sup>3</sup> (Տե՛ս կից աղյուսակը)<sup>4</sup>:

Գավառներ	1897 թ. մարդահամարի տվյալներով			1905 թ. հունվարի 1-ի տվյալներով		
	բնակչութ. թիվը	հայ	մուսուլ.	բնակչութ. թիվը	հայ	մուսուլ.
Շուշի քաղաք	25154	14345	10809	33187	–	–
Շուշիի գավառ	112890	59542	52192	122803	63749	59055
Ջեբրայիլի գավառ	65349	15750	49599	70313	17576	52737
Ջիվանջիլի գավառ	72408	19555	52853	76239	23663	52576
Ընդամենը	275801	109192	165453	302542	104987	164368

1905 թ. տվյալներով՝ Կովկասում հայերի թիվը հասնում էր 1 մլն 130 հազարի, որից 294 հազարը բնակվում էր Գանձակի, 84 հազարը՝ Բաքվի նահանգներում<sup>5</sup>: Ասենք, որ թաթարների համեմատությամբ թե՛ Կովկասում և թե՛ Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգներում հայերը նվազ թիվ ունեին: Ցարական ինքնակալությունը, թաթարներին զրգռելով հայերի դեմ, նպատակ ուներ կոտորելու նրանց և ավելի նվազեցնելու վերջիններիս թիվը:

1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. օգոստոսը Կովկասում տեղի ունեցած արյունալի իրադարձությունների պատճառները ոմանք

<sup>3</sup> Кавказский календарь на 1905 год, Тифлис, 1906, с. 107-110, 236-237.

<sup>4</sup> Շուշիի գավառն ընկած էր Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան մասում, Ջիվանջիլի, Ջանգեզուր և Ջեբրայիլ գավառների մեջտեղում և կազմում էր հյուսիսարևելյան կողմից Բաքվի նահանգագծի սահմանագիծը: Շուշիի գավառը ամենաբազմահայ գավառն էր ամբողջ նահանգում: Գավառի մի մասը լեռնոտ է, մյուս մասը՝ հարթավայրային: Հայերը տեղավորված էին լեռնային շրջանի երկու գավառաձևասերում, իսկ թուրքերը ցրված էին տափարակների վրա: Գավառի այն մասը, որտեղ ապրում էին հայերը, կազմված է պատմական խաչեն և Վարանդա գավառներից, որոնց սահմանը կազմում է Կարկառ գետը, իսկ Դիզակի կողմում՝ Իշխանագետի հովիտը: Գավառի 242 գյուղերից 94-ը հայկական էին, որոնցից 24-ը գտնվում էին խաչենում, 58-ը՝ Վարանդայում, 12-ը՝ Դիզակում (Ա-ՂՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906), Ե., 1907, էջ 168-169):

<sup>5</sup> Кавказский календарь на 1905 год, с. 46-48:

համարում են հայերի և թուրքերի տնտեսական ու սոցիալական առանձնահատկությունները, մահմեդականների և քրիստոնյաների անհամատեղելի լինելը, հայերի և թուրքերի ցեղային առանձնահատկությունները, երկու ազգերի քաղաքական հայացքների տարբերությունները, նրանց ազգայնամոլությունը և այլն: Այդ հեղինակների մեծ մասը գրվխավոր պատճառը համարում էր տնտեսական գործոնը: Անդրկովկասում XX դարի սկզբին ի ցույց էին հանվել այն բոլոր հակասությունները, որոնք հետևանք էին կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման: Դրանցից կարելի է առանձնացնել երկուսը.

ա) բուրժուազիայի տարբեր ազգային խմբավորումների ներսում եղած հակասությունները.

բ) ամբողջությամբ վերցրած՝ բուրժուազիայի և բազմազգ բանվորության միջև գոյություն ունեցած հակասությունները<sup>6</sup>:

Եթե՛իկ միջխմբային կատաղի բախումները ոգևորում էին ցարական ինքնակալությունը: Անդրկովկասում բախումները տեղի էին ունեցել այդ ժողովուրդների կամքին հակառակ, կապիտալի տերերի ցանկությամբ: Այդ պայքարում հետզհետե ավելի էր խորանում ատելությունը միմյանց նկատմամբ:

Կովկասում այդ ավազակությունների գլխավոր դերակատարը մուսուլմանական վերնախավն էր՝ իր համախլամական նկրտումներով և կովկասյան տարածքում իր բացարձակ գերիշխանությունը տարածելու ձգտումով՝ անշուշտ, թիկունքում ունենալով Թուրքիան, Իրանի աջակցությունը և ռուսական միապետության համակրանքն ու հովանավորությունը<sup>7</sup>:

Արցախում թուրք խաներն ու բեկերը վաղուց ձգտում էին գավառի ողջ հողատարածքի տեր դառնալ և արցախահայությանը ամբողջովին թողնել կախվածության մեջ՝ դրանով իսկ փորձելով դուրս մղել նրանց բնօրրանից: Մինչդեռ Արցախ-Ղարաբաղի տարածքը մեծ չէր, այն չէր բավարարում նույնիսկ երկրամասի բնակչության կարիքները: 1905 թ. տվյալներով, Շուշիի գավառը կազմում էր 4423,28 վերստ տարածություն (460758,86 դեսյատին), իսկ Կարյոագիմոյի գավառը՝ 3667,86 վերստ (402792,08 դեսյատին): Ընդ որում, Շուշիի գավառի առաջին տեղամասի գյուղական համայնքներին էր պատկանում 19810,52 դեսյատին հող, իսկ մասնավոր սեփականատերերին՝ 291000 դեսյատին, երկրորդ տեղամասում գյուղական համայնքներին պատկանում էր 19810,52 դեսյատին հող, իսկ մասնավոր

<sup>6</sup> Սինոյան Յ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 2, Ե., 2003, էջ 72:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 74:

սեփականատերերին՝ 19836,75 դեսյատին<sup>8</sup>: Փաստորեն, գավառի հողատարածքների մի բավական մասը մնում էր համայնքների ձեռքին, իսկ դա արգելակում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը: Թուրք ունևորները հենց աչք ունեին Արցախի համայնքային հողերի վրա: Կառավարչապետ Գ. Գուլիցիմի դիվանում քայլեր էին ձեռնարկվում հայերի դիրքերը թուլացնելու, իսկ դրան հակառակ՝ թուրք-թաթարների ազդեցությունն ուժեղացնելու համար: Այդ նշանակում էր նպաստել հայ համայնքներից ավելի շատ հողատարածքներ բռնագավթելուն: Այդ քաղաքականությունը պաշտպանում էր ցարը<sup>9</sup>, որը չէր թաքցնում իր հայացքները. «Իմ անձնական և վաղեմի կարծիքով, հայերի հանդեպ ոչ մի վստահություն տածել չի կարելի: Անշուշտ, նրանք են գլխավորում խռովության ամբողջ դավադրությունը Կովկասում:

Ամենամվիրվածները մինչև այժմ մուսուլմաններն են, աստված չտա, որ նրանք հավատը կորցնեն ռուսական հզորության նկատմամբ...»<sup>10</sup>:

Անդրկովկասում թուրք կալվածատերերին և բեկերին ամեն կերպ օգնում էր ցարական ինքնակալությունը: Օրինակ՝ Բաքվում ազգային ընդհարումների կազմակերպիչներ նահանգապետ Նակաշիձեին, Բաքվի քաղաքի և շրջանի ոստիկանապետ Դիմինսկուն, նախաշրջանի ոստիկանապետ Խոմիցկուն, հանրային ապահովության տնօրեն, ժանդարմերիայի պետ իշխան Թավբերիձեին, ուլքեր կատարում էին թուրք-թաթար ազգայնամուլների և խոշոր կալվածատերերի պահանջը, հաջողվեց առաջացնել ընդհարումներ հայերի և թուրք-թաթարների միջև: Այն տեղի ունեցավ 1905 թ. փետրվարի 6-9-ին: Փետրվարի 6-ին կիրակի էր: Այդ օրը կրակեց առաջին հրացանը, և Բաքվի փողոցները ներկվեցին արյունով: Պարապետ կոչված հրապարակում, որտեղ գտնվում է հայոց եկեղեցին, հավաքվել էին բավական թվով բնակիչներ, ինչպես և ցարական բանակի մի քանի հայ զինվորներ: Հանկարծ եկեղեցու մոտ երևում է թուրք ոճրագործ Բաբաևը, մոտենում կանգնած զինվորներից մեկին, հանում ատրճաճակը և կրակում նրա վրա: Բաբաևը փորձում է փախչել, սակայն հավաքվածները բռնում են նրան: Թաղայինը փորձում է նրան տանել թաղամաս: Բաբաևը ձգտում է փախչել, սակայն սպանվում է: Թե ում կողմից, այդպես էլ մնում է անհայտ: Այդ ժամանակ էլ մոտակա փողոցներից թուրքերը կրակում են հայերի վրա: Հրապարակը շտապ դատարկվում է: Սհա այսպես ծայր առավ ճակատագրական բախումը, որը կլանեց ամբողջ Անդրկովկասը:

<sup>8</sup> Кавказский календарь на 1905, с. 6 и 70.

<sup>9</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., գիրք 1, էջ 44:

<sup>10</sup> Չերոսական պայքարի վավերագրեր, Ե., 1984, էջ 333:

Թուրքերը կոչ են անում Ապշերոնի գյուղացիությանը զինվել և օգնության հասնել քաղաքին: Մուլլաների կոչով քաղաք են մտնում լեզգիներն ու թուրք գյուղացիները, որոնց ջերմորեն դիմավորում են նրանց հավատակիցները: Հայերը փակվել էին իրենց տներում և դուրս չէին գալիս փողոց: Թուրքերը սկսում են նավթ ցանել տների վրա և հրդեհել: Նրանք, հանկարծակիի բերելով հայերին, կարողանում են իրենց հսկողության տակ առնել Շամախինկա թաղը, Տելեֆոննայա փողոցը, Արմյանսկայա և Վորոնցովկայա փողոցների մեծ մասը: Անձամբ նահանգապետ Նակաշիձեն էր թուրքերին ոգևորում ոչնչացնել հայերին, հատկապես այն տները, որտեղից կրակում էին: ՀՀԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն սպառնում և պահանջում էր քաղաքում հաստատել կարգ ու կանոն<sup>11</sup>: Այդ ճակատագրական պահին անգնահատելի դեր խաղաց հին հայդուկ, դաշնակցության նշանավոր ռազմական գործիչ Նիկոլ Դումանը (Նիկոլ Տեր-Հովհաննիսյան)<sup>12</sup>, որն այդ ժամանակ գտնվում էր Բալախանիի նավթահանքերի շրջանում, որտեղ աշխատում էր որպես Արշակ Դուկասյանի նավթահանքերի կառավարիչ: Նա շտապում է Բաքու և, 20 կմ ճանապարհ կտրելով, այնտեղ հասնում փետրվարի 6-ի երեկոյան: Առանց ժամանակ կորցնելու՝ նախաձեռնում է քաղաքի հայերի ինքնապաշտպանության գործը: Արդեն 20 հայ էր սպանվել: Երկրորդ օրը՝ երկուշաբթի, կռիվն ավելի սաստիկ էր: Գազազած թուրքերը մտնում էին հայերի տները, մարդկանց սպանում, տները հրդեհում: Հայերը Շամախու թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսից պահանջում են, որ միջամտի գործին: Սակայն եկեղեցու այդ վախկոտ սպասավորը հրաժարվում է, նույնիսկ չի ցանկանում հեռախոսով խոսել նահանգապետի հետ: Նակաշիձեն անամոթաբար խաբում է նրան, թե իբր հեռագրել է Թիֆլիս՝ գորք ուղարկելու համար:

<sup>11</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., գիրք I, էջ 58 և 63:

<sup>12</sup> Նիկոլ Դումանը ծնվել է 1867 թ. Արցախի հաչեն գավառի Դշլաղ մեծ գյուղում, քահանայի ընտանիքում: Սովորել է Շուշիի թեմականում և ավարտել 1887 թվականին: Արցախի թեմի կոնսիստորիայում պաշտոնյա էր ու ստացել էր Կոլլեժսկի ռեգիստրատորի աստիճան: Հետո դասավանդել է Գյումրիում Կոմկասի հայոց դպրոցներում:

1891 թ. հասավ Թավրիզ՝ իբրև հայդուկ: Այա գործել է Վանում: 1897 թ. հուլիսի 25-ին, երբ տեղի ունեցավ համասուրի պատմական արշավանքը, առաջին հիսնյակը գլխավորում էր Դումանը: Մագրիկ քուրդ ցեղի վրա, որոնք 800 հայ էին կոտորել, հարձակումն ավարտվեց փառքով: համասուրում էր նաև Բարսումից Եփրեմը և Սարգիս Սարուխանյանը, որոնց հետ Դումանը վերադառնում է Թիֆլիս: Հետո գնում է Բաքու, որտեղ կանգնում է հայերի պաշտպանության գլուխ:

1914 թ. թոքախտով հիվանդ Նիկոլ Դումանն ինքնասպան է լինում: Նրա դիակը Բաքվից տեղափոխվում է Թիֆլիս և թաղվում Խոջիվանքում: Նիկոլ Դումանի արձանը դրված է Ստեփանակերտ քաղաքում: Վերջերս հայրենի Ծաղաշատ (Դշլաղ) գյուղում բացվել է Դումանի տուն - թանգարանը:

Բախտունը շարունակվում էր նաև հաջորդ օրերին: Նավթային շրջաններում աշխատող բանվորները իշխանություններից պահանջում էին վերջ տալ կամայականություններին ու կոտորածներին: Այդ օրերին հայերը մարտնչում էին խիզախաբար: Տասնյակ հայ քաջեր իրենց կյանքը չխնայեցին հայրենակիցներին պաշտպանելու համար:

Բաքվի ընդհարումների ժամանակ հայերը տվել են 205 սպանված և 121 վիրավոր, իսկ թուրքերը՝ 111 սպանված և 128 վիրավոր: Հայերի կորուստների շարքում կային կանայք, երեխաներ, ծեղեր: Ջոհերից 20 հոգի Շուշի քաղաքից էին<sup>13</sup>:

Ցարական ինքնակալության այդ դաժան քաղաքականությունից դժգոհ էր ամբողջ Անդրկովկասի, այդ թվում՝ Ելիզավետպոլի նահանգի հայությունը: Շամախու թեմի առաջնորդ Անանիա Համազասսայանը նույն թվականի ապրիլի 12-ին Մկրտիչ կաթողիկոսին ուղարկած զեկուցագրում հանգամանորեն նկարագրել էր Բաքվում տեղի ունեցած իրադարձությունները<sup>14</sup>:

Մինչ այդ Անանիա եպիսկոպոսը մարտի 31-ին բողոք-նամակ էր հղել Կովկասում գլխավոր պաշտոնյա գեներալ-լեյտենանտ Յակով Դմիտրի Մալիլինին, որտեղ հանգամանորեն նկարագրել է Բաքվի իրադարձությունները: Նա նշել է, որ մինչև փետրվարի 6-ի իրադարձությունները իշխանավորները մուսուլմաններին զրգռում էին հայերի դեմ: Հայերը, ըստ թեմի կառավարչի պատմածի, Բաքվում կազմում էին փոքրամասնություն, զբաղվում էին իրենց գործնական կյանքով, հիմնականում բանվորներ էին, արհեստավորներ, ինժեներներ, այլ մասնագիտությունների տեր մարդիկ, որոնցից շատերը զրկվեցին աշխատանքից: Իսկ դա մուսուլման պրովոկատորների գործունեության հետևանք էր: Հայերը չէին կարծում, թե իրենց պատիվը և իրավունքները այդպես ոտնատակ կտրվեն: Անանիա Համազասսայանը այդ ամենը նկարագրում է խոր դառնությամբ<sup>15</sup>:

Բաքվի իրադարձությունների ազդեցության տակ 1905 թ. փետրվարի 18-ի ցարական հրովարտակով ապրիլին Թիֆլիսում հրավիրվեց կովկասահայերի առաջին համագումարը: Ըստ Նիկոլայ II-ի փետրվարի 18-ին ստորագրած հրովարտակի՝ հնարավորություն էր տրվել համայնքների և ազգությունների «ընտրյալ ներկայացուցիչների» միջոցով խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել պետական օրենսդրական գործունեությանը, այսինքն՝

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 133, թ. 14:

<sup>14</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թուրք 237, վավ. 56:

<sup>15</sup> Նույն տեղում, թ. 237<sup>II</sup>, վավ. 57:

առանձին ուղերձներով Պետական խորհուրդ ներկայացնել իրենց կարծիքները: Կովկասահայ առաջին համագումարին մասնակցեց 82 պատգամավոր՝ 24 քաղաքային և գյուղական հասարակություններից: Ընտրվեց 16 հոգուց բաղկացած կոմիտե, որը պետք է ստացված պահանջները ներկայացներ Պետական խորհուրդ: Անկասկած, ցարն այս քայլով փորձում էր կովկասահայության մեջ կորցրած իր հեղինակությունը վերականգնել: Մանավանդ որ սկսված հեղափոխության ալիքն անընդհատ բարձրանում էր:

\*\*\*

Արցախը մտնում էր Ելիզավետպոլի նահանգի մեջ: Դեռևս 1867 թ. դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր 2-րդ ցարն ստորագրել էր մի կանոնադրություն՝ «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխումների մասին», որը գործողության մեջ դրվեց 1868 թ. հունվարի 1-ից: Այդ կանոնադրության համաձայն՝ Բաքվի նահանգը կիսվեց, և ստեղծվեց նոր՝ Ելիզավետպոլի նահանգ: Այն կազմում էր 38,3 հազար քառ. կմ տարածք: Նահանգի մեջ մտնում էին Գանձակի, Շուշիի, Ջանգեզուրի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի, Նուխու և Արեշի գավառները: Նահանգում կար 1613 գյուղ, որից 390-ը՝ հայկական<sup>16</sup>: Ըստ էության՝ Անդրկովկասում հայ-թուրքական բախումն ամենաուժեղը տեղի է ունեցել Ելիզավետպոլի նահանգում, հատկապես նահանգի մեջ մտնող Արցախ-Ղարաբաղում: Միքայել Վարանդյանը, Ա-ԴՕ-ն և այլ հեղինակներ շեշտել են, որ Անդրկովկասի ոչ մի գավառում հայ-թուրքական ընդհարումն «այնքան կատաղի և արյունահեղ» չի եղել, «ինչպես Ղարաբաղում և անոր մայրաքաղաք Շուշիի մեջ»<sup>17</sup>:

Բաքվի իրադարձություններից հետո Գանձակի և Ղարաբաղի թուրքերը իշխանությունների քաջալերությամբ եռանդով զինվում էին: Նրանք զենք էին ձեռք բերում Պարսկաստանից և ինքնակալության ժանդարմներիայի պահեստներից՝ դրա համար ծախսելով բավական գումարներ: Ելիզավետպոլի նահանգապետ Լաջուան, չկարողանալով վերահսկել նահանգում տեղի ունեցող այդ գործողությունները, 1905 թ. հունիսին հրաժարական տվեց: Նրան փոխարինեց 1905 թ. մայիսի 11-ին հայերի ահաբեկության հետևանքով զոհված իշխան Նակաշիձեի քրոջ որդի Տակայաշվիլին, իսկ Եվլախ-Շուշի ճանապարհի

<sup>16</sup> Տե՛ս «Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорском высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862-6 декабря 1872 гг.», Тифлис, 1873, ст. 49-50, Ա-ԴՕ (Յովհաննես Տեր-Սարգիսիսյան), Ղայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906), Ե., 1907, էջ 143-144:

<sup>17</sup> Վարդանյան Ա., Գ.Յ Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 321:

հսկողությունը հանձնվեց հայտնի ավագակապետ Աբբաս Վեզիրովին: Դրան էլ հավելենք այն, որ չնայած Շուշի գավառի բնակչության մեծամասնությունը հայեր էին, ոստիկանապետը և մի շարք այլ պաշտոնյաներ թուրքեր էին: Արդեն պարզ է, թե ինչ վիճակում կարող էին լինել նահանգի, հատկապես Շուշիի գավառի հայերը: Թուրք ավագակների բացահայտ գործողությունները, որոնք տեղի էին ունենում նահանգի գավառներում, որոշ չափով զսպում էին հայերի դիմադրությունը:

Վաղուց ի վեր «քոչի» ճանապարհն անցնում էր հայկական գավառներով: Նահանգում գտնվող թափառական կամ կիսաթափառական թուրքերը և քրդերը առանց ամառային արոտավայրերի չէին կարող գոյատևել: Դավիթ Անանունը գրել է, որ Ղարաբաղի ամառային արոտավայրերը բռնում են 307125 դեսյատին տարածություն, որից օգտվելու համար հարմար է 246515 դեսյատինը: Այդ արոտատեղերի օգտագործումը կատարվում էր համաձայն 1884 թ. հունիսի 26-ի օրենքի: 1899 թ. տվյալներով, այդ արոտավայրերից օգտվում էր 26038 ծուխ, որից թուրք՝ 18919, քուրդ՝ 3510, հայ՝ 3408, թաթ՝ 201: Արոտատեղեր բարձրանալու ճանապարհին թուրք խաշնարածը «ոտնատակ է տալիս հայ գյուղերի ցանքսերն ու մարգագետինները, ջարդում ծառատունկերը, իր խաշնին խառնում հայ շիլ ընկած անասունը և այլն: Իսկ նրան հետևում է կռիվ, ընդհարում, սպանություն և թշնամություն»: Հեղինակը եզրակացնում է, որ թուրքերի «բարքերի կոպտությունը, նրանց մեջ արմատացած գողությունն ու ավագակությունը արդյունք են թափառական խաշնարածության»: Հեղինակի այն համոզումը, թե «Ադրբեջանի գոյության համոզված պաշտպանները կամենում են իրենց ժողովրդի հետամնացությունը զենք ծառայեցնել հարևան Հայաստանի դեմ ու մշտաբորբոք պահել ազգային կռիվը», անառարկելի է<sup>18</sup>: Իսկ դաշնակցական գործիչ Ռուբենը եզրակացնում է. եթե Ադրբեջանի թափառական ցեղերի շահը միայն ի նկատի ունենանք, ապա ոչ միայն Ղարաբաղը, Քանձակը, այլև ամբողջ Հայաստանը պետք է «զոհաբերվի խաշնարածներու ապահովութեան»<sup>19</sup>:

Այսպես՝ հայ-թուրքական հակասությունները XX դարի սկզբին Քանձակի նահանգում խիստ սրվել էին և ընդհուպ մոտեցել բացահայտ բախման, որից խուսափելը, թերևս, դժվար էր: Ըստ որոշ տեսակետների՝ դա բացատրվում էր ցեղային թշնամությամբ և ատելությամբ, որոնց արմատները թաղված են դարերի խորքում, ինչպես նաև թուրք

<sup>18</sup> «Հայաստանի կոպերացիա», 1920, N 17, էջ 689:

<sup>19</sup> «Դրոշակ», 1926, N 2, էջ 51:

տարրերի ցեղային բնագոյով, որն ունի քանդելու, կործանելու հակումներ և անընդունակ է քաղաքակրթվելու: Ամենավատքարը ցարական ինքնակալութան ստեղծած իրավիճակն էր, երբ ճնշված և զաղութացված ժողովուրդներին կանգնեցրին դեմ հանդիման և դրդեցին ռազմական գործողությունների ու կոտորածների: Իսկ Գանձակի նահանգն ուներ որոշ յուրահատկություններ: Ըստ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Ա-ԴՕ) բացատրության՝ մասնավոր կալվածատիրությունն այնտեղ տարածված էր ավելի մեծ չափով, քան, ասենք, Երևանի նահանգում: Նահանգի բոլոր զավառներում վխտում էին թուրք-կալվածատեր բեկեր և աղալարներ, որոնք մեծ ազդեցություն ունեին թուրք գյուղացիների վրա. այս երևույթը բացակայում էր հայերի շրջանում: Գանձակի նահանգում մասնավոր սեփականատերերը ունեին 631 հազար դեսյատին հող, որից 314 հազարը նրանց անմիջական տիրապետության տակ էր, իսկ 317 հազարը՝ գյուղացիների: Մինչդեռ Երևանի նահանգում մասնավոր սեփականատերերն ունեին ընդամենը 120 հազար դեսյատին հող, որից իրենց անմիջական տիրապետության տակ էր միայն 19 հազար դեսյատինը, իսկ 101 հազարը գյուղացիների ձեռքին էր: Ա-ԴՕ-ն բերում է նաև հետևյալ տվյալը. Երևանի նահանգում պետական հողերի վրա ապրող գյուղացիները կազմում էին 64 տոկոս, մինչդեռ Գանձակի նահանգում այդ տոկոսը հասնում էր 45-ի: Այս հանգամանքը ևս կամա թե ակամա ազդել է ազգամիջյան բախումների վրա: Մյուս կողմից էլ որոշ դեր է խաղացել երկու ժողովուրդների թվական կազմը: Գանձակի նահանգի բնակչության մեծամասնությունը, լինելով թուրք և ենթարկվելով թուրք կալվածատերերին, կատարում էր նրանց կամքը: Ընդհարումն սկսվելուց հետո լեռնային շրջաններում ապրող հայերը չէին կարողանում օգտվել դեպի հարթավայրեր տանող ճանապարհներից, որոնք թուրքերը փակել էին, արգելվել էր երթևեկությունը, հայերին կտրել էին դրսի աշխարհից, նրանց կղզիացրել և այդ ճանապարհով ճնշել, իսկ հայերը ձգտում էին զենքի ուժով պահել ճանապարհները, ամհնարին լինելու դեպքում նոր ճանապարհներ բացել, թեկուզ դրա համար հարկ կլիներ ավերել մի քանի թուրքական գյուղ: Անշուշտ, անհրաժեշտությունը ստիպել է հայ ժողովրդին պատշաճ պատասխանել թուրքերի ձեռնարկած քայլերին:

Ելիզավետպոլի նահանգում առաջին թուրք-հայկական ընդհարումները տեղի են ունեցել Ջանգեզուրի գավառում: 1905 թ. մայիսին գավառ մտած թուրք քոչվոր բարբարոսները հայերին սպառնում էին առաջ բերել արյունոտ ընդհարումներ: Ջանգեզուրի հայությունը խոր տագնապի մեջ էր: Նույն թվականի հունիս-հուլիսին

ընդհարումներ տեղի ունեցան Սիսիանի շրջանի Շաղաթ, Մազրա և Բռնակոթ գյուղերի մոտերքում: Առավել ծանր հետևանքներ ունեցան 1905 թ. օգոստոսի 19-22-ը Մինքենդում տեղի ունեցած իրադարձությունները: Գյուղը 1844 թ. այստեղ էր գաղթել խնձորեսկից: Այն ուներ խառնազգի բնակչություն՝ 85 ծուխ հայ, 145-ը՝ թուրք: Գյուղը շրջապատված էր Սեյիդտար, Մուլլա-Ահմատտու և Քոսալար թրքական գյուղերով: Մինքենդը գտնվում էր Գորիսից դեպի հյուսիս՝ 35 վերստ հեռավորության վրա, ներկայիս Քաշաթաղի շրջանի տարածքում, Քեշտազ գետի ափին, մի բլրապատ վայրում: Հայերն այստեղ զբաղվում էին գյուղատնտեսությամբ և ունեին լավ տներ: Նրանք ունեին 21 խանութ, դպրոցի շենք, որտեղ սովորում էին նաև թուրք երեխաներ: Այստեղի հայերի կյանքը խիստ վտանգավոր դարձավ Նախիջևանում տեղի ունեցած ընդհարումներից հետո: Գավառապետ Ավալյանին, հունիսին գալով Մինքենդ, խոստացավ պաշտպանել տեղի հայերին: Սակայն մի քանի օր անց այդտեղ եկավ Սադդ-բեկ Մելիք-Ասլանովը, որը, փաստորեն, դարձավ Մինքենդի ոճրագործության հիմնական հեղինակը: Եվ երբ կրկին Մինքենդ եկավ Ավալյանին, գյուղի հայերը նրան խնդրեցին թույլ տալ կազակների հսկողությամբ հեռանալ գյուղից: Գավառապետը իբրև թե թարաքամաների տանուտերերին պատվիրել էր հայերին ձեռք չտալ: Սակայն այդ օրերին Շուշիում և Գորիսում տեղի ունեցած ընդհարումները հուզումներ առաջացրին նաև Մինքենդի շրջանում: Օգոստոսի 20-ի երեկոյան գյուղը պաշարեցին թարաքամաները: Նրանք, ներխուժելով գյուղ, թալանեցին և սրի մատնեցին հայերին: Թարաքամաներին ակտիվորեն օգնում էին գյուղի թուրք բնակիչները: 696 հայերից 240-ը զոհվում են, 44-ը՝ անհետանում և գերեվարվում, իսկ 456-ը մի կերպ փրկվում են և ցրվում՝ ընդմիջտ Մինքենդ չվերադառնալու որոշումով<sup>20</sup>:

Մինքենդի ոճրագործները մնացին անպատիժ: Երևանում, Նախիջևանում և Մինքենդում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից ոգևորված՝ թուրք բարբարոսները ավելի կատաղի էին դարձել: Նրանք, տարված լինելով «զանազան էմիսարների և գրգռիչների քարոզներով, մղձավանջն ավելի ու ավելի

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 229, թ. 3-4, Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 446-447: Թուրք ավազակները Մինքենդի հայերից հափշտակել են 500 խոշոր եղջերավոր անասուն, 1423 ոչխար, 149 ձի, էշ և ջրիի, 1290 գորգ, 688 կապերտ, 182 քեջմն, 688 ջվալ, 344 թաղիք, 174 պղնձե կուժ, 457 պղնձե աման, 1290 անկողին, 65 ինքնաեռ, 14 կարի մեքենա, 6520 ռուբլու արծաթեղեն, 2700 ռ. ոսկե և արծաթե զարդարանքներ, մեծաքանակ սննդամթերք, հացահատիկ: Մինքենդի հայերը կորցրին 85 գեղեցիկ շինություն, 21 խանութ, փհազին հողատարածություններ:

<sup>21</sup> Արամայիս, Մի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մասն առաջին, Թիֆլիս, 1907, էջ 5:

խեղդիչ դարձրին»<sup>21</sup>: 1905 թ. օգոստոսին ազգամիջյան ընդհարումներ տեղի ունեցան նաև Ջանգեզուրի Խոզնավար, Խնածախ, Ձեյվա, Ալիդուլի, Չարար գյուղերում: Խոզնավարի և Խնածախի արանքում գտնվող Բայանդուր թրքական գյուղը և համանուն ձորակի մի շարք դշլաղների ավազակաբարո բնակչությունը իսկական չարիք էին ոչ միայն այդ երկու գյուղերի, այլև ավելի հեռու գտնվող գյուղերի համար<sup>22</sup>:

1905 թ. ամռանը՝ մինչև օգոստոսյան իրադարձությունները, ընդհարում էր տեղի ունեցել նաև Խաչենի Առաջածորում: Յուլիսի 25-ին սարից իջնող Փարասանլու ու Քենգերլու կոչվող ցեղերի և Առաջածորի հայերի միջև տեղի էր ունեցել ընդհարում: Թարաքամները կտրել էին գյուղի տավարածի գլուխը և տարել: Ձինված վանքեցիները հասնում են նրանց, ստուգում, գտնում գլուխը: Սկսվում է կռիվը: Չայերը փակում են Սաբաթգեազմազ կիրճը և թույլ չեն տալիս մնացած խաշնարածներին սարից իջնել: Չայերը թուրքերից քշում և բերում են հարյուրավոր անասուններ: Աղդամի կողմից օգնության եկող թուրքերի ճանապարհը փակում են կազակները: Այդ մարտերում հայ «թուցիկ» խմբերը մեծ դեր են խաղում: Սուրհանդակները անմիջապես իմաց են տալիս խաչենցիներին, ջրաբերոցիներին և գյուլիստանցիներին: Սակայն հրահանգվում է կռիվը չբորբոքել: Ցեխ ձորում թուրքերը սպանում են երեք անմեղ հայի, հայերն էլ սպանում են թուրքերի գլխավորին: Դրանից հետո թուրքերը հարձակումներ են սկսում եվլախ-Շուշի ճանապարհի վրա: 18 հայ գերվում է թուրքերի կողմից<sup>23</sup>: Բացի այդ, Աղդամի թուրքերը մի շարք թարաքամների հետ՝ մոտ 300 հոգով, արշավում են Առաջածոր գյուղի վրա՝ նպատակ ունենալով այն ամբողջովին ավերել ու թալանել: Սակայն առաջածորից քաջերը, հակահարված տալով, հետ են մղում նրանց: Այդ մասին արդեն Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը օգոստոսի 9-ին հեռագրել էր Գանձակի նահանգապետին, որ թուրքերը «բազմահազար ձիավորներով դաշտավայրից շարժվել են Խաչեն... Կոտորած է սկսվել թուրքերի և հայերի միջև: Խոնարհաբար խնդրում ենք շուտափույթ միջոցներ ձեռք առնել դադարեցնելու կոտորածները: Քաղաքում խիստ հուզում է»<sup>24</sup>: Այդ հեռագիրն ուղարկվել էր նաև Թիֆլիս և հայոց կաթողիկոսին:

Կատաղած թուրքերը այս անգամ լրիվ փակում են Շուշի-Եվլախ

<sup>22</sup> Սիմոնյան Յ., նշվ. աշխ., գիրք 1, էջ 364:

<sup>23</sup> Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 192, «Դրոշակ», 1905, N 11:

<sup>24</sup> Մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր Ղազարյանի, թուրք 3, վավ. 167:

ճանապարհը: Եվ դա կատարվում է գավառապետի, նահանգապետի օգնականի և ամբողջ ոստիկանության կազմի ներկայությամբ<sup>25</sup>: Թուրքերը գերի են վերցնում հարյուրից ավելի հայ ճամփորդների, նրանց թալանում և անպատվում, իսկ մի քանիսին էլ հասցնում դաշույնի հարվածներ:

1905 թ. օգոստոսի 11-ին Սկրտիչ կաթողիկոսը հեռագրում է Աշոտ թեմակալին և պահանջում տեղեկություններ հաղորդել «հոտի դրութեան մասին»<sup>26</sup>: Նույնը օրը Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է նորին սրբություն հայոց կաթողիկոսին և Թիֆլիս. «Քաղաքում թեև կարգը խանգարված չէ, բայց դրությունը տագնապալի է: Ըստ տեղեկության, գավառապետ Յուսեյին բեկի միջամտությամբ Խաչենում հայերի, թափառականների և թուրք հեծյալ զորքի միջև կնքվել է հաշտություն: Եվլախ-Շուշի խճուղում թուրքերը կոտորել են հայերի: Բանակցություններ են գնում խաղաղությունը վերականգնելու համար: Ստածում են քաղաքագլխի հետ գնալ Աղդամ, հանդիպել նահանգապետի հետ և վերադառնալ նույն օրը: Անհրաժեշտ պահանջ է զգացվում ճանապարհը թուրքերից պաշտպանել զորքի միջոցով»<sup>27</sup>:

Արցախի թեմի առաջնորդը նույն օրը՝ օգոստոսի 11-ին, Աղդամում գտնվող Սալիմբեկ Ռուստամբեկովին և Բահատուրբեկ Կալաբեկովին բողոք է հայտնում Եվլախ-Շուշի ճանապարհի վրա տեղի ունեցող վայրագությունների համար և խնդրում ամենավճռական միջոցառումներ ձեռնարկել տեղի ունեցող անկարգությունները կանխելու համար<sup>28</sup>: Այդ օրերին թեմակալին Բաքվից հեռագրում են. «Մեզ խիստ հուզում է Շուշիում անկարգությունների մասին լուրը: Պետք է օգտագործվի ազդեցիկ ուժերը: Շուշին կարող է ճակատագրական լինել Անդրկովկասում»<sup>29</sup>: Հեռագիրը ստորագրվել էր Բաքվի քաղաքագլխի անունից:

Հայ-թուրքական ընդհարումների ալիքը հասավ Շուշի:

Բոլոր նախանշանները համոզում էին, որ Ղարաբաղում պետք է տեղի ունենային հայ-թուրքական բախումներ, որովհետև երկու շահագրգռված կողմերի միջև ատելությունը, ինչպես վկայում է Արամայիսը, գնալով մեծանում էր, իսկ չարիքը խեղդելու համար ոչ մի միջոց չէր ձեռնարկվում, և «տեղական իշնխանությունը մատների արանքով» էր նայում «բոլոր երևույթներին, երբեմն նույնիսկ

<sup>25</sup> «Դրոշակ», 1905, N 12, էջ 184:

<sup>26</sup> Մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր Ղազարյանի, թուրք 3, վավ. 167:

<sup>27</sup> Նույնը, վավ. 167:

<sup>28</sup> Նույնը:

<sup>29</sup> Նույնը:

նպաստելով վիճի լայնանալուն, զանազան դատապարտելի միջոցներով»<sup>30</sup>: Դա էր հիմնական պատճառը, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը բավական թվով գործիչների, ղեկավարների և անդամների «ցանցով պատեց զավառները», որովհետև բացեիբաց «հայի գոյության խնդիրն իսկապես վտանգված» էր Կովկասում: Դրանից էլ բխած՝ «սկսվեց մի տենդագին, խելապատառ գործունեություն ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար»<sup>31</sup>:

Շուշի քաղաքի և Ղարաբաղի թուրքերի զինման ու նրանց՝ հայերի դեմ կռվի կոչելու ամբողջ նախապատրաստման գործը գլխավորում էին Շուշիի բեկերը, որոնց զուլխ էին կանգնած Բահաթուր բեկը, Աղըգյոզալ բեկը և ուրիշներ: Նրանք նախատեսել էին Ղարաբաղի հայերի դեմ հարձակում սկսել դեպի Շուշի և դեպի Գանձակ: Շուշի քաղաքի հայկական և թուրքական թաղամասերի մեջտեղում ընկած էր հայկական շուկան՝ Մեծ մեյդանը, որը կոչվում էր նաև Թոփխանա: Քաղաքի երեք փողոցներ՝ Թատրոնի, Ագուլեցոց եկեղեցու և Փոստի, որոնք կազմում էին քաղաքի զարդը և իրենց մեջ ընդգրկում 400 տներ ու լիքը խանութներ, գտնվում էին թուրքերի ուշադրության կենտրոնում:

Որ թուրքերը տենդագին նախապատրաստվում էին հայերի դեմ բացահայտ պայքարի, անկասկած էր: Դա չէր կարող գաղտնի մնալ թե՛ Շուշիի և թե՛ երկրամասի հայությունից: Արհավիրքին դիմակայելու համար նախապատրաստվում էր նաև արցախահայությունը:

ՀՀԴ տեղի կենտրոնական կոմիտեն՝ «Ապառաժը», հոգ էր տանում զինել երկրամասի բնակչությանը: Դրա համար պահանջվում էին ֆինանսական միջոցներ: Արցախի բնակչության վրա դրվեց հատուկ տուրք՝ լրացուցիչ զենք և զինամթերք ձեռք բերելու համար: Ստեղծվեց զինական ֆոնդ, խիստ հաշվառման վերցվեցին զենքերն ու փամփուռները: Տնտեսական հարցերը լուծելու համար ստեղծվեց հատուկ խորհուրդ: Քաղաքում ներքին կարգը պահպանելու համար կազմակերպվեց ժողովրդական միլիցիա, որում ընդգրկված էր մոտ 150 հոգի:

Արցախահայության ինքնապաշտպանության գործը ղեկավարում էր Գանձակի նահանգում հայկական ուժերի ընդհանուր պատասխանատու նշանակված Վարդան Մեհրաբյանը, որի կենտրոնատեղին էր Շուշի քաղաքը: Վարդանը եղել է վերոնշյալ 1897 թ. Խանասուրի արշավանքի հրամանատարը և դարձել էր առասպելական հերոս: Ա. Գյուլխանդյանը վկայում է, որ Վարդանին Ռոստոմն էր

<sup>30</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 6:

<sup>31</sup> Նույնը:

առաջարկել մեկնել Ղարաբաղ: Նա, գալով Շուշի, «կլանվեց ամբողջապես հայ-թաթարական կռիվներով ու պատվով տարավ գործը»<sup>32</sup>: Նրա հիմնական խնդիրներից մեկը զենք գնելու համար փող ձեռք բերելու գործն էր, որի ընթացքում հանդիպեց «ուճևոր, բարեկեցիկ քաղաքացիների... եսասիրությանն ու զայրացուցիչ անտարբերությանը»: Եվ «չնայած դաշնակցության կոմիտեի բազմաթիվ դիմումներին՝ Շուշիի հայ ուճևորներն անուր փակել էին փողի քսակները և նույնիսկ այդ բախտորոշ պահին հրաժարվում էին միջոցներ հատկացնել պաշտպանության գործին»<sup>33</sup>: Հայ հեղափոխական դաշնակցության համապատասխան մարմինները դիմեցին նաև Բաքվի և Թիֆլիսի մեծահարուստ շուշեցիներ Ադամյաններին, Բեգլարյաններին, Ղուկասյաններին, Գափյաններին, Խուճուճներին, Խանդամիրյաններին, Թամիրյաններին, Անանյաններին, Խաչատրյաններին և ուրիշների, որոնք տալիս էին անորոշ պատասխաններ ու ցուցաբերում անտարբերություն հայրենի Արցախի ճակատագրի նկատմամբ: Նման պայմաններում, երբ որոշվում էր Արցախի ճակատագիրը, Վարդանը ստիպված էր սպառնալ մի շարք մեծահարուստների:

Ինքնապաշտպանության հրամանատարության կողմից Շուշիի հայկական մասը բաժանվել էր թաղամասերի: Ամեն մի թաղ ուներ իր թաղապետը և նրա օգնականը: Թաղամասերի ռազմավարական կարևոր կետերը վերածվել էին դիրքերի, որտեղ ամեն մեկում հսկում էին 4-10 կամավորներ: Կազմակերպվեց նաև թռուցիկ խումբ<sup>34</sup>:

Շուշի քաղաքը բաժանված էր երկու թշնամական բանակների: Այդ օրերին՝ օգոստոսի 8-ին, նոր ընդհարում էր տեղի ունեցել սարերից իջնող քոչվորների և Խաչենի Վանք գյուղի հայերի միջև: Պատճառը հայերի կորեկի արտերի ավերումն էր քոչվորների ոչխարների հոտի կողմից: Այդ դեպքը «ոտքի կանգնեցրեց Աղդամի և շրջակա գյուղերի թուրք խուժանին, որոնք երկու օր շարունակ ձիավոր խմբերով ասպատակում էին Եվլախի ճանապարհը՝ կողոպտելով և գերելով երկու

---

<sup>32</sup> Գյուլխանդյան Ա., Հեղափոխական դեմքեր, «Հայրենիք», 1936, Ժե տարի, N 2 (70), էջ 103:

<sup>33</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 373:

<sup>34</sup> Քաղաքի հայկալայն թաղամասի ինքնապաշտպանության դիրքերն էին՝ ճաքած քերծի գլուխ, Վերի դարպասներ, Աղա Իրզայի պարտեզ, Քարի տակի ճանապարհի բերան, Գյոլվար աղայի տան դիմացի դիրք, մի այլ դիրք՝ նույն տնից վեր՝ սարի վրա, Բաղունց հորեր, Վերդանց պարտեզ, Ալեքսան բեկի տուն, ապա մի դիրք թատրոնից վեր և երեք դիրք Հին հանգստարանի շրջակայքում, Տպարանի դիրք, Ագուլեցոց եկեղեցի, երեք դիրք Աղաբեկենց ձորում, երեքը՝ Ղամլուղում, մեկը՝ Քամու աղացում և մեկը՝ Բարուխանայում («Դրոշակ», 1905, N 12, էջ 184, Վարդանյան Մ., էջ 184, Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 148-149, Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 369 և այլն):

կողմերից երթևեկող բազմաթիվ շուշեցի ճանապարհորդների՝ նրանց ենթարկելով բռնությունների, վիրավորանքների և խայտառակությունների»<sup>35</sup>: Իսկ օգոստոսի 7-ի լույս 8-ի գիշերը Շուշիի թուրքական սահմանի մոտ սպանվել էր թուրք լապտերավառ: Թուրք բեկերն այն վերագրեցին հայերին, չնայած դրա համար չունեին ապացույցներ: Նույնիսկ Բաքվի «Каспий» թերթում Շաֆիրբեկով ազգանունով մեկի տպագրած հեռագիրը՝ «Գիշերվա ժամը 3-ին երեք հայեր մեծ կոշիկներով և բրդոտ փափախներով, խենջարներով կտորկտոր արին մի լապտերավառ մահմեդականի և փախան»<sup>36</sup>, լիովին կեղծ էր: Այն ավելի զրգռեց թուրքերին, որոնց ղեկավարում էր քաղաքի ոստիկանապետ Խոսրով բեկ Փոլադովը: Քաղաքում տեղի ունեցող հրածգությունները հետզհետե սաստկանում էին: Կրակում էին երկու կողմերից: Չոհվում էին հայեր և թուրքեր: Քաղաքի հայությունը համախմբվել էր ՀՅԴ-ի շուրջը: Վրեժխնդրությունը համակել էր երկու կողմին, հատկապես՝ երիտասարդությանը:

Շուշիում ամենաահավոր իրադարձությունները տեղի ունեցան 1905 թ. օգոստոսի 16-ից մինչև 22-ը: Օգոստոսի 16-ի առավոտյան՝ ժամը 10-ին, Քարահատ կիրճում թուրքերը հարձակվում են մի հայի վրա, նրան վիրավորում և խլում հրացանը: Ներքին դռների մոտ թուրքերը վիրավորում են երկու կաղարծեցի հայերի և խլում նրանց ձեռքի ատրճանակները: Այդ նույն օրը՝ ցերեկվա ժամը 2-ին, թուրքերի թաղամասում սպանվում է նախկին հաշտարար դատավոր, ազգությամբ ռուս Լուսինակինը, իսկ Շուշիից Գորիս տանող խճուղու վրա՝ Յարմա կոչված տեղում, թուրքերը վիրավորում են դարաղշլաղեցի մի հայի: Քաղաքից օգնության է հասնում կամավորների մի խումբ, որոնց հետ էր ուխտյալ հեղափոխական Մարգար ժամհարյանը (Մռավ): Թուրքերը դիմում են փախուստի:

Քաղաքում տեղի ունեցող այդ իրադարձություններից անհանգստացած՝ մի խումբ հայեր անցնում են թուրքերի հատվածը՝ իբր իմանալու, թե որտեղ է սպանվել Լուսինակինը: Հանկարծ թուրքերի մեյդանի կողմից որոտում են հրացանները, որին ի պատասխան Թոփխանայի կողմից ճայթում են հայերի հրացանները: Ահա այսպես սկսվեցին ահեղ կռիվները Արցախում: Մի քանի րոպեում Շուշին վերածվեց պատերազմական թատերաբեմի: Ժողովուրդը թափվեց փողոց: Երկու կողմերից էլ անխնա կրակ էր թափվում: Թոփխանայի կողմում ընկան տասնյակ թուրքեր: Հայկական թաղամասում գտնվող թուրքերը տեղափոխվեցին թուրքական թաղամաս, իսկ թուրքական

<sup>35</sup> Ա-ԴՕ, մշվ. աշխ., էջ 151-152:

<sup>36</sup> Նույնը, էջ 152:

թաղամասում գտնվող հայերը՝ հայկական թաղամաս: Սակայն բոլոր հայերը չէին, որ հասցրին տեղափոխվել. եղան մի շարք սպանվածներ, իսկ ոմանք էլ պահվեցին որպես պատանդ:

Հրաձգությունը շարունակվեց մոտ մեկ ժամ: Թուրքի մեյդանում և Աղաբեկանց ձորում ընկան 20-ի չափ հայեր և թուրքեր: Այդ գիշերն անցավ խաղաղ: Սակայն օգոստոսի 17-ի առավոտյան նոր ուժերով վերսկսվեց կռիվը: Նախորդ օրը զորանոցից դուրս չեկած զորքը ստիպված իջավ փողոց, սակայն հրաման չուներ կրակելու, միայն դիտողի դերում էր: Դրսից լիովին կտրված Շուշիից բազմաթիվ հեռագրեր էին ուղարկվել Պետերբուրգ՝ Նիկոլայ 2-րդ ցարին, թագուհուն, կառավարությանը, Թիֆլիս՝ փոխարքա Վորոնցով-Դաշկովին, Ելիզավետպոլի նահանգապետին: Միակ պատասխանը ստացվեց նահանգապետից, որը հայերին խորհուրդ էր տալիս «պաշտպանվել՝ գործի դնելով ցանկացած միջոց»<sup>37</sup>: Այդ նույն օրը նահանգապետ Բարանովսկին Հաջիքենդից հեռագրում է Աշոտ եպիսկոպոսին, թե ինքը ճանապարհվել է՝ Ղարաբաղ գալու համար<sup>38</sup>:

Օգոստոսի 17-ի օրվա երկրորդ կեսին քաղաք է մտնում փոխգնդապետ Բարանովսկին՝ 200 կազակներով, որը, սակայն, նշանակություն չունեցավ երկու կողմերի կռվողների համար: Հայերը կռվում էին խիզախորեն: Կան տվյալներ, որ 19-ամյա Իշխան Հեյբաթյանը իր վրա հարձակվող թուրքերից սպանել է 17 հոգու<sup>39</sup>: Նման օրինակներ շատ են: Այդ օրը հայերը գերի էին վերցրել 100-ից ավելի թուրք կռվողների, այդ թվում՝ հայտնի Հունեին-բեկ Ջիվանշիրսկուն՝ իր թիկնապահների հետ<sup>40</sup>:

Այդ օրն ընկան նաև մի շարք հայ քաջեր: Ջոհվեց Շամիր անունով մի արիասիրտ երիտասարդ, որը մինչև զոհվելը գետին էր գլորել բազմաթիվ թուրքերի: Օգոստոսի 17-ի կռիվներում ընկածներից էր

<sup>37</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 370:

<sup>38</sup> Մատենադարան, Արիսիվ Գյուտ եպիսկոպոս Տեր Ղազարյանի, թուրք 3, վավ. 167:

<sup>39</sup> «Դրոշակ», 1905, N 12, էջ 184:

<sup>40</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 371, «Դրոշակ», 1905, N 12, էջ 184:

<sup>41</sup> Մարգար ժամհարյանն ավարտել է Շուշիի ռեալականը: Այնուհետև մեկնել է Պետերբուրգ և կամավոր մտել զինվորական ծառայության: Հետո երկու տարի Գերմանիայում ուսանել է հասարակական գիտություններ: Ուսումը կիսատ թողնելով վերադառնում է Կովկաս և նետվում հեղափոխական շարժման մեջ: Նա ՀՀԳ Բաքվի կազմակերպության ղեկավարներից մեկն էր: Այստեղ՝ հայոց եկեղեցու դիմացի Պարապետի հրապարակում, ռուսք նետելու համար կառավարության կողմից պատժվում է, հեռացվում է նաև ՀՀԳ Բաքվի կոմիտեի կազմից: Դրանից հետո նա մեկնում է Արևմտյան Հայաստան, ապա վերադառնում Շուշի: Բաքվի կոտորածներից առաջ մեկնել էր Թուրքիա, եղել է Մուշում, Բիթլիսում, պատրաստվում էր Սասուն գնալ, սակայն ճանապարհը փակվելու պատճառով վերադառնում է հայրենի Շուշի, որտեղ երկու օր իր խմբով հրաշքներ է գործում: Օգոստոսի 17-ին 28-ամյա Մարգարն ընկավ հերոսի

Մարգար ժամհարյանը<sup>41</sup>:

Թուրքերը, տեսնելով, որ հաջողություններ չեն ունենում, դիմում են ավելի վայրագ ձևի. օգոստոսի 17-ին վառում են քաղաքից դուրս Պեխի աղբյուրի մոտ գտնվող Թամիրյանի աղյուսի գործարանը, իսկ Ղայբալուի ձորում՝ Դավիթ Ներսիսյանի մետաքսի գործարանը: Որպես պատասխան՝ հայերը հրդեհում են Երևանի Դռների մոտ գտնվող թուրքերի մի քանի տներ, որոնց բնակիչները նախօրոք փախել և պատսպարվել էին մոտիկ գորանոցում<sup>42</sup>:

Օգոստոսի 18-ը ավելի սուսկալի օր էր, քան նախորդ երկու օրերն էին: Աղդամից Շուշի էին լցվել բավականաչափ թուրքեր: Նրանց օգնությամբ քաղաքի թուրքերը հասել էին մինչև Ագուլեցոց եկեղեցի և Քանու ակրաղացի մոտերքը: Այդ օրը Դումլուղի Թաղում թուրքերը հրդեհել էին հայերի մի քանի տներ: Հրդեհը արագությամբ անցնում է հարևան շինությունները: Թուրքերը վառեցին նաև Ագուլեցոց եկեղեցու հարևանությամբ գտնվող Սուլեյմանովի տունը, որը դարձրել էին հիվանդանոց: Հրդեհն արագորեն տարածվում էր հայոց թաղամասի կողմը՝ քանու ուղղությամբ: Կան տվյալներ, որ թուրքերը նախօրոք Սուլեյմանովին վճարել էին նրա տան արժեքը: Այդ նույն օրը հայերին նեղում էին նաև Գովհար աղայի տան մոտից անընդհատ շարունակվող կրակոցները: Քաղաքի մի քանի մասերում տեղի էին ունենում մարտական գործողություններ: Հայերը մի ակնթարթում ուշքի եկան, զգացին դիրքերում մնալու իրենց սխալը, դուրս եկան և հակառակորդին հետ մղեցին Քանու ակրաղացի և Ագուլեցոց եկեղեցու մոտից: Հայերի այդ գրոհը կորստաբեր էր թուրքերի համար: Այդ օրը թուրքերից զոհվեցին 85, իսկ հայերից՝ 10 մարդ: Ջոհեր ունեցան նաև զինվորները<sup>43</sup>:

Հրդեհը հետզհետե տարածվում և հասնում էր սուսկալի չափերի: Թուփխանայից սկսած՝ մինչև Խանի աղջկա աղբյուրը և Հին գերեզմանոցի թաղը հրդեհի մեջ էր:

Օգոստոսի 19-ին տեղի ունեցած կռիվները շարունակվեցին մինչև երեկո: Կատաղի մարտեր էին տեղի ունենում առանձնապես Ագուլեցոց եկեղեցու տարածքում: Թուրքերի մի հրոսակախումբ մտել էր

---

մահով: Աբրահան Գյուլխանոյանը գրել է. «Չնայած, որ Բաքուն այդ օրերին կյանքի ու մահվան կռիվ էր մղում, բայց և այնպես մեր Ձինվորական մարմինն անհրաժեշտ համարեց մի սրտառուչ կոչով ողբալ մեր կորուստը, որովհետև Մարգար ժամհարյանը դադարել էր վաղուց իր ընտանիքի սեփականությունը լինելուց և դարձել էր մերը, մեր հարազատը» («Հայրենիք, 1936, N 11, (167), էջ 90: Նաև տե՛ս «Դրոշակ», 1905, N 12, էջ 189-190, Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 323 և այլն:

<sup>42</sup> Ա-ԳՕ, նշվ. աշխ., էջ 153:

Ազուլեցոց եկեղեցի, տեղավորվել զանգակատան գմբեթի տակ ու կրակի տակ էր պահում շրջակայքը: Հայերը դժվարանում էին լռեցնել թուրքերի այդ կրակոցը: Ի վերջո, նրանց հաջողվեց թուրքերին դուրս քշել եկեղեցուց: Կատաղած թուրքերը կռվի մեջ հաջողություն չունենալով՝ իրենց վրեժը առնում էին հայերի տները վառելով: Վառվում էին Միքայել խանի տները: Արշակ Մելքունյանի խանութից սկսած՝ Անանյանցի տան ուղղությամբ կրակը տարածվեց մինչև Խանի աղջկա աղբյուրը, Բաբա Հախումյանի տնից մինչև Հին գերեզմանոցի արևելյան ճակատը և Ս. Աղամալյանի տնից մինչև թուրքական քաղաքամասի սահմանը<sup>44</sup>:

Մարտերը շարունակվեցին նաև օգոստոսի 20-ին: Հայերը ցուցաբերում էին անօրինակ սխրագործություն: Կեսօրին թուրքերը սպիտակ դրոշ բարձրացրին: Օգոստոսյան այդ մարտերը հայերի համար խիստ ծանր էին. կար 40 սպանված և 68 վիրավոր, վառվել էին հայերի ավելի քան 370 մեծ ու փոքր շինություններ, ոչնչացվել ապրանքներով լի 200 խանութներ: Հայերի նյութական կորուստները կազմում էին 5 միլիոն ռուբլի<sup>45</sup>: Թուրքերի վնասներն ավելի պակաս էին, չնայած զոհերի թիվը կրկնապատիկ էր. ավերվել և հրդեհվել էր 150 տուն և մի քանի խանութ: Տնտեսական վնասը հասնում էր ընդամենը երեսուն հազար ռուբլու:

Ժամանակակիցներից Արտաշես Օհանջանյանը, որ օգոստոսյան այդ դժոխային օրերին գտնվում էր Շուշիում, մի քանի ամիս անց հանդես գալով «Ընկեր» շաբաթաթերթում (1906, N 8, 9, 11), հանգամանորեն պատմում է տեղի ունեցած աղետի մասին, ապա այն օգնության, որը ծանր վիճակի մեջ գտնվող շուշեցիներին ցույց էին տալիս մոտակա գյուղերում, և այլ տեղերում բնակվող արցախցիները: Օրինակ. Թիֆլիսում բնակվող շուշեցիներից կազմվել էր մի խումբ, որը բոլոր դարաբաղցիներից հավաքում էր ամսական տուրք: Նրանք Շուշի էին ուղարկում մթերք և ապրանքներ: Հեղինակը հպարտությամբ էր խոսում հայ ինքնապաշտպանների անցկարագրելի քաջության մասին, որոնք «շատ նեղություններ կրեցին, հազար ու մի տեսակ զրկանքների դիմացան մանավանդ Ասկերանում սառնամանիքների ժամանակ»: Նա համոզված էր, որ «Եկող սերունդը կիշի XX դարու վարդանները, Մարգար, Շամիր, Իշխան, Լևոն, Ստեփան, թե ինչպես Ասկերանի քաջերը սառնամիքներին և հազար ու մի տեսակ զրկանքների դիմանալով փրկեցին մի ամբողջ քաղաքի և շրջակա գավառների հայ

<sup>44</sup> Նույնը, էջ 154-155, Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 372:

<sup>45</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 584-585, Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 158, Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 373, «Դրոշակ», 1905, N 11, էջ 167:

ազգաբնակչությանը, թե ինչպես գավառում հայ քաջերը ետ մղեցին թշնամու 30-րդ հարձակումն անգամ, թե ինչպես Խանուխլարում մի քանի տասնյակ հայ քաջեր կռվեցին մի քանի հազարից բաղկացած թշնամու դեմ և հաղթեցին, թե ինչ դեր կատարեց հայկական առաջին թնդանոթը Շուշուայ բարձունքների վրա...

Հայ ազգը կդիմանա և երբեք չի ոչնչանա...»:

Շուշիում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների համար անհանգստացել էին առանձնապես կովկասահայերը: Օգոստոսի 20-ին Գանձակից մի քանի թուրք աղաներ և բեկեր հեռագրել են Աշոտ եպիսկոպոսին և իրենց անհանգստությունն արտահայտել քաղաքի թուրքերի համար<sup>46</sup>: Հաջորդ օրը Աշոտ եպիսկոպոսի անունով հեռագիր էր ստացվել նաև Վլադիկավկազից, որի հեղինակները խիստ անհանգստացած էին Շուշիում տեղի ունեցածի համար և առաջարկում էին վերականգնել խաղաղությունը<sup>47</sup>: Թեմակալի անունով հեռագիր է ստացվել նաև Ջրաբերդի Վանք գյուղից<sup>48</sup>: Այդ օրը նահանգապետ Տակայաշվիլին Աղդամից հեռագրել է Աշոտ եպիսկոպոսին, թե այնտեղի հայերի և թուրքերի միջև կայացել է հաշտություն<sup>49</sup>: Իսկ օգոստոսի 23-ին Թիֆլիսից Աշոտ եպիսկոպոսին հեռագրվել է, թե կաթողիկոսի կողմից հաստատված վնասներին օգնող հանձնաժողովը խնդրում է անհապաղ հաշվառել և մանրամասն հաղորդել վնասների մասին: Օգոստոսի 25-ին թեմի առաջնորդը հեռագրով հաղորդում է Էջմիածին, թե վիճակը կարգավորում է նահանգապետը<sup>50</sup>: Ապա բազմաթիվ հեռագրեր են ստացվում, որոնցում հաղորդվում էր քաղաքի վնասները վերականգնելու համար միջոցներ տրամադրելու մասին<sup>51</sup>: Նման հեռագրերի ստացումը շարունակվել է մինչև նոյեմբերի կեսերը:

Օգոստոսի 20-ին փոխնահանգապետի առաջարկությամբ հաշտության փորձ եղավ: Սակայն թուրքերի նոր կրակոցներին ի պատասխան՝ սկսվեց ուժեղ հրաձգություն: Այդ ժամանակ հայերը դիմեցին մի քայլի. պետական հիվանդանոցի մոտ ընկած էին հին հրանոթներ: Դրանցից մեկը մի կերպ քարշ տվեցին Բաղունց ձորը և այստեղից կրակեցին թուրքերի թաղամասի կողմը: Միաժամանակ հայերի բոլոր դիրքերից որոտացին համազարկեր: Սարսափը պատեց թուրքերին: Նրանք անմիջապես սպիտակ դրոշ բարձրացրին և հաշտություն խնդրեցին, որը և տեղի ունեցավ: Ի վերջո, վեց օր

<sup>46</sup> Մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր Ղազարյանի, թուրք 3, վավ. 167:

<sup>47</sup> Նույնը:

<sup>48</sup> Նույնը:

<sup>49</sup> Նույնը:

<sup>50</sup> Նույնը:

<sup>51</sup> Նույնը:

անընդհատ կատաղի մարտերից հետո կնքվեց հաշտություն: Հարյուրավոր տների շարքում ավերվել էին նաև քաղաքային վարչության շենքը, քաղաքի հիվանդանոցը, հաշտարար դատարանը, Մարիամյան դպրոցը, խանութներ, խանդամիրյանի թատրոնը և այլն<sup>52</sup>: Դեռ վառվող տների ծուխը շարունակվում էր, և մի շարք դիակներ մնացել էին անթաղ, երբ Բաքվից ստացվեց Թոփչիբաշևի և Մելիքովի ստորագրությամբ հեռագիր, որը տարածել էր ռուսաց գործակալությունը: Նրանում մեղադրվում էր Շուշիի հայությունը և նրան էր վերագրվում տեղի ունեցած ողբերգության հիմնական պատճառը: Համանման մի հեռագիր էլ ստացվել էր Երևանից, որի հեղինակը նույնպես թուրք էր: Այդ հեռագրերը ժխտվեցին օգոստոսի 23-ին Գանձակից Կովկասի ոստիկանության պետին ուղարկված հեռագրով, որտեղ ասված է. «Ռուսաց գործակալության հաղորդած տեղեկությունները Շուշիի անկարգությունների մասին, փոխնահանգապետի ասելով, ամենևին չեն համապատասխանում իրականությանը»<sup>53</sup>: Այդ ամենից հետո միայն նահանգապետ Տակայաշվիլին ժամանեց Շուշի, որի առաջին գործը եղավ թուրք և հայ հոգևորականության ու ժողովրդի ուղեկցությամբ մտնել մզկիթ, ապա Ղազանչեցոց եկեղեցի, հետո հայտարարել, թե բոլոր լրագրերը սուտ են գրում. իր ղեկավարած նահանգում ամեն ինչ խաղաղված է ու հանգիստ: Ապա կարգադրում է ձերբակալել բժիշկ Աթաբեկյանին, Ռ. Յուզբաշյանին և Յ. Մելիքյանին: Նահանգապետը վերադարձի ճանապարհին Աղդամից սեպտեմբերի 7-ին Աշոտ եպիսկոպոսին ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Խնդրում եմ Ձեզ հաճելի լուրերի համար իմ շնորհակալությունը հայտնել Շուշի քաղաքի հայ հասարակությանը: Գ. մայրո Տակայաշվիլի»<sup>54</sup>:

Շուշիում տեղի ունեցած այդ արյունահեղ իրադարձությունների լուրը հասնելով Բաքու՝ ավելո՞վում է քաղաքի հայությանը: Բաքվում հասունանում էր նոր փոթորիկ: Թուրքերն այնքան սամձարձակ էին դարձել, որ չէին ցանկանում կատարել 1905 թ. փետրվարյան արյունալից իրադարձություններից հետո կնքված հաշտության պայմանագիրը: Նրանք հայերին տանել չէին կարող: Վերջիններիս համար մնում էր կամ դիմադրել, կամ էլ հեռանալ քաղաքից: Թուրքերի խմբերն ազատ շրջում էին նավթահանքերում և մահվան սպառնալիք կարողում հայերին: Նույնիսկ օրը ցերեկով սպանում են մի քանի հայերի՝ հայտարարելով, թե իրենց վրեժը պետք է լուծեն Շուշիում կրած

<sup>52</sup> Ա-ՂՕ, նշվ. աշխ., էջ 156:

<sup>53</sup> Նույնը, էջ 157:

<sup>54</sup> Մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի, թուրք 3, վավ. 167:

կորուստների համար: Հայերը ստիպված դիմում են նահանգապետ Ֆադաևին և խնդրում թուրքերի դեմ ձեռնարկել խիստ միջոցառումներ: Նահանգապետը սպառնում է, որ ոչ մեկի էլ չի խնայի, երկու ժողովուրդներն էլ պետք է հանգիստ մնան:

1905 թ. օգոստոսի 20-ին Բաքվի ծիաքարչի ծառայողները, որոնք հիմնականում հայեր և ռուսներ էին, դիմեցին գործադուլի: Ժամը 16-ին տեղի է ունենում ընդհարում ապստամբների և զինվորների միջև, որը վերածվեց քաղաքի հայերի և թուրքերի ընդհարման: Այս անգամ զորքը թե՛ հայերից և թե՛ թուրքերից խլում էր զենքը: Հրացանածգությունը շարունակվեց ամբողջ գիշեր և դադարեց միայն օգոստոսի 21-ի առավոտյան: Նույն օրը՝ երեկոյան, կռիվը նորից բորբոքվեց: Ձորքը ոչ ոքի չէր խնայում: Թուրքերից բավական մարդիկ զոհվեցին: Հայերը մի-առժամանակ չէին ցանկանում խառնվել: Երկու օրվա ընթացքում հայերից սպանվեց մոտ 25 մարդ, թուրքերից՝ 300: Օգոստոսի 22-ից ընդհարումները տեղի էին ունենում նավթահանքերում, որն ուղեկցվում էր սոսկալի հրդեհումներով: Հաջորդ օրը Թիֆլիսից հասնում է 2000 զինվոր և համալրում քաղաքում գտնվող 4500-անոց զորամասը: Օգոստոսի 23-ից սկսած հրդեհածգությունը քաղաքում զանգվածային բնույթ ընդունեց: Հրդեհը տարածվել էր Բալախանիում, Սաբունջիում, Ռոմանում և Բիբի-Յեյբաթում: Ձորքը այդտեղի հայերին զինաթափ էր անում և նրանց տեղափոխում քաղաք: Կողոպուտներին և սպանություններին մասնակցում էին նաև լեզգիներն ու ռուսները: Բաքվի այդ ընդհարումը շարունակվեց մինչև օգոստոսի 30-ը՝ 11 օր: Այդ օրերին սպանվեցին 270 թուրք, 130 հայ և այլազգիներ: Բաքվում տեղի ունեցած երկրորդ ընդհարումն ավելի խորացրեց թուրքերի և հայերի միջև ընկած վիճը<sup>55</sup>:

\*\*\*

Այն օրերին, երբ Շուշիում տեղի էին ունենում արյունալի իրադարձություններ, Աղդամի թուրքերը իշխանությունների առաջ ավերեցին այդտեղ գտնվող շուշեցի Բաղդասարյանների, Սողոմոնյանների, Խուբլարյանների, Ահարոնյանների և այլոց խնիչքների արտադրության գործարաններն ու պահեստները: Հայտնի դարձավ, որ Աղդամում գտնվող Թոփալարի բեկը նամակ էր ուղարկել Շուշիի թուրքերին՝ կոչ անելով իրենց կանանց ու երեխաներին տեղափոխել Արաքսի և Քռի ափերը, նրանց տեղյակ պահելով, որ

<sup>55</sup> «Պրոլետարի կռիվը», N 8, 15.08.1905, «Հայրենիք», 1930, N 4, էջ 153, N 7, էջ 153, Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 377-390:

<sup>56</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 373:

«հազարավոր զինված եղբայրներ» շուտով պիտի հարձակվեն Շուշի վրա<sup>56</sup>։ Հայ հեղափոխական դաշնակցության Արցախի կենտրոնական կոմիտեն հրահանգ իջեցրեց Վարանդայի և Խաչենի դաշնակցական խմբերին՝ փակել Ասկերանի անցքը և թույլ չտալ՝ Աղդամի խուժանը ներխուժի Շուշի։ Այդ պատասխանատվությունը դրվեց Ասկերան-Խաչենում գտնվող Համազասպ Սրվանձտյանի մարտական խմբի վրա։ Այդ օրերին Գանձակի գավառում Բահադուր բեկ Ադիգոզալովի և ուրիշների գլխավորությամբ հրավիրվեց թուրքերի համազումար, որը որոշեց հայերի դեմ հարձակում սկսել Գանձակում և այնտեղ ամեն ինչ ավարտվելուց հետո շարժվել դեպի Շուշի։ Թուրքերը ստեղծում էին ջոկատներ, որոնց անդամներից յուրաքանչյուրին տալիս էին մեկ ձի, զենք, 50 ռուբլի և թալանի մի մասը։ Նրանք գիտեին, որ նահանգապետ Տակայաշվիլին Արցախ-Ղարաբաղի բոլոր պաշտոնները բաժանել էր թուրքերին, որոնցից մի քանիսը հռչակ ունեցող առաջնակարգ ավագակներ էին<sup>57</sup> և համոզված էին, որ նրանք կօգնեն իրենց։

1905 թ. օգոստոսի 23-ին թուրքերը հարձակում սկսեցին Ղայբալի, Փահլուր և Բալլուջա գյուղերի վրա, որոնք, հանդիպելով ուժեղ դիմադրության, ստիպված էին նահանջել։ Թուրքերը Ղայբալուի վրա իրենց հարձակումը կրկնեցին օգոստոսի վերջին։ Նրանց հաջողվեց հափշտակել 75 անասուն և վառել 4 գոմ։ Սակայն թողնելով մի քանի դիակ՝ նրանք հետ քաշվեցին։ Հայերը տվեցին երկու զոհ։ Թուրքերի ռազմավարության մեջ էր մտնում ոչնչացնել Շուշիին հարևանությամբ գտնվող բոլոր հայկական գյուղերը, նոր հարձակվել քաղաքի վրա։ Իրենց այդ ծրագիրն իրագործելու համար նրանք ակտիվ աջակցություն էին ստանում քաղաքի թուրքերից։ 1905 թ. աշմանը թուրքերը մի շարք հարձակումներ գործեցին Ջամիլլու, Վարաբակն և մյուս գյուղերի վրա և տարան տասնյակ անասուններ։ Բալլուջայից և Խնածախից շատ բնակիչներ քոչել էին հարևան գյուղեր։ Թուրքերին հաջողվեց իրդեհել վերոնշյալ գյուղերի ունևորների տները։ Հայերը կարողացան քիչ զոհերով դիմակայել հակառակորդին, որը, թողնելով մեծաթիվ զոհեր, նահանջեց։ Թուրքերը Խաչենի հայկական գյուղերի վրա կրկին հարձակումներ գործեցին 1905 թ. դեկտեմբերին։ Այդ ամիսներին

<sup>57</sup> «Դրոշակ», 1905, N 11, էջ 173:

<sup>58</sup> Խանքենդի հայկական Վարաբակն ավանը այդպես է անվանվել թուրքական և ռուսական զրականության մեջ։ Ոմանք այն կարծիքին են, թե ավանը հիմնադրվել է 1847 թվականին։ Սինչդեռ 1823 թ. անցկացված վիճակագրության համաձայն՝ ավանում կար 25 ծուխ։ Այն սեփականացրել էր Մեհտի Ղուլի-խանի կինը, որը հետո նվիրել է ամուսնուն ( Описание Карабахской провинции, составленное в 1823 году, Тифлис, 1866, с.246): 1832-1833 թթ. անցկացված մարդահամարի տվյալներով, Խանքենդ ավանում ապրում էր 11 տնտեսություն 23 տղամարդ և 17 կին (ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51, թ. 443-444):

բավականին տնտեսություններ եկել ու լցվել էին Վարարակն<sup>58</sup>:

Նաև ասենք, որ Ելիզավետպոլի ժանդարներիայի 1905 թ. մայիսի 2-ին Թիֆլիս ուղարկված N 357-րդ գաղտնի գրության մեջ հաղորդվել է, թե ստացված տեղեկությունների համաձայն՝ ապրիլի 22-ին Շուշիի առաջին տեղամասի Վարարակն ավանում հավաքի ժամանակ բնակչությունը պահանջել էր ազատել ձերբակալված երկու հոգու, և երբ ավագը դա չի կատարել, հավաքված ամբոխը հարձակվել է նրա վրա, ապա ավերել ամբողջ գրասենյակը: Չէր հաջողվել գտնել գլխավոր կազմակերպչին, չնայած 7 հոգի ձերբակալվել էր<sup>59</sup>:

Ավանի հայերն ըմբոստացած էին ոչ միայն իշխանությունների դեմ, այլ նաև թուրք բարբարոսների, որոնք երկրամասում կատարում էին հակահայկական ահաբեկչություն: Ավանի թուրքերը փորձում էին տեղի հայերի տները վառել և ամբողջ ավանը վերցնել իրենց ձեռքը: Նրանք կապի մեջ էին հարևան թուրք գյուղերի հետ: Նրանց հրավերով դեկտեմբերի 18-ին Սալիբեկլուի և Ղուշչիլարի թուրքերից մոտ 50-60 հոգուց բաղկացած մի զինված ջոկատ ներխուժում է ավան ու տեղավորվում «ղայֆախանաներում»: Հարևան հայկական գյուղերից օգնության են հասնում զինված ջոկատներ: Թուրքերը սպանել էին մի հայ պառավ կնոջ և 8 տարեկան նրա թոռանը, և դիակներն անհետացրել: Այդ վայրենությունը խիստ հուզում էր առաջ բերել հայերի մեջ, և կռիվը պայթեց: Հայերը նոր օգնական ուժեր ստացան ու սկսեցին նեղել թուրքերին: Առաջին զոհերը տալով՝ նրանք ապաստան գտան զորանոցներում: Թուրքերը տվեցին ավելի քան 30 սպանված, իսկ հայերը՝ 6: Խալիֆալլուից թուրքեր եկան օգնության՝ ճանապարհին պաշարելով Ղայբալիշենը: Սակայն վերջինիս հայերը կարողացան հերոսաբար դիմադրել և հետ մղել այդ ավազակներին ու նույնիսկ անցնել հակահարձակման: Ղայբալիշենի և Կրկժամի թուրքերը ստիպված էին հեռանալ: Այդ ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան նաև Շոշ և Քռասնի գյուղերի մոտ: Այս անգամ թուրքերին հաջողվեց հափշտակել 50-ի հասնող անասուններ<sup>60</sup>:

1905 թ. օգոստոսից մինչև տարվա վերջ բազմաթիվ բախումներ էին տեղի ունեցել Գանձակում, Վարանդայի և Խաչենի շրջաններում: Գանձակ քաղաքում ապրում էին շուրջ 20 հազար հայեր: Ինչպես նշվել է, թուրքերը նախապատրաստվում էին վերացնել քաղաքի հայերին, հետո իրենց այդ բարբարոս քաղաքականությունը շարունակել Արցախում: Եվ ահա նոյեմբերի 15-ին նրանք, «Եա՛ Ալի» գոռալով, շարժվեցին դեպի հայկական շուկա: Այն գտնվում էր թուրքական

<sup>59</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 84, ք. 1-2:

<sup>60</sup> Ա-ՂՕ, նշվ. աշխ., էջ 177:

թաղամասում: Թուրքերը, ներխուժելով շուկա, սկսեցին թալանել այն: Հայերի հարյուրավոր խանութներ թալանվեցին և ավերվեցին: Հայտնի ավազակապետ Դալի Ալին իր 300 հրոսակներով միացավ իր ցեղակիցներին, և նոյեմբերի 18-ին կազմակերպեց այդ արյունոտ դավը: Թալանի հետ՝ ջարդ, հրդեհ և ավերածություններ: Կողոպտվեցին հայերի տները, նույնիսկ հայկական եկեղեցին: Հայերի զոհերի թիվը հասավ 100-ի<sup>61</sup>:

Գանձակի հայերի ինքնապաշտպանության գործը ղեկավարում էր ղարաբաղցի Ալեքսան Բալասանյանը, որը մի խումբ ինքնապաշտպաններով հրաշքներ էր գործում:

Նոյեմբերի 20-ին Թիֆլիսից Գանձակ է հասնում Աբրահամ Գյուլխանոյանը: Իր ձեռքը վերցնելով ինքնապաշտպանության կազմակերպման գործը՝ կարողանում է թուրքերին ստիպել նահանջել: Նոյեմբերի 21-ին իր ընտիր զինվորական խմբով Գանձակ է հասնում Համազասպը, իսկ նոյեմբերի 22-ին՝ Ռոստոմը: Գանձակի հայերը քաջալերվեցին, և ինքնապաշտպանների շարքերը սկսեցին ստվարանալ: Տասնյակ կամավորներ եկան նաև Բաթումից, Թիֆլիսից, Բաքվից, Ղարաբաղից, Թալիշից և այլ տեղերից<sup>62</sup>:

Ռազմական գործողությունների ընդհանուր ղեկավարությունը հանձնվեց Համազասպին: Լուր ստացվեց, թե թուրքերի ավազակախմբերի ղեկավար է նշանակվել Դալի Ալին: Եվ ահա իրար դեմ՝ 150-200 քայլի վրա, կանգնում են հայերի և թուրքերի ուժերը՝ ոտքից գլուխ զինված: Նոյեմբերի 22-ի երեկոյան ժամը 9-ին թուրքերը նախահարձակ եղան: Հայկական կողմը պատասխանեց արագ և վճռական: Թուրքերը շրջապատեցին հայկական թաղամասը և նախապատրաստվեցին հաջորդ գործողություններին: Նրանք սկսեցին կրակել գետի ձախ ափից և փորձեցին ներխուժել հայոց քաղաքամասը: Նոյեմբերի 23-ի առավոտյան՝ ժամը 10-ին, մարտերն ահավոր տեսք ընդունեցին: Քաղաքը թնդում էր հրացանների կրակոցներից: Կառավարական ուժերը կրակում էին դեպի հայոց թաղամասի կողմը: Ժամը 10<sup>30</sup>-ին հակառակորդն իր ուժերը շարժեց դեպի Դիք-Քյուչա կոչված փողոցը, որտեղից հնարավոր էր ներխուժել հայկական թաղամաս: Հայկական մի քանի ջոկատ, անցնելով այդ կողմը, հակառակորդին ստիպեց նահանջել: Փրեցի խաչատուրը և բանանցի

<sup>61</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 348:

<sup>62</sup> Ղարաբաղի Բալուչա գյուղից եկել էր վրեժառու Բախշին, Թալիշից՝ Դավիթ-բեկ Մելիք-Բեգլարյանի 25-հոգանոց խումբը, Գետաշենի շրջանից՝ Առուստան Յուզբաշյանի 30-հոգանոց խումբը, Երվանդի և Ալեքսանդր Մելիք-Սնացականյանի խումբը՝ 50 ձիավոր, Բանանցի շրջանից հայտնի վրիժառու Համբոյի խումբը, թվով 30 ձիավոր և այլն (նույն տեղում, էջ 348):

Տոնունց Նիկոլը մտան թուրքերի մեջ, որտեղ մի քանի թուրք սպանելուց հետո հերոսաբար զոհվեցին: Այդ օրը առանձնապես հերոսաբար էր մարտնչում «ղաչաղ» Համբոն: Նա իր քաջերով թշնամուց խլեց ջրաղացի դիրքը, որտեղ տեղավորված էր թուրքական մի ավազակախումբ: Հայ ինքնապաշտպանները վառեցին ջրաղացը և առաջ շարժվեցին: Համբոյի հետևից գնում էր Մարտիրոս վարժապետի ջոկատը:

Թուրքերը քանիցս փորձեցին անցնել առուն, սակայն չհաջողվեց: Համբոն և Մարտիրոսը, առաջ շարժվելով, մտան Բազմալար, որը թուրքերի հավաքատեղին էր: Համբոն ստիպված էր նահանջել Դիք-Քյուչայի կողմը, որտեղից հնարավոր էր՝ թուրքերը ներխուժեին հայկական թաղամաս: Սակայն թուրքերը նահանջել էին:

Այդ օրերին Թոփալ-Հասանլու ավազակաբարո հրոսակները հայոց շուկայի թալանին մասնակցելուց հետո հարձակումներ էին գործում քաղաքին մոտ գտնվող հայկական գյուղերի վրա: Համբոյի և Մարտիրոսի ծանր հարվածը, իջնելով այդ հրոսակախմբի վրա, վերջ է տալիս նրանց գործողություններին: Քարուքանդ արվեց այդ ավազակաբունը, ինչպես և Գյուլափիլու գյուղը: Թոփալ-Հասանլուն բնաջնջվում է, մոտ 1000 ոչխար, 160 խոշոր եղջերավոր անասուն, 30 ձի ու ջրիկ և այլ ապրանքներ, որոնք գողացված էին Գանձակի շրջանի հայերից, անցան իրենց տերերին: Հետո շարունակելով գործողությունները՝ հայ ինքնապաշտպանական ուժերը վրեժ էին լուծում գավառում տուժած հայերի համար: Կազմակերպվեց նոր զորախումբ, որը դեկտեմբերի 31-ին մեկնեց Չարդախլու՝ պատժելու այդ կողմերի թուրք ավազակներին: Ինքնապաշտպանության ուժերը շարժվեցին նաև դեպի Գետաբեկ և ավերեցին Մուլլա-Ջալլու, Դոզիլար, Սարիսու, Թեոդան, Հաջի-Մագադլու, Բալուլաղ, Ալի-Ուշաղի, Բայրամլու, Էնդիշա և այլ ավազակաբներ<sup>63</sup>:

Անկախ այդ ամենից՝ Գանձակի թուրքերը մեծ վնաս էին հասցրել թե՛ քաղաքի և թե՛ շրջակա հայկական գյուղերի բնակիչներին: Բերենք այսպիսի մի օրինակ. գավառի Ղարադաղլու հայկական գյուղի բնակիչ Գևորգ Ղազարյանը, 1906 թ. մարտի 3-ին դիմելով Թիֆլիսի հայոց նպաստամատույց մարդասեր վարչությանը՝ նպաստ ստանալու համար, բացատրել է, որ իրենց գյուղը, որը գտնվում էր Գանձակից 18 վերստ դեպի արևելք, ապահովված էր լավ ապրելու պայմաններով: Սակայն նրանք հնարավորություն չունեին չորս կողմը պատած թուրքերին դիմադրելու, որոնք արյունարբու էին և թալանի ծարավ: Գյուղի բնակիչները դիմել էին նահանգապետ Տակայաշվիլուն՝ թույլ

<sup>63</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 348-353, «Հայրենիք», 1933, N 6, էջ 145-146:

տալ տեղափոխվել, սակայն վերջինս մերժել է և խոստացել պաշտպանել նրանց, նույնիսկ 30 կազակից բաղկացած մի ջոկատ էր ուղարկել գյուղը պաշտպանելու համար: Այդ ջոկատի ծախսերը հոգում էին գյուղացիները: Բայց ահա նոյեմբերի 20-ը դարձավ գյուղի կործանման օր: Այդ օրը առավոտյան ժամը 11-ին կազակների սպան նահանգապետից հրաման է ստանում՝ ջոկատը շտապ վերադառնա Գանձակ: Ողբը պատել էր ամբողջ գյուղը: Գյուղացիների խնդրանքը՝ ջոկատը մնա գյուղում, մերժվում է: Բարեբախտաբար, այդ օրը գյուղում էր գավառապետի օգնական հայ Մարկոս-բեկը: Նրա խնդրանքով կազակները մեկ ժամով ուշանում են, որ գյուղի բոլոր բնակիչները հասցնեն գաղթել: Նրանք ամեն ինչ թողեցին և հեռացան: Արժեքավոր իրերը գյուղացիներից թուրքերը խլում էին, մարդկանց տանջում: Մի կերպ հասնելով Գետաշեն՝ փրկվում են<sup>64</sup>:

1905 թ. նոյեմբերի երկրորդ կեսին սարսափելի գործողություններ են տեղի ունեցել Գետաբեկի պղնձահանքերում: Այդ մասին հանգամանորեն նկարագրել է ազգությամբ գերմանացի Ադոլֆ Օհրնը 1906 թվականի հունվարին արդյունաբերող Վերներ ֆոն Սիմենսին գրած ընդարձակ նամակում: Ըստ Օհրնի՝ Գետաբեկում հայերի և թաթարների միջև, որոնք ապրում էին խառը, «ազգային կույր մոլեռանդության կրակը» բորբոքվել էր նոյեմբերի 18-ին՝ Ելիզավետպոլում թաթարների և հայերի միջև սկսված կատաղի պայքարից հետո: Թաթարների մի խումբ, ներխուժելով Գետաբեկի հայկական խանութները, սկսում է ատրճանակներով ու դաշույններով սպանել հայ վաճառականներին: Դրան հաջորդեցին խանութների հրդեհումը և երկկողմանի սպանդն ու թալանը, որոնք գնալով ավելի մեծ չափեր էին ընդունում: Քանի որ զինվորները ժամանակին չկասեցրին թուրքերի ավերիչ գործողությունները, քաղաքի «մեծ մասը մի քանի օրվա ընթացքում վերածվեց ավերակների կույտի»: Նոյեմբերի 18-ին Դալյեր կայարանի հայկական խանութները թալանվեցին թաթարների կողմից: Նույն ճակատագրին են արժանանում նաև Անենֆելդ գաղութի հայկական խանութները: «Թալանող թաթարները թվային այնպիսի գերազանցություն էին կազմում,- շարունակում է Ադոլֆ Օհրնը,- և այնքան սպառնալից էին իրենց պահում, որ ոչ ներկա ոստիկանության արիստավը իր ոստիկաններով, ոչ էլ նույնիսկ գաղութաբնակները իրավունք չունեին միջամտելու...»: Թաթարները, զարստներին բարձած, տանում էին վերջին տախտակներն ու պատուհանների շրջանակները: 14 հայերից, որոնք ուզում էին Ջաղիր գյուղ փախչել, 12-ը ճանապարհին սպանվում են: Թաթարները ուժեղ

<sup>64</sup> ՅԱԱ, ֆ.56, ց.17, գ.173, ք.33:

ճնշում են գործադրում հայկական Բագուքենդ գյուղի վրա և թալանում ու այրում 38 տուն: Սպանվում է նաև դատական քննիչ Լիպսկին: Գետաբեկի շուկա են ներխուժում 220 հեծյալ թաթարներ և այնտեղից դուրս մղում հայերին: «Թաթարները,- շարունակում է պատմել Օրինը,- հետախուզում էին բնակարաններն ու զինանոցները և սպանում բոլոր հայերին, ովքեր չէին կարողացել փախչել: Այդպես սպանվեցին վաճառական Գասպար-Բաղդասարով-Չալախյանը՝ կնոջ, ծնողների, քույրերի և եղբայրների հետ, արծաթագործներ Յովսեփ Դանիելովը և Ավագ Պետրոսովը՝ իրենց ընտանիքների, փոքր երեխաների հետ: Նույն ճակատագրին արժանացան դարբիններ Սարգիսն ու Իսային և նրանց ընտանիքները: Ատաղձագործ Պետրոս Մովսիսյանցը եղբայրների և մոր հետ, ինչպես նաև Չարդախլու գյուղից մի կին՝ 4 երեխաներով, թաքնվել էին հանքագործ Պավլի Պանդոլիի բնակարանում, որտեղ նրանց հայտնաբերեցին և անգթորեն սպանեցին»<sup>65</sup>:

1905 թ. ամռան վերջին և աշնանը վիճակը Արցախում մնում էր ծանր: Հոկտեմբերի սկզբին Խաչենի ձորակի Քեռլանի ցեղերը հարձակվեցին Ուլուբաբ փոքրիկ գյուղի վրա, որի բնակիչներին հաջողվեց տեղափոխվել Սեյդիշեն: Հարևան գյուղերից օգնության հասած հայերը կարողացան գյուղը կիսով չափ փրկել հրդեհումից: Խոշոր ընդհարումներ տեղի ունեցան նաև Սոխավենդ և հայ Ղազանչի գյուղերի մոտ:

Ամարասի ձորակում՝ վանքի շուրջը բնակվող մի քանի տասնյակ հայ ընտանիքներ, զգալով վտանգը, տեղափոխվել էին մոտիկ գտնվող Սոս գյուղը: Դեռևս օգոստոսի 18-ին թուրքերը շրջապատել էին վանքը: Այդ հորդաների գլուխ էր կանգնած Վարանդա գետի ափին գտնվող Ղաջար թուրքական գյուղը, որը այդ կողմերի թուրք ավազակների և գողերի կենտրոնն էր: Թուրքերը միաժամանակ հարձակվեցին Սոսի և Մաշադաշենի կայեր՝ Մաճկալաշենի վրա: Սակայն թուրք ավազակների այդ հորդան, հանդիպելով հայերի հուժկու հարվածներին, շրջվեց և հարձակումը շարունակեց Ամարասի վանքի վրա: Ներխուժելով վանքը՝ լրիվ կողոպտեցին՝ տանելով եկեղեցական անոթներից մինչև վերջին կահ-կարասին, կողոպտեցին նաև գյուղացիների թողած տները և հրդեհեցին ու ոչնչացրին այն ամենը, ինչ որ չէին կարողացել տանել:

Թուրքերի այդ վայրի գործողությունները հայերին ստիպեցին դիմել հակագործողությունների. հաջորդ օրը հետ վերցրին Ամարասի վանքը և ավերեցին այդ ձորակում գտնվող Դիվանլար թուրքական գյուղը: Հոկտեմբերի 19-ին թուրքերը նոր հարձակում գործեցին Մաճկալաշենի

<sup>65</sup> «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, N 2, էջ 82-87:

տեղամասի վրա: Դա ամենամեծ ընդհարումն էր Վարանդայի այդ տարածքում: Այս անգամ տեղացի թուրքերին միացել էին Պարսկաստանից Արաքսն անցած մուսուլման ավազակները: Նրանք, համատեղ մեծ ուժ կազմելով, օգոստոսի 19-ի առավոտյան ժամը 6-ին պաշարեցին Սոս գյուղը: Գյուղի կանայք և երեխաները պատսպարվեցին անտառում, իսկ զենք կրող տղամարդիկ դուրս եկան գյուղից և դիրքեր բռնեցին գերեզմանատան մոտ: Թուրքերը ներխուժեցին գյուղ և սկսեցին թալանել: Մինչև հարևան գյուղերից օգնության կհասնեին, թուրքերը տասնյակ տներ կողոպտեցին: Հայերի գրոհից թուրքերը, զոհեր տալով, որոնց մեջ էր նաև Պարսկաստանից եկածների պարագլուխ խանը, դիմեցին փախուստի: Հայերից զոհվեց 23 տարեկան մի երիտասարդ: Թուրքերը նահանջի ճանապարհին հարձակվեցին Մաճկալաշենի վրա: Մաճկալաշենցիները, տալով չորս զոհ, հերոսաբար դիմադրեցին նահանջող հակառակորդին: Հայերը, անցնելով հարձակման, շրջապատեցին թուրքական Հաջուզ, Վեյսալու և Աղբաղլու գյուղերը՝ ենթարկելով հրդեհի ու ավերածության: Թուրքերի մի հարձակում էլ տեղի ունեցավ Գիշի գյուղի գոմերի վրա, որի ժամանակ գիշեցիները բավական վնաս կրեցին: Իսկ Վարանդայի սփին գտնվող ավազակաբուն Ղաջարը մնում էր անառիկ և անպատիժ: 300 ընտանիքից բաղկացած այդ գյուղի բնակիչները մեծ վնասներ էին հասցնում Վարանդայի ձորակի հայաբնակ գյուղերին և դեպի Խոնաշենի կողմն ընկած բնակավայրերին: Ավազակների այդ որջից շատ էին տուժել հատկապես Շեխեր, Մաճկալաշեն, Սոս, Հերիեր և այլ գյուղեր: Ղաջարը սարսափի մեջ էր պահում շրջակա հայկական գյուղերին: Այդ կողմերի բոլոր անասնագողությունների հետքը տանում էր դեպի Ղաջար: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Ղաջարը դրսևորում էր իր ավազակային բոլոր ընդունակությունները: Ամառասի և նրա շրջակա հայկական բնակավայրերի կողոպուտների մեծ մասը բաժին էր հասել Ղաջարի թուրքերին: Նրանք նույնիսկ հասել էին մինչև Ջանգեզուր և բաժին ունեցել Մինքենդի կողոպուտից: Այդ ահավոր վիճակը հայերին ստիպեց զենք վերցնել և պատժել Ղաջարի ավազակներին: Վերջիններս սկսել էին հաճախակի հարձակումներ գործել Մեծ Թաղեր, Ներքին Թաղավարդ, Մխտորաշեն, Մաշաղիշեն, Սոս, Հերիեր և այլ գյուղերի վրա ու հափշտակել անասուններ: Ղաջարի սահմանների մոտ երևացող հայերն անհետանում էին և ոչնչացվում: Տրախտիկը փոքրիկ գյուղ է, Ղաջարին բավական մոտ: Գյուղի բնակիչները միշտ գտնվում էին ղաջարցիների ահաբեկչության տակ: Տրախտիկի բնակիչները օգնություն են խնդրում հարևան հայկական գյուղերից: Եվ երբ 1906 թ. հունվարի 9-ի առավոտյան ղաջարցիները

ավազակային հարձակում գործեցին Տրախտիկի վրա, նրանց դիմավորեց հուժկու կրակոցը: Ուռքի ելան հարևան հայ գյուղերը: Հայերը թուրքերին հետապնդեցին մինչև Ղաջար, որը մնաց սոսկալի կրակի մեջ: Մի քանի ժամ տևող կրակը դաջարցիներին ստիպեց թողնել գյուղը և դիմել փախուստի: Գյուղը մատնվեց հրդեհի ու կողոպուտի: Կառավարական գործը երբ հասավ, գյուղի մեծ մասն արդեն ավերված էր: Այդ մարտերում թուրքերը տվեցին բավական զոհ, 9 զոհ էլ տվեցին հայերը: Սակայն դաջարցի ավազակները չզսավեցին: Այդ նույն երեկոյան նրանց հրոսակախմբերը, հարձակվելով Շեխեր գյուղի վրա, հասցրին նյութական վնասներ<sup>66</sup>:

\*\*\*

1905 թ. օգոստոս-դեկտեմբերին տեղի ունեցած հայ-թուրքական բախումների մեջ, Շուշիից հետո, ամենախոշորը տեղի է ունեցել Ասկերանում և Կարկառի հովտում: Օգոստոսի 17-ին, երբ Շուշիում տեղի էին ունենում արյունալի մարտեր, Գրիգոր Միրզաբեկյանի (Մածոն Խեչո) և Միսակ Տեր-Ղանիեյանի<sup>67</sup> գլխավորությամբ, 30 ձիավորներ ամրանում են Ասկերանի կիրճում: Արամայիսը նշում է, որ այդ ուժը շատ քիչ էր Կարկառ գետի երկու կողմը բռնելու համար, ուստի նրանք ամրանում են գետի աջ ափին՝ Վարանդայի կողմի մարտկոցներում: Շտապ երկու սուրհանդակ են ուղարկում գետի ձախ ափը՝ Խաչենի կողմը՝ խաչենցիներին շտապեցնելու, որ նրանք էլ գրավեն մարտկոցները<sup>68</sup>:

Թուրքերի հարձակումը չուշացավ: Շուտով նրանք հարձակման անցան Սեյիղլու գյուղի տարածքից: «Եա՛ Ալի» գոռալով՝ սլանում էին դեպի կիրճը՝ Շուշի արշավելու համար: Հայ ինքնապաշտպանների հրացանները որոտացին: Թուրքերը մեխվեցին, ապա ձիերի գլուխները շրջեցին և հարձակվեցին Խաչենի Խրամորթ ու Խամաբաղ գյուղերի վրա, որոնց ինքնապաշտպանների ուժգին կրակը նրանց ստիպեց

<sup>66</sup> Ա-ՂՕ, նշվ. աշխ., էջ 172-188:

<sup>67</sup> Գրող, հրապարակախոս Միսակ Տեր-Ղանիեյանը ծնվել է 1874 թ. հուլիսի 17-ին Արցախի Փիրջամալ գյուղում, քահանայի ընտանիքում: Ուսումնառել է Շուշիի թեմականում: 1889 թվականից սկսած՝ տպագրվել են նրա բանաստեղծություններն ու պոեմները, ապա՝ վիպակներն ու վեպերը: Նա պայքարել է Արևմտյան Հայաստանում, իսկ 1905-1906 թթ. մարտնչել է հայրենի Արցախում: Արցախահայության ազգային-ազատագրական պայքարում ակտիվորեն ներգրավվել է նաև 1917-1919 թթ.: Խորհրդային իշխանության տարիներին աշխատել է Բաքվի «Կոմունիստ» թերթում: 1949 թ. հունիսի 13-ին բազմահազար հայ ընտանիքների հետ աքսորվել է Ալթայի երկրամաս, որտեղ և 1954 թ. կնքել է իր մահկնացում:

<sup>68</sup> Արամայիս, Մի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, էջ 7:

նահանջել Սեյիդլու: Սակայն ցերեկվա ժամը 4-ին մոտ 500 թուրք ձիավորներ աղաղակելով մոտենում են Ասկերանի կիրճին, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում Աղդամի թուրքերը<sup>69</sup>: Սակայն այս անգամ ևս թուրքերը հաջողություն չունեցան: Նրանք, թողնելով տասնյակ սպանվածներ, խուճապով ցրվում են: Աղդամից, Սեյիդլուից, Մազանլուից, Շելլուից և այլ բնակավայրերից շուրջ 2000 ձիավոր թուրքեր օգոստոսի 18-ին, հավաքվելով Ղարաղաջի մոտ գտնվող Հասան-Աղի քարվանսարայում, խորհրդակցում են, և բաժանվելով երկու մասի՝ մի մասը շարժվում է դեպի հայկական գյուղերը, իսկ մյուսը շարժվում է դեպի Ասկերանի կիրճը՝ Շուշիի ճանապարհը բացելու համար<sup>70</sup>:

Կարկառի Վարանդայի կողմում դիրքեր բռնած 30 հայորդիները թուրք խուճանի դեմ մարտնչում էին խիզախորեն: Թուրքերը ձիավոր ընկնում էին: Բազմաթիվ զոհեր տալուց հետո նրանք ստիպված էին հետ քաշվել և վերադառնալ Աղդամ: Իսկ խաչենի կողմից մի տասնյակ ինքնապաշտպաններ բռնել էին բերդի վերևի պատը և նույնպես քաջությամբ դիմադրում էին: Սի 30-40 թուրքի հաջողվում է անցնել կիրճը և սլանալ դեպի վառվող Շուշի: Խաչենցիներին հաջողվում է մաքրել ամբողջ գիծը: Առանձնապես հերոսաբար էին դիմադրում Խրամորթի հայ քաջերը<sup>71</sup>: Օգոստոսի 18-ին Ասկերանը փակվեց ավելի ամուր: Խաչենի ինքնապաշտպանության համար պատասխանատու Համազասպ Սրվանձտյանը մի խումբ քաջերով շրջում էր գավառի գյուղերում՝ պաշտպանության գործը կարգավորելու համար: Օգոստոսի 20-ին նա իր քաջերով փակում է խճուղին խաչենի կողմից, իսկ Արամայիս և Խեչոյի մարտիկները կիրճը փակում են Վարանդայի կողմից: Համազասպը պահանջ էր դրել ոչ մի թուրքի թույլ չտալ անցնել կիրճը<sup>72</sup>:

Օգոստոսի 21-ի լուսաբացին թուրքերը նոր հարձակում գործեցին Խրամորթի վրա, սակայն հայերի հարվածից ստիպված էին նահանջել: Հրդեհվեցին գյուղից ոչ հեռու գտնվող Հասան աղայի ամառանոցը և թուրքական Խոջալու գյուղը, որի բնակիչները հեռացել էին Աղդամ: Վնասներ կրեց նաև Վարանդայի տարածքի հարևանությամբ գտնվող

<sup>69</sup> Աղդամի թուրքերը միշտ էլ վայրենաբարո էին տրամադրված հայերի նկատմամբ: Օգոստոսի 16-ին, երբ Շուշիում սկսվել էր ընդհարում, նրանք կողոպտեցին բնակավայրում գտնվող հայերի բոլոր խանութները, սպիրտ և խմիչքներ արտադրող գործարանները, այգիները, մոտ 400 հազար ռուբլու արժողությամբ հարստություն: Կողոպուտի ենթարկվեց նաև Ղարբանդի պոստի կայարանն իր ձիերով, որը գտնվում էր հայ Ձալիմյանի ձեռքում (Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 193):

<sup>70</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 8:

<sup>71</sup> Նույնը, էջ 9-10:

<sup>72</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 375:

Ձեռն-Բաղլար թուրքական գյուղը:

Օգոստոսի 22-ին թուրքերը եկան հակառակ կողմից՝ հազարավոր զինված քոչվորներ և Շուշիից վերադարձող բազմաթիվ ծիավորներ: Նրանք եկան ու կանգ առան Ասկերանի կիրճի բերանին՝ Խոջալու գյուղի մոտ, և չէին համարձակվում անցնել կիրճը: Նրանք լսել էին, որ օգոստոսի 17-ից հետո ոչ մի թուրք չի անցել կիրճը, կիրճը անցնելու փորձ անող թուրքերը ոչնչացվել էին: Ընդհանրապես, Ասկերանի ճանապարհը փակ էր օգոստոսի 10-ից սկսած: Ինքնապաշտպանության ուժերը որոշել էին ճանապարհը բացել միայն այն ժամանակ, երբ թուրքերը կբացեին Եվլախի ճանապարհը: Թուրքերը Ասկերանին տվել էին «գանլի» (արյուն) անունը, որովհետև մի քանի օրվա մեջ նրա պատերի տակ ավելի քան 300 թուրք էր սպանվել<sup>73</sup>: Օգոստոսի 22-ին Շուշիից վերադարձող կողոպուտներով ծանրաբեռնված թուրքերի մի մասը, Ասկերանում ընկնելով թակարդի մեջ, իր գերեզմանը գտավ այնտեղ: Այդ օրերի իրադարձությունները հանգամանորեն նկարագրել է Արամայիսը: Նա պատմում է, որ Խոջալուում խառնված թուրք զինվորներից 30 հոգի, ռուս կազակների և թուրք զավառապետի ուղեկցությամբ, առաջ էր անցել: Հայ ինքնապաշտպանները նրանց թողնում են անցնել կիրճը: Կազակների վերադառնալուց հետո այս անգամ գալիս է 11 հոգուց բաղկացած թուրք ծիավորների մի խումբ և ինքնավստահ մտնում ամրոցի պատերից ներս: Հայ մարտիկները վրա տալով բոլորին սրախողխող են անում: Այնուհետև 200-ի չափ ծիավորներ՝ զավառապետի գլխավորությամբ, մտնում են մահվան թակարդից ներս: Նրանց հետ էին մի շարք նշանավոր բեկեր, որոնք Շուշի էին գնացել ավազակախմբերի գլուխ անցած<sup>74</sup>:

Այդ մարտերում հայերը ոչ մի կորուստ չունեցան: Նրանց փայլուն հաղթանակի լուրն արագորեն տարածվում է Վարանդայի և Խաչենի գյուղերում: Արցախցիները սրտաբուխ երգ ձոնեցին Ասկերանի հերոսներին: Համազասպ Սրվանձտյանը հռչակվեց հենց Ասկերանում, և այստեղից սկսվեց նրա մարտական պանծալի ուղին<sup>75</sup>:

Այդ դեպքերից հետո՝ օգոստոսի 23-ին, զորք ուղարկվեց Ասկերան, իսկ 24-ին եկավ մահանգապետ, գեներալ Տակայաշվիլին ու գնաց Շուշի: Նա դեռևս Աղդամից փոխարքային հեռագրել էր. «Երկու գումարտակ և մի հարիւրեակ այսօր ինձ հետ հասան Աղդամ: Եվլախից մինչև այստեղ ճանապարհին պետք եղաւ հանգստացնել թուրք ազգաբնակչութեանը, որը յուզւած էր այն պատճառով, որ

<sup>73</sup> Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 195:

<sup>74</sup> «Դրոշակ», 1905, N 13, էջ 2002-204:

<sup>75</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 376:

խաղաղութիւնը կապելուց յետոյ հայերը դեռ շարունակում էին գրաւած պահել Ասկերանի կիրճը և շրջակայ բարձրութիւնները, կրակելով անցնող թուրքերի և նոյն իսկ Շէյխ-ուլ-խալամին ուղեկցող ձիավորների վրա<sup>76</sup>: Այսօր ճանապարհին պատահեցի զինւած թուրք խմբերի՝ սպանւածներով և վիրաւորւածներով: Ինչպէս երևաց, լոյս 22-ի զիշերը կիրճում ընդհարում է տեղի ունեցել բազմաթիւ զոհերով: Աղոյս հասնելով՝ անմիջապէս մի զորամաս ուղարկեցի բռնելու Ասկերանի կիրճը, իսկ մնացած զօրքերի հետ առաջ շարժեցի՝ վերցնելով եօթ օրւայ պօստը, ալիւրով, որոնք վախենում էին գալ Շուշի Ասկերանից, Խանքէնդի ճանապարհի փակ լինելու պատճառով»<sup>77</sup>:

Նման բովանդակությամբ մի ամբողջովին կեղծված հեռագիր կարող էր հորինել Տակայաշվիլիի նման սրիկան, որում հայերի նկատմամբ ատելությունը հասել էր բարձրագույն կետի: Կեղծիքով զբաղվող այդ գեներալը, ամեն ինչում հանցավոր ճանաչելով հայերին, ձգտում էր ավելի մոլորության մեջ զգել մուսուլմաններին, որպէսզի կոտորածներն ու ընդհարումները դարձնի ավելի տևական: Նահանգապետը հրաժարվում էր Աղոյսի գիծը մաքրել թուրք ավազակներից և բացել Ասկերանի անցուղին: Շուշիի հայերը մի քանի պահանջներ ներկայացրին նահանգապետին, որոնցում հատկապէս նշված էր, որ հայկական գյուղերում վարելահողերը մնում են անմշակ, թուրքերը կտրտում և ոչնչացնում են հայերի այգիները, մանավանդ թթենիները: Արամայիսը գրել է, որ «գյուղացիների քթի ծուխը բարձրանում էր, աչքերը տնկած այգիների կրակին, վշտի տակ բթացած դեմքով նայում էին ու... լռում: Ի՞նչ կարող էին անել, ո՞ւմ դիմեին...»<sup>78</sup>: Իսկ նահանգապետը, որին դիմել էին արցախցիները, Գանձակից Ղարաբաղ էր հասել ամենից առաջ թուրքերին սփոփելու նպատակով: Նա բացարձակ ոչինչ չարեց հայերի ծանր վիճակը թեթևացնելու համար: Սեպտեմբերի 2-ին և 3-ին թվով 30 հայեր, օգտվելով այն հանգամանքից, որ նահանգապետը գտնվում էր Ղարաբաղում, փորձեցին գնալ Բաքու, սակայն նրանք Աղոյսում կողոպտվեցին և գերվեցին: Նրանցից մի քանիսը՝ կին, երեխա, տղամարդ, անհետացան Աղոյսից Բարդա տանող ճանապարհին գտնվող Ուզուն-Ղարա կոչված տեղում, որտեղ մի քանի օր անց գտան նրանց այլանդակված դիակները:

1905 թ. օգոստոսյան կռիվներից հետո՝ սեպտեմբերին, ՀՀԴ Շուշիի կոմիտեն արցախահայությանը դիմեց մի կոչով, որտեղ ասված է.

<sup>76</sup> Օգոստոսի 19-ին Շուշի էր եկել Անդրկովկասում մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շէյխ-ուլ-խալամը:

<sup>77</sup> Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 195:

<sup>78</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 18:

«Ղարաբաղի մահմեդականությունը հարեց համախլամական շարժմանը և մեր հայրենիքը նորից սուզվեց խավար ու խայտառակ միջնադարի մեջ...»: Ապա նշված է, որ հայրենիքը մի ծայրից մյուսը հրդեհվում է, թալանվում: Իսկ դա թուրքերի մեղքն է: ՀՀԴ կոմիտեն արցախահայությանը վստահեցնում էր, որ որոշել են «այսուհետև ևս, ինչ գնով էլ որ լինի, հայ ժողովրդին պաշտպանել թուրք խուժանի հարձակումներից»: Կոչ էր անում չողբալ սեփական կորուստների համար, միանալ իրար և պաշտպանվել «հիմարացած հարևանների հարձակումներից»: Հետևապես՝ «Դեպի ինքնապաշտպանություն, ուրեմն, Ղարաբաղի հայ ժողովուրդ, հանուն քո պատվի, հանուն քո ապագայի, քո քաղաքական և հասարակական իդեալների»<sup>79</sup>:

Միքայել Վարդանյանը գրում է, թե **«բարեկեցիկ քաղաքացիները»** շարունակում էին մնալ անպարտաճանաչ և «չէին ուզեր գէթ միևնական անհրաժեշտ օգնութիւնը բերել կռուղներուն»<sup>80</sup>:

Ահա թե ինչու այդքան վրդովված էր Վարդանը, որ հետո՝ 1906 թ., դաշնակցական բյուրոյին ուղղած իր մամակում, բողոքելով դառը ճշմարտության դեմ, գրում էր. «...Ձինուրները կատաղած են, մարդիկ ապրուստի միջոց չունին, անօթի են... Հազիւ կարող ենք զսպել նրանց... Ստիպած ենք լինելու **դիմել ծայրահեղ միջոցների...** Հետևանքը գուցէ շատ ծանր լինի... Դարձեալ պետք է սկսեն գոռալ, լրագրութեան էջերը սևացնել, թէ Դաշնակցութիւնը բռնութիւններ է գործ դնում և այլն, և այլն:

... Մտածում ես մի կերպ վերջ տալ: Ամեն բան թողնել իրենց պատասխանատութեան ու... հեռանալ, բայց հեռանալը այնքան ողորմելի է, կորստաբեր, որ կը նշանակէ մի քանի բուրժուանների համար զոհ բերել մի ամբողջ անգիտակից ժողովուրդ, որին **ստիպված ես զօռով, իրեն համոզելով՝ իրեն պաշտպանել...** Որպէս զի բոլորովին չխայտառակւենք, վարկաբեկ չդառնանք, դուք պետք է մեզ օգնութեան հասնէք...»<sup>81</sup>:

Սակայն Արցախի ողբերգությունը դեռևս չէր ավարտվել: Վարանդայի հարավարևելյան բարձունքում են տեղավորված Քյաթուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարազաբուն, Միրջանլու, Դահրազ, Մյուրիչեն, Ավդուռ, Հացի, Նորչեն, Աշան, Եմիչճան, Սպիտակաշեն և Ղզղալա (Բերդաշեն) գյուղերը, որոնց բնակիչներին անընդհատ անհանգստացնում էին այդ գյուղերի արանքը մխրճված Գյուլափիլու և

<sup>79</sup> «Դրոշակ», 1905, N 12, էջ 191:

<sup>80</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 325:

<sup>81</sup> Նույնը:

Ավդալ թուրքական գյուղերի ավազակախմբերը: Եվ ահա սեպտեմբերի 4-ին Գյուլափիլուի մոտ իրենց վրանները խփած քոչվոր ցեղերը,<sup>82</sup> այդ երկու գյուղերի ավազակախմբերի մասնակցությամբ, զիջերով հարձակվում են 60-70 տնտեսությունից բաղկացած Միրջանլու գյուղի վրա: Գյուղը սարսափի մեջ էր: Օգտվելով զիջերային մթնոթյունից՝ բնակչությունը փախչում է տներից: Թուրք ավազակները հասցնում են թալանել 20 տուն և քշել 80-ի չափ անասուն: Ջոհվում է 6 մարդ, որոնցից երկուսը 1-3 տարեկան երեխաներ էին: Թուրքերը, տալով 5 սպանված, նահանջում են: Նրանք նպատակ ունեին Քյաթուկի հարավային լանջերով ճանապարհ բացել դեպի Մալիբեկլու, այնտեղից էլ՝ Շուշի: Սակայն նրանց այդ ծրագիրը հողս ցնդեց: Օգնության հասած հայ ինքնապաշտպանական ջոկատները Միրջանլուն փրկեցին ավերումից: Հաջորդ առավոտյան թուրքերը կրկնեցին իրենց հարձակումը, որը խիստ վրդովեցրեց Նախիջևանի կի և Վարազաբունի բնակչությանը, որոնք Ավդալ-Գյուլափիլու գյուղերի մոտ՝ դաշտային մասերում, ունեին 400 դեսյատին խաղողի այգիներ և որոնցից տարեկան ստանում էին մինչև 100000 դույլ գինի: Այդ այգիներից շատերը թուրքերը վայրենաբար ավերել էին: Ավդալ-Գյուլափիլուի վերացումը դարձել էր խիստ անհրաժեշտ, մանավանդ որ վերոնշյալ հայկական գյուղերը ոչ մի ռոպե հանգիստ չունեին: 1905 թ. սեպտեմբերի 6-ին, երբ Ավդալ-Գյուլափիլուի ավազակախմբերը պատրաստվում էին նորից հարձակվել Միրջանլուի վրա, հայ ինքնապաշտպանական ուժերը, այլևս չհամբերելով, անցան հարձակման: Թուրքերը, չկարողանալով մինչև վերջ դիմադրել, դիմեցին փախուստի: Հայերը մտան Ավդալ, որը լիովին կրակի մատնվեց: Բնակիչները փախան դեպի Բաղվանլար: Հայ ինքնապաշտպանները ցերեկվա ժամը 12-ին մտան նաև Գյուլափիլու, որը գարհուրելի կերպով պատժվեց: Հայերի ուշադրությունն իբր շեղելու համար՝ թուրքերը հարձակվեցին Վարազաբունի վրա: Սակայն հայկական ուժերը հետ մղեցին հակառակորդին: Հետաքրքիրն այն է, որ այստեղ կազակների մի հարյուրյակ կռվում էր հայերի կողմից, մի հարյուրյակ էլ թուրքերի: Այս մարտերում, ըստ Արամայիսի, թուրքերը կորցրին 800-ից ավելի տուն և միլիոնների հասնող հարստություն<sup>83</sup>:

Թուրքերն իրենց վայրենի գործողությունները վերսկսեցին 4-5 օր հետո՝ փորձելով փշրել Վարանդայի և Խաչենի դիմադրությունը: Արցախը հացի խիստ կարիք էր զգում: Եվլախ-Աղդամ-Շուշի

<sup>82</sup> Այդ քոչվորները, ըստ Ա-ԴՕ-ի, օձարլու և աշուլու թափառական ցեղերն էին, ըստ Արամայիսի՝ Մինքենդեն ավերած քեաբուլու կոչված ցեղը:

<sup>83</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 49-54, Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 197-198:

ճանապարհը փակ լինելու պատճառով Արցախ մթերք չէր մտնում: Կազակների աչքի առաջ հոկտեմբերի 8-ին Աղդամում կրկին կողոպտվեց եկվորների մի մեծ խումբ: Գյուլափլուի թուրքերը կրկին հարձակումներ գործեցին հարևան հայկական գյուղերի վրա և Մյուրուշենից տարան տասնյակ անասուններ: Այս ամենը առաջ բերեց նոր ընդհարումներ: Հայերը երկրորդ անգամ հոկտեմբերի 28-ին հարձակվեցին Գյուլափլուի վրա և հասցրին նոր հարված: Հայերի ամենամեծ հարձակումը տեղի ունեցավ նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբներին: Ասկերանը կրկին փակվեց: Գյուլափլուն, Աղդամից օգնություն ստանալով, կրկին հարձակվեց Միրջանլուի վրա: Սակայն հանդիպելով հայերի դիմադրությանը՝ նահանջեցին: Այս անգամ մարտերն ավելի կատաղի էին: Գյուլափլուի ավազակախումբը բավականին զոհեր տալով՝ ստիպված էր նահանջել՝ թողնելով 50-ից ավելի սպանված: Դեկտեմբերի 3-ին Աղդամի թուրքերը, որպես պատասխան, հարձակում գործեցին Խնապատ և Խրամորթ գյուղերի վրա: Խրամորթի բնակիչները ստիպված էին հեռանալ գյուղից: Տների մեծ մասը կողոպտվեց, 18 տուն հրդեհվեց, կողոպտվեցին Տեր-Գրիգորյանի մետաքսի և զինու գործարանները: Հայերը տվեցին 3 զոհ, իսկ թուրքերը՝ 6: Հերոսաբար դիմադրեցին նաև Խանաբաղի բնակիչները<sup>84</sup>:

Օգոստոսի կեսերից Եվլախ-Շուշի խճուղին հայերի համար դեռևս մնում էր փակ: Աշոտ Եպիսկոպոսը, դեկտեմբերի 2-ին այդ մասին հեռագրելով Թիֆլիս, նշել է, որ հայերը ոչինչ չեն ստանում, մինչդեռ թուրքերը ստանում են մեծ թվով մթերք: «Կառավարությունը, շարունակում է նա,- չնայած իմ և ազգաբնակչության խնդրանքին, ոչ մի միջոց ձեռք չի առնում: Ընդհակառակն, միակողմանի գործողությամբ հայ ազգաբնակչությանը հասցրել են յուսահատության: Իսկ խմբակային հարձակումները թուրքերի կողմից միաժամանակ կատարվում են գյուղերի վրայ»<sup>85</sup>: Հենց այդ օրերին է, որ Բաքվի քաղաքագլուխ Սաֆար Ալիևը, հեռագրելով Կովկասի փոխարքային, սաղորիչ քայլ է անում, թե իբր Շուշիում հայերը կոտորում են թուրքերին, և խնդրում է միջոցներ ձեռք առնել, ապա թե ոչ Բաքվի թուրքերին զսպելը դժվար կլինի<sup>86</sup>:

1905 թ. դեկտեմբերյան այդ օրերը շատ ծանր էին: Ցարական բանակի կազակազորի ավագ Իվան Երիստովիչ Ֆոն-Օզերովսկին իջևանել էր Աղդամում: Շուշի մթերք հասցնելու համար դեկտեմբերի 26-ին

<sup>84</sup> Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 198-199:

<sup>85</sup> «Արշալույս», Թիֆլիս, 1906, N 1:

<sup>86</sup> Եռյակ, N 3:

կազակների պաշտպանությամբ Ադդամից 54 ֆուրգոն է դուրս գալիս, որոնք Շուշի էին տանում 600 փթաչափ մթերք: Դա, ամենայն հավանականությամբ, տարվում էր Շուշիի թուրքերի համար: Այդ գումակը պետք է անցներ Ասկերանով, որի բարձունքները գտնվում էին խաչենի և Վարանդայի ինքնապաշտպանների հսկողության տակ: Ինքնապաշտպանների կրակոցներից կազակները փախչում են: «Ֆուրգոնների շղթան ծուեց դեպի Վարանդայի գիւղերը», որտեղ իշխում էր քաղցը: Վարանդացիները համանման քայլ ձեռնարկել էին նաև նոյեմբերի 30-ին, երբ վերցրել էին 16 ֆուրգոն<sup>87</sup>:

Ֆոն-Օզերովսկին հունվարի 1-ին մի սպառնալից կոչով դիմեց ասկերանցիներին. «Խելքի եկեք, և թող իշխանության պատժող ազգի բարկությունը մեղմանա և ողորմած լինի... ցույց տվեք զիջում ի սրտե, թեկուզ մասամբ ուղղելու ձեր գործած չարիքը. արեք այնպես, ինչպես ինքս անձամբ հայտնել եմ ձեզ դեկտեմբերի 31-ին Ասկերանում, ձեր պահակի միջոցով. երեք օրվա ժամանակամիջոցում, հաշված այս օրվանից՝ վերադարձրեք ձեր բոլոր թալանածները, բոլոր ֆուրգոնները, բոլոր ձիաներն ու բոլոր բեռները, իսկ պակասի փոխարեն՝ ներկայացրեք փողով: Արեք այդ բոլորը ոչ ուշ, քան սույն 1906 թ. հունվարի 4-ի առավոտ և ձեր վճիռը հայտնեցեք Ադդամում ինձ, ստորաժմիկների միջոցով: Հանձնման տեղը Ղարաղաջի քարվանսարան է: Հետաձգելու մասին խնդիրը կանխորեն մերժում եմ հայտնում:

Իսկ եթե չեք կամենում ձեր մեղքն ուղղել, ապա խոհեմ եղեք և նշանակված օրը ձեր կամանց, երեխաներին և ծերերին ուղարկեցեք ապահով տեղեր, ձեր կամակորությունը կարծակե ձեռներս: Հիշեցեք, որ այժմ իմ կողմն են ճշմարտությունն ու իրավունքը, իսկ հետևում են հրանոթները, եթե լսելի չէ իմ ձայնը, ապա նա ինձնից բարձր կխոսի... եթե դուք կստիպեք ինձ զենք բարձրացնել, ապա ես դեռ կենդանությանս ժամանակ այնպիսի մի հոգեհաց կսարքեմ, որ կողդան շրջակա լեռները, որ արդեն ցնցված են ձեր անիրավություններով»<sup>88</sup>:

Ֆոն-Օզերովսկու այդ սպառնալիքը Ասկերան հասավ հունվարի 4-ին: Այդ օրն էլ նա, գորքը դուրս բերելով Ադդամից, շարժվեց դեպի Ասկերան՝ թնդանոթների փողերն ուղղելով խնապատի կողմը. 8 արկ արծակեց, 4 արկ էլ արծակեց Ասկերանի բերդի կողմը: Կազակագործի ավագի այդ խելացնոր գործողությունը տեղի ունեցավ հունվարի 6-ին: Մինչ այդ՝ դեռևս հունվարի 5-ին, Ադդամում հավաքվել էին Ջիվանշիրի և Արեշի կողմից եկած բավական թուրքեր, ինչպես և Պարսկաստանի շահսևան կոչված ցեղից, մոտ 2-3 հազար հոգի միաժամանակ

<sup>87</sup> Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 200:

<sup>88</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 57:

հարձակման էին անցել Նախիջևանիկ, Փիրջամալ և Վարազաբուն գյուղերի վրա: Արամայիսը հարձակվողների թիվը նշում է նոտ 6000 հոգի<sup>89</sup>: Հայ ինքնապաշտպանները որոշեցին թուրքերին դաս տալ: Նրանք, հարձակվելով Շելլու գյուղի վրա, թուրքերին ստիպեցին մի մասը թեքվի դեպի այդ կողմը: Թուրքերը, ստանալով արժանի հարված, նահանջեցին՝ թողնելով բազմաթիվ դիակներ: Կռիվը հետզհետե ընդլայնվեց: Չնայած թուրքերը գերակշռում էին թե՛ քանակական և թե՛ նյութական տեսակետից, սակայն հայերը նահանջելու ոչ մի միտում չունեին: Քսանչորս հոգի հազիվ էին հասցնում հայերի արձակած փամփուշտները լցնել, իսկ մի վարպետ էլ՝ իր օգնականով, առանց շունչ առնելու, նորոգում էր փչացած հրացանները: Հարևան գյուղերից օգնության եկած ջոկատներին հրահանգվեց Վարազաբունի արևելյան բլուրը պահել մինչև արյան վերջին կաթիլը: Թուրքերը, «եա՛-Ալի» գոռալով, ընդհուպ մոտեցան գյուղին: «Այդ ժամանակ,- նկարագրում է Արամայիսը,- սարերի վրայից, այծամների պես թռչկոտելով՝ մարդիկ էին իջնում. դրանք օգնության հասնողներից էին... դրոթյունը ճակատագրական, օրհասական էր...»: Հայերը մի հարվածով թուրքերին դուրս շարտեցին Չախմախ-Թափանից, և «թուրքերը սկսեցին խայտառակ կերպով դիմել փախուստի»<sup>90</sup>: Ժամը 2-ին ռազմական գործողությունները վերջացել էին թուրքերի պարտությամբ: Այդ օրը հայերը տվեցին 10 սպանված և 18 վիրավոր, որոնցից 4-ը՝ կին: Թալանի համար եկած թուրքերի արաբներն ու ֆուրգոնները ստիպված էին տասնյակ դիակներ տանել:

\*\*\*

1906 թ. հունվարյան այդ մարտերից հետո գրեթե երկու ամիս խաբուսիկ խաղաղություն էր: Սակայն մարտ ամսին Վարանդայի գյուղերում տեղի ունեցած ահավոր գործողությունները լիովին դիմակագերծեցին կովկասյան վարչությանը և ցույց տվեցին, թե որքան ահավոր և սարսափելի էր ցարական միապետության հակահայ քաղաքականությունը: Շուրջ 100 զինվորից և 4 թնդանոթից բաղկացած պատժիչ խումբը փոխգնդապետ Վիվերինի, սպաներ Բյուրիշկինի և ազգությամբ օս Չաջիևի, գավառապետ Ֆրեյլիխի, հաշտարար միջնորդ Երմոլևի, գավառապետ Ֆիտի դեկավարությամբ ամենասարսափելի և վայրենի արարքներ թույլատրեց Վարանդայի մի շարք գյուղերում<sup>91</sup>:

Արամայիսը պատմում է, որ մինչ բարբարոսական այդ

<sup>89</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 62:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 65-66:

<sup>91</sup> «Դրոշակ», 1906, N 5, էջ 171, Արամայիս, նշվ. աշխ., էջ 85-96:

«արշավանքը» կազակները թալանել էին և բռնարարքների ենթարկել Քյաթուկ, Նախիջևանիկ, Վարազաբուն, Հարավ, Սյուրիշեն, Հաղորտի և Վարանդայի այլ գյուղեր: Պատժող ջոկատը մտնում է Վարանդա այն ժամանակ, երբ հայ-թուրքական ընդհարումները մեղմացել էին, և Թիֆլիսում, փոխարքայի միջնորդությամբ, տեղի էր ունենում հայ-թուրքական պատգամավորների նիստ, որի նպատակն էր միջոցներ մշակել խաղաղությունն ապահովելու համար: Վարանդա զորք մտնելու լուրը տեղի բնակչությունն սկզբում ընդունել էր ուրախությամբ: Ամեն տեղ նրանց համար ուտելիք ու բնակարան էին պատրաստում, զինվորների ու կազակների ձիերի համար՝ կեր: Գյուղական հասարակությունը՝ հոգևորականների գլխավորությամբ, կազակներին դիմավորում էր աղ ու հացով, իսկ հոգևորականները՝ խաչ ու ավետարանով: Սակայն կազակներն ամեն տեղ հայերի հետ վերաբերվում էին կոպիտ ու անպատվաբեր: Նրանք գյուղերի վրա դնում էին մեծ տուգանքներ: Եվ չնայած գյուղացիները պատրաստ էին կատարել հրամանատարության ներկայացրած պահանջները, սակայն նրանց ոչինչ չփրկեց ջարդ ու թալանից: Ցարական զինվորներն ու կազակներն ամայացնում էին հայկական գյուղերը և տանջանքների ենթարկում բնակչությանը<sup>92</sup>: Պարզվում է, որ կառավարությունը պատժիչ ջոկատ էր ուղարկել Ղարաբաղ նրա համար, որովհետև արցախցիները կարողացել էին «պաշտպանել և հակառակորդի ջարդարարական մոլուցքին հակադրել կազմակերպվածությունն ու համարձակությունը»<sup>93</sup>: Այդ պատժիչ ջոկատը, լինելով Տող, Ազոխ, Սոս, Թաղեր, Շեխեր, Հաղորտի, Թաղավարդ, Տունի, ճարտար, Գիշի և այլ գյուղերում, պահանջում էր հանձնել զենքերն ու «խռովարարներին», ռմբակոծում էր գյուղերը, հրդեհում տները, մարդկանց ծեծում և տանջանքների ենթարկում, ամեն ինչ կողոպտում ու ավերում, բռնաբարում: Տողում կազակները հրդեհեցին Մուսայեյյանի երկհարկանի տունը: Երմուլակը քաջալերում էր կազակների վայրենի արարքները, անձամբ նավթ էր լցնում տների վրա և վառում: Գյուղերի վրա դնում էին մեծ չափերի տուգանք: Օրինակ՝ Տողի վրա դրեցին 900 ռ., Գիշի գյուղի վրա՝ 500 ռ., Գյունե ճարտարի վրա՝ 1200 ռ.: Կազակները, վեց օր ապրելով ճարտարում, գրեթե լրիվ ավերեցին գյուղն ու ամբարները: «Մի քանի գյուղերում, շարադրում է Հ. Սիմոնյանը, բռնաբարեցին կանանց ու աղջիկներին՝ երբեմն նրանց խլելով հայրերի, եղբայրների և ամուսինների ձեռքից: Սոսում ծեծից մեռավ գյուղացի Հայրապետը, որը փորձել էր արգելել կազակների կողմից իր 70-ամյա մոր բռնաբարությունը: Նույն գյուղում

<sup>92</sup> Սիմոնյան Հ., մշվ. աշխ., էջ 665-666:

<sup>93</sup> Նույնը, էջ 666:

բռնաբարվել էր 12 տարեկան մի հիվանդ աղջիկ՝ ծերունի պապի աչքերի առջև: Ազդիս գյուղում կազակները խոսրով Կարապետյանից պահանջեցին նրա կնոջը, բայց մերժում ստանալով՝ նրան կիսամեռ արեցին: Նույն գյուղում բռնաբարվեց մի կին՝ ինն ու երեք տարեկան երեխաների աչքի առաջ:

Յեկեկանքների ու բռնաբարությունների ենթարկվեցին բազմաթիվ կանայք ու օրիորդներ նաև ուրիշ գյուղերում: Եղան խելագարության և անձնասպանության դեպքեր: Բռնաբարված հայ կանայք և օրիորդները հոգեկան տվայտանքների մեջ էին շատ տարիներ՝ բարոյական հարվածի ծանրության տակ»:

Վարանդայի գյուղերն իրենց բնակիչներով անարգված էին, ենթարկված անասելի վարկաբեկման: Դա տմարդի վիրավորանք էր: Հայերը լցվել էին խոր ատելությամբ և սրտամորմոք բողոքի զգացմունքներով<sup>94</sup>:

Վարանդայի գյուղերում տեղի ունեցած այդ վայրագությունները լայն արձագանք գտան ողջ Անդրկովկասում: Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Շուշիում և այլ տեղեր տպագրվող թերթերը, նյութեր հրապարակելով այդ մասին, մերկացնում էին ցարական վայրագությունները: Արցախահայությունը բազմաթիվ բողոքներ էր ուղարկել ցարական իշխանություններին և պահանջել անենայն խստությամբ պատժել այդ չարագործներին: 1906 թ. մարտի 28-ին Արցախի հայ կանանց անունից Շուշիից կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնային և կոմսուհի Վորոնցովա-Դաշկովային ուղարկված հեռագրում ասված է. «Հնայելով դարավոր հավատարմությանը՝ ռուսական գահին և անձնվեր ծառայությանը ինքնակալ ցարին ռազմի դաշտում և քաղաքացիական պատերազմում, նրանց դեմ, այնուամենայնիվ, ինչ-որ հալածանք է սկսված, որի նմանը պատմությունը չի հիշում նույնիսկ մահմեդական տիրապետության ժամանակներից...»<sup>95</sup>:

Վարանդայում կատարված այդ վայրագություններն աննկատ չմնացին նաև Ռուսաստանում: Պետերբուրգում տպագրվող սոցիալիստ-հեղափոխականների օրգան «Дело народа» թերթը, մի քանի անգամ անդրադառնալով Վարանդայում տեղի ունեցածին, խոսում էր ամոթի զգացումով: Պատժիչ ջոկատի ղեկավար փոխգնդապետ Վիվերինը, հանդես գալով Բաքվի «Каспий» թերթում,

<sup>94</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես Արամայիս, Գլվ. աշխ., էջ 85-96, «Դրոշակ», 1906, N 4, էջ 50, N 5, էջ 70, «Յառաջ», N 66, 10.04.1906, Սիմոնյան Հ., Գլվ. աշխ., էջ 663-667 և այլն:

<sup>95</sup> «Արցախական», N 4, 7.02.1991 (Աբրահամյան Հ., Ջուզախեռ անցյալի և ներկայի միջև»):

փորձեց ժխտել կազակների կատարած անբարո այդ արարքները: Վարանդայի գյուղերում կազակների կատարած վայրագությունները ստուգելու համար Անդրկովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի կողմից, Վայդենբաումի գլխավորությամբ,<sup>96</sup> նշանակվեց քննիչ հանձնաժողով՝ բաղկացած հայերից, թուրքերից և ռուսներից:

Գյուղերի մոտ հանձնաժողովին դիմավորում էին հոգևորականները՝ զգեստավորված, գյուղական հասարակությունը՝ աղ ու հացով: Գյուղերում բնակիչները, դիմելով հանձնաժողովին, պատմում էին կատարված դառնությունների մասին: Սոս գյուղի քահանատեր Հակոբն իր ճառում շեշտում էր կազակների կողմից հասարակությանը հասցրած անպատվությունները և ավերումները, իսկ հավաքված մարդիկ դառնագին լալիս էին: Մամուլի հաղորդումներն ու բնակչության ուղարկված բողոքները հաստատվում էին ու նսեմանում իրականության առջև: Երբ հանձնաժողովը մոտենում էր գյուղերին, կանայք, չնայած նախօրոք զգուշացված էին, սարսափով փախչում էին լեռներն ու անտառները: Եվ չնայած բոլոր փաստերը հաստատվեցին, սակայն այդ հանցագործների պարագլուխները շարունակում էին մնալ իրենց տեղում: Հետո Արցախ-Չանգեզուր եկավ գեներալ Մալաման, որը ոչինչ էլ չձեռնարկեց: Ընդհակառակը, նրա վերադառնալուց հետո փոխարքայի պալատից հրահանգ իջավ, և թերթերին արգելվեց հաղորդումներ տպագրել Վարանդայի ողբերգության մասին: Սակայն տեղի ունեցավ մի փոփոխություն: Ելիզավետպոլի նահանգի նահանգապետ Ալֆտանի ենթակայությունից դուրս բերվեցին Կարյազինոյի, Շուշիի և Ջանգեզուրի գավառները: Այդ տարածքների գեներալ-նահանգապետ նշանակվեց կովկասյան հեծելազորի գորամասի և Գանձակի նահանգում գործող պատժիչ արշավախմբի հրամանատար գեներալ-մայոր Գոլոշչապովը: Եվ չնայած վիճակը մի փոքր խաղաղվեց, սակայն ահավորը դեռ առջևում էր:

\*\*\*

1905 թ. հոկտեմբերի 17-ին Նիկոլայ 2-րդի հրովարտակով Ռուսաստանին «շնորհվեց» «սահմանադրություն», որի համաձայն՝ կայսրության տարածքում ապրող ազգերն իրավունք էին ստացել իրենց բոլոր պահանջները ներկայացնելու Ս.Պետերբուրգ՝ հնարավորության սահմաններում դրանց «լուծում տալու համար»: Ռուսահայերը ևս որոշում են ներկայացնել իրենց պահանջները: Ներկայացված պահանջները քննարկելու համար Թիֆլիսում ստեղծվում է հանձնաժողով, որի միստերը տեղի էին ունենում

<sup>96</sup> Արամայիս, նշվ. աշխ., էջ 87:

քաղաքային վարչության սրահում: Նիստերին հայերից մասնակցում էր 50 ներկայացուցիչ: Նրանք հայ քաղաքական մտքի համարյա բոլոր հոսանքների ներկայացուցիչներն էին, բացի սոցիալ-դեմոկրատներից, որոնք բոյկոտ էին հայտարարել: Այդ համաժողովը քննարկեց հայ ժողովրդի քաղաքական պահանջների հարցը: Համաժողովը եզրահանգեց, որ Ռուսաստանը պետք է ունենա «ներկայացուցչական ժողով»: Ակնհայտ է, որ Անդրկովկասում դռները փակ էին պետական պաշտոն ունենալ ցանկացող հայերի համար, որին պետք է վերջ տրվեր: Նաև պետք է որոշվեր հայ գինվորների ծառայության վայրը: Համաժողովը քննարկեց գյուղատնտեսության, ինչպես նաև դպրոցների հարցը, որոնք 10 տարուց ավելի փակ էին: Անդրկովկասում լավագույն հողերը տրամադրվում էին Ռուսաստանի ներքին նահանգներից գաղթած մոլդկաններին և դուխոբորներին: Կովկասահայերը հետևյալ կերպ ձևակերպեցին իրենց պահանջները. ա) հայերի իրավունքները գործնականորեն հավասարեցնել ռուս և վրացի քաղաքացիների իրավունքներին, բ) բարելավել գյուղացիների տնտեսական դրությունը, գ) հայ լուսավորության և մշակույթի զարգացման համար ստեղծել տանելի պայմաններ<sup>97</sup>:

Անշուշտ, այդ համաժողովի ընդունած որոշումները կովկասահայերի համար գործնական որևէ նշանակություն չունեցան: Այն օրերին, երբ Թիֆլիսում տեղի էր ունենում վերոնշյալ համաժողովը, Վորոնցով-Դաշկովի մեջ միտք էր հղացել իշխանությունների հովանավորությամբ հրավիրել հայ և թուրք ներկայացուցչական ժողով: Փոխարքան նպատակ ուներ այդ քայլով ժողովրդի աչքում բարձրացնել վարչակարգի վարկը: Փոխարքայի օգնական գեներալ Մալաման 1905 թ. դեկտեմբերի 4-ին հայոց կաթողիկոսին տեղյակ է պահում, որ Թիֆլիս պիտի ուղարկվի 20 հոգի, որոնք պետք է ներկայացնեն Անդրկովկասի նահանգներում և Կարսի մարզում ապրող հայերին, իսկ Անդրկովկասի մահմեդականները պետք է ուղարկեին 30 հոգի, որից 20-ը՝ շիա, 10-ը՝ սյունի<sup>98</sup>:

Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը մեկնում է Թիֆլիս, և Մալամայի հետ համաձայնության են գալիս, որ հայերն ու մահմեդականները ժողովի ուղարկեն հավասար թվով ներկայացուցիչների՝ 30-ական պատգամավոր, ընդ որում, հայերից 26-ը պետք է ներկայացնեին լուսավորչականների, 4-ը՝ հայ կաթողիկոսների: Երբ ընտրվում էին պատգամավորները, հայերի մեծամասնությունը, այդ թվում՝ Արցախում, անտարբեր էին: Թուրք պատգամավորները

<sup>97</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., 2-րդ մաս, էջ 93-94, 663-667 և այլն:

<sup>98</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 229, ք. 13:

համաձայնության էին եկել համագումարի ընթացքում վարել հարձակողական ռազմավարություն: Հայ պատգամավորները խնդիր ունեին խոսել այն հարցերի մասին, որոնք առաջացել էին թուրք-հայկական ընդհարումների հետևանքով, և արտահայտել հայության ցանկությունը՝ Անդրկովկասում թույլ չտալ նոր արյունահեղություններ ու վերականգնել նախկին խաղաղ դրությունը<sup>99</sup>:

Հայ-թուրքական համագումարն իր աշխատանքներն սկսեց 1906 թ. փետրվարի 20-ին Թիֆլիսում՝ փոխարքայի պալատում: Համագումարը տևեց 15 օր: Ժողովը բացեց փոխարքա Վորոնցով-Դաշկովը և հեռացավ: Հետո նախագահում էր գեներալ Մալաման: Հենց սկզբից լուրջ տարաձայնություններ ծագեցին օրակարգի առթիվ<sup>100</sup>: Հայ պատգամավորները պահանջեցին օրակարգի հարց դարձնել հայ-թուրքական կոտորածների պատճառները պարզաբանելու հարցը: Հայերը մտադիր էին մերկացնել վարչակարգի խաղացած դերը, իսկ թուրքերը պահանջում էին իրենց տալ «հավասար իրավունքներ քրիստոնյաների, հայերի հետ»<sup>101</sup>: Քոչի հարցը քննարկվեց փետրվարի 26-ին տեղի ունեցած 5-րդ նիստում: Այդ հարցը տասնամյակներ շարունակ ձգձգվել էր, սակայն չէր վճռվել: Իշխանությունները միջոցներ չէին ձեռնարկում քոչվորներին նստակյաց դարձնելու համար: Նրանք մեծ վնասներ էին հասցնում հատկապես հայերի տնտեսությանը: Այդ հարցի քննարկումը բուռն վիճաբանությունների տեղիք տվեց: Գեներալ Մալաման, ամփոփելով հարցը, նշեց, որ քոչի առջև արգելք չի դրվելու, սակայն միջոցներ կձեռնարկվեն ընդհարումները բացառելու համար: Այսպիսով, հարցերը քննարկվեցին, շատերը ելույթ ունեցան, սակայն ոչ մի հարց չլուծվեց, և վճռական որոշում չընդունվեց<sup>102</sup>:

1906 թ. գարնանը Բաքվում տեղի ունեցած հայ-թուրքական երկրորդ ընդհարումից հետո թուրքերը նոր գործողություններ ծավալեցին Արցախ-Ղարաբաղում: Մարտի 9-ին հայ ուղևորները կրկին բռնությունների ենթարկվեցին Աղդամում, որի ժամանակ հայերից 5 հոգի ծանր վիրավորվեց: Այս անգամ կազակները կրակ բացեցին թուրքերի դեմ, որոնցից մի քանիսը սպանվեցին և վիրավորվեցին: Սակայն թուրքերը դաս չառան: Նրանք մայիսի 27-ին կրկին հարձակվեցին հայ ուղևորների վրա: 27 հոգի անհետ կորավ: Նրանց գտնելու համար գործադրված ջանքերն ապարդյուն անցան: Մի քանի օր անց նրանցից 14-ի խոշտանգված դիակները գտան Ղարաբաղի մոտ: Մնա-

<sup>99</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., մաս 1-ին, էջ 675:

<sup>100</sup> «Արշալույս», N 39, 22.02.1906:

<sup>101</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 677:

<sup>102</sup> Անանուն Ռ., նշվ. աշխ., էջ 203–204:

ցածների մասին ոչ մի տեղեկություն: Դրանից հետո միայն հայերը հրաժարվեցին օգտվել Շուշի-Աղդամ-Եվլախ ճանապարհից և գերադասեցին օգտվել Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհից, որը, սակայն, կապված էր այլ դժվարությունների հետ:

1906 թ. ամռանը տեղի ունեցած իրադարձություններն ամենասարսափելին էին և հայ-թուրքական ընդհարումների եզրափակիչ փուլը: Այն տեղի է ունեցել հուլիսի 12-22-ը Շուշիում: Այդ ժամանակ քոչի օրերն էին: Թուրքերի ուղեղից դուրս չէր գալիս Շուշին գրավելու միտքը: Ըստ նրանց՝ դա իբր կոյուրացներ քոչվորների գործը: Թուրքերը մամուլին և իշխանություններին կեղծ լուրեր էին հաղորդում, թե հայերը թուրքերի դեմ պատրաստվում են մեծ կռվի, հատկապես՝ քոչի օրերին: Ամառային արոտավայրեր բարձրացող տասնյակ հազարավոր թուրքեր՝ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, զինված էին: Նրանք այս անգամ ավելի կատաղած էին: Քոչն անցնում էր Շուշիի միջով: Հայկական մասով անցնելու համար նշանակված պահակները խստիվ հսկում էին և հայերին արգելում որևէ բան գնել թուրքերից: Հայերը բոլոր ջանքերը գործադրում էին անմիտ ընդհարումներից խուսափելու համար:

Այն ժամանակ, երբ նախիրներն ու հոտերը բարձրանում էին սարերը, զինված թուրքերը գրավում են Շուշիի շուրջը գտնվող բարձունքները, կտրում ճանապարհը, դիրքեր բռնում և քաղաքն առնում օղակի մեջ: Նրանք անխնա սպանում էին պատահած հայերին: Բոյկոտ հայտարարելով՝ հայերին՝ ոչինչ չէին վաճառում: Նրանք Պարսկաստանից բավականին զենք էին ստացել և լավ զինված էին, քան հայերը: Թուրքերի քոչը բարձրանում էր՝ անպատիժ թալանելով ու սպանելով հայերին: Ոչ միայն Շուշի քաղաքը, այլև հարևան Նալիֆալլու, Շոշ, Ղարաղլաղ և այլ հայկական գյուղեր նույնպես շրջապատված էին և կտրված իրարց: Այդ գյուղերի բնակիչների մի մասը փախել և ապաստան էին գտել Շուշիում, որի կացությունը դարձել էր խիստ տագնապալի: Լուրեր էին հասնում Շուշի, որ Բաքու-Եվլախ-Շուշի ճանապարհին բավականին հայեր էին կոտորվել կամ գերեզմարվել թուրքերի կողմից: Ամենասարսափելին մնում էր Աղդամը, որտեղ ռազմական պատրաստություն էին տեսնում Շուշիի վրա հարձակվելու համար: Շուշիի հայերը, որոնք տագնապի օրեր էին ապրում՝ քոչվոր ավազակախմբերի կողմից շրջապատված լինելով, ապավինել էին ՀՅԴ խմբերին և զինված սպասում էին 20 000-ի հասնող թուրքերին<sup>103</sup>:

Դեռևս 1906 թ. մայիսի 19-ին Շուշիից Թիֆլիս էր ուղարկվել հետևյալ

<sup>103</sup> Ա.-ՂՕ, նշվ. աշխ., էջ 326-327, Սիմոնյան Հ., նշվ. աշխ., 2-րդ մաս, էջ 16-17:

հեռագիրը. «...Դրությունը լարված է: Չնայած դրան, քոչը գնում է, թե՛ անվստահ. հայերը չեն դիպչում: Դեպի Եվլախ գնալը ռիսկի բան է: Շատ մարդ ռիսկ չի անում տնից դուրս գալ: Պրովոկացիան ուժգնորեն առաջ է գնում: Քաղաքն անտեր է: Ոստիկանությունը մարդասպաններին թողած՝ հեղափոխականներ է որոնում»<sup>104</sup>: Ցարական իշխանությունները փոխանակ պաշտպանելու քաղաքը և ամեն կերպ նպաստելու հայթուրքական ընդհարումները կանխելուն, ամեն ինչ թողել էին բախտի քմահաճույքին: Սակայն քաղաքում կային մեծ թվով ինքնապաշտպանական ուժեր: 1906 թ. գարնան կեսերին եկել էր Ռոստոմը և Վարդանի հետ փորձում էին լուծել հայերի պաշտպանության հետ առնչվող մի շարք հարցեր: Քաղաքում գտնվող ռումբերի գործի հմուտ վարպետները ինքնապաշտպանության խմբերին ապահովում էին ինքնաշեն ռումբերով: Նույն թվականի ամռան սկզբին հայրենի Շուշի եկավ Կոստյա (Կոստի) Չամբարձումյանը<sup>105</sup>:

Նա, ռմբաշինության մեջ հմտացած լինելով Թիֆլիսում, Շուշի գալով՝ Վարդանին առաջարկում է օգտագործել իր ձեռք բերած գիտելիքները: Շուշիում էին խարբերողի գինագործ Կարոն և ռումբեր պատրաստող հայտնի վարպետ բուլղարացի Պետոն, որը երիտասարդներին սովորեցնում էր իր արվեստը<sup>106</sup>: Այդ վարպետները մեծ ներդրում ունեցան Արցախի պաշտպանության գործում՝ պատրաստելով հարյուրավոր ռումբեր: Այդ օրերին Շուշիում գտնվող Ռոստոմը զբաղված էր սեփական նախագծերով հրթիռներ պատրաստելու գործով, որի անմիջական օգնականն էր Կոստի

<sup>104</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 2, գ. 95, թ. 9:

<sup>105</sup> Կոստի Չամբարձումյանը ծնվել է 1882 թ. հոկտեմբերի 1-ին Շուշի քաղաքում: 9 տարեկանում ընդունվում է ռեալական դպրոց: Նա շատ ակտիվ մասնակցում էր աշակերտական շարժումներին: Կրթությունը շարունակելու նպատակով մեկնում է ԱՄՆ: Վերադառնալով հայրենիք՝ զբաղվում է զենք տեղափոխելով: Չետո նրան տեսնում ենք Բուլղարիայում Քրիստափոր Միքայելյանի հետ ռումբերի փորձեր կատարելիս: Երբ 1905թ. սկսվում են հայ-թուրքական կոտորածները, Կոստյան Ղարաբաղում և Ձանգեզուրում էր: Ապա անցնում է Արևմտյան Հայաստան: Ստոլիպինյան դաժան տարիներին բանտ է նետվում և քստրվում Խարկովի նահանգ՝ 5 տարի ժամանակով: Այնտեղից փախչում է Բաքու: Չետո ուսումը շարունակում է Բելգիայում, ապա Սարատովի մարզում աշխատում՝ որպես գյուղատնտես: Կրկին Կովկաս: Առաջին աշխարհամարտի տարիներին կամավորական ջոկատում էր: Նորից Արևմտյան Հայաստան: Վասպուրականում «Համառուսական քաղաքների միության» լիազոր էր: Չետո՝ Վասպուրականի ընդհանուր կոմիսար: 1918 թ. մարտի սկզբին, երբ թուրքական բանակը շարժվում էր դեպի Կովկաս, Կոստյան, ժողովրդի գլուխ անցած, հեռանում է Պարսկաստան: Ճանապարհին մարտեր են տեղի ունենում թուրքերի դեմ, որոնց ընթացքում նա զոհվում է («Արև», N 15, 23.02.1919):

<sup>106</sup> «Հայրենիք», 1958, N 11, էջ 82-83:

Համբարձույնյանը: Այդ հրթիռները գլխավորապես հրդեհ առաջացնելու համար էին: Հրթիռների փորձարկումը կատարվում էր Վարանդայի Սարգսաշեն գյուղում<sup>107</sup>: Ռոստոմը երկու ամիս Արցախում մնալուց հետո Գանձակով վերադառնում է Թիֆլիս:

Գեներալ Գուլոչապովը իր նախորդների պես պաշտպանում էր թուրքերին: Հայ ինքնապաշտպանները ձգտում էին խուսափել ցարական ուժերի հետ ընդհարումից: Հայ գործիչները չէին կարողանում ազատ գործել Շուշիում, ամեն կերպ խուսափում էին ձերբակալվելուց: Գտնվելով անընդհատ փախստական վիճակում՝ չէին կարող լուծել իրենց առջև դրված խնդիրները: Ձանգվածային բախումներից խուսափելու համար Վարդանը բարեխղճորեն կատարում էր ՀՅԴ վերադաս մարմինների պահանջը: Նա խմբերից պահանջում էր շարժվել ծայրահեղ զգուշությամբ, չպատասխանել հակառակորդի գրգռումներին, համբերել, տոկալ՝ ըստ կարելիվույն երկար: Նա անկարգապահ խմբապետներին պաշտոնանկ էր անում և քշում Թիֆլիս: Օրինակ՝ այդպես վարվեց Տեր-Աբրահամյանի («Թռուցիկ») հետ: Վարդանը քարոզում էր պատժել բուն ոճրագործին, այլ ոչ թե խաղաղ բնակչությանը, «խնայել թուրք անմեղ ժողովրդին»: Անշուշտ, թուրք բարբարոսը դա չէր կարող գնահատել: Նա հայոց այդ վեհանձնությունն ու խաղաղասիրությունը վերագրում էր երկյուղի<sup>108</sup>:

1906 թ. հունիսի 9-ին Վարդանը ՀՅԴ բյուրոյին գրել է. «Այս սրիկաների համար (խոսքը քոչվոր թուրքերի մասին է - Հ.Ա.) մեծահոգութիւնը նշանակութիւն չունի... Լրբանում են և քաջալերում... ենթադրելով, որ հայերը չափազանց վախենում են»<sup>109</sup>:

Եվ երբ թուրք խաշնարածը գրավեց հարմար դիրքեր և շրջապատեց Շուշին, քաղաքի թուրքերը նույնպես զինված պատրաստ էին հարձակման: Նրանք շարունակում էին թալանել քաղաքի շուրջը և Ասկերանից Շուշի տանող ճանապարհի երկու կողմերին գտնվող հայկական գյուղերը: Դրանից ելնելով՝ Վարդանը ստիպված էր հրաժարվել մարդասիրական կեցվածքից և հակառակորդի դեմ կիրառել հենց նրա ռազմավարությունը: Դրա առիթը հենց իրենք՝ թուրքերը տվեցին: Նրանք 1906 թ. հուլիսի 12-ին սպանեցին քաղաքաբնակ Սահակ Միրզոյանին և մի զինվորի: Միրզոյանի սպանության տեղը հավաքվեցին ոստիկաններ և հայերի մի բազմություն: Հենց այդ ժամանակ թուրքերի կողմից սկսվեց գնդակների տեղատարափը հայոց թաղամասի վրա: Հայ ինքնապաշտպանները

<sup>107</sup> Սարգսաշենը Ռոստոմի կնոջ՝ Լիզայի ծննդավայրն էր:

<sup>108</sup> Միքայելյան Վ., նշվ. աշխ., էջ 328:

<sup>109</sup> Նույնը:

թուրքերի այդ սանձագերծությանը պատասխանեցին փոթորկալի կրակոցներով: Եվ այսպես. Շուշիում երկրորդ անգամ սկսվեցին արյունալի մարտեր: Շուրջ 1000 զինված թուրքեր և 700 հայ ինքնապաշտպաններ իրար դեմ անընդհատ կրակում էին: Նախնական որոշման համաձայն՝ հայ ինքնապաշտպանական վաշտերը հենց սկզբից դիմեցին հարձակման՝ գլխավորապես Ղուևլուղի թաղի ուղղությամբ, և երկու ժամվա մեջ գրավեցին հակառակորդի մի քանի դիրքեր: Իշխանությունը շտապ դիրքերն ուղարկեց զորք՝ վրացի սպա Մաչավարիանիի գլխավորությամբ, որը կրակոցներով հայերին ստիպեց նահանջել իրենց գրաված դիրքերից: Ընդհանրապես, թուրքերն ունեին մի շարք առավելություններ, որոնցից մեկն այն էր, որ, ինչպես ասվել է, նախօրոք գրավել էին քաղաքն օդակող համարյա բոլոր բարձունքները և հասցրել էին համալրել զենքի ու զինամթերքի պաշարները: Բացի այդ, քաղաքի ներսում ունեին մի քանի հարմարավետ դիրքեր: «Ալիք» թերթը գրել է, որ չնայած թուրքերն ունեին այդ առավելությունները, սակայն հայերը կարողացան հենց սկզբից իրենց ձեռքը վերցնել կռվի նախաձեռնությունը<sup>110</sup>: Քաղաքում գտնվող ռուսական զորքի մի մասը տեղավորված էր թուրքական թաղամասում, մյուսը, որը գլխավորում էր զեներալ Գոլոշչապովը, հայկական թաղամասում: Հուլիսի 12-ի առավոտից մինչև ցերեկվա ժամը 3-ի կողմերը ռուսական զորքերը պաշտպանում էին հայերին, որովհետև հայերի դեմ ուղղված թուրքերի կրակոցներից պատահաբար զոհվել էին ռուս զինվորներ: Սակայն այդ վիճակը երկար չշարունակվեց: Երբ հայերն անցան հարձակման և սարսափ տարածեցին թուրքերի մեջ, Գոլոշչապովը փոխեց իր որոշումը և այլևս չպաշտպանեց հայերին: Եվ երբ հայերը նահանջել էին իրենց նախկին դիրքերը, Մաչավարիանին հրամայեց կրակել նրանց դիրքերի վրա: Հայերի պատասխան կրակոցներից սպանվեց երկու ռուս զինվոր և: Ռուս զինվորները թողեցին դիրքերը և հեռացան: Անհետացավ նաև վրացի սպան: Այդ օրը հայ վրիժառուներին և ինքնապաշտպանության ջոկատներին հաջողվեց հարվածել թուրքերին: Օգտվելով ռուսական զորամասի խուճապից՝ հայ մարտիկները կրկին անցան հարձակման և մտան թուրքական թաղամաս: Հայ ինքնապաշտպանների հետ մշեցի Ավոն, Միսաքը, Հարութը՝ իրենց հանդուգն գործողություններով և կոչերով, հայ մարտիկներին առաջնորդում էին նորանոր սխրագործությունների<sup>111</sup>:

Գոլոշչապովի հրամանով թնդանոթներն ուղղվեցին թուրքերի

<sup>110</sup> «Ալիք», N 77, 1.08.1906:

<sup>111</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 21:

թաղամասի կողմը և սկսեցին գնդակոծել: Թուրքերի մի խումբ ամրացել էր պարսկահպատակ Իրզի և Ֆատալի Միրզի կողքին գտնվող տներում: Նրանք հույս ունեին այդտեղից ներխուժել ու հրդեհել հայոց թաղամասը: Սակայն ժամը 6-ից հրդեհը լափում էր Իրզի տունը: Հայկական քաղաքամասում լավ էին կազմակերպված սանհիտարական, տնտեսական, տեղեկատվության և մյուս ծառայությունները: Բոլոր թաղերում գործում էին սանհիտարական խմբեր՝ պատգարակներով և դեղերով: Ստեղծվել էին վիրակապական կետեր, որտեղ մշտապես հերթապահում էին այդ գործին հմուտ մարդիկ: Կարևոր ուշադրություն էր դարձվում մարտիկների սննդի կարգավորմանը, կազմակերպվել էին թաղային ճաշարաններ. կանայք ու ծերունիները կռվողներին հասցնում էին տաք կերակուր, ջուր, թեյ: Կռվողները հերթով դադար էին առնում: Հատուկ մարդիկ փամփուշտ էին հասցնում կռվողներին: Անխափան գործում էր սուրհանդակային կապը: Կարգապահությունը կատարյալ էր, հատկապես կռվի առաջին օրը<sup>112</sup>:

Մարտական գործողությունները շարունակվեցին հուլիսի 12-ի լույս 13-ի գիշերը: Հայերի կողմից կռվում էին 115 զինվոր և մոտ 200 թաղային կամավորներ<sup>113</sup>: Այդ երկու օրվա ընթացքում, ըստ Միքայել Վարդանյանի տվյալների, հայերը կրակել էին 80 հազար փամփուշտ<sup>114</sup>:

Հուլիսի 13-ի առավոտյան հրաձգությունը դադարեց: Այդ օրը գավառից հայերին օգնության եկավ 120 մարդ: Երեկոյան հայերը կրկին անցան հարձակման: Նրանք ձգտում էին ճեղքել պաշտպանությունը և հասնել Շեյթան-բազար: Թուրքերի դրությունը ծանրացավ հատկապես կեսօրին, երբ հայկական քաղաքամասից սկսեցին գործել թնդանոթները: Հայերն ունեին 7 թնդանոթ: Ամբողջ գիշերվա ընթացքում թուրքերը գտնվում էին «Դերբենդյան գնդի» պաշտպանության տակ: Այնուամենայնիվ, թուրքերը, չկարողանալով դիմադրել, ստիպված էին նահանջել Շեյթան-բազարից: Թուրքերի մեծ թվով ընտանիքներ խուճապով խուժեցին բանտի պարիսպներից ներս: Այդ օրը՝ հուլիսի 13-ի երեկոյան, թուրքերի թաղամասում վառվում էր 100-ից ավելի տուն, այդ թվում՝ Ջաֆար-բեկ և Ռասուլ-բեկ Վեզիրովների տները, Ագուլեցոց եկեղեցուց ներքև գտնվող Մամանլուք թաղը, մինչև Շեյթան-բազար և Թազ մահլու թաղը<sup>115</sup>:

Ուզմական գործողությունները դադարեցին հուլիսի 13-ի ուշ գիշերը: Հուլիսի 14-ին թուրք բժիշկ Մեհմանդարովը աղերսագրով դիմում է գեներալ Գուլշապովին և խնդրում միջնորդել հայերի հետ

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 21-22:

<sup>113</sup> «Դրոշակ», 1906, N 8, էջ 136:

<sup>114</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 130:

<sup>115</sup> Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 23:

հաշտություն կնքելու: Հայկական կողմը 8 կետից բաղկացած պահանջ է ներկայացնում թուրքական կողմին, որոնք ընդունելու դեպքում միայն հնարավոր էին համարում կնքել հաշտություն: Այդ պահանջագրի գլխավոր կետերն էին՝

- 1) քանդել Դիքտանկուրուի և Գեովհար աղայի տան մոտի դիրքերը.
- 2) վերացնել բոյկոտը.
- 3) արգելել թուրքերի նոր խմբերի մուտքը քաղաք.
- 4) նյութապես ապահովել զոհված Սահակ Միրզոյանի ընտանիքին.
- 5) Գանձակի նահանգից աքսորել բոլոր սադրիչներին:

Զնայած թուրքերը, բացի առաջին կետից, ընդունեցին այդ պահանջագիրը, սակայն ձգձգում էին այն կատարել: Հայերը պատրաստվում էին նոր հարձակման, սակայն զեներալ Գոլոշչապովը տեղյակ պահեց, որ այդ դեպքում զորքը զործի կանցնի և տակնուվրա կանի հայկական թաղամասը: Հուլիսի 14-ին և 15-ին շարունակվեցին բանակցությունները: Անտեսելով Գոլոշչապովի սպառնալիքները՝ հայկական հրամանատարությունը որոշեց հուլիսի 15-ի լույս 16-ի գիշերը նոր հարձակում սկսել և ոչնչացնել Դիքտանկուրուի դիրքը: Գիշերվա ժամը 4-ին հայերի զինված խմբերից մեկն աննկատ մոտենում է Դիքտանկուրուի տանը և պատի տակ տեղադրում պայթուցիկ արկը: Թուրքը, դա նկատելով, արկըը հեռացնում է: Հայ մարտիկներին հաջողվում է արկըը կրկին խցկել պատի մեջ և վառել պատրույզը: Պայթյունից մեծ անցք է բացվում: Թուրքերը, չդիմանալով ներս մտած հայերի բուռն գրոհին, դիմում են փախուստի՝ թողնելով 40 դիակ: Հայերը հրդեհում են տունը<sup>116</sup>:

Թուրքերը կրկին դիմում են հայերին՝ հաշտություն կնքելու խնդրանքով: Հաշտության բանակցությունները տեղի ունեցան հուլիսի 17-20-ը: Այդ օրերին քաղաքը խաղաղ էր: Սակայն հալիֆալուի կողմից քաղաք են ներխուժում 300 զինված քրդեր և միանում թուրքերին: Թուրքերը, օգտվելով դրանից, որոշում են հարձակման անցնել և վերագրավել Իրզի և Դիքտանկուրուի դիրքերը: Չերնյավսկին խոստանում է իր զորամասով օգնել նրանց: Գոլոշչապովի միջնորդությամբ, Իրզի այրված տունը հանձնվում է թուրքերին: Հուլիսի 21-ին երեկոյան ժամը 7-ին, երբ աղա Իրզի տան դիմացի հայկական դիրքերից եկած անզեն մարդիկ բանակցում էին թուրքերի հետ, հանկարծ վերջիններս կրակ բացեցին, որի հետևանքով սպանվեց մեկ հայ զինվոր, վիրավորվեցին երկու զինվոր և մի շարք անզեն քաղաքացիներ: Կրկին սկսվեցին կրակոցները, որոնք շարունակվեցին ամբողջ գիշերը: Հուլիսի 22-ի առավոտյան կրակոցները դադարեցին,

<sup>116</sup> «Դրոշակ», 1906, N 8, էջ 115:

որովհետև թուրքերը նորից էին հայերին խնդրել կնքել զինադադար: Միայն այդ վերջին օրը հայերը տվեցին 24 սպանված և 102 վիրավոր: Թուրքերի սպանվածների թիվն անցնում էր 190-ից<sup>117</sup>:

Այսպիսով, 1906 թ. հուլիսին թուրքերը Շուշիում ծանր պարտություն կրեցին: Որից հետո՝ օգոստոսի սկզբին, նրանք շրջապատեցին Խնապար, Խրամորթ և Քարագլուխ գյուղերը, սակայն հայերը կարողացան նրանց հետ շարտել: Այդ մարտերի ժամանակ զոհվեցին 12 հայեր, որոնց թվում՝ ինքնապաշտպանության եռանդուն ղեկավարներից Արտեմ Տեր-Մարտիրոսյանը: Հայկական ուժերը, հետապնդելով թուրքերին, մտան նրանց գյուղերը և վառեցին 200 տուն:

Կրկին ակտիվացան Ղաջարի թուրքերը: Նրանք հարձակվեցին Շեխեր գյուղի վրա: Հարձակման ենթարկվեց նաև Նախիջևանիկը: Հայերը հետ մղեցին այդ հարձակումը և հասան Շելլի թուրքական գյուղը: Ընդհարումներ տեղի ունեցան նաև Ջրաբերդի և Դիզակի գավառներում: Մարտակերտի շրջանում կային մի քանի թրքաբնակ գյուղեր: Հարևան հայկական գյուղերն անընդհատ ենթարկվում էին Գյուլեն-Փայա, Մամիկլու, Սուլեյման-Բեկլու և Ղալայչիլար գյուղերի հարձակումներին ու սարսափներին<sup>118</sup>: Իսկ թուրք Ղարբանդ, Մամուռլու, Քյոչարլու, Չրաղլու, Գեառավանդ գյուղերը հարձակումներ էին գործում Սեյսուլան և Յարըմջան գյուղերի վրա: Այս երկու գյուղերը, որոնք կտրված էին հայկական մյուս գյուղերից, գտնվում էին շատ ծանր վիճակում: 1905 թ. օգոստոսյան իրադարձություններից հետո Յարըմջայի բնակիչները տեղափոխվել էին Սեյսուլան, որը նոյեմբերի 18-ին այրվեց թուրք խուժանի կողմից: Սեյսուլանցիները օգնություն էին խնդրել մարտակերտցիներից: Այնտեղ ուղարկվեցին 130-ի չափ սայլեր, որոնք Սեյսուլանի բնակիչներին տեղափոխեցին Մարտակերտ: Մի քանի ամիս անց նրանք վերադարձել էին իրենց ավերված գյուղը: Թուրքերի այս նոր հարձակումից ստիպված՝ նրանք երկրորդ անգամ էին ցանկանում լքել գյուղը: Սակայն երբ սայլերը պատրաստ էին գյուղից դուրս գալու, հանկարծ թուրքերը շրջապատեցին գյուղը, և սկսվեց սոսկալի հրացանածգություն: Հայերը դիրքեր գրավեցին և սկսեցին դիմադրել թվաքանակով գերազանցող թշնամուն: Օգնության հասան 12 կազակներ, սակայն տեսնելով դիմացը կանգնած ահռելի ուժ՝ փախան: Փախավ նաև Շաֆի-Բեկ-Ֆաթալիբեկովը, որն իբրև օգնության էր եկել 40 կազակներով: Հայերը, մինչև երեկո դիմադրելով, ստիպված էին թշնամուն թողնել 130 սայլեր՝ եզներով և մեծաքանակ իրերով, մի կերպ ճանապարհ բացել և փրկել իրենց կյանքը: Հայերը

<sup>117</sup> Ա-ՂՕ, նշվ. աշխ., էջ 166:

<sup>118</sup> Նույնը, էջ 217:

տվեցին 4 զոհ: Այնուհետև նույնքերի 24-ին հայերը հարձակվեցին մի քանի թուրքական գյուղերի վրա: Թարթառ գետի հովտում գտնվող թուրքական Չրաղլու, Գեառավանդ, Մամարգալար, Արփոթալա, Բուռուջ, Դամուրլար գյուղերը ավերվեցին: Այդ օրը հայերը տվեցին 2 զոհ և 2 վիրավոր, իսկ թուրքերը՝ 30 զոհ<sup>119</sup>:

Սեկ ամիս դադարից հետո կրկին սկսվեցին կռիվներն այս անգամ խաչենի ձորակում: Մի քանի ժամ մարտական զործողություններից հետո այստեղ գտնվող թուրքական 5 գյուղերը՝ Մանիկլու, Վերին, Միջին, Ներքին Գյունեփայաները և Սուլեյման-Բեկլուն, դատարկվեցին: Այդ գյուղերի թուրքերը, փախչելով Սրխավենդ, Փափռավանդ, Ալի-Աղալու, Քենկերլու, միացյալ ուժերով հարձակվեցին Ջանյաթաղի, Մարտակերտի և շրջակա մյուս հայկական գյուղերի վրա: Դեկտեմբերի 28-ի առավոտյան Ջանյաթաղը պաշարված էր: Սակայն Գյուլաթաղից օգնություն ստանալով՝ կարողացան հետ մղել հակառակորդին: Հիսուն կազակներ օգնության եկան այն ժամանակ, երբ կռիվն արդեն թուլացել էր: Այնուհետև հայերը հարձակվեցին և ավերեցին Ալի-Աղալու և Քենկերլու թուրք գյուղերը:

Ամենախոշոր բախումը տեղի ունեցավ 1906 թ. հունվարի 2-3-ին Մարտակերտի և Փափռավանդի միջև: Մարտակերտից 2-3 կմ հեռավորության վրա գտնվող ավելի քան 200 տուն ունեցող այդ գյուղը հունվարի 2-ին հարձակվեց Դարա-Թափա կոչված Մարտակերտի զոմերի վրա: Տեղի ունեցավ ահեղ մարտ, որը կրկնվեց հաջորդ օրը: Հայերը կարողացան առաջ անցնել և մտնել Փափռավանդ: Կռիվն ավելի բորբոքվեց: Բայց ահա հասնում է գավառապետի օգնական Պիվովարովը՝ մի խումբ կազակներով, սակայն մարտերը շարունակվում էին: Կազակները չէին միջամտում. նրանց համար ձեննուտ էր, որ երկու կողմերն իրար կոտորեն: Թե՛ հայերը և թե՛ թուրքերը բավականին զոհեր տվեցին: Վարանդան ավերած փոխգնդապետ Վիվերինը մի ամիս խաչենի և Թարթառի ձորակների հայկական գյուղերը շրջելուց հետո հասավ Մարտակերտ: Փափռավանդցիները կրակ էին բացել կազակների վրա: Վիվերինը գնաց թուրքերին պատժելու: Նա վերադարձավ մի քանի վիրավորներով և երբ Գանձակից օգնություն ստացավ ու արշավեց Փափռավանդի վրա, թուրքերն արդեն քոչել էին: Դատարկ գյուղը ռմբակոծվեց և հրդեհվեց: Նույն ճակատագրին արժանացան նաև Դարափիրում գյուղը և Վելի-Բեկովի տները: Այստեղ եկած գավառապետ Ֆլեգինսկին Փափռավանդի ավերման համար մեղադրեց հայերին ու մի քանիսին ծեծի ենթարկեց<sup>120</sup>:

<sup>119</sup> Նույնը, էջ 219:

1905 թ. սեպտեմբերից մինչև 1906 թ. հունիսը ազգամիջյան բախումներ տեղի ունեցան նաև Թարթառ գետի հովտում: Բազում Սարով, Ղահրիլար և Հասան-Ղայա հայաբնակ գյուղերի համար դժվար էր, որովհետև չորս կողմից շրջապատված էին Ջամիլլու, Դարբաթլու, Բուռուջ, Մամարգալար, Դամուրլար թուրքաբնակ գյուղերով և բոլորովին զրկված էին պաշտպանվելու հնարավորությունից: Հայկական այդ գյուղերը ավերվեցին և փայ ու բաժին դարձան թուրք խուժանին: Այստեղ 1905 թ. նոյեմբերի 24-25-ը ընդհարումներն ուժեղացել էին: Այն վերսկսվեց դեկտեմբերի 2-3-ին: Երեք օր անընդհատ մարտեր էին տեղի ունենում, մինչև օգնության հասավ 200-ի չափ զորք, և թուրք բարբարոսները ցրվեցին: Այդ երեք օրերին հայերից սպանվեցին 7 հոգի և մեկ կազակ: Վերջինիս գլուխը թուրքերը կտրել և տարել էին: Հայկական այդ գյուղերի բնակիչները ստիպված էին քոչել Թալիշ, Մաղաղիս, Չայլու և Մարաղա: Դրանից հետո միայն այդ գյուղերը լրիվ ավերվեցին: Այնուհետև թուրքերն իրենց ուշադրությունը կենտրոնացրին Մարաղայի և Չայլուի վրա, որոնք մի առանձին նշանակություն ունեին թուրքերի համար: Ընդհարումները տեղի էին ունենում այդ գյուղերի շրջակայքում: Մարաղան ավերելու համար թուրքերը դեկտեմբերի 23-ին հարձակում ձեռնարկեցին, սակայն տալով 63 զոհ, նահանջեցին: Հայերը տվեցին 4 զոհ:

Ընդհարումներ տեղի ունեցան Թարթառի վերին հովտում գտնվող հայկական գյուղերի մոտերքում: Հայերի համար խիստ վտանգավոր էր մանավանդ Սարսանգի կիրճը: Այդտեղ գտնվող Ումուդլու, Գեռևանդ-Իմալաթ, Չոբան-Սայ և Չրաղլու թուրք գյուղերը մեծ վտանգ էին ներկայացնում և անընդհատ քշում էին հայերի անասուններին: Դեկտեմբերի 23-ին Ումուդլուի թուրքերը հարձակվեցին Կոճողոտի վրա, որը ծանր հետևանք ունեցավ: Շրջակա գյուղերից օգնություն ստանալով՝ հայերն անցան հարձակման: Մի քանի ժամ շարունակված մարտերն ավարտվեցին թուրքերի պարտությամբ:

Հայ-թուրքական ընդհարումներ տեղի ունեցան նաև Ջեբրայիլի գավառում և Հադրութի ձորակում: 1905 թ. օգոստոսի 23-ին Դարբաբուլաղի և Ղչահմեդլուի թուրքերը հարձակվեցին Քյուրաթաղի (Դուդուկչի) վրա: Գյուղի բնակիչները փախան անտառները, և այն լրիվ թալանվեց թուրքերի կողմից: Այդ խուժանը այնուհետև հարձակվեց Էդիլլու գյուղի վրա, որի երիտասարդները կարողացան հակահարված հասցնել ու հետ մղել նրանց: Հարձակման եմթարկվեցին նաև Հախուլլու և Աղբուլաղ գյուղերը, որոնց բնակիչները ստիպված հեռացան, իսկ գյուղերն ավերվեցին: Թուրքերը, մեծ կորուստ տալով

<sup>120</sup> Նույնը, էջ 217-222:

Խրմանջուղ գյուղում, դիմեցին փախուստի՝ թողնելով 50-ից ավելի դիակ: Երկու օր անց Խրմանջուղը կրկին ենթարկվեց հարձակման: Հայերն այս անգամ չկարողացան պաշտպանել գյուղը: Թուրքերը փորձեցին նաև հարձակվել Մելիքջանլու գյուղի վրա: Հայկական մի շարք գյուղեր՝ Քյուրաթաղը, Հախուլլուն, Աղբուլաղը և Խրմանջուղը, դատարկվեցին, դատարկվեցին նաև Էդիլլուն, Պլեթանցը, Մելիքջանլուն և Քոչբեկը: Դա 1905 թ. օգոստոսի 27-ին էր: Մելիքջանլուն երկրորդ անգամ հարձակման ենթարկվեց մեկ տարի հետո՝ 1906 թ. օգոստոսի 16-ին:

Վիճակը ծանր էր նաև Հադրութի ձորակում: 1905 թ. օգոստոսի 28-ին Սուլեյմանլուի թուրքերը հարձակվեցին Դուշչիլարի վրա և թալանեցին բնակչությունից դատարկ գյուղը: Օգոստոսի 29-ին Դշլաղ գյուղի թուրքերը հարձակվեցին Ցոր գյուղի վրա: Հայերին հաջողվում է հետ քշել թուրքերին, որոնք, թողնելով 3 դիակ, դիմում են փախուստի: Հետո թուրքերը հարձակվեցին Բանագուրի վրա: Հադրութի ձորակի մյուս գյուղերը մնացին պաշտպանված:

Սեպտեմբերի 14-ին թուրքերը հարձակվեցին Դուլանլարի, իսկ հոկտեմբերի 16-ին՝ Սուլբուդարայի վրա: Փախուստի մատնելով թուրքերին՝ հայերը հարձակվեցին Աշղ-Մելիքլու և Սազրա թուրք գյուղերի վրա, որոնց բնակիչները դիմեցին փախուստի, իսկ գյուղերը լրիվ ավերվեցին: Սարի գյուղերի շրջանում խիստ կատաղած էին Այլանլու և Մուսուլմանլար գյուղերի բնակիչները: Դրանք վաղուց էին այդ տարածքի չարիքը: Այդտեղ գտնվող Խծաբերդը, Արփազյադուկը, Թեզխարաբը, Հին Թաղերը, Սպիտակաշենը և Խանձաձորը անընդհատ ենթարկվում էին վերոհիշյալ թուրք գյուղերի հարձակումներին: Առաջինը թուրքերի հարձակմանը ենթարկվեց Արփազյադուկը: Այդ փոքրիկ գյուղը փորձեց դիմադրություն ցույց տալ: Սակայն ստիպված էին տեղի տալ և քոչել Խծաբերդ: Այդտեղ տեղավորվեցին նաև Սպիտակաշենի և Թեզխարաբի բնակիչները: Հայ ինքնապաշտպանները հերոսաբար դիմադրում էին<sup>121</sup>:

1905-1906 թթ. ազգամիջյան կռիվները մեծ վնաս հասցրին արցախահայության տնտեսությանը: Բնակիչները ստիպված էին զանգվածաբար հեռանալ իրենց բնակավայրերից և գնալ Բաքու, Թիֆլիս, Միջին Ասիա և այլ տեղեր: Այդ երկու տարում Դարաբաղից հեռացել է շուրջ 100.000 մարդ, միայն Վարանդայից 1906 թ. առաջին ամիսներին հեռացել է 10.000 հոգի<sup>122</sup>: Մեծ վնասներ էին կրել հատկապես գյուղերը: Վնասվել և ավերվել էին 286 գյուղեր, որոնցից

<sup>121</sup> Նույնը, էջ 208-242:

<sup>122</sup> «Ալիք», N 41, 15.06.1906:

128-ը՝ հայկական, 158-ը՝ թուրքական: Վնասվել էր 14.760 ընտանիք, որոնցից 7265-ը՝ հայ, իսկ 7496-ը՝ թուրք: Հայերից սպանվել էին Բաքվում՝ 176-ը, Շուշիում՝ 126-ը, Գանձակում՝ 132-ը, Շուշիի գավառի գյուղերում՝ 160-ը, Սինքենդում՝ 198-ը, Գանձակի շրջանի գյուղերում՝ 212-ը: Սպանված թուրք-թաթարների թիվն ավելի մեծ էր<sup>123</sup>:

Ըստ Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի բերած տվյալների՝ թեմում ընդգրկված բնակավայրերում ավերվել էին 911 տուն, 17 գյուղ, կողոպտվել էին 5 գյուղեր, սպանվել՝ 700 հոգի, անհետ կորել՝ 71, վիրավորվել՝ 470: Կողոպտվել և հրդեհվել էին 1153 տուն և խանութ, որից մոտ 400-ը՝ Շուշի քաղաքում, 1310 գոմ, 1839 մարագ, 2446 դեզ խոտ, 5 գործարան, 10 ջրաղաց, 1 վանք և 11 եկեղեցի: Գողացվել են 9200 խոշոր եղջերավոր անասուն, 2597 ոչխար և այծ, 711 խոզ, 594 ձի, ջրիկ և ավանակ ու 92379 ռուբլու տնային զարդեր: Խլվել են 390 հրացան, 26 ատրճանակ և դաշույն, 6000 փամփուշտ: Տուգանք է վերցվել 29255 ռուբլի, կատարվել է 20751 ռուբլու էկզեկուցիայի ծախս, և ռմբակոծվել 35 տուն<sup>124</sup>:

\*\*\*

Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը զգալի աշխատանք էր կատարել թեմի հեղինակությունը բարձրացնելու և արցախահայության հասարակական-քաղաքական կյանքին առնչվող մեծ թվով հարցեր դրականորեն լուծելու համար: Արխիվային բազմաթիվ նյութեր խոսում են այն մասին, թե ինչպես էին պայքարում արցախցիները ցարի՝ հունիսի 12-ի որոշումը վերացնելու համար:

Գրիգոր եպիսկոպոսի օրոք լայն պայքար է տարվել երկրամասում կաշառակերությունը վերացնելու, եկեղեցու կանոնադրական պահանջներից չխուսափելու, ամօրեն ամուսնություններից վերջ տալու և բազմաթիվ նման հարցեր դրականորեն լուծելու համար: Հաճախ տեղի էին ունենում եկեղեցու միջոցների յուրացումներ և հափշտակումներ: Այս և նման այլ հարցեր դառնում էին թեմի կոնսիստորիայի քննարկման առարկա: Հայոց Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ընդառաջելով թեմի ղեկավարության խնդրանքին, հաճախ թույլ էր տալիս թեմական ատյանին հոգևոր կոչումներ շնորհել առանձին անձանց: Օրինակ՝ 1903 թ. ապրիլի 21-ին թույլատրեց հոգևոր կոչում շնորհել Ջիվանշիրի գավառի Առաջածոր գյուղի բնակիչ Հարություն Շահջանյանին, որը ձեռնադրվեց քահանա և ուղարկվեց

<sup>123</sup> Ալնունի Է., Բողոքի ձայն, Պոսթըն, 1911, էջ 50:

<sup>124</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 466-467:

130 ծուխ ունեցող Դաշբուլաղ գյուղ՝ աշխատելու<sup>125</sup>:

Եկեղեցու կանոնները խախտում էին ոչ միայն հասարակ հոգևորականները, այլև հաճախ կոնսիստորիայի անդամներից ոմանք: Սինոդի որոշմամբ, Արցախի թեմի կոնսիստորիայի անօրինականություններ կատարած որոշ անդամների գործերը հանձնվեցին Գանձակի նահանգական դատարանի դատախազությանը: Պատվիրվեց մեկ ամսվա ընթացքում արձակել կոնսիստորիան և ընտրել բարեխիղճ անձանց ու այդ մասին հայտնել Սինոդին<sup>126</sup>:

Թեմը խիստ կողմնակից էր ընտանիքի ամրության պահպանմանը: Նա հետևում էր, որ դա հաստատուն լինի, հնարավորինս կանխվում էր ամուսնալուծությունը: Թե՛ կոնսիստորիան և թե՛ Սինոդը հաճախ ստիպված էին ամուսնալուծությունները հետաձգել և ամուսիններին հնարավորություն ու ժամանակ տալ հաշտվելու:

Պակաս կարևոր չէր նաև ցարական կառավարության կողմից փակված ծխական և հոգևոր դպրոցների անգործ մնացած ուսուցիչներին աշխատանքով ապահովելու հարցը: Օրինակ՝ թեմականի ուսուցիչ Բաղիշ բեկ Աղաբեկյանցը 1904թ. մայիսի 16-ին Վեհափառին ուղարկած դիմումի մեջ բարձրացնում էր փակված դպրոցների ուսուցիչներին վարձատրելու հարցը: Որոշ տեղերում փորձում էին ժողովրդից փող հավաքել և ուսուցիչներին վարձատրել: Բաղիշ բեկը, դա սխալ համարելով, ուսուցիչների վարձատրությունը համարում էր Վեհափառի պարտականությունը<sup>127</sup>: Այդ նույն թվականի

---

<sup>125</sup> Մեսրոպ Շահջանյանը խաչենի Առաջածոր գյուղի Եսայի քահանայի որդին էր: Նա սովորում էր Շուշիի թեմականում: Չորրորդ դասարանից հեռանում է, մեկնում Բաքու, որտեղ զբաղվում էր փականագործությամբ: Հետո բանվոր էր Մանթաշևի նավթահանքերում: Բաքվում հայտնի էր Քեշիշ օղի Արտյոմ անունով: Նա նաև հայտնի էր Դալի Սահրասա անունով: Հաղթանդամ էր, վայելչակազմ, գեղեցիկ տղամարդ, առեղի ֆիզիկական ուժի տեր: Նա, Բաքվում մենամարտելով Այթալըղ հայտնի ըմբիշի հետ, նրան զարկել էր գետնին: Հոր ցանկությամբ, 1903 թ. մայիսի 2-ին N 548 հրամանի համաձայն՝ ձեռնարկվել է քահանա: 1905-1906 թթ. Ղարաբաղում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ եղել է Համազասպի խմբում և նրա օգնականներից մեկը (Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Ե., 1999, էջ 79): Արցախի թեմի կոնսիստորիայի 1906 թ. հոկտեմբերի 26-ի N 1734 հրամանով նշանակվել է խաչենի «ա» մասի գործակալ, որը վարել է մինչև 1916 թվականը: Սկսած Ա կաթողիկոսի՝ 1907 թ. օգոստոսի 1-ի N 1244 կոնդակով պարզատրվել է քահանայական արծաթյա լանջախալով: Կովկասի փոխարքայի՝ 1915 թ. հունիսի 21-ի N 18356 վկայականով տրվել է նրան բրոնզե մեդալ կրելու իրավունք: Թեմապետ Զավեն վարդապետի՝ 1916 թ. N 23 վկայականով նրան տրվել է ծաղկանկար փիլոն կրելու իրավունք (ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 712, թ. 8-9): Նրա դերը հատկապես մեծ է եղել 1918-1920 թթ. Արցախի մղած ազատագրական պայքարում: Գնդակահարվել է 1921 թվականին Ադրբեջանի իշխանության կողմից:

<sup>126</sup> «Արարատ», 1904, N Ժ, էջ 832:

<sup>127</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 445, թ. 16:

մայիսի 8-ին Շուշիից վարդապետ Մելիք-Թանջիկյանը Վեհափառին ուղարկած հայտարարության մեջ նշում է, որ նրա հրամանի համաձայն՝ արձակված հոգևոր դպրոցի ուսուցիչների՝ մայիսի 7-ին տեղի ունեցած ժողովը, որտեղ նախագահում էր թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոսը, որոշում է ստուգել Վեհափառի՝ 1904թ. ապրիլի 8-ի N 301 կոնդակի կատարումը, որը պահանջել էր վճարել ուսուցիչների և աշակերտների թոշակներն ու աշխատավարձերը<sup>128</sup>: Որոշ ժամանակ անց՝ 1904 թ. օգոստոսի 3-ին, Արցախի փակված թեմականի հոգեբարձությունից Վեհափառին ուղարկված դիմումում ասված է, որ «Համաձայն Ձերդ վեհափառության կոնդակի, մինչև հունիսը տրված են աշակերտների և ուսուցիչների թոշակները»<sup>129</sup>:

Նույն թվականի սեպտեմբերի 7-ին Արցախի թեմական դպրոցի նախկին ուսուցիչ Քրիստափոր Փիլջանյանը Վեհափառին ուղարկած խնդրագրում տեղյակ է պահում, որ ինքը 17 տարի «հայ մանկուղոց դաստիարակութիան գործին է իղիլ նուիրում», բայց ահա «Սրբութիան նոր Կարգադրութիամբ զրկում է իրիք ամսվայ ռոճիկից, որ իմ արդար վաստակն է»: Փիրջանյանը Վեհափառին հարցնում է. «Ինչո՞վ պիտի կերակրիմ իմ բազմամարդ ընտանիքիս, որտեղի՞ց պիտի վճարիմ իմ այն պարտքը, որ իմ ամսիկանը ստանալու յուսով, վիրցիրիլ իմ զանազան տիղիրից, ի՞նչ ասիմ ինձ պարտք տուողներին, մանավանդ, որ միդ ընկեր ուսուցիչներից ոմանք ամբողջ տարուան ռոճիկը ստացիլ ինձ»: Նամակի հեղինակը խնդրում է Վեհափառին հրամայել թեմականի հոգաբարձությանը՝ տալ իր երեք ամսվա ռոճիկը, որով նրան ազատած կլիներ պարտատերերի ձեռքից ու հնարավորություն կտար «զնալու այլ ասպարեզ... ընտանիքի և զավակների օրիկան պարէնը հայթայթելու»<sup>130</sup>:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա -ն մեծ ջանքեր էր գործադրում բռնությամբ փակված Արցախի թեմական դպրոցը բացելու համար: Այդ մասին նա խոսում է 1904 թ. հունվարի 3-ին ստորագրած կոնդակում: Ըստ նրա՝ ստեղծված պայմաններում «փակեալ կայ դպրանոցն, բայց ոչ իսպառ լուծեալ համարել զկազմն հոգաբարձութեան դպրոցին»: Կաթողիկոսը պահանջում էր «վճարել զանսաթոշակս համայն ուսուցչաց և պաշտօնից դպրանոցին մինչ զվերջն մայիսի տարուոյս թէ ի պատրաստի գումարէն և թէ ի ստանալի դպրոցական տրոց»: Մկրտիչ Ա կաթողիկոսը պահանջում էր «չը վաճառել և ոչ մի ինչ ի կայից և ի կահկարասեաց դպրանոցին այլ ցուցակագրելով... զամենայն օրեանս

<sup>128</sup> Նույնը, գ. 145, ք. 18:

<sup>129</sup> Նույնը, ք. 39:

<sup>130</sup> Նույնը, ք. 48:

մատենադարանին...»<sup>131</sup>:

1904 թ. օգոստոսի 26-ին Սկրտիչ Ա կաթողիկոսի ստորագրած կոնդակը պահանջում էր պահպանել փակված թեմական դպրոցի գույքը և սառեցնել ուսուցիչների աշխատավարձը: Ըստ նրա՝ «թողուլ անվճար առ այժմս զմնացորդս ռոճկաց ուսուցչաց մինչ ցառանձին տնօրէնութիւն Մեր» և «կազմել ցուցակ և ունել ի պատրաստի զգումարն ապառկաց դպրանոցին վասն ներկայ ամի, իսկ զգոյս և զկարասիս անփորձ և անկորուստ պահպանել»<sup>132</sup>:

Այնուամենայնիվ, ըստ Վեհափառի հրամանի, լինում էին և բացառություններ: Օրինակ՝ թեմականի ուսուցիչ Սամվել Գյուլզատյանցը, երբ Վեհափառին խնդրում էր իրեն օգնություն ցույց տալ, վերջինս 1904 թ. դեկտեմբերի 25-ի կոնդակով թույլ է տալիս նրան ռոճիկ վճարել թեմի վիճակային արդյունքներից:

Ամենայն Հայոց կաթողիկոսը իր կոնդակներով զանազան պարտականություններ էր դնում Ղարաբաղի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի վրա: Օրինակ՝ 1903 թ. մայիսի 12-ի կոնդակի համաձայն՝

Անտոն վարդապետ Վարդազարյանին նշանակելով Գանձասարի վանահայր և վանքի տնտեսության կառավարիչ՝ Արցախի թեմակալին հանձնարարում էր «իբրև առաջնորդ՝ աջակից Քեզ ըստ ամենայնի ի գործ նորոգութեանց»՝ պահանջելով «զկանոնաւոր հաշտութիւն ել և մտից վանուցդ»<sup>133</sup>: Նույն թվականի օգոստոսի 19-ի կոնդակի համաձայն՝ Արցախի թեմի առաջնորդին իրավունք է վերապահվում տարբեր վանքերում վանահայրեր նշանակելու, քարհանքերի և վարելահողերի եկամուտները հավաքելու, վանքերը վերանորոգելու և համանման այլ հարցեր լուծելու:

\*\*\*

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումները կանխելու և խաղաղություն հաստատելու գործում մեծ նվիրվածություն ցուցաբերեց Արցախի եկեղեցին: Դեռ բախումներից առաջ թե՛ հայ եկեղեցին և թե՛ նրա թեմերը, պայքարելով 1903 թ. հունիսի 12-ի օրենքը վերացնելու համար, միևնույն ժամանակ, ջանք չէին խնայում հայ ժողովրդին հեռու պահել արհավիրքներից, առանձնապես ազգամիջյան բախումներից: Ի վերջո, Նիկոլայ 2-րդը 1905 թ. օգոստոսի 1-ին ստորագրեց հրաման հայ եկեղեցու գույքի ու կալվածքների

<sup>131</sup> Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 92, թ. 2:

<sup>132</sup> Նույն տեղում, թ. 90:

<sup>133</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թուղթ 273<sup>ա</sup>, վավ. 251:

վերադարձի վերաբերյալ: Աբրահամ Գյուլխանդյանը այդ առիթով գրել է՝ մի՞թե հեղափոխության հաղթանակը չէր այս, երբ մի կողմից ժողովրդական ըմբոստությունն էր ուժեղանում, իսկ մյուս կողմից էլ՝ Կովկասի փոխարքան ինքն է այժմ ցանկանում հասարակական ուժերի աջակցությունը: Նաև նշում է, որ փոխարքան ցանկանում էր պետական գործերի մեջ մասնակից դարձնել նաև Կովկասում ապրող ժողովուրդներին, հրավիրել ներկայացուցչական ժողով և կատարել հողաբաժանում: Այս բոլորն այնպիսի նորություններ էին, որոնց մասնը ոչ միայն չէր տեսել, այլև չէր երազել և ոչ մի լավատես մարդ Ռուսաստանում ու Անդրկովկասում<sup>134</sup>:

Ըստ Գյուլխանդյանի մեկնաբանության՝ հայերը պահանջում էին Անդրկովկասում մտցնել ինքնավարություն, երդվյալների դատարան, վերացնել դասակարգային առանձնաշնորհները, հավասարեցնել կանանց և տղամարդկանց իրավունքները, ազդարարել խոսքի, ժողովրդի, համախմբումների ազատություն, վերացնել գրաքննությունը, մտցնել ընդհանուր, պարտադիր ծրի տարրական ուսուցում, Թիֆլիսում բացել համալսարան՝ երկու սեռի անձանց համար, Անդրկովկասի տարբեր վայրերում հիմնադրել բարձրագույն մասնագիտական դպրոցներ, հայ ծագում ունեցող մանուկների համար տարրական դպրոցներում հայերենը դարձնել պարտադիր, իսկ հայկական միջավայրում գործող պետական դպրոցներում մտցնել հայոց կրոնը, հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցում, վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրավունքները, վերացնել նրա առջև դրված բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները, հայկական եկեղեցուն վերադարձնել նրա ծխական դպրոցները և կալվածքները, նախադաս իրավունք տալ տեղական սակավահող և անհող գյուղացիներին բնակվելու արքունական ազատ հողերի վրա՝ Անդրկովկասի սահմաններում, վերացնել ռուսաց հպատակության ընդունած թուրքահայ գաղթականներից վերաբերող սահմանափակիչ և բացառիկ օրենքներն ու կառավարչական կարգադրությունները և նրանց ուրիշ հպատակների հետ հավասար իրավունք տալ հողաբաժիններ ստանալ Անդրկովկասում, խաղաղ ժամանակ հայ զինվորների ծառայությունն անցկացնել Կովկասի սահմաններում, վերադարձնել վարչական իշխանությամբ աքսորված հայերին, ներում շնորհել քաղաքական և կրոնական գործերի համար տուժած բոլոր անձանց և այլն<sup>135</sup>: Հայ ժողովրդի հասարակական-քաղաքական այդ պահանջները բխում էին ինքնակալության

<sup>134</sup> «Հայրենիք», 1935, N6, էջ 122:

<sup>135</sup> Նույնը, էջ 123, Սիմոնան Զ., նշվ. աշխ., էջ 297-298:

բռունցքներում խեղդվող ոչ միայն հայերի, այլև մյուս ժողովուրդների ձգտումներից:

Անկասկած, Նիկոլայ 2-րդի՝ 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը ստորագրվել է հայ ժողովրդի ճնշման տակ: Օգոստոսի 2-ին (15-ին) Պետերբուրգից հեռագրվեց Թիֆլիս, որտեղ նշվում է, թե կայսրը բարեհաճեց զիջել հայոց կաթողիկոսի աղերսանքներին և կովկասյան փոխարքայի միջնորդությանը: Կայսրի հրամանով հայ եկեղեցու բոլոր կալվածքներն ու զույքը վերստին դրվում են հայ եկեղեցու վարչության իրավասության ներքո: Այդ նույն հեռագրում նաև նշված է, որ վերաբացվում են 10 տարուց ի վեր փակված հայկական ծխական դպրոցները և այն էլ ոչ թե 1884 թ. հաստատված սահմանափակ, նեղ, ճնշող կանոններով, այլ 1874 թ. հաստատված ծրագրով, որը հայերին լայն, ոչ մի կաշկանդում չընդունող իրավունքներ էր տալիս՝ տնօրինելու սեփական կրթական գործը<sup>136</sup>:

Ցարը, անշուշտ, իր հրամանով Անդրկովկասում վերականգնեց փոխարքայությունը և փոխարքայի վրա պարտավորություն դրեց «վերականգնել այդ բարելից երկրում խանգարուած հասարակական կեանքի խաղաղութիւնը»: Ապա՝ «ներկայումս փոխարքան իրեն հաւատացած երկրի պայմաններին ծանոթանալուց յետոյ, Սեզ ներկայացրած է իւր կարծիքը փոփոխելու հայ ազգաբնակչութեան վերաբերեալ մի քանի կարգադրութիւններ, որոնք արգելք էին լինում նրա կանոնաւոր և խաղաղ զարգացման»: Կայսրը շնորհավորում է «հայ-լուսաւորչական հոգևորականութեան ժողովրդի լուսաւորութեան համար անհրաժեշտ գործունէության ընդարձակ միջոցներ» տրամադրելը: Վերացնելով 1903 թ. հունիսի 12-ի օրենքը՝ ցարը հրամայում է «Յայ-լուսաւորչական եկեղեցու կառավարութեան և իրաւասութեան այն բոլոր անշարժ կալուածներն ու դրամազուլիւնները, որոնք պատկանում էին Յայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր կրթական հիմնարկութիւններին այն եկամուտների հետ, որ ստացուել են պետական կառավարութեան ժամանակաշրջանում, բաճաւով կալուածներն ընդունելու և կառավարելու ժամանակ տեղի ունեցած ծախսերը», վերադարձնել հայոց եկեղեցուն: Կայսրը հայտարարում է «թուլլատրել Կովկասի փոխարքայութեան սահմաններում բաճաւ եկեղեցիներին ու վանքերին կից եկեղեցական ծխական դպրոցներ 1874 թուի յուլիսի 19-ին բարձրագոյն հաստատուած կանոնների համաձայն»<sup>137</sup>: Նույն թվականի նոյեմբերի 4-ին փոխարքա Վորոնցով-

<sup>136</sup> «Խարիսխ», N 10, 14.07.1907:

<sup>137</sup> Սիմոնյան Յ., նշվ. աշխ., գիրք I, էջ 787-788:

Դաշկովը ստորագրեց Կանոններ, թե ինչ կարգով 1903 թ. հունիսի 12-ի օրենքով գրավված կալվածքներն ու դրամագլուխը պետք է վերադարձնել եկեղեցուն<sup>138</sup>:

Հայ ժողովրդի այդ փայլուն հաղթանակը նշվեց ամեն տեղ, այդ թվում նաև՝ Արցախ-Ղարաբաղում: Մինչ այդ, ինչպես ասվել է, 1905 թ. մայիսին Ղարաբաղի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը տվել էր հրաժարական, և նրա փոխարեն թեմի առաջնորդ էր նշանակվել Աշոտ եպիսկոպոս Շախեյանը<sup>139</sup>:

\*\*\*

Ինչպես նշվել է, Արցախ-Ղարաբաղում ընդհանուր վիճակն առանձնապես ծանր էր 1905 թ. ամռանը և աշնանը: Իսկ մինչ այդ թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսին փոխարինել էր Աշոտ եպիսկոպոս Շախեյանը, որը մեծ ջանքեր էր գործադրում կանխելու հայ-թուրքական ընդհարումները: Թեմի գործունեությունը դրանով չէր սահմանափակվում: Տասնյակ հոգևորականներ ստիպված էին, գեներ ձեռքերին, մարտնչել երկրամասի և նրա բնակչության պաշտպանության համար: Արցախի բազմաթիվ բնակավայրերից մամակներ, խնդրագրեր և հեռագրեր էին ուղարկվում թեմակալին և էջմիածին, որոնցում խնդրվում էր կանխել ազգամիջյան ընդհարումները: Արցախում ուսումնարանատեր Ներսես Մելիք-Ալլահվերդյանը 1905 թ. հոկտեմբերի 31-ին, դիմելով կաթողիկոսին, նշում է, որ հայերի ու թուրքերի միջև «հաշտություն» քարոզելու ընթացքում նահանգապետ Տակայաշվիլին ցուցաբերել է կողմնակալ վերաբերմունք: Այդ երևույթը բնութագրելով որպես խիստ վտանգավոր՝ դիմումի հեղինակը կաթողիկոսին խնդրում է դիմել Իրանի շահին, որ նա միջամտի, որովհետև Շուշիում գտնվող նահանգապետը «ոչ միայն չի ուզում թուրքերին պատժել, այլև ցանկանում է նրանց արդարացնել»: Նահանգապետը հենց որ հեռանում է, «կրկին թուրքերը, կարծես գիտութեամբ, թափվում են հայերի վրայ, կոտորում, թալանում ու կրակի են ենթարկում նրանց կայքը, որից ստիպված հայերը դիմում են ինքնապաշտպանութեան»: Հեղինակը չէր տարակուսում, որ այդ «հրդեհը շարունակվում է և պիտի շարունակուի, ըստ երևույթին, ապագայում ևս աւելի հրեշալոր կերպիւ, որովհետև, ինչպես լսում ենք հաստատ աղբիւրներից, թուրքերը ներքևում Կուր գետի ափերում մեծ

<sup>138</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ 1, թ. 237, վավ. 50 բ(II), «Արարատ», 1905, N Ժ, էջ 1045-1051:

<sup>139</sup> «Արարատ», 1905, N Թ, էջ 777:

պատրաստութիւններ են տեսնում թէ՛ զենքի, թէ՛ մարդկանց, որպէսզի մօտ ապագայում իրանց վար ու ցանքը վերջանալուց յետոյ, մեծ օրդուով թափուեն հայ գիւղօրայից վրայ և միանգամայն կործանեն, ջնջեն հայերին...»: Բեղինակի կարծիքով, «որպէսզի կարելի լինի մեր թշուառ ազգին մի շուտափոյթ օգնութիւն հասուցանել և ազատել նրան այս ժամանոյ չարիքից», նպատակահարմար էր գտնում դիմել «մի քանի տէրութեանց ներկայացուցիչների կամ նոյնիսկ պետերի, մանաւանդ Իրանի շահին, խնդրելով, որ նրանք խնայեն մեր ազգին, միջնորդեն Ռուսաց պետութեան վերջ դնելու այս կոտորածին»<sup>140</sup>:

Արցախի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոսը կանգնած էր արցախահայության պաշտպանության դիրքերում: 1905 թ. սեպտեմբերի սկզբին նա հաղորդել է, որ սեպտեմբերի 3-ին Շուշիի թուրքերի թաղում սպանվել է մի հայ, իսկ Աղդամում վերջին երեք օրերին թուրքերը գերեվարել են 16 հայ ճանապարհորդների, որոնց վիճակը դեռևս մնում է անհայտ: Թեմակալը նաև հաղորդում է, որ Ամարաս է ուղարկվել մի պատվիրակություն՝ թուրքերից հետ վերցնելու հափշտակված սուրբ մասունքները և մյուս իրերը: Ըստ նրա հաղորդման՝ մուղանցի թափառական թուրքերի կողմից Սինքեմոյից գերի տարված 38 հայերը հետ են բերվել Շուշի, և միջոցներ են գործադրվում նրանց կյանքը փրկելու համար: Թեմի կառավարիչը հաղորդել է, որ նահանգապետի պահանջով կազմվել է բոլոր վնասների ցուցակը: Նա խոստացել էր կրած վնասները պահանջել մեղավորներից<sup>141</sup>: «Երկիր» թերթը հաղորդել է, որ Ղարաբաղում տիրում է անիշխանություն, ամեն տեղ սպանություններ են, թալան, հրածգություն, գողություն, որոնք գործադրվում են օրը ցերեկով: Թերթը նաև հաղորդել է, որ աղքատները բոլորովին մնացել են անգործ, բեկերն իրենց կաշին են փրկում, մուսուլմանները կոտորում են իրար, մինչև հիմա 27 դիակներ կան ընկած, վիրավորների թիվն անհայտ է: Մի քանի գյուղերում տիրում է կատարյալ սով<sup>142</sup>: Այդ ամենի նկատմամբ թեմն անտարբեր չէր, և Աշոտ Եպիսկոպոսի գլխավորությամբ պայքարում էին դրանց դեմ: Թեմի առաջնորդը փորձում էր բոլորին տեղյակ պահել, թե ինչ ծանր վիճակում էր գտնվում Արցախը և ինչ օգնության կարիք ուներ: Նա 1906 թ. հոկտեմբերի 14-ին «Երկիր» թերթին հաղորդել է, որ Կովկասի հարուստ հայերը միանգամայն սառն ու անտարբեր են իրենց դժբախտ հայրենակիցների նկատմամբ: Ղարաբաղի գյուղացիները և քաղաքացիների մեծամասնությունը «տնքում են կարիքի մահաբեր

<sup>140</sup> ԴԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 229, թ. 5-6: Բեղինակի կարծիքով, Իրանի շահը իբր պաշտպանում էր արդարությունը:

<sup>141</sup> «Արշալույս», N 6, 16.09.1905:

<sup>142</sup> «Երկիր», N 5, 6.10.1906:

ճիրաններում... Սովն ու մերկությունը սպառնում են առաջ բերել համաճարակ հիվանդություններ: Շատերը նույնիսկ անկողին չունեն»: Թեմապետը հարուստ հայերին կոչ էր անում օգնության ձեռք մեկնել Արցախի գյուղացիներին, «որոնք հերոսաբար պաշտպանում էին հայ գյուղացիութեան կենքն ու պատիվը»: Նա թերթերի խմբագիրներին խնդրում էր մի կոչով դիմել հարուստ հայերին՝ «օտար տեղերում գտնուող և ճոխութեան մեջ ապրող հարուստ դարաբաղցիներին՝ օգնութեան հասնել՝ իրենց համերկրացիներին ու ցոյց տալ նրանց սեր ողորմածութիւն վշտի ու ցավի այս երկրում: Թող հնչի նրանց մեջ պարտքի գիտակցութեան ձայնը, թող արթնանայ նրանցում մարդասիրութեան զգացմունքը, թող բորբոքւի ունևոր հայերի սրտերում այն կայծը, որի անունն է խիղճ:

... Ղարաբաղցիների ներկայ դառն վիճակը մի ամոթ է հարուստ հայերի համար և պատիվ չէ բերում նրանց»<sup>143</sup>:

Արցախի թեմի առաջնորդին շատ էր մտահոգում թեմի տարածքում գտնվող պատմական հուշարձանների և կառույցների պահպանման, ազգամիջյան ընդհարումների հետևանքով կրած վնասները վերացնելու հարցերը: Այսպես, 1906 թ. ամռանը Թիֆլիսից վերադառնալու ճանապարհին այցելում է Գանձասար ու տեսնում վանքը բարձիթողի վիճակում: Գալով Շուշի՝ որոշում է այն վերանորոգել: Ամնիջապես այնտեղ է ուղարկում ճարտարապետ՝ նախահաշիվը կազմելու համար: Աշոտ եպիսկոպոսը, մինչև նյն ժամանակ, Վեհափառին խնդրում է 1907 թ. ստացված Գանձասարի եկամուտները տրամադրել վանքի նորոգմանը և կաթնատնտեսության հիմնադրմանը: Վեհափառ Մկրտիչ Ա-ն, հարգելով Ղարաբաղի թեմակալի խնդրանքը, ընթացք է տալիս նրա բարձրացրած հարցին<sup>144</sup>:

\*\*\*

Հայ հեղափոխական դաշնակցությունը եղել է 1905-1906 թթ. արցախահայության ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչը: Այդ մասին նյութերը հիմնականում քաղված են ՀՅԴ դատական գործի վերաբերյալ հրատարակված բազմահատոր նյութերից:

Այդ նյութերում կան տեղեկություններ, որ Շուշիում դաշնակցական կուսակցության «Ապառաժ» կոմիտեն ղեկավարում էին ատամնաբույժ Ալեքսան Մաշուրյանցը, Տիգրան Մելիք-Ալլահվերդյանը, Գերասիմ Բեյլակը, Սաշաբեկ Թարխանովը, Գրիգոր Սայանովը և ուրիշներ: Իսկ

<sup>143</sup> Նույնը, N 14, 17.10.1906:

<sup>144</sup> Նույն տեղում, N 65, 19.12.1906:

դրանց գլխավորը 1905-1906 թթ., ինչպես ակնարկվել է, Սերգեյ Սեհրաբյանն էր<sup>145</sup>։

Վարդանը (Սերգեյ Սեհրաբյան) հետագայում՝ Առաջին աշխարհա-մարտի տարիներին կազմակերպված հայկական կամավորական ջոկատներից մեկի հրամանատարն է եղել։ Քանի որ Արցախ-Ղարաբաղի պաշտպանության ապահովումը Դաշնակցություն կուսակցության կողմից դրված էր Վարդանի վրա, ուստի բոլոր խմբերը, բոլոր ջոկատները, կուսակցության կողմից Արցախ ուղարկված բոլոր անձինք պատասխանատու էին նրա առաջ և իրենց ամեն մի քայլի մասին պարտավոր էին տեղյակ պահել նրան։ Բոլորն էլ պետք է անառարկելիորեն կատարեին Վարդանի հրամանները և նրանից ստացած հրահանգներն ու պահանջները։ Վարդանն իր վրա մեծ պատասխանատվություն էր վերցրել և այն կատարում էր մեծագույն ջանասիրությամբ ու պատասխանատվությամբ։ Դրամահավաք կազմակերպելուց մինչև զենքի ձեռքբերումն ու բնակչության կյանքի պաշտպանումը Վարդանի հիմնական խնդիրն էին։ Բոլոր գրագրությունները և կապի միջոցները գաղտնի էին, սահմանված խստորեն։ Արցախից մինչև Գանձակ ստեղծվել էին գաղտնի պահեստներ և զինանոցներ։ Բոլոր կռվողներն ընդգրկված էին խմբերում. ամեն ինչ խիստ հաշվառվում էր։ Պատժվում էին բոլոր նրանք, ովքեր բնակչության դժգոհության պատճառ էին դառնում։ Դավաճանների, խաբեբանների, թշնամու հետ համագործակցողների նկատմամբ իրագործվում էին պատժի միջոցներ։ Ինքնապաշտպանության զինվորները վարձատրվում էին, իսկ զենք զնելու համար դրամ առանձնացրած բնակիչները հետագայում այդ գումարը հետ էին ստանում։ Վարդանին ուղարկված բոլոր նամակներն ու գրությունները համառոտ էին, գործնական։ Այսպես, ջոկատներից մեկի հրամանատար Իսրայելը Վարդանին գրել է. «Ուղարկված դրամը բաժանել են զինվորներին, պահեստից հացահատիկ են բաժանել գյուղացիներին։ Թռուցիկ խումբը բաժանել են երկու մասի. մի մասը, որը բաղկացած է 6 հոգուց և որի հրամանատարը պատվելի անձնավորություն է, պետք է պաշտպանի քրդերի սահմանը, իսկ մյուս մասը, որը գլխավորում են ես և նույնպես 6 հոգի է, պետք է գործի Ասկերանի ուղղությամբ։ Քննչական բոլոր գործերը հանձնվել են Միքայել բեկին։ Ուղարկում են Մարտիրոսին։ Եթե փամփուռտակալը պատրաստ է, խնդրում են այն ուղարկել։ Վառողը ստացել են։ Ապրանքն իմ կողմից ուղարկվել է Վարանդա և տեղ է հասցվել հաջողությամբ»<sup>146</sup>։

<sup>145</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 4, էջ 3094։

<sup>146</sup> Նույնը, էջ 2763։

Արցախի ինքնապաշտպանության բոլոր ղեկավարներն ունեին ծածկանուններ: Խիստ սահմանված էր գաղտնապահություն: Հետախուզությունը դրված էր բարձր մակարդակի վրա: Կապը թիֆլիսի և մյուս խոշոր քաղաքների հետ անխափան էր: «Ապառաժ» կոմիտեն, հաճախակի դիմելով երկրամասի բնակչությանը, կոչ էր անում վրեժխնդիր լինել դավաճանների նկատմամբ, պատժել գողերին, խաբեբաներին, ազգուրացներին: «Այրունը» 1905թ. հունիսի 17-ին «Ապառաժ» կոմիտեի անդամներին ուղղված կոչում, որը գրվել է ՀՀԴ Վարանդայի կոմիտեի ձևաթղթի վրա, նշել է, որ տեղի հոգևորականի վրա մահափորձ են կատարել անհայտ Ջավադը, ժողովրդական պահեստի թալանողներից Մուխանը, իսկ երրորդը դեռևս անհայտ է: Իրագրվել է պահում, որ այդ հանցագործները կպատժվեն ամենայն խստությամբ<sup>147</sup>:

Տեղերն ուղարկված անձնավորությունների պահանջները պետք է կատարվեին անառարկելիորեն, և նա պետք է ստանար ջերմ օգնություն: Դա հստակ երևում է 1906 թ. մայիսի 26-ին գրված հետևյալ տեղեկանքից, որտեղ ասված է, թե «Ապառաժ» կոմիտեի կողմից սույն տեղեկանքը ներկայացնողը հուսալի անձ է, որին իրավունք է վերապահված հայկական գյուղերում կազմակերպելու ռազմական խմբեր և հավաքելու դրամ: Բոլոր ընկերներն ու գյուղացիները պարտավոր են սույնը ներկայացնող անձին ցույց տալ օգնություն և ջանքեր գործադրել հաջողությամբ կատարելու նրա պահանջները: Այնուհետև նշված է, որ հավաքված գումարը պարտադիր պետք է ուղարկվի «Ապառաժ» կոմիտեին՝ գյուղացիների համար զենք գնելու<sup>148</sup>:

Գաղտնագրերից երևում է, որ ինքնապաշտպանության ուժերը մեծ ուշադրություն էին դարձնում զենքի պահեստավորմանը: Հենց այդ մասին է խոսում 1906 թ. ապրիլի 30-ին Վարդանին ուղարկված հետևյալ նամակը.

*«Հարգարժան Վարդ.*

*Այս նամակի ենթաբաժինը քեզ կպատմի, թե մենք որտեղ ենք գտնվում և սպասում ենք քո կարգադրությանը: Մենք մոտավորապես ունենք 15 հազար փամփուշտ, երեք կալիբրի և 18 հատ N 1 նռնակ:*

*Ինչպե՞ս, ե՞րբ և ո՞ր ծանապարհով կարող ենք այս ապրանքը բերել քաղաք: Դու Արշակին մի ընկերոջ հետ, նախօրոք ուղարկիր քաղաք, որպեսզի նրանք ցույց տան ապրանքը տեղավորելու տեղը: Թող նրանք դիմեն Գևորգին: Խնդրում են տղաներին ուղարկել այս երեկոյան, որպեսզի կարողանանք առավոտյան մոտ գալ ձեզ մոտ:*

<sup>147</sup> Խոյնը, էջ 2764:

<sup>148</sup> Խոյնը:

<sup>149</sup> Խոյնը, էջ 2765:

Վարդանը և «Ապառաժ» կոմիտեն տարբեր տեղերից բողոքի նամակներ էին ստանում, որոնց հեղինակները պահանջում էին կիրառել պատժի միջոցներ ընդհանուր կարգը խախտող որոշ անձանց նկատմամբ<sup>150</sup>:

Խաչենից դաշնակցության ներկայացուցիչ Իսրայելը 1906 թ. հունիսի 6-ին Վարդանին ուղարկած զեկուցագրում հաղորդել է, որ գիշերը Համոյի մոտից մարդ է եկել (Համոն Ջրաբերդում ինքնապաշտպանության պատասխանատուն էր): Համոն Մոխրաթաղում էր և բանակցություններ էր վարում կազակների սպաների հետ: Սպաները հայերին ուղարկել էին սայլերով խոտ բերելու, սակայն թաթարները հարձակվել էին նրանց վրա: Նրանց դեմ ուղարկվել են կազակներ: Չորս թաթար սպանվել է, սայլերը հետ են խլվել և բերվել: Ապա հաղորդվում է, որ ռուս զինվորները, որոնք գտնվում էին Ասկերանում, հրաման ունեին երկու-երեք հայ կամ թաթար տեսնելու դեպքում կրակել<sup>151</sup>:

Արցախի տարբեր տեղերից փամփուլշտ էին խնդրում Վարդանից: Չորրորդ շրջանի պետ Ներսեսը 1906 թ. հուլիսի 16-ին Վարդանին ուղարկած նամակում հաղորդում է. «...ժողովուրդը դիրքերում են, օգնում են: Մեր տղաներն օգնում են մյուս շրջանների տղաներին: Պահեստում միայն բերդանկայի գնդակներ են: Եթե ուրիշ տեղերից օգնություն պահանջեն, խնդրում են հայտնեք, որ ես ուղարկեմ մարդկանց: Խնդրում են գնդակներ ուղարկել»<sup>152</sup>:

Սարիբեկը Գանձակից Վարդանին գրում էր, թե Բյուրոն առաջին հերթին պետք է բավարարի «Ապառաժ» կոմիտեին և Ելիզավետպոլին՝ որպես ամենավտանգավոր շրջանների: Պաշտպանության մեծ քանակությամբ միջոցներ պետք է կենտրոնացվեն Ելիզավետպոլում, այնտեղից էլ բաժանվեն մյուս շրջաններին: Արշակ Մելիք-Կարակոզովը խոստացել է տալ ամենալավ որակի 21 փութ վառող՝ փութը 17 ռուբլով: Ցանկանում է գաղտնի ճանապարհով ուղարկել Շուշի՝ Անդրանիկ Պետրոսյանի հասցեով, իբր ինքն է ֆուրգոններով ուղարկել իր Վանգիզարի գործարանը: Հինգ օրից կլինի այստեղ: Ապա նշում է, որ կարող է ուղարկել մաուզերներ՝ 100-ական գնդակներով: Ինքը հանձնաժողովին ներկայացրել է Խաչենի ծանր վիճակի մասին: Խոստացել են օգնել: Կառավարությունը կորցրել է գլուխը, ամեն օր

<sup>150</sup> Նույնը, էջ 2771:

<sup>151</sup> Նույնը, էջ 2766:

<sup>152</sup> Նույնը, էջ 2767:

հրատարակում է նոր օրենք, սպառնում կախաղանով, սակայն իզուր, անօգուտ է, թալանն ու սպանությունները շարունակվում են<sup>153</sup>:

Պայքարի թատերաբեմ էր դարձել հատկապես Բերդաձորի ենթաշրջանը: Այնտեղից հաղորդվել է, որ թաթարներին հասցվել է մեծ հարված: Նրանցից շատերը սպանվել են: Ապա նշվել է, որ մշակվել է ծրագիր Բաշիբեկլուի վրա հարձակվելու համար՝ առանց Ջանգեզուրի օգնության: Սպասվում է նահանգապետի այցը, հարձակումը հետաձգվել է մի քանի օրով: Եվ այժմ կարգադրության են սպասում<sup>154</sup>:

«Ապառաժ» կոմիտեն ամեն կերպ օգնություն էր ցույց տալիս ձերբակալված ընկերներին և նրանց ընտանիքներին: Ձերբակալված ընկերներից մեկը 1906 թ. փետրվարի 21-ին Շուշիի բանտից «Ապառաժ» կոմիտեին հաղորդել է, որ 15 օր բանտ մատելուց հետո ուզում են իրեն ուղարկել Օրենբուրգի նահանգ: «Կինս և չորս անչափահաս երեխաներս,- հաղորդում է բանտարկյալը,- ինչ-ինչ ճանապարհներով հասել են Շուշի՝ ինձ հետ տեսակցելու համար: Իմ ընտանիքը մնացել է բաց երկնքի տակ, որովհետև Շուշիում ոչ ոք չունեն»: Նաև հաղորդում է, որ իրեն աքսորելու հարցում մեղք ունեն Մելիք-Ասլանովը, Մխիթար-բեկը, Ասլան-բեկը, Սաջախ-բեկը և Կարիման-բեկը, իսկ հայերից՝ Առաքել Շաբուրյանը: «Տղաներին միշտ էլ ասել են, որ նա լրտես է, կաշառակեր, նաև շատ վտանգավոր մարդ է Միքայել Կազարբեկյանը»<sup>155</sup>:

Իսկ Արտյունը 1906 թ. հուլիսի 17-ին Վարդանին հաղորդում է, թե հնարավոր է այդ գիշեր՝ լուսադեմին, հարձակվեն Մալիբեկլուի վրա: Խնդրում էր շուտ ուղարկել 1000 հատ N1 և նույնքան էլ N2 նռնակ<sup>156</sup>:

Վերոնշյալ Լևոնը, որը եկել էր Թիֆլիսից, իր ընկեր Գևորգին գրել է, որ գալուց ինքը եղել է Խնձրստանում և Ծմակահողում, հետո գնացել է Զարուբունագոմներ, Զաթերք, Կճղոտ, Դրմբոն, Մեծշեն, Մոխրաթաղ, Մարտակերտ, Կուսապատ և այլ գյուղեր: Ամեն տեղ տեսել է հիասթափված վիճակ: Զրավիրել էր բազմամարդ ժողովներ, որտեղ հիմնականում խոսվել է դաշնակցական կուսակցության գործունեության մասին: Ապա հաղորդում է, թե Զամոն այդ կողմերում իրեն հեղինակագրվել է: Խոստացել էր նրան տեղափոխել այդ կողմերից: «Ժողովրդի աչքում,- շարունակում է,- այդ մարդկանց գործունեության հետևանքով մենք հեղինակագրվել ենք, մինչդեռ դա այն ժողովուրդն է, որից մենք սպասում ենք ավելին և որոնց համար մենք շատ բան ենք արել: Երբ սննդի և անասունների համար նրանց դրամ առաջարկեցի,

<sup>153</sup> Նույնը, էջ 2768:

<sup>154</sup> Նույնը, էջ 2769:

<sup>155</sup> Նույնը:

<sup>156</sup> Նույնը:

բոլորը զարմացան... Մի խոսքով՝ Ջիվանչիրի համար հարկավոր է հեղափոխական ոգով փորձառու մարդ»<sup>157</sup>:

1906 թ. մարտի 18-ին Բերդաձորից «Ապառաժ» կոմիտեին հաղորդվել է, որ ամսի 17-ին գյուղ մտան 300 հրանոթաձիգներ, որոնց «ժողովուրդը դիմավորեց աղ ու հացով, սակայն հրամանատարը չի ընդունել՝ հայտարարելով, թե ինքը բնակչության հետ շատ գործ ունի, իբրև մենք թաքցնում ենք շատ կասկածելի մարդկանց և պահանջել է բոլորին հանձնել, հակառակ դեպքում սպառնաց հրանոթներով ռմբակոծել բոլոր գյուղերը»: Այդ հրամանատարը պահանջել էր հանձնել 80 հրացան, որի համար տվել էր 1,5 ժամ ժամանակ: Անհանգստացած բնակչությունը հավաքեց 15 հին հրացան և հանձնեց: Հրամանատարը, երկրորդ անգամ հավաքելով բնակչությանը, սպառնացել է, թե բոլորին կզլխատի, նույնիսկ չի խնայի կանանց ու երեխաներին: Հրամանատարը պահանջել է Ասլանին և Սալմաստին: Բնակիչները պատասխանել են, որ իրենք չեն ճանաչում այդ մարդկանց: Առավոտյան ժամը 9-ին կազակները, շրջապատելով գյուղերը, մանրագնին ստուգել են բոլոր տները, սակայն ոչ մի զենք էլ չեն գտել: Ի վերջո, յուրաքանչյուրին տուգանել են 5-ակվան ռուբլի, հանձնարարել 10 օրում մուծել գումարը և հեռացել<sup>158</sup>:

Սհա ևս մեկ հաղորդում, որն ուղարկել էր Բաբկենը: Նա գրել է, որ իրեն հաջողվել է ձեռք բերել 7000 գնդակ: «Մեկ շաբաթ անց, շարունակում է, մեր շրջանը կհասնի 30 հրացան Մոսինիի, որից 10-ը՝ Սյունիքի համար, իսկ 20-ը՝ մեր: Մեծ քաղաքում գիտեն «Ապառաժի» վիճակի մասին: Նրանցից ստացանք խոստացած 5000 ռ. օգնությունը: Կձգտեն դրանով զենք գնել»<sup>159</sup>:

Բերված տվյալները համոզում են, որ, իրոք, հայ-թաթարական ընդհարումների ժամանակ բավականին մեծ է եղել դաշնակցության դերը արցախահայության պաշտպանության գործում: Նա, պարզապես, հանուն Արցախի, գնացել է ինքնազոհության:

\*\*\*

Արցախ-Ղարաբաղում ձերբակալություններն սկսվել էին 1906 թ. աշնանից: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության «Կայծ» թերթի շարունակությունը համարվող «Նոր խոսքը» հաղորդել է, թե Շուշիի հայոց թաղում սկսել են ձերբակալել երիտասարդներին: Թոփխամայի հրապարակում գործերը շրջապատել էին 30 հոգու, հատ-հատ

<sup>157</sup> Նույնը, էջ 2770

<sup>158</sup> Նույնը, էջ 2773:

<sup>159</sup> Նույնը, էջ 2793:

ծերբակալել: Ըստ թերթի հաղորդման՝ ոստիկանության այդ գործողությունները շարունակվել են մի քանի օր<sup>160</sup>:

Ամենուր հետապնդվում էին դաշնակցականները: «Դաշնակցություն կուսակցության գործ» (“Дело по партии Дашнакцутюн”) բազմահատորանոց քննչական գործում կան տասնյակ վկայություններ այն մասին, թե ինչպես էին նարդկանց ձերբակալում միայն նրա համար, որ նրանք եղել են այդ կուսակցության անդամ կամ համակիր: Որ Հայ հեղափոխական դաշնակցությունը բազմաթիվ թելերով կապված էր հայ բնակչության մի խոշոր մասի, ինչպես և հայ եկեղեցու հետ, անժխտելի է: Դաշնակցությունն ուներ մեծ հեղինակություն: Եվ հանուն հայության պաշտպանության՝ հաճախ էլ դիմում էր ծայրահեղությունների և չարդարացված գործողությունների: Բերենք մի օրինակ. Կարաչինարում հարգված քահանա էր Տեր-Սողոմոն Եղիազարովը: Հայ-թուրքական ընդհարումներից հետո Սարով գյուղից Կարաչինար է տեղափոխվում Նիկոլայ Տեր-Սողոմոնովը և եկեղեցում նշանակվում երկրորդ քահանա, սակայն Տեր-Սողոմոն Եղիազարովը դեմ էր դրան: Նիկոլայ Տեր-Սողոմոնովը բողոքներ է ուղարկում Աշոտ եպիսկոպոսին և սպառնում բացահայտորեն: Նա վախեցնում էր կարաչինարցիներին: 1907 թ. օգոստոսի 19-ին սպանում է քահանա Տեր-Սողոմոն Եղիազարովին և հետո ինքը նշանակվում այդ պաշտոնում: Կարաչինարցիները խիստ զարմացել էին, թե այդ ինչպես է Աշոտ եպիսկոպոսը նարդասպանին նշանակել գյուղի քահանա: Դրանից հետո կարաչինարցիները հրաժարվում են եկեղեցի գնալ, որովհետև «այստեղ քահանա մարդասպան էր» տիրություն անում<sup>161</sup>: Կարաչինարցիները պնդում էին, որ նույն մարդասպանների ձեռքով սպանվել է նաև համագյուղացի Թևոս Խաչանովը<sup>162</sup>: Նրանք պահանջում էին պատժել հանցագործներին և նրանց հեռացնել գյուղից: Կարաչինարցիները բացահայտ բողոքում էին, թե իրենք չեն «ցանկանում մարդասպան քահանա ունենալ»<sup>163</sup>:

Նիկոլայ Տեր-Սողոմոնովը Դաշնակցություն կուսակցության անդամ էր<sup>164</sup>: Ելիզավետպոլի թեմի քահանա վարդապետ Կորյունը, որը 1905-1907 թթ. Դաշնակցություն կուսակցության Ելիզավետպոլի տեղական կենտրոնական կոմիտեի ղեկավարն էր, շահագրգռված էր, որ նա դառնար Կարաչինարի եկեղեցու քահանա: Այդ մասին 1909 թ. մայիսի 27-ին ցուցում էր տվել Ելիզավետպոլի բնակիչ Խուստին Կամկրելիձեն:

<sup>160</sup> «Նոր խոսք», N 11, 13.09.1906:

<sup>161</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 439:

<sup>162</sup> Նույնը, էջ 440:

<sup>163</sup> Նույնը, էջ 438:

<sup>164</sup> Նույնը:

Վարդապետ Կորյունի իրավունքները բավականին մեծ էին. նրա ձեռքում էին կենտրոնացված մեծ թվով գումարներ, որոնք իբր օգտագործվում էին կառավարության դեմ պայքար կազմակերպելու և ինքնուրույն հայկական պետություն ստեղծելու համար: Վարդապետ Կորյունը մինչև ձերբակալվելը այդ կողմերում հեղինակություն էր, որից վախենում էին շատերը: Նրա իրավունքի տակ էին մի խումբ վրիժառուներ: Ցարական ոստիկանությունը նրան մեղադրում էր նահանգապետի տեղակալ Անդրեևի, Շուշիի գավառապետի տեղակալ Սախարովի, հրահանգիչ Շչերբակովի, գավառապետ Շումակովիչի և ուրիշների սպանության մեջ: Նյութերում ասված է, որ երբ Կորյունին ձերբակալել են, նրա մոտ հայտնաբերվել են կուսակցական փաստաթղթեր, քարտեր, զենք, մի քանի հազար ռուբլի դրամ, լուսանկարներ և այլն<sup>165</sup>: Նաև վկայություններ կան այն մասին, որ նա օգտվում էր գնդապետ Լազարևի, պաշտպան Սամսոն Հարությունովի, հարուստ Մելիք-Ազարյանցի աջակցությունից, նույնիսկ մուտք է ունեցել փոխարքայի մոտ: Եվ երբ 1907 թ. օգոստոսի վերջին ձերբակալել են նահանգապետ Կովալևի հրամանով՝ իբրև «ռազմական ջոկատ» կազմակերպողի, Գանձակի շատ հայեր փորձեցին նրան ազատել, սակայն չհաջողվեց:

Պարզվում է, որ վարդապետ Կորյունը չէր սիրում Կարաչինարի քահանա Տեր-Սողոմոն Եղիազարովին, որովհետև վերջինս չէր ընդունում դաշնակցությանը ու չէր կատարում Կորյունի պահանջը՝ դրամ հատկացնել թուրքերի դեմ պայքարելու և հայերին պաշտպանելու համար: Այդ պատճառով էլ, ըստ նյութերի, Նիկոլայ Տեր-Սողոմոնովին հրահանգվել էր վերացնել Եղիազարովին:

### 3. ԱՐՑԱԽԸ ԴԻՄԱԿԱՅՈՒՄ Է ՍՏԵՂԾՎԱԾ

---

<sup>165</sup> Նույնը, էջ 437:

## ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1907Թ.)

Պարտություն կրած հեղափոխությանը հաջորդեցին ռեակցիայի տարիները, որը ծանր հետք թողեց նաև Արցախի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Սովը մոլեգնում էր գավառներում և գյուղերում: Երկրամասի հարյուրավոր ընտանիքներ ստիպված էին հեռանալ իրենց բնակավայրերից, տեղափոխվել այդուհանդերձ կենտրոններ և աշխատանք որոնել այնտեղ: «Անկախ մամուլը» 1907 թ. դեկտեմբերին գրել է, թե «գավառի շինական ժողովրդի դրությունը ծանր է, նա տանջվում է սովի ձեռքից, հաց չունի: Ամենուրեք արտերը քարացել են, օգնության ձայն չէ լսվում...», քաղաքի մի շարք ընտանիքներ «մոռացվել են և մատնվել կատարյալ անուշադրության», «որոնք սիրում են մնալ լուռ, բայց այդ լռությունը որպիսի՝ ցավեր է թագցնում իր մեջ...»<sup>1</sup>:

Մեկ ուրիշ թերթ՝ «Արօրը», դառնությամբ էր խոստանում Արցախի ծանր վիճակի մասին, որտեղ «Խավարի և տգիտութեան մեջ է խարխափում դեռևս մեր չարքաշ, աշխատաւոր գիւղացիութիւնը: Լոյսի կենդանարար շողերը տակաւին չեն ճառագայթել այդ անձայր աշխատանքի, բայց և անձայր տառապանքի վայրում»: Թերթը նշել է, որ գյուղերի զանազան տեսակ տգրուկներ «բիրտ կերպով շահագործում են գիւղացու միամտութիւնն ու հավատը յանուն իրենց շահախնդրութեան»: Այն պատմում է, թե ինչպես Խաչենի Քոլատակ գյուղի բնակիչները դիմել էին գործարանատեր Յամբարծում Ահարոնյանին և խնդրել, որ նա ընդլայնի իր մետաքսի գործարանը, որպեսզի գյուղի գործազուրկները աշխատանքի տեղ ունենան: Գործարանատերը չի մերժել գյուղացիների խնդրանքը: Նա 1907 թ. հուլիսի 21-ին գյուղի բնակիչների անունից կազմել է մի փաստաթուղթ, որն ուներ հետևյալ բովանդակությունը. «1. Խնդրել Յամբարծում Ահարոնյանին, որ մեր գյուղի մետաքսի գործարանը մեծացնի էնպես, որ կոնէ քառասուն չարխ լինի թե ոչ ավել, 2. պարտավոր ենք 3 դեսյատին տեղ տալ, 3. օգտագործել այն ջուրը, որը հիմա օգտագործվում է, 4. պարտավորվում ենք նյութերով օգնել, բոլոր պիտույքները բերել Աղդամից, Բալլուջայից և Շուշիից... 6. պարտավորվում ենք ոչ մի նոր գործադուլ չանել և 7. եթե մեր խոստումը չկատարենք, պարտավորվում ենք Ահարոնյանի վնասները փակել»<sup>2</sup>: Թերթի հաղորդումից նաև իմանում ենք, որ կարկուտը լրիվ ավերել էր Խաչենի գյուղացիների

<sup>1</sup> «Անկախ մամուլ», Թիֆլիս, N 21, 25.12.1907:

<sup>2</sup> «Արօր», Թիֆլիս, N 5, 5.09.1907:

ամբողջ ցանքսը: Այդ ամենից «հուսահատված գյուղացիներն իրենց երիտասարդ օյժերն պատրաստում են Բաքու ուղարկել աշխատանքի: Ով տղամարդ չունի, ուղարկում է 8-10 տարեկան երեխայի: Ով դա էլ չունի, ուղարկում է այրի հարսներին, հասած աղջիկներին աղախնություն անելու, որ նրանց աշխատանքով տունը պահի տառապանքներից... Բայց ի՞նչ անեն»<sup>3</sup>:

Ծանր վիճակում էին գտնվում նաև Հյուսիսային Արցախի հայ բնակիչները: «Երկիր» թերթը գրում էր, թե Գետաշենում մարդիկ սոված են, մերկ, հող չունեն, որովհետև նրանք իրենց հողերի մեծ մասը կորցրել էին 1905-1906 թթ.: Գյուղը 2200 դեսյատին վարելահող և 2800 դեսյատին արոտավայրեր ունեւր Գյորան կայարանի շրջակայքում, որից լրիվ գրկվել է: 500-600 ծուխ ունեցող գյուղին մնացել էր 400 դեսյատին ջրովի հող և 3000 դեսյատին անջուր արոտավայրեր: «Բացի դրանից,- շարունակում է թերթը,- այստեղ իշխող վարչարարությունը, պատիժները, տուգանքները մեծ ծանրություն են գյուղացիների համար: Գյուղի բնակիչները ատելությանը էին հիշում Ֆոն-Օզերովսկու թնդանոթների ձայնը: Գետաշենում, եթե մեկ ջվալ ցորենը վաճառվում էր 4-5 ռուբլի, ապա 1906 թ. վաճառվում էր 11-13 ռուբլով: Այդ բոլոր անարդարությունների դեմ պայքարելու համար գյուղի երիտասարդները ստեղծել էին «բողոքող երիտասարդների» մի խումբ, որը կարող է հաջողության հասնել»<sup>4</sup>:

Գյուղերից մեկնելու և քաղաքներ տեղափոխվելու ձգտումը վարակել էր շատերին: «Խարիսխ» թերթը 1907թ. գրում է, որ 100 ծուխ ունեցող Մաղավուզից շատերը թողել են տուն ու տեղ և աշխատանքի գնացել Բաքու<sup>5</sup>: Այդ նույն թերթը պատմում է, որ գյուղերից գնացածները միավորվում, օգնում էին միմյանց: Օրինակ՝ Մաղավուզից Բաքու տեղափոխվածները կազմակերպել էին «Ծարավաջուր» հայրենակցական ընկերությունը, որի հանգանակությամբ հավաքած միջոցներով եվլախում գնել էին 387,5 փութ ցորեն և տեղափոխել գյուղ: Նրանք որոշել էին գյուղում բացել շտեմարան: Գյուղ տեղափոխված այդ ցորենը գյուղացիներին բաժանվում էր հանձնաժողովի միջոցով<sup>6</sup>: Բաքվաբնակ մաղավուզիցիների այդ ձեռնարկումը օրինակ ծառայեց շատերի համար: Իսկ դա որոշ չափով օգնություն էր արցախահայությանը:

Արցախի բնակչության ծանր պայմանների վրա իրենց սև բիծն էին թողել վաշխառուները, որոնք անխնա խաբում և թալանում էին

<sup>3</sup> Նույնը:

<sup>4</sup> «Երկիր», Թիֆլիս, N 4, 5.10.1906:

<sup>5</sup> «Խարիսխ», Թիֆլիս, N 3, 4.07.1907:

<sup>6</sup> Նույնը:

գյուղացիներին: «ժայռ» թերթը օրինակ է բերում Ջիվանշիրի Թալիշ գյուղից, որտեղ նրանք խաբուն էին գյուղացիներին, «խլում նրանց տրված օգնությունը»<sup>7</sup>:

Շուշին Արցախ-Ղարաբաղի համար խոշոր արդյունաբերական շուկա էր, որին կենդանություն ու փայլ տվողը հայն էր: Սակայն այդ նույն հայը կարծես թե հիմա չէր երևում: Չէին աշխատում օղեթորման, սպիրտի արտադրության նախկին գործարանները, չկային գինեգործությունը, նախկին շերամապահությունը: Չափազանց բարձրացել էին ապրանքների գները: Օրինակ՝ ցորենի փթի գինը հասել էր 1 ռ. 60 կոպեկի<sup>8</sup>:

1907 թ. սովը բռնել էր ամբողջ Ղարաբաղը՝ Վարանդա, Դիզակ, Խաչեն, Ջիվանշիր, ինչպես և Ջանգեզուր, մոտ 260 բնակավայր: Մամուլը գրել է, որ բոլոր տեսակի օգնությունները շոշափելի արդյունքներ չեն տալիս, և չպետք է հույս դնել միայն մասնավոր նվիրատվությունների ու հանգանակությունների վրա: Հարց էր դրվում օգնությունը կազմակերպել կառավարական մակարդակով: Այդ նշանակում էր, որ բնակչության կողմից ընտրված ներկայացուցչական մարմինները պետք է դիմեին պետությունից խոշոր նպաստ ստանալու համար: Քաղցած ժողովուրդը հաց էր պահանջում ոչ թե ձրի, այլ որոշակի պայմաններով: Նա ցանկություն ուներ աշխատելու, քրտինք թափելու և միայն այդ ճանապարհով հաց ձեռք բերելու<sup>9</sup>: Հաճախ սովյալներին օգնում էին համագյուղացիները: Օրինակ՝ 1907թ. հունվարի 7-ին Ղայբալիշեն գյուղի մի խումբ աղքատ ու սովյալ գյուղացիների խնդրանքով, տանուտեր Ավագ Հախվերդյանի օժանդակությամբ, գյուղում հավաքվել է 70 փութ հացահատիկ և բաժանվել սովյալներին<sup>10</sup>:

Դաշնակցության ղեկավարներից Սիմոն Ջավարյանը «Կովկասյան գյուղատնտեսության» ընկերության դահլիճում 3,5 ժամ տևողությամբ զեկուցում կարդաց Ղարաբաղ-Ջանգեզուրում տեղի ունեցող սովի մասին, որը հրատարակեց առանձին գրքույկով<sup>11</sup>:

Նա ցույց է տվել, թե ինչ ահավոր երևույթ է այդ դաժան սովը, որի դեմ պետք է տարվի համաժողովրդական պայքար: Նա մեջբերում է, որ Արցախի՝ Վարանդայի և Խաչենի 100 գյուղերից միայն 10-ն ունեն դպրոցներ, որոնց ծախսերը հոգում են Բաքվի բանվորները, իսկ Շուշի

<sup>7</sup> «ժայռ», Թիֆլիս, N 15, 14.06.1907:

<sup>8</sup> «Նարիսխ», N 35, 15.08.1907:

<sup>9</sup> «ժամանակ», Թիֆլիս, N 7, 11.01.1907:

<sup>10</sup> Նույնը, N 17, 24.01.1907:

<sup>11</sup> Заварян С., Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг., С. Петербург, 1907.

քաղաքում, որտեղ կա 15 հազար հայ, գործում է միայն մեկ հայկական դպրոց: Ս. Ջավարյանը շեշտում է, որ բեկերի իշխանության տակ գտնվող գյուղացիները գոյատևում են ամենածանր պայմաններում: Օրինակ է բերում, որ Խաչենի և Գանձասարի շրջաններում գտնվող 35 հայկական գյուղերից պետական են 3-ը, 4-ը՝ վանքապատկան, իսկ 28-ը՝ բեկական: Վերջինից 9-ը պատկանում էին հայ բեկերին, իսկ 19-ը՝ թուրք<sup>12</sup>: Եվ այդ թուրք բեկերը տարածքում ամենախտշոր հողատերերն էին: Բեկական և մելիքական հողերի վրա ապրող գյուղացիները մշտական բնակիչներ էին, որոնք տերերին պարտադիր մուծում էին գանազան հարկեր:

Յետագոտությունները ցույց են տալիս, որ Արցախի գյուղացիները իրենց չէին զգում սեփական աշխատանքի տեր: Նրանք բացահայտորեն գտնվում էին ճորտային վիճակում: Գյուղացին իր «տիրոջը» նայում էր որպես մշտական թշնամու: Ջավարյանն այն միտքն էր զարգացնում, որ գուցե հենց դա էր հիմնականում ազգամիջյան բախումների հիմնական պատճառներից մեկը: Յեղիմակը բերում է հետևյալ օրինակը. Ամարասի հովիտը, որը կազմում է 10-12 հազար դեսյատին տարածք, և որտեղ գտնվող 15 գյուղերի մոտ 1500 ընտանիքներ զբաղվում էին խմիչքների արտադրությամբ, 1906 թ. զրկվել էին դրանից, որովհետև թե՛ թեմիներից և թե՛ խաղողի այգիներից գրեթե ոչինչ չէին ստացել, իսկ մի շարք գյուղեր նույնիսկ զրկվել էին 300 հազար փութ հացահատիկ ստանալու հնարավորությունից: Վարանդայի, Խաչենի և այլ շրջանների տնտեսություններին մեծ վնաս էր հասցրել կարկուտը: Ամբողջ Շուշիի գավառում, եթե 1905 թ. արտադրվել է 4 մլն փութ հացահատիկ, ապա 1906 թ. այն կազմել է հազիվ 1,5 մլն փութ (37,5 տոկոս)<sup>13</sup>:

Երկրամասում բավականին բարձրացել էր հացի գինը: Յամատարած էր դարձել անասունների վաճառքը: Եթե այդ ամենին գումարվեն վերջին տարիներին զգալիորեն ավելացած ռազմական ծախսերը, ապա ամեն ինչ պարզ կլինի: Միջին հաշվով մեկ ընտանիքի ծախսը կազմել է 50-75 ռ. և վերջին երկու տարում 1,5 միլիոնից հասել էր 18 միլիոնի: Եթե 120 ծուխ ունեցող հայկական գյուղը զենք ձեռք բերելու համար ծախսել էր 7000 ռ. (մեկ ծխին՝ 58 ռ.), ապա 80 ծուխ ունեցող թուրքական գյուղը ծախսել էր 5000 ռ. (մեկ ծխին՝ 61,5 ռ.)<sup>14</sup>:

Երկրամասում խիստ նվազել էր արդյունաբերական ձեռնարկությունների արտադրությունը: Եթե 1905 թ. Շուշիի գավառում գործել են

<sup>12</sup> Նույնը, էջ 9:

<sup>13</sup> Նույնը, էջ 24:

<sup>14</sup> Նույնը, էջ 31-32:

624 առևտրաարդյունաբերական ձեռնարկություններ, ապա 1907թ. այդ թիվը իջել էր 334-ի: Ահա նման պայմանների դեպքում արդեն 1906թ. աշնանը արցախահայությունը կանգնել էր դաժան սովի առաջ: Գյուղացիները ստիպված էին, անասուններից բացի, վաճառել նաև տնային իրերը: Ծանր էր հատկապես բանվորների վիճակը: Ըստ Ջավարյանի բերած տվյալների՝ Ղարաբաղի բնակչության 12,6 տոկոսը սովի մեջ էր, 22 տոկոսը՝ կարիքի: Այսինքն՝ 171 հազար բնակչությունից սովի մեջ էին 21,6 հազարը<sup>15</sup>:

Արցախցին վերջին ժամանակներում տեր չի եղել իր ողորմելի տնտեսությանը, միշտ էլ եղել է թուրք և հայ ավազակային խմբավորումների հարկատուն, հլու-հնազանդ սպասավորը: Նրա գոյությունը ռուս կառավարության աչքում հավասար էր գրոյի: Ռուս իշխանությունը երբեք չի մտածել հայ չարքաշ գյուղացու վիճակը բարելավելու մասին: «Ժամանակ» թերթը, գրելով այդ մասին, նշել է, որ Վարանդայի նախկին կառավարիչներն ասես ուղարկված են եղել ավազակության, կաշառակերության և անբարոյականության սերմեր ցանցելու համար: Օրինակ է բերում, որ անցած դարի վերջին այստեղ եկած ռուսները, որոնք հողատարածքներ էին ստացել Աղձամից Վարանդա տանող խճուղու մոտերքում, ապրում էին բերրի հողերում, ամեն ինչով ապահով, քան հայերը<sup>16</sup>:

Արցախահայության ծանր վիճակի մասին է պատմում «Ղոսանք» թերթը: Բաքվից ուղարկված մի թղթակցության մեջ պատմվում է Ջիվանշիրի Չաթերք գյուղի մասին, թե ինչպես պտղաբեր լեռնավայրերի ստորոտում գտնվող այդ անենաաղքատ գյուղը, որտեղ հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ և մեղվաբուծությամբ, աղքատության պատճառով շատերը թողել են իրենց տունը, տեղը, երեխաներին, ցրվել ու գաղթել զանազան երկրներ՝ մի կտոր հաց վաստակելու համար: Չեղինակը պատմում է, որ երբ գյուղացիները դիմում են համագյուղացի հարուստներին և օգնություն խնդրում, «քարսիրտ վաշխառուները չեն օգնում, որպեսզի խեղճ գյուղացիները ընդմիշտ խեղճացած լինեն և ստրուկ մնան»: Ահա թե ինչու «գյուղացին ստիպված է լինում չվել հեռու երկրներ, զրկվելով տնից, տեղից և ընտանիքից երկար տարիներով»: Չեղինակը դառնությամբ է գրում, որ կարիքավորներին «անգամ տոկոսով փող չեն տալիս»: Իսկ երբ գյուղացին չէր կարողանում պարտքը վճարել, «այդ դեպքում վաճառականը տանում է նրա ձին», որն ուներ 100 ռ. արժեք, տանում էր 40 ռուբլով ու վաճառում 100-120 ռուբլով<sup>17</sup>: Այդ տեսակետից

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 72-73:

<sup>16</sup> «Ժամանակ», N 47, 1.03.1907:

ապշեցուցիչ է վերոհիշյալ Ս. Ջավարյանի բերած մի օրինակ. Վարանդայի Քերթ գյուղից մեկը հինգ տարի առաջ հարևան Քարահունջ գյուղացի Կ-ից 50 ռ. պարտք էր վերցրել «ընդունված պայմանների համաձայն»: Պարտապանը չէր կարողացել ժամանակին փակել ամբողջ պարտքը, և այն սկսել էր աճել: Այդ 50 ռ. պարտքը փակելու համար գյուղացին պարտատիրոջը տվել է երկու եգ՝ 40 ռ. արժողությամբ, և 21 փուֆ հացահատիկ՝ 25 ռ. արժողությամբ: Բացի դրանից, պարտատիրոջը գրավ է տրվել երկու հողատարածք՝ տարեկան 10 ռ. արժեքով: Արդեն երրորդ տարին էր՝ պարտատերը օգտագործում էր այդ հողատարածքները: Այդ ժամանակ պարտապանը մահանում է: Նրա որդին ստիպված էր հոր պարտքը ճանաչել 50 ռ. սահմաններում, որը փակելու համար 20 տարեկան եղբայրը պարտավոր էր ձրի աշխատել պարտատիրոջ համար<sup>18</sup>: Իրոք, շատ էր ահավոր:

Արցախահայությունն ակնկալում էր հող ստանալ: Այդ կապակցությամբ մեծ թվով նամակ-խնդրագրեր են ուղարկվում վերադաս մարմիններին: «Փայլակ» թերթը բերում է մի այդպիսի օրինակ. 1907 թ. մարտի 18-ին Դիզակի 13 գյուղերի ներկայացուցչական ժողովում, քննության առնելով գյուղացիների կարիքների հարցը, որոշում են հեռագիր ուղարկել Պետական դումա: Յոթ կետից բաղկացած այդ հեռագիրը պահանջում էր հող, հարկերի թեթևացում և կալվածատիրական ու չինովնիկական ոտնձգություններից ազատում: Այդ ժողովում նաև որոշվեց բողոքագիր ուղարկել Թիֆլիսի մպաստամատույց հանձնաժողովին՝ պահանջելով շուտափույթ օգնություն կամ էլ դադարեցնել չքավորների անունը շահարկելը: Այդ ժողովում պարզվեց, որ հայ-թուրքական բախումների մախօրյակին հարարցիները ամեն ինչ թողել ու փախել էին, ընդ որում, մի մասն ապաստանել էր Խծաբերդում, մի մասը փախել էր Ջանգեզուր, մի մասն էլ՝ Խաչեն: Նրանք վերադարձել և ցանկանում էին «իրենց մարած ճրագը վառել»: Նաև խոսվեց այն մասին, որ Դուլանլարը, որը բաղկացած էր 180-200 ծխից, ընդամենն ուներ 200 դեսյատին հող, որը գտնվում էր թուրքերի սահմանում: Խծաբերդն ուներ ընդամենը 60 դեսյատին հող, մինչդեռ կից գտնվող 100 դեսյատին հողն ազատ վիճակում էր: Ժողովում նաև նշվեց, որ չափազանց ծանր է հարկերի չափը: Մի շարք գյուղերում ոչ մի դեսյատին ցանքս չի արվել, գյուղացիների մեծամասնությունը վաճառել կամ մորթոտել էին իրենց անասունները<sup>19</sup>:

<sup>17</sup> «Ղոսանք», N 21, 20.12.1906:

<sup>18</sup> Заварян С., նշվ. աշխ., էջ 59-60:

Սովն առանձնապես սարսափելի էր Վարանդայի գյուղերում, որտեղ «խուլ հառաչանքները տեղի են տվել բողոքին, որը լեզու առած խոսում է»: Բացի նրանից, որ թուրքերը թալանում էին հայերի գյուղերը, բեկերն էլ մյուս կողմից էին հայերին քշում աղքատությամբ<sup>20</sup>:

Ջիվանշիրից գրում էին, որ «սովն ու մթերքների պակասությունը իրենց ճիրաններում խեղդում են ամբողջ Ջիվանշիրի գյուղերը: Առաջ Սարով, Հասան-Ղայա, Սարով-Սարայան, Ղազանչի գյուղերը հաց էին մատակարարում լեռնային գյուղերին: Սակայն ընդհարումների ժամանակ այդ գյուղերի բնակիչները տեղափոխվել էին լեռնային շրջան: Նրանք ևս սովի մեջ էին: Օրինակ է բերվում, որ Գյուլաթաղն ունի 120 տուն, որոնցից միայն երկուսն ունեն հաց: Գյուղի վիճակն ավելի էր ծանրացել կոտորածներից հետո: Թուրք բեկերը, կազակների հետ գյուղերն ընկած, ամեն մի ընտանիքից հավաքում էին իրենց ստանալիքը և վերցնում այնքան, ինչքան իրենք կցանկանային: «Չարչարվողների վայնասուններից սիրտ է ծնվում,- չարունակում է թերթը,- կողոպտած այտերի վրա գլորվող արցունքը սիրտ է ճաքեցնում, թշվառ ու խեղճ գյուղացին որի՞ն պատասխան տա. հաց պահանջող երեխայի՞ն, թե՞ տուրք պահանջող մտրակին: Մինչև ե՞րբ...»<sup>21</sup>:

Արցախի և Ջանգեզուրի սովյալների համար հացահատիկ էին հավաքում Հայաստանի Աշտարակի և այլ շրջաններից: Շուշիի սովյալների համար հանգանակություն էր կատարվում Բաքվում: Իրար հետևից հեռագրեր էին ուղարկվում Թիֆլիս և Ս. Պետերբուրգ, որոնց հեղինակները պահանջում էին Արցախ-Ջանգեզուրի սովյալներին օգնել պետականորեն: Պետական դումայի նախագահի անունով ուղարկված մի հեռագրում ասված է. «Գանձակի նահանգի՝ Վարանդայի, Ջանգեզուրի, Սիսիանի, Կապանի, Դիզակի, Ջիվանշիրի, Խաչենի և Շուշի քաղաքի դաշնակցական մտավորականության շրջանային ժողովը առաջարկում է Դումայի ժողովրդական աշխատավոր մասսաների իսկական ներկայացուցիչներին պահանջել ամբողջ հողը և ամբողջ ազատությունը ամբողջ ժողովրդի համար»<sup>22</sup>:

Սովյալներին օգնելու համար ստեղծվել էր նպաստամատույց հանձնաժողով, որը փակվել է 1913 թ. դեկտեմբերի 21-ին, և նրա գումարների մնացորդը՝ 83120 ռ., Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ, հանձնվել էր դպրոցական ֆոնդին<sup>23</sup>: Երկրամասի բնակչության արտագաղթը նվազելու փոխարեն, ընդհակառակը,

<sup>19</sup> «Փայլակ», N 1, 7.04.1907:

<sup>20</sup> Նույնը:

<sup>21</sup> Նույնը, N 18, 4.05.1907:

<sup>22</sup> Նույնը, N 24, 11.05.1907:

<sup>23</sup> Ամանուն Դ., նշվ. աշխ., էջ 184:

մեծանուն էր: Այսպես, եթե 3 տարի առաջ արցախահայերից տարեկան 30 հազար մարդ էր զնունդրսուն աշխատելու, ապա 1907 թ. այդ թիվը հասել էր 60 հազարի: Գնում էին տղամարդիկ, կանայք, երեխաներ<sup>24</sup>: Կառավարության կողմից Ղարաբաղին տրվել էր ընդամենը 100 հազար ռուբլի օգնություն, մեկ սովյալին՝ 2 ռուբլի, որը շատ չնչին էր անսպառ կարիքների համար<sup>25</sup>:

Արցախի ոչ միայն գյուղացիների, այլև բանվորների վիճակը նույնպես մնում էր ծանր: Ժամանակի մամուլը բավականին նյութեր է հրապարակել մետաքսագործարանների տերերի անգույթ լինելու մասին: «Ժայռ» «Մետաքսի գործարանները» հոդվածում գրում է, որ հենց գալիս է գարունը, բանվորուհիները թողնում են աշխատանքը և զբաղվում գյուղատնտեսությամբ: Գյուղերում օր օրի ավելանում էր սովյալների թիվը: Իսկ խորամանկ գործարանատերը «Գիտե՛, որ սովից մարդիկ ստիպված պիտի լինեն աշխատել թեկուզ հենց այժմեանից ավելի դժոխսային պայմաններում»<sup>26</sup>:

Առավել ծանր էին Դիզակի մետաքսագործների սոցիալ-տնտեսական պայմանները: Այդտեղ կար 8 մետաքսի գործարան, որտեղ մարդիկ օրական աշխատում էին 14-ական ժամ: Օրվա նրանց աշխատավարձը կազմում էր 12-ից մինչև 80 կոպեկ<sup>27</sup>:

Այդ պայմանները հասցրել էին նրան, որ 1907 թ. ամռանը շրջանի մետաքսագործները դիմեցին ապստամբության: Դիզակցիներին միացել էին Խաչենի և Վարանդայի մետաքսագործները: 28 մետաքսագործարանների 2500 բանվորներ, դիմելով ապստամբության, հուլիսի սկզբին գործարանատերերին ներկայացրին 31 կետից բաղկացած իրենց պահանջները: Դրանք էին՝ հոկտեմբեր-ապրիլ ամիսներին աշխատանքի տևողությունը սահմանել 8 ժամ, մնացած ամիսներին 10, օրավարձը չպետք է լինի 20 կոպեկից պակաս, ամսական 20 ռ. աշխատավարձ ստացողներին լրացուցիչ վճարել 5 ռուբլի, աշխատավարձը վճարել ամեն երկուշաբթի, բանվորներին այլ աշխատանքներով չծանրաբեռնել, գործարաններում տեղադրել բոժոժ ծեծող հաստոցներ, 12 տարեկանից պակաս տարիք ունեցողներին չընդունել աշխատանքի, շաբաթ և տոն օրերի նախօրյակին աշխատանքի տևողությունը կրճատել մեկ ժամով, արգելել տոն և կիրակի օրերին աշխատելը, վերացնել բոլոր տեսակի տուգանքները, նոր բանվորների ընդունումը կատարել բանվորական խորհրդի համաձայնությամբ, բանվորների նկատմամբ չլինել կոպիտ,

<sup>24</sup> «Մշակ», 1907, N 38:

<sup>25</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 184:

<sup>26</sup> «Ժայռ», N 3, 30.05.1907:

<sup>27</sup> «Խարիսխ», N 5, 6.07.1907:

հիվանդության դեպքում բանվորին վարձատրել չաշխատած օրերի համար, գործարաններում տեղադրել օդափոխիչներ, կանանց և տղամարդկանց համար առանձնացնած զուգարաններ ունենալ, գործարաններին կից ունենալ հիվանդանոց՝ բժշկով ապահովված, բանվոր-բանվորուհիներին ապահովել արտահագուստով, ամիսը մեկ գործարանը ենթարկել բժշկական խիստ ստուգման, կանոնավորել գիշերօթիկները, խոզանոցները հեռացնել գործարաններից, գործադուլների օրերի համար բանվորներին վարձատրել և այլն<sup>28</sup>:

Ներկայացված այդ պահանջները ամենամվազագույնն էին, որոնք ընդունվեցին Հադրութի ձորակի և Տողի գործարանատերերի կողմից: 1907 թ. մայիսի վերջին գործադուլի դիմած Խաչենի երեք գործարաններում<sup>29</sup> պայքարը շարունակվեց 23 օր, որը վերջացավ հաղթանակով: Մամուլի հաղորդմամբ՝ ոչ մի ճնշում չկարողացավ վախեցնել բանվորներին<sup>30</sup>:

Ս. Ջավարյանը գրում է, որ մետաքսի գործարաններում բանվորների վիճակը շատ ծանր էր: Նրանք ստանում էին չնչին աշխատավարձ, որի համար էլ հաճախակի դիմում էին բացահայտ պայքարի<sup>31</sup>: Պարզվում է, որ մետաքսի գործարաններում ուստան (վարպետը), որը գործարանատիրոջ հավատարիմ ծառան էր, օգտվում էր մեծ իրավունքներից: Նա «անբարոյական» բանվորներին պատժում էր ճիպտներով, ոտնատակ էր տալիս նրանց կամ էլ, մազերից բռնած, քարշ տալիս: Նա ամեն կերպ «ձգտում է խեղդել բողոքը», իսկ որ բանվորները 7-8 ամիս աշխատավարձ չէին ստանում, դա չէր անհանգստացնում նրանց<sup>32</sup>:

Արցախում տեղի ունեցած այդ իրադարձությունները խիստ անհանգստացնում էին նաև իշխանություններին: 1907 թ. օգոստոսի 14-ին Թիֆլիսի ժանդարմերիան իր դեպարտամենտի տնօրենին հաղորդել է, որ ընթացիկ տարվա հուլիսի սկզբին Շուշիի շրջանի մետաքսագործական ֆաբրիկաներում հայտարարվել է գործադուլ, որին մասնակցել են 2000 բանվորներ, որոնք ձեռնարկատերերից պահանջել են բարձրացնել աշխատավարձը և իջեցնել աշխատաժամանակը: Այդ գործարանների թիվը հասնում է 24-ի, որոնցում հիմնականում աշխատում են կանայք, աղջիկներ՝ 7 տարեկանից սկսած: Այդ ֆաբրիկաներում աշխատանքները սկսվել են մինչև արևածագը և շարունակվել մինչև արևամուտ: Հանգստի ժամ համարյա չի եղել, միայն

<sup>28</sup> Նույնը, N 24, 1.08.1907:

<sup>29</sup> «Ժայռ», N 16, 15.06.1907:

<sup>30</sup> «Խարիսխ», N 38, 18.08.1907:

<sup>31</sup> Заварян С., նշվ. աշխ., էջ 50:

<sup>32</sup> «Փայլակ», N4, 12.04.1907:

ճաշելու համար տրվել է մեկ ժամ: Աշխատավարձը կազմել է 20-ից մինչև 30 կոպեկ, իսկ աղջիկներինը և երեխաներինը՝ 7 կոպեկ: Բանվորները ստիպված էին դիմել գործարանատերերին՝ իրենց աշխատավարձը բարձրացնելու համար:

Ձեռնարկատերերը խոստացել են բավարարել նրանց պահանջները, բանվորները համբերատար սպասել են: Իսկ երբ իմացել են, որ իրենց պահանջը չի կատարվում, աշխատանքները դադարեցրել են և հայտարարել, որ գործադուլը կշարունակեն այնքան ժամանակ, մինչև իրենց պահանջը կկատարվի: Դրան միջամտել է Շուշիի գավառապետը<sup>33</sup>:

Վիճակը թերևս ծանր էր նաև մյուս ձեռնարկություններում: 1907 թ. Շուշիի 80 կոշկակարներ դիմել էին ապստամբության և «համառ կռիվ էին մղում ընդդեմ բուրժուա վամպիրների և պահանջում բավարարել իրենց» պահանջները: Բանն այն է, որ կոշկակարները չէին ցանկանում բանվորների օրինակով ստեղծել կոոպերատիվ: Չնայած կոշկակարները չէին ցանկանում կատարել բանվորների պահանջը, սակայն «ամբողջ գործադուլի ընթացքում» նրանք համերաշխ էին և միասնական: 15 օր շարունակված գործադուլը օրինակ էր ծառայում մյուս ձեռնարկություններում աշխատող բանվորների համար<sup>34</sup>: Հետևելով կոշկակարներին՝ 1907թ. հունիսին գործադուլի էին դիմել նաև գործակատարները, հացթուխները, ջրկիրները, դերձակները, բուլլոչկիները, ծառայողները, դարբինները, հյուսները, լավաշ թխողները, տպարանի բանվորները, բեռնակիրները և ուրիշներ ու ներկայացրել իրենց պահանջները<sup>35</sup>:

Շահագործվում էին նաև շինարարները: 1907թ. հուլիսի սկզբին Շուշիի շինարարների՝ 50 հոգու մասնակցությամբ խառը ժողովը, քննության առնելով ռեալական դպրոցի շինարարության վրա աշխատող բանվորների ծանր վիճակը, որոշում է դիմել գործադուլի և ներկայացնել հետևյալ պահանջները. աշխատանքում վերականգնել աշխատանքից ազատված 16 հյուսն-բանվորներին, շինարարության վրա աշխատած բոլոր բանվորները պետք է շարունակեն աշխատել, օրավարձը 60 կոպեկից դարձնել 1 ռուբլի, առանց միության համաձայնության աշխատանքից ոչ մեկին չազատել և նոր բանվոր չընդունել, աշխատավարձը վճարել շաբաթական մեկ անգամ, աշխատաժամը սահմանել օրական 9,5 ժամ, աշխատանքից ազատել վերակացու Լևոնին, որը կոպիտ է վարվում բանվորների հետ<sup>36</sup>:

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 159, թ. 2:

<sup>34</sup> «Ժայռ», N 13, 12.06.1907:

<sup>35</sup> Նույնը, N 16, 15.06.1907:

Հայտնի է, որ մոսկվաբնակ Առաքելովը 110 000 ռուբլի էր նվիրել Շուշիում ռեալական դպրոցի նոր շենք կառուցելու համար: Այն իրագործում էր նվիրատուի բարեկամ Դավիթ Ներսիսյանը: Ըստ էության, դպրոցի շինարարության վրա աշխատող բանվորները վարձատրվում էին կես գնով: Վերակացու Դ.Ներսիսյանը մեկ ամիս առաջ 16 հոգու առաջարկել էր հեռանալ աշխատանքից: Դրա համար էլ բանվորները դիմել էին գործադուլի, որը շարունակվել էր 25 օր: Ոստիկանները «այդ սոված հյուսներին» շաբաթական մեկ անգամ «քարշ էին տալիս ոստիկանություն»: Սակայն բանվորները չէին ընկճվում, շարունակում էին իրենց պայքարը: Հուլիսի 30-ին Դ.Ներսիսյանը ստիպված էր ստորագրել բանվորների ներկայացրած պահանջներից հետևյալը. 1) տալ 300 ռ. վարձ չաշխատած օրերի համար, 2) վերականգնել աշխատանքից ազատված բոլոր բանվորներին, 3) բոլոր 33 հյուսն-բանվորները կաշխատեն մինչև շինարարության վերջը կամ մինչև շինարարության համար տրված գումարի վերջանալը, 4) օրավարձն ավելացնել 20 տոկոսով, 5) աշխատավարձը վճարել շաբաթական մեկ անգամ, 6) ձրի բժշկություն ապահովել հիվանդների համար, 7) աշխատանքի տևողությունը սահմանել 10 ժամ, հանգիստը՝ 2, 8) առանց միության իմացության՝ նոր բանվոր չընդունել<sup>37</sup>:

Գործադուլ էին արել նաև Խանքենդիի կոշկակարները: 1907 թ. օգոստոսի 30-ին Շուշիից Թիֆլիս՝ «Խարիսխ» թերթին հեռագրվել է. «Խանքենդիի կոշկակարների գործադուլը ավարտվել է հաջողությամբ: Ընդունվել են բոլոր պահանջները: Բարսեղյան»<sup>38</sup>:

Իշխանությունները ձգտում էին կանխել բանվորական շարժումները, որի համար օգտագործում էին տարբեր միջոցներ: Թիֆլիսի ժանդարմերիայի հաղորդումից պարզ է դառնում, որ հունիսի վերջին կանանց հագուստներ կարող արհեստանոցի վարպետները դիմել էին գործադուլի: Որպեսզի գործադուլը չտարածվի, ղեկավարները գտնվում էին հսկողության տակ: Նրանք էին՝ Անտոն Նազարով, Ներես Արասիև և Ներես Ակոպով: Ժանդարմերիայի հաղորդումից նաև պարզ է դառնում, որ գործադրված այդ քայլը նպաստել է մյուս արհեստանոցների աշխատողների գործադուլը կանխելուն<sup>39</sup>:

Ժամանակի մամուլը հաղորդել է, որ 1907 թ. հուլիսի 12-ին, երբ լրացել էր Շուշիի արյունահեղության տարելիցը, քաղաքը շարունակում էր մնալ կիսամեռ վիճակում, ասես ոչ ոք չէր մտածում ավերակները

<sup>36</sup> «Խարիսխ», N 7, 10.07.1907:

<sup>37</sup> Նույնը, N 27, 4.08.1907:

<sup>38</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 78:

<sup>39</sup> Նույնը, ֆ. 1022, ց. 2, գ. 139, թ. 1:

վերականգնելու համար: Քաղաքում ապրանքների գները շարունակում էին մնալ բարձր և «սաստիկ ծանրացած... քաղցած ժողովրդի վզին»<sup>40</sup>: Աշխատավորների պահանջները մերժելուց բացի, նույնիսկ չէին տալիս նպաստները: «Ժայռ» թերթը բերում է այսպիսի օրինակ. Տողը, Թաղուտը, Ծկոռին և Սոխերենսը, որոնք բոլորը միասին ունեին 580 ծուխ, ոչ մի նպաստ չէին ստանում: Շուշի բողոքելու եկած այդ գյուղերի ներկայացուցիչներն արժանացել էին նպաստամատույցի կոպիտ վերաբերմունքին: Գյուղացիները բողոքում էին, որ ցանելու համար չունեն կարտոֆիլի սերմ: Պարզվում է, որ տիրացու Արսենի թույլտվությամբ, խեղճ գյուղացիներին նպաստ պետք է բաժաներ դուբանչի Սիմոնը՝ իր քեֆին, երբ ցանկանար: Ըստ էության, «Սոված բնակչությունը,- գրում է ժամանակի մամուլը,- ինքը պետք է սթափեցնի այդ պարոններին՝ «վերջ տալ իրենց այդ ձևի և եղանակի գործունեությանը»<sup>41</sup>:

Աստիճանաբար սկսել էր ընդլայնվել արհեստակցական շարժումը: ԶՅԴ-ն պրոպագանդում էր, որ արհմիությունները պետք է հասնեն ազատության, հավասարության և եղբայրության բարձր իդեալներին: ԶՅԴ-ի աջակցությամբ կրկին համախմբվում էին Շուշիի աշխատավորները: Քաղաքի արհեստակցական կազմակերպություններից 16-ը՝ մոտ 650-700 բանվորներով, գտնվում էին Դաշնակցություն կուսակցության ազդեցության տակ<sup>42</sup>:

Արցախ-Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքում որոշ աշխուժություն տեղի ունեցավ ցարի խոստացած՝ Պետական դումայի ընտրությունների ժամանակ: Երեք թեկնածուներից Լևոն Աթաբեկյանի օգտին քվեարկեցին 170, Աբրահամ Դուկասյանի օգտին՝ 408, իսկ Դասմ-բեկ Վեզիրովի օգտին՝ 478 հոգի: Վերջինս պատվիրակ ընտրվեց Շուշիից<sup>43</sup>:

Թերթը պատմում է, որ քվեարկության օրը քաղաքացիները երկչուտ էին գնում ընտրությունների, որովհետև ամեն կերպ «մարդկանց քաշում էին անկյուն և ստիպում, թե ում ձայն տալ»: Հայ ընտրողների թիվը քաղաքային մատյանում կազմում էր 2000 անուն<sup>44</sup>:

Արցախում գործող «Ինքնապաշտպանության ժամանակավոր գործադիր մարմինը» նպատակ ուներ անցկացնել համընդհանուր ընտրություններ և կազմակերպել ինքնապաշտպանության բոլոր գործերը կարգավորող ու տնօրինող մի ներկայացուցչական ժողով:

<sup>40</sup> «Խարիսխ», N 16, 21.07.1907:

<sup>41</sup> «Ժայռ», N 4, 31.05.1907:

<sup>42</sup> «Խարիսխ», N 37, 17.08.1907:

<sup>43</sup> «Յոսանք», N 52, 2.02.1907:

<sup>44</sup> Նույնը:

Սակայն մյուս քաղաքական ուժերը ձախողեցին ընտրությունները<sup>45</sup>:

Այդ ժամանակ Արցախում գործող քաղաքական ուժերի միջև համաձայնություն չկար: Եվ քանի որ բնակչության մեջ մեծ էր դաշնակցության հեղինակությունը, ուստի մյուս քաղաքական ուժերը չէին դադարում նրա դեմ պայքարելուց<sup>46</sup>:

Սակայն հենց դաշնակցությունն էր, որ բոլորից շատ էր մտահոգված արցախահայության ինքնապաշտպանությունն էլ ավելի ամրապնդելու համար: «Ապառաժ» կոմիտեն, 1907 թ. հունվարի 1-ին հանդես գալով մի հայտարարությամբ, շեշտում էր, որ ինքնապաշտպանությունը ժողովրդական գործ է, որով դաշնակցությունը վաղուց է զբաղվում: Ինքնապաշտպանությունը պետք է վարի ինքը՝ ժողովուրդը: Սակայն տեղի ունեցած ազգամիջյան անընդհատ կռիվները հնարավորություն չեն տվել այն դնելու կայուն հիմքի վրա: Հիմա այդ հնարավորությունը ստեղծվել է, ժողովրդի կողմից ընտրվել է մի մարմին, որը պետք է կազմակերպի և ղեկավարի ինքնապաշտպանության գործը<sup>47</sup>:

1906 և հաջորդ թվականներին Արցախ-Ղարաբաղի համար չափազանց կարևոր էր Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհի կառուցումը, որի աշխատանքները սկսվել էին 1906 թ. ամռանը: Ճանապարհի կառուցման նախաձեռնողներից էր հայ դաշնակցությունը: Այդ ծրագիրը հրահանգել էր կառավարությունը՝ ամեն մի գյուղ հարևան գյուղի հետ պետք է կապվեր խճուղով: Հարց էր դրվել կառուցել Շուշի-Հաղորոս նույնպիսի լեռնային ճանապարհ: Այս երկու հազմավարական ճանապարհների կառուցումը արցախահայությանը հնարավորություն կտար Գանձակի և Հաղորոսի հետ կապվելու բացարձակապես հայկական բնակավայրերի վրայով՝ խուսափելով թուրքերի հետ բախումներից: Բացի այդ, Ջիվանշիրի առատ հացահատիկը, Խաչենի և Հաղորոսի փայտն ու ածուխը ոլորապատույտ ճանապարհներով Շուշի տեղափոխելը շատ թանկ էր նստում թե՛ տեղափոխողի և թե՛ գնողի համար: Շուշեցիները կարող էին մի քանի օրվա ընթացքում գրեթե անվտանգ հասնել Գանձակ և այնտեղից «աշխարհի դուրս գալ»<sup>48</sup>: Շուշի-Գանձակ խճուղու երկարությունը պետք է լիներ 150 վերստ, որի շինարարական ծախսերը նախատեսված էին 140000 ռուբլի: Այդ ծախսերը պետք է հոգային արցախցիներն ու գանձակեցիները: Ճարտարապետ Աստ. Ջանույանի նախահաշվով ճանապարհը պետք է կառուցվեր այնպես, որ Ջանգեզուրն էլ կապվեր Գանձակին: Արցախցիները մեծ սիրով էին լծվել ճանապարհի

<sup>45</sup> «Փայլակ», N 17, 3.05.1907:

<sup>46</sup> «Հոսանք», N 34, 10.01.1907:

<sup>47</sup> «Ժամանակ», N 35, 14.02.07:

<sup>48</sup> «Երկիր», N 7, 8.10.1906:

կառուցմանը: Երկրամասի բոլոր տեղերից հարյուրավոր բանվորներ էին եկել և աշխատում էին ճանապարհի վրա: Բայց 1906 թ. աշմանը շինարարությունը կանգնեցվեց թուրք բեկերի բողոքի պատճառով: Նրանք չէին ցանկանում, որ իրենց հողերի վրայով նման ճանապարհ կառուցվի: Հոկտեմբերի կեսերին գեներալ Բառերի հրամանով ճանապարհի վրա աշխատող տասնյակ բանվորներ ձերբակալվում են, իբր թե նրանք պատկանում էին հեղափոխական դաշնակցությանը: Այդ նույն ամսին Արցախի մի շարք բնակավայրերում, ինչպես օրինակ, Քարինտակ գյուղում, կատարվել էին խուզարկումներ և ձերբակալություններ<sup>49</sup>:

Բնակչությունը ցարական իշխանություններից համառորեն պահանջում էր թույլ տալ շարունակել ճանապարհի շինարարությունը: Արցախից դուրս ապրող հայերը, Բաքվի և Թիֆլիսի նպաստամատույց հանձնաժողովները, որոնք նյութական միջոցներ էին տրամադրել ճանապարհի շինարարությանը, բազմաթիվ բողոքներ էին ներկայացրել ցարական իշխանություններին և պահանջել վերջ տալ այդ կամայականություններին: Ճանապարհի շինարարությունը ղեկավարելու համար ստեղծված վարչությունը և շինարարական աշխատանքները վերահսկող ստուգիչ հանձնաժողովն իրենց գործունեությունը դադարեցրին 1908 թվականին: Այնուհետև՝ մինչև 1910թ. վերջը, նահանգապետի կարգադրությամբ, ճանապարհի շինարարությունը հսկում և ղեկավարում էր ոստիկանությունը՝ Շուշիի գավառապետի դիվանատան ծառայող Արտեմ Սարգսյանի ղեկավարությամբ: 1910թ. վերջի տվյալներով ճանապարհի շինարարության մեծ մասը, հատկապես հողային աշխատանքները, կատարվել էին<sup>50</sup>:

\*\*\*

Հայ-թուրքական բախումների կանխվելուց հետո Արցախի թեմը ջանքեր էր գործադրում այն չկրկնվելու ուղղությամբ, բնակչության պայմանները բարելավելու, հատկապես սովի դեմ պայքարելու, հայկական դպրոցները վերաբացելու և այլ հարցեր լուծելու համար: Թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոսը, սերտ կապի մեջ լինելով երկրամասի բնակչության հետ, ձգտում էր առաջացած բոլոր հարցերը լուծել՝ օրենքի և բնակչության պահանջներից ելնելով: Սակայն, պետք է ասել, թեմի առաջնորդի պահանջներն անվերապահորեն չէին ընդունում թեմի բոլոր հոգևորականները: Նրանցից ոմանք ավելի մոտ էին ժողովրդական պայքարին և շարունակում էին լինել նրանց հետ,

<sup>49</sup> Նույնը, N 30, 4.11.1907:

<sup>50</sup> «Հորիզոն», Թիֆլիս, N 290, 28.12.1910:

ոմանք էլ ավելի իշխանամետ էին և ժողովրդին քարոզում էին լինել իշխանություններին հնազանդ ու կատարել նրանց պահանջները, ոմանք էլ պաշտպանում էին բեկերի և մյուս ունևորների շահերը:

Արդեն մի տարի էր, ինչ բանտում էին գտնվում Ազուլեցոց եկեղեցու երեք քահանաներ: Նրանց մեղադրական եզրակացությունից երևում է, որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ եկեղեցում պայթուցիկ նյութեր էին գտնվել: Եկեղեցին, որի շուրջը գտնվող տները վառվել էին, գտնվում էր թուրքերի և հայերի թաղամասերի սահմանագլխին: Ընդհարման ժամանակ եկեղեցին հայերի համար պաշտպանական դիրք էր<sup>51</sup>:

Այստեղ հայտնաբերված պայթուցիկ նյութերի համար մեղադրվում էին եկեղեցու հոգևորականները:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքերի դեմ մղված պայքարում իր խիզախություններով աչքի էր ընկել քահանա Սերոբ Ապրեսյանը, որի մասին գուսանները նույնիսկ երգեր էին հորինել: Բայց ահա 1907 թ. հունվարի 27-ին տեղի ունեցած Պետական դումայի ընտրությունների ժամանակ այդ հերոսին ոմանք կոպիտ արտահայտություններով անպատվում են այն բանի համար, որ չի ասել, թե ում օգտին է ձայն տալու, այլ պատասխանել է. «Գրիչը կիմանա, որդիս»<sup>52</sup>:

1907 թ. երկրորդ կեսին տարին հատկապես բերքառատ էր. Արցախի կյանքում դրական փոփոխությունները նկատելի էին: Չնայած Արցախն արդեն հաց ուներ, սակայն ընդհանուր վիճակը շարունակում էր մնալ ծանր: Այս կապակցությամբ արժե հիշատակել մի փաստաթուղթ, որը կարևոր նշանակություն ունի Արցախի այդ շրջանի պատմության թեկուզև մեկ ծալքը բացահայտելու համար: Դա Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոսի՝ 1908 թ. հունվարի 4-ի կոչն է՝ ուղղված շուշեցի հայերին: Դեռևս 1906 թվականին Աշոտ Եպիսկոպոսը, որը նոր էր տնօրինել թեմակալի պաշտոնը, դիմելով հայրենի օջախը լքած և քաղաքներում ապաստան գտած հայրենակիցներին, կոչ էր արել վերադառնալ իրենց ծննդավայրերը: Նա գրել է. «Մխալ ու մահաբեր է ձեր բռնած ճանապարհը: Դուք կանգնել եք կորստյան եզրերի վրա, իսկ թշնամին շարունակում է իր դավադրությունները... Լավ իմացեք, որ վախկոտները, լալկանները և փախչողները պետք է տուժեն, անեծքն է նրանց համար պսակված օրհնութեան փոխարեն, և ամարգանքն ու նախատինքն է նրանց բաժինը: Քանի դեռ ուշ չէ, ետ դարձեք կորստաբեր ճանապարհից, շարունակեցեք ապրել ձեր երկրում՝ լի հույսերով, մաքառելով ու կռվելով ձեր ժողովրդին վտանգ սպառնացող

<sup>51</sup> «Խարիխ», N 16, 21.07.1907:

<sup>52</sup> «Յոսանք», N 52, 2.02.1907:

թշնամու դեմ»<sup>53</sup>:

Դեռևս 1906 թ. հունվարի 3-ին Աշոտ Եպիսկոպոսը հանդես էր եկել շուշեցի հայերին ուղղված կոչով, որը փիլիսոփայախրատական իմաստ ունի: Նա գրում է. «Աչքի առաջ պետք է ունենալ, թե ազգերի և ժողովուրդների պատմութիւնն էլ նույնպես արձանագրվում է: Ինչպես ամեն մի անհատ, այնպես և ամեն մի ազգ և ժողովուրդ ընթանում է յառաջ ժամանակի հետ միասին և ամեն միին իւր դերն ունի կատարելու կեանքում, և այդ դերն էլ հաւատարմապէս արձանագրւում է պատմութեան էջերում»: Ըստ Աշոտ Եպիսկոպոսի՝ ամեն մեկը պետք է «ծառայութիւն անել Աստծուն. իսկ այդ ծառայութիւնը կայանում է մարդկանց ծառայելու մէջ, նշանաբան դարձնելով մարդասիրութիւնը, գթութիւնը և ընկերասիրութիւնը»: Թեմի առաջնորդի կարծիքով, ամեն ոք պետք է ծառայի «հանրային շահերին մեծ անձնուիրութեամբ, մի և նոյն ժամանակ չը մոռանալով հանդերձ անհատը և պաշտպանելով նաև նորա շահերը... Քրիստոնէական քաղաքակրթութիւնը խստիւ դատապարտում է սոսկ անձնական շահերին հետամուտ լինելու քաղաքականութիւնը, և նորա արդիւնքներից ամենափառաւորը այն է եղել, որ մարդիկ նորա գերահրաշ ազդեցութեան տակ սովորել են իրենց անհատական սահմանափակ եզերքներից դուրս գալ և սէր ու գթութիւն ծաւալել ոչ թե միայն իրենց ընտանիքների ու մերձաւորների վերայ, այլ և ամենքի վերայ անխտիր»: Աշոտ Եպիսկոպոսը համոզված էր, որ «Արարիչը, ինչպես երկնքի գնդերը և նրանց բաղկացնող ամենափոքր հիւլէները, նոյնպէս և բոլոր բարոյական էակները միմեանց հետ կապակցել է անքակտելի կապերով և ոչ ոք կարող է այս լայնածաւալ աշխարհի վերայ միայնակ և անջատ ուրիշներից, որքան էլ լիքը լինին անհաշիւ հարստութեամբ իւր անձնական ամբարները»: Հենց այդ ճշմարտութիւնը, եզրակացնում է թեմի առաջնորդը, «պետք է յառաջ մղէ թէ քաղաքիս և թե օտար քաղաքներում բնակուող Շուշեցի հայերին նկատելու իրենց քաղաքացիների հանրային վիճակը...»: Նա գրում էր, որ «Շուշեցի հայերի բարոյական և անյետածգէլի պարտքն է, երախտագիտութեամբ հանդերձ օրհնելով աղէտից յառաջ եկած նոր թշուառներից օգնողների կեանքը, շտապել իւր վերայ ամենելու և սրբութեամբ յառաջ տանելու սովորական չքաւոր և կարօտեալ ընտանիքների ամենամահրաժեշտ կենսական կարևոր պիտոյքները հոգալու քաղցր լուծը»: Աշոտ Եպիսկոպոսը, «Աղքատանոցի համար» դրամագլուխ հիմնելով, հրավիրում էր «Շուշեցի բոլոր բանիմաց և զգայուն հայ անձանց, միացեալ ուժերով և աշխատութեամբ աջակցել»

<sup>53</sup> «Ալիք», Թիֆլիս, N 50, 28.06.1906:

իրենց «յաջողացնելու այս քրիստոնեական և մարդասիրական մեծ գործը»<sup>54</sup>:

Իսկ այս նոր կոչում, որը նույնպես փիլիսոփայախրատական իմաստ ունի, Աշոտ եպիսկոպոսը իր սիրտը բացում է շուշեցի մեծատունների առջև և նրանց հիշեցնում. «Դուք բոլորդ էլ գիտեք ձեր քաղաքում թշուառութեան և ծայրահեղ չքաւորութեան թունալից ճանկերի մեջ հևող և հառաչող, և օրական մի կտոր չոր հացի կարօտ մերկ և բոբիկ բազմաթիւ ընտանիքների աղիողորմ դրութիւնը: Բայց մինիայն գիտե՞նալը, խօսելն ու ցաւելը բավական չէ, այլ և առաջն առնելու համար միջոցներ պէտք է գործ դնել, որի համար լուռ ու անտարբեր եք»<sup>55</sup>: Թեմի առաջնորդը դժգոհ էր նրանից, որ որոշ մեծատուններ փորձում էին արդարանալ, թե իրենք կվերադառնան և այն ժամանակ հարցին կանդրադառնան հիմնովին: Դա արդարացուցիչ չէր: Թեմակալը հիշեցնում էր, որ Բաքվում բնակվող բոլոր մեծատունները շատ առաջ են գաղթել Շուշից, որոնք կարող են օգնություն ցույց տալ հայրենակիցներին՝ հիշեցնելով, որ «Ամեն ժամանակ էլ յարմար է բարի գործ կատարելու և երբէք չը պետք է թողնել մի գործ վաղուան, որ այսօր կարելի է կատարել»<sup>56</sup>: Նա շուշեցի մեծատուններին հիշեցնում էր, որ «անցեալի վերայ հիւսուած յուսահատ ողբերով չի փրկուի ոչ անհատ և ոչ ազգ: Անցեալում կարող են աղետալի շատ դէպքեր պատահած լինել, բայց ահա, Աստուած տալիս է ձեզ նոր ժամանակ արիանալու, ներշնչելու և դարմանելու ձեր ազգայինների աղետները և դժբախտութիւնները ընթանալով պարտաւորութեան շաւղով»<sup>57</sup>:

Թեմակալը շարունակում է. «Աշխարհիս վերայ չը կայ պարտքի կատարման պէս աւելի գեղեցիկ բան: Հանճարի յաղթանակները կարող են շլացուցիչ լինել, մեծ բախտաւորներ կարող են աւելի յուզիչ լինել, բայց չը կայ իրօք մի բան, որ այնքան արժանաւոր և փառաւոր լինի, որքան այն հաստատուն, անվրթով և եռանդով կրողը, որով մարդ կատարում է իր ընկերական, քաղաքացիական և ազգայնական պարտավորութիւնը... Եվ հաւատացած եղէք, որ հաւատարմօրէն կատարուած պարտավորութիւնները միշտ ունի իր ճոխ վարձատրութիւնը: Մինչ հանճարի պսակները թարշամում են և սոսկ բախտաւորների մրցանակները յօրսն են ցնդում, պարտքի կատարման ոսկեղէն պտուղները հաւաքուում և մնում են յաջորդ սերունդների ավերում դարէ ի դար»<sup>58</sup>: Թեմակալը, շուշեցի մեծատուններին հիշեցնելով հայրենակիցների նկատմամբ իրենց կատարելիք պարտքի

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 236, ք. 1-2:

<sup>55</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 458:

<sup>56</sup> Նույնը:

<sup>57</sup> Նույնը, էջ 459-460:

մասին, աղաչում է նրանց՝ «յիշեցեք գեթ այս տարի Շուշու աշխատութեան տխուր վայրերը, չքաւորութեան բոլոր տառապանքները, բոլոր արցունքոտ աչքերը, բոլոր մթնած խաւարած սրտերը և բոլոր յուսահատ կեանքները, որոնք այնքան բազմաթիւ են Շուշու բարձունքի վերայ»<sup>59</sup>:

Աշոտ Եպիսկոպոսը հորդորում էր Շուշիում բացել տնայնագործութեան մի ընդարձակ արհեստանոց՝ իր բոլոր ճյուղերով: Նման ջուլհականոց արդէն գործում էր քաղաքում, որտեղ աշխատում էր մոտ 40 մարդ: Թեմի առաջնորդը խորհուրդ էր տալիս այն ընդարձակել, որտեղ կարող էին աշխատել մի քանի հարյուր մարդ: Դա համարում էր բոլորի գործը, որը Շուշիի չքավորների համար կլինէր մեծ նվիրատվություն: Արցախցի մեծատունները կարող էին նման արհեստանոցներ շատ տեղեր բացել: Շուշեցի մեծատուններին խնդրելով ձեռք մեկնել այդ գործին՝ թեմակալը հավատացած էր, որ «կեանքի ամենալաւագոյն օրերը կը լինին ձեզ համար այն օրերը, երբ գործած կը լինիք առաւելագոյն բարիք»<sup>60</sup>:

Աշոտ Եպիսկոպոսը իր կոչի վերջում կրկին հիշեցնում է. «Պարտքի ամենամեծ բաժինը ընկնում է ձեր վրայ, Շուշուց դուրս ապրող և մանաւանդ Բագոււն բնակվող շուշեցի մեծատուններ, շարժուեցեք ուրեմն բարի գործի համար, ժողովներ կազմեցեք, խոսեցեք ու որոշեցեք վերջնականապէս յաջողեցնելու այս բարի և ձեզ պատիւ, փառք ու պարծանք բերող գործը, և եղեք ձեր սիրով ու գօրծեանք անուշաբոյր ծաղիկներ ձեր ծննդավայրի՝ լալով ու դառն արցունքներով ողողուած թախծութեան վայրերում: Այդ է ձեր սեպուհ և սրբազան պարտքը և հրաւիրում են ձեզ՝ ձեր պարտքի կատարման հանդիսավայրը, որտեղ կարող էք ժառանգել յաւերժական անուն և ճոխ վարձատրութիւն»<sup>61</sup>:

Թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոսը դարաբաղցի հայերին կոչով կրկին դիմել է 1909 թ. հունվարի 2-ին: Նա գրել է. «Անցաւ մի տարի, բայց դառնութեամբ շաղախուած արցունքների ի՞նչ աղի գետեր ողողեցին նրան, վշտերի ծանրութեան տակ ընկճուած սրտերից ի՞նչ աղիողորմ հառաչանքներ ու հեծեծումներ դիզուեցին նրա վերայ, և ի՞նչ սև խորհուրդներ ու գործեր մրոտեցին նրա էջերը...»: Ապա վերլուծելով մարդկութեան անցած ուղին՝ խորհուրդ էր տալիս «որքան էլ հասակն առած և տարիքով լինի մարդ, դեռ ուշ չէ սովորել կեանքի դպրոցի մէջ և ունենալ ազնիվ ձգտումներ ոչ թե մեր արկղները միայն լցնելու հարստութեամբ աշխարհիս բարիքները աւելի ունենալ աշխատելով,

<sup>58</sup> Նույնը, էջ 460:

<sup>59</sup> Նույնը:

<sup>60</sup> Նույնը:

<sup>61</sup> Նույնը, էջ 461:

թէպետ այդ բոլորն էլ ունենալու համար կարող ենք աշխատել միայն այն սկզբունքով, որ որքան շատ լինի հարստութիւնը, այնքան աւելի մեծ լինեն բարի և հանրօգուտ գործերը»։Նրա կարծիքով, ամեն մարդ կարող է հարստութիւն ունենալ, փառավոր բնակարան, սակայն նա պետք է հիշի «իր ազգը և միշտ իր աչքի առաջ ունենայ իր ծննդավայրի՝ իր հայրենիքի թշուառ ժողովուրդը և նրա միւթական տազնապի մէջ տառապող կրթական ու բարենպատակ հաստատութիւնները...»։ Թեմի առաջնորդի համոզմամբ, «Իմաստուն մարդը և ժողովուրդը նա է, որ գիտէ այսօրուան արժէքը, և նա, որ ընդունակ է գնահատելու ներկան ըստ արժանւոյն, ապագայի համար կարող է ապահով լինել, որովհետև ապագայի ամբողջ արժէքը կախումն ունի այսօրուան մեր տուած արժէքից»։ Ապա խորհուրդ է տալիս, որ արհեստաւորը թող սովորի ավելի լավ աշխատել և կատարելագործվի իր արհեստի մէջ, վաճառականը թող ջանա ընդարձակել իր առևտուրը, ուսանողը թող մի աստիճան ևս վեր ելնի գիտության սանդուղքով, ուսուցիչը թող խնամք տանի ավելի լավ ձևակերպելու «այն բանական մարմարիոցը, որ ունի իր ձեռքին դպրոցի նուիրական յարկի տակ, օգտակար անգամ դարձնելու նրան մարդկութեան, իր ազգի և իր հայրենիքի համար», հայ քահանան թող «հետամուտ լինի կարդալու, հմտանալու, զարգանալու և քարոզելու համար նոր հորիզոններ մտցնելու քրիստոնէութեան և բարոյականութեան վսեմագոյն սկզբունքների բացատրութեան մէջ, գրաւելու ոչ միայն հաւատացեալների խիտ բազմութիւն, այլ նաև անտարբերների և թերուս թերահաւատների», և որ «հայ մեծատունը թող սիրէ իր ազգը, սիրէ նրա մանուկ սերունդը, սիրէ իր ազգի հեզ և թշուառ տառապեալները և նրանց ուսման ու կրթութեան կարօտ երկսեռ զաւակները և իր ազգի բարօրութեան և նորագոյն սերունդի կրթութեան և դաստիարակութեան ամենակարևոր գործի համար նուիրէ ոչ միայն իր ոսկիները առատօրէն, այլ և իր սիրտը ամբողջովին. մանաւանդ դարաբաղցի հայ մեծատունը, որի հայրենիքը անհամեմատ աւելի տառապում է թշուառութեան և չքաւորութեան ճիրաններում...»<sup>62</sup>:

#### **4. ԱՐՑԱԽԻ ԵՎ ՆՐԱ ԹԵՄԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

<sup>62</sup> ՀՀ, ֆ. 56, ց. 14, գ. 236, ք. 24-25:

## (1908-1914թթ.)

Ինչպես արդեն նշել ենք, հայ-թուրքական ընդհարումները խիստ բացասական հետևանքներ են թողել Արցախ-Ղարաբաղի տնտեսական կյանքի վրա: Ամենամեծ չարիքը սովն էր, որը հաղթահարվեց 1907 թվականի երկրորդ կեսին: Չարիքի մյուս կողմը գանգվածային ձերբակալություններն էին և դրանց թողած ծանր հետևանքները: Դեռևս 1906 թ., երբ շարունակվում էին մոլեգնել ազգամիջյան ընդհարումները, ցարական ժանդարմերիայի կողմից իրագործվում էին գանգվածային ձերբակալություններ: Այդ սարսափն ընդգրկել էր ամբողջ Արցախ-Ղարաբաղը: Հարյուրավոր մարդիկ ձերբակալվեցին և նետվեցին ինքնակալության զնդաններ, որոնք տարիներ շարունակ ենթարկվեցին անասելի տանջանքների և կտտանքների: Մարդիկ, գտնվելով Սիբիրի դաժան կալանավայրերում կամ աքսորում, հույս չունեին, որ կենդանի կվերադառնան այնտեղից: Ռեակցիայի տարիներին Լեհաստանից և Անդրկովկասից մինչև Սիբիր տիրում էր մի այնպիսի սարսափ, որի մասին հիշելն անգամ հոգեկան ցնցում էր առաջացնում մարդկանց մեջ: Ցարական Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ստոլիպինը Կովկասի փոխարքայից պահանջում էր դաշնակցության դեմ գործադրել «ամենախիստ և դաժան միջոցներ...»<sup>1</sup>:

Դաշնակցությունը դարձել էր ինքնակալության ամենաընդդիմադիր ուժերից մեկը: Այստեղ է, որ «փայլեց» Նովոչերկասկի շրջանի դատական քննիչ Լըիժինը: Նրա գլխավորությամբ կազմվեց 40 հազար էջանոց մի «գործ», որը հայտնի է «Դաշնակցության դատը» անունով: 160 բանտարկյալներ, փակվելով հարավային Ռուսաստանի Նովոչերկասկի զնդանում, ենթարկվեցին ամենասարսափելի տանջանքների: Այդ ամենը շարունակվեց չորս տարի: Ինքնակալության կողմից Հայ դաշնակցական կուսակցությունը մեղադրվում էր որպես հակաօրինական մի կազմակերպություն, որն իբրև նպատակ ուներ բռնությամբ, քաղաքական և տնտեսական ահաբեկումներով «տապալել հիմնական օրենքներով սահմանված վարչաձևը»: Դատավարությունը, որ տեղի ունեցավ 1912 թվականին, ընթանում էր Քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով: Միայն հինգ ամսում Շուշիի, Փոթիի և Էջմիածնի փոստային բաժանմունքներից դատարան էր գնացել 20 հազար հեռագիր<sup>2</sup>, որի հեղինակները պաշտպանում էին ձերբակալվածներին և պահանջում ազատ արձակել նրանց: Պարզվում

<sup>1</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 523:

<sup>2</sup> Նույնը, էջ 526:

է, որ ընկերներին մատնել և դավաճանել էր նախկին դաշնակցական և խմբապետ Միհրանը: Նա դարձել էր ոստիկանության գործակալ, մատնել էր բոլոր ընկերներին և տվել ցուցմունքներ: Նա, անբարոյական վարքագիծ դրսևորելով, մատնել էր Դաշնակցություն կուսակցության բոլոր գաղտնիքները:

Առաջին ձերբակալվածներից էին Ազուլեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու քահանաներ Գարեգին Յովհաննիսյանը, Կարապետ Տեր-Սահակով Վարդապետյանը և Արսեն Ավետիսի Յախումյանը: 1907 թ. սեպտեմբերի 19-ին Ելիզավետպոլի շրջանային դատարանը լսել էր նրանց գործը, որի վճիռը հաստատվել էր թիֆլիսի դատական պալատի 1909 թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ: Ըստ որի՝ եկեղեցուն թաքցրած զենքը իբրև պետք էր օգտագործվեր թուրքերի դեմ, եթե քաղաքում տեղի ունենար հայ-թուրքական նոր ընդհարում: Յոզևուրականների նկատմամբ այդ մեղադրանքը կեղծ էր և հորինված: Այդ է ապացուցում այն փաստը, որ Ելիզավետպոլի շրջանային դատարանի դատախազը հոգևորականների գործը (N15356) 1910 թ. հոկտեմբերի 11-ին ուղարկել էր Էջմիածին՝ Սինոդին և խնդրել հոգևորականների վրայից հանել մեղադրանքը: Թիֆլիսի դատական պալատը 1909 թ. դեկտեմբերի 22-ին որոշեց վճիռը մեղմացնել և յուրաքանչյուրին բանտում պահել մեկական ամիս<sup>3</sup>:

Սակայն Նիկոլայ 2-րդը բեկանում է դատական պալատի որոշումը և պահանջում նրանց պատժել օրենքի ուժով: Էջմիածնի Սինոդը, 1910 թ. հոկտեմբերին քննարկելով այդ հարցը, որոշում է վճիռը ի կատար ածել<sup>4</sup>: Սինոդն իր այդ վճռի մասին տեղյակ է պահում Արցախի թեմին և Ելիզավետպոլի դատախազին: Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիան, 1910 թ. նոյեմբերի 8-ին լսելով Սինոդի հոկտեմբերի 29-ի N 2489 հրամանը, որոշում է (N 3534) Ազուլեցոց եկեղեցու դատապարտված երեք քահանաներին կարգազուրկ անել և նրանց համարել «անձնական իրավունքներից, քահանայական կարգից և եկեղեցական պարգևներից զրկուած, որոնց և յայտնել ստորագրութիամբ սոյն օրագրի վիրայ, և այս մասին առանձին գրութիամբ հաղորդել Գանձակի Շրջանային դատարանի պ. պրոկուրորին, իսկ քաղաքիս բարեկարգիչ Յարութիւն ավագ քահանային պատուիրիլ յիշիալ քահանաների ձեռնադրութիան վկայականները, եկիղիցական պարգևների մասին վեհափառ Յայրապետներից տուած կոնտակները և այլ վկայաթղթերը ստանալ և ներկայացնել ատինքս»<sup>5</sup>:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 4716, թ. 1-2:

<sup>4</sup> Նույնը, թ. 4-5:

Շեխեր գյուղից Պողոս Առաքելովը ցուցում էր տվել, որ իրենց գյուղում դաշնակցականների գործողությունները ղեկավարել է համագյուղացի Իսահակ բեկ Ավշարովը: Իբր ով անդամավճար չէր տալիս, նրա տունը վառում էին, նույնիսկ սպանում: Դրամ պահանջում էին ամեն ամիս: Ով չուներ, փոխարենը վերցնում էին նրա ունեցվածքը, վաճառում և դրամը հանձնում կոմիտեին: Ավշարովը օգնականներ ուներ Թաղեր և Թաղավարդ գյուղերում<sup>6</sup>: Քանի որ քննությունը տարվել է շատ դաժան ձևերով, ապա այս «վկայությունները» կասկած են հարուցում և ոչ լրիվ հավատ ներշնչում: Բայց որ ձերբակալությունները մեծ մասամբ կատարվել են ոչ օրինական ձևով, և տասնյակ մարդիկ հալածվել ու տույժի են ենթարկվել անտեղի, այդ մասին են վկայում նաև բանտարկյալների ուղարկած նամակ-բողոքները: Ջազիկ գյուղից դատապարտված Ռսկան ժամհարյանը 1912 թ. նոյեմբերի 17-ին Ելիզավետպոլի բանտից հայոց կաթողիկոսին ուղարկած նամակում գրում է, որ հերիք չէ ինքը մուսուլմանների կողմից խիստ տուժել է 1905-1906 թթ., հիմա էլ գտնվում է բանտում, իսկ ընտանիքը և հարազատները սովամահ են լինում: Խնդրում էր միջնորդել ցարին՝ իրեն ազատել բանտից<sup>7</sup>: Նույն բովանդակությամբ բանտից կաթողիկոսին նամակ-խնդրագրեր են ուղարկել նաև սպիտակաշենցի Աղալար Օգանեսյանցը, փիրջամալցի Գրիգոր Սիրզաբեկյանը, սարգաշենցի Գերասիմ Խաչատուրովը, ճարտարեցի Տիգրան Վարդապետյանը, հադրութեցի Խոսրով Առաքելովը և ուրիշներ<sup>8</sup>: 1914 թ. մարտի 16-ին ՅՅԴ բյուրոյի անդամներից 7 հոգու ստորագրությամբ կաթողիկոսին ուղարկված նամակ-բողոքում նշված է, որ, սկսած 1907 թվականից, բազմաթիվ հայեր ենթարկվում են քրեական պատասխանատվության միայն նրա համար, որ Դաշնակցություն

<sup>6</sup> Նույնը, թ. 9: Ազուլեցոց Ս. Աստվածածնի Մայր եկեղեցում պայթուցիկ նյութեր հայտնաբերվելու պատճառով (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 44, թ. 2) ձերբակալված Կարապետ քահանա Տեր-Սահակով վարդապետյանցը Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիայի անդամ էր: Նույն պատճառով դատվել էր նաև Արսեն քահանա Հախումյանցը (նույն տեղում, թ. 6):

<sup>7</sup> Ետո այդ քահանաներն արժանացել են ներման: Նրանք 1914 թ. ապրիլի 14-ին շնորհակալություն են հայտնել բոլոր նրանց, ովքեր պայքարել են իրենց ազատությունն ու իրավունքները վերականգնելու համար («Ղորիզոն», N 94, 4.05.1914): «Արարատը» հաղորդել է, որ Ազգիս Վեհափառ Հայրապետի միջնորդությամբ և Պետական դումայի անդամ պ. Սիբայել Պապաջանյանի աջակցությամբ կայսրի կողմից ներման են արժանացել Շուշի քաղաքի 3 քահանաները: Նրանք 1910 թ. նոյեմբերից մինչև 1913 թ. նոյեմբեր ամիսը նստած էին Շուշիի բանտում՝ իրավունքներից և քահանայական կոչումներից զրկված («Արարատ», 1914, N 7, էջ 301):

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 2033, 2034:

<sup>7</sup> Նույնը, ֆ. 57, ց. 2, մաս I, գ. 299, թ. 5:

<sup>8</sup> Նույնը, թ. 9, 10, 24:

կուսակցության անդամ են: Սրանցից շատերի ընտանիքները ծանր պայմաններում էին, սովի մեջ: Իբրև այդ կուսակցությունը հակակառավարական գործ է կատարել, մինչդեռ նա իր հայրենակիցներին պաշտպանել է թուրքերի հալածանքներից: Դաշնակցությունը, մասնակցելով Կովկասի հայերի ինքնապաշտպանությանը՝ ընդդեմ տեղական թուրքերի կատարած արյունալի բռնությունների, դրանով իսկ մեծ գործ է կատարել: Դաշնակցության բյուրոյի անդամները Վեհափառին խնդրում են կրկին դիմել Կովկասի փոխարքային՝ միջնորդելու դժբախտներին բանտից ազատելու համար<sup>9</sup>:

Հայոց կաթողիկոսը նամակով դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին<sup>10</sup> ու խնդրում միջնորդել ցարի առաջ՝ բանտարկյալներին ազատելու համար:

Վերջինս 1914 թ. հունիսի 24-ին (N7267) կաթողիկոսին պատասխանել է, որ 1912 թ. հունվարի 7-ից մինչև մարտի 20-ը տեղի ունեցած դատավարության ժամանակ դատապարտվածներին ազատելու համար հունիսի 12-ին թագավորը, լսելով արդարադատության նախարարին, ոմանց ազատել է, իսկ ոմանց էլ մերժել<sup>11</sup>:

1914 թ. նոյեմբերի 24-ին կաթողիկոսին աղերսագիր է ուղարկել նաև Վարանդայի Նորշեն գյուղից 80-ամյա Թավադ Պողոսբեկյանը: Նա հաղորդում է, որ իր որդի Սարգիս Պողոսբեկյանը հայ-թուրքական ընդհանրության հետո արքորվել է Սիբիր միայն նրա համար, որ նա Դաշնակցություն կուսակցության անդամ էր: Հիմա նա կրում է իր պատիժը՝ հոր վրա թողնելով 6 հոգուց բաղկացած ընտանիքի հոգսերը: «Ինձնում ուժ չի մնացել», - հաղորդում է Թավադ Պողոսբեկյանը և որդիական խոնարհությամբ աղերսում Վեհափառին միջնորդել իր որդուն բանտից ազատելու<sup>12</sup>: Նման մի աղերսագիր Վեհափառին ուղարկել է նաև Խաչենի Բալլուջա գյուղից Ջհանգիր Միրզոյանցը՝ իր որդի Սողոմոն Միրզոյանցին բանտից ազատելու միջնորդությամբ: Նա հաղորդում է, որ իր որդին դաշնակցական չի եղել, այլ մի չարքաշ գյուղացի, մինչդեռ հիմա նստած է Շուշիի բանտում՝ իբրև «դաշնակցական»<sup>13</sup>: Կաթողիկոսին կրկին աղերսագիր ուղարկել է վերոնշյալ նորաշենցի Թավադ Պողոսբեկյանը Կրանսոյարսկ քաղաքից, ուր գնացել էր բանտարկյալ որդուն տեսակցելու<sup>14</sup>:

<sup>9</sup> Նույնը, թ. 29-30:

<sup>10</sup> Նույնը, թ. 33-36:

<sup>11</sup> Նույնը, թ. 48:

<sup>12</sup> Նույնը, թ. 78:

<sup>13</sup> Նույնը թ. 86:

Սկսած 1908 թվականից՝ Արցախ-Ղարաբաղում խուզարկության էին ենթարկվում բոլորը: 1908-1909 թթ. խուզարկվածների թիվն անցնում էր մի քանի հազարից: Կալանվել էր ավելի քան 500 հոգի և փակվել բանտերում, որոնց թվում էին 8 գրող, 22 բժիշկ, փաստաբան, 24 պրոֆեսոր և դասատու, 30 պաշտոնյա և ծառայող, 45 վաճառական, 70 արհեստավոր, մեծ թվով գյուղացիներ ու բանվորներ, ինչպես նաև հոգևորականներ, կանայք, նույնիսկ աշակերտներ<sup>14</sup>:

Կասկածի տակ էր ավելի քան 3000 հոգի: Խուզարկությունները սարսափելի էին: Մարդկանց զրպարտում էին և ձերբակալելու համար «առիթներ» ստեղծում: Բանտային խուցերում մարդիկ ահաբեկվում էին, ենթարկվում անասելի կտտանքների: Մի խուցում, որը հազիվ 6-7 հոգու տեղ էր, պառկեցնում էին 25-30 հոգի: Բանտերում մարդիկ մեռնում էին ճանճերի նման, հիմնականում՝ վարակիչ հիվանդություններից: Նովոչերկասկի բանտը նախատեսված էր 270 մարդու համար, սակայն այնտեղ խցկվել էր 850 հոգի<sup>15</sup>:

Հանիրավի ամբաստանվածների դատը տեղի է ունեցել Ս. Պետերբուրգի շրջանային դատարանի առաջին բաժանմունքի դահլիճում: Այն սկսվել է 1912 թ. հունվարի 17-ին՝ սենատոր Կրիվցովի նախագահությամբ: «Դաշնակցություն» գործով մեղադրվում էր 159 հոգի: Ներկայացել էին 149-ը, մեկը մահացել էր, իսկ 9-ը փախուստի մեջ էին, որոնցից էին վիպասան Ավ. Ահարոնյանը, բանաստեղծ Ավ. Իսահակյանը, հրապարակախոս Խաժակը, ինժեներ Յովի. Քաջազունին և ուրիշներ: 149-ից գտնվում էին ժանդարմերիայի հսկողության տակ<sup>17</sup>: Այդ դատի դեմ հանդես եկավ «Голос земли» թերթը (Վ. Օպոչնին), որը անմիջապես թարգմանեց «Հորիզոնը»<sup>18</sup>: Հեղինակը զարմացած էր, որ իրենց եղբայրներին օգնություն ցույց տվողներին բնութագրում էին որպես Ռուսական կայսրության դավաճաններ: Նա գրում է. «Հեղափոխության տարիներին Դաշնակցություն կուսակցության ամբողջ ահաբեկությունը կրում էր զուտ ազգային վրիժառության բնավորություն: Գավառներում կոտորածների ժամանակ մարդիկ հույսը դրել էին համարյա բացառապես իրենց «դաշնակցականների վրա»: Բոլորը միասին էին կազմակերպում ինքնապաշտպանությունը: Այդ պայքարում դաշնակցությունը արժանացավ հասարակության համակրանքին: Հասարակ ազգաբնակչությունը «դաշնակցությանը» ճանաչում էր իբրև

<sup>14</sup> Նույնը, թ. 87, 91-92:

<sup>15</sup> Ակնունի Է., Բողոքի ձայն, էջ 25:

<sup>16</sup> Նույնը, էջ 25-35:

<sup>17</sup> «Հորիզոն», N 15, 24.01.1912:

<sup>18</sup> Նույնը, N 32, 16.02.1912:

ռազմական մի կուսակցության, որը պատրաստ էր հայերին պաշտպանել թուրքերի կոտորածներից»:

«Դաշնակցությունը» դատարանում ներկայացվում էր իբրև ռուսական հեղափոխական կազմակերպություն, իսկ դատվողները մեղադրվում էին իբրև Ռուսաստանում ֆեդերատիվ հանրապետություն պահանջող՝ արտասահմանում մշակված քաղաքական ծրագիրն իրականացնելու համար պայքարողներ:

Միքայել Վարդանյանը նշել է, որ այդ տանջալի ծանապարհն անցնելուց հետո 160 հայ «քաղաքական հանցավորներ» և շուրջ 500 վկաներ Ռուսահայաստանի բոլոր ծայրերից փոխադրվեցին Ս. Պետերբուրգ: Դատավարությունը սկսվեց արտակարգ հանդիսավորությամբ՝ ռուս ծերակույտի հատուկ ատյանի առջև<sup>19</sup>: Դատավարության ընթացքում պարզվեց, որ Լըիժիների կատարած «նախնական քննությունը լի է կեղծիքներով, և որ այդ պատասխանատու գործը հանձնված է եղել անհավասարակշիռ, հոգեպես հիվանդ հայատյացի»<sup>20</sup>: Լըիժիներ գիտակցաբար և կոպտորեն խարդախել էր շատ վավերագրեր, վկայություններ և ավելի ծանրացրել Հայ հեղափոխական դաշնակցության գործը: Նա դաշնակցությանը անամոթաբար վերագրել էր անջատողականություն: Այդ փաստաթղթերի կեղծումը կատարվել էր արդարադատության նախարար Ի. Շեգլովիրովի հավանությամբ (հետո՝ 1917 թ., նա զնդակահարվել է բոլշևիկների կողմից): Ըստ դատական վճռի՝ 52 հոգի դատապարտվել է բանտի և աքսորի, 14 հոգի՝ սիբիրյան տաժանակիր աշխատանքների՝ Համազասպ Օհանջանյան, Սարգիս Մանասյան, Հովհաննես Ղազարյանց, Արշակ Մուրատով և ուրիշներ: 94-ը աքսորվել են իրենց բնակավայրերից<sup>21</sup>:

Հայության նկատմամբ այդ ցեղասպանությունը նախապատրաստող Լըիժիներ դատի ենթարկվեց և «աշխարհի առաջ կանգնեց իր ճիվաղային հոգու ամբողջ մերկությամբ: Նրան հայտարարեցին որպես հոգեկան հիվանդ և դադարեցրին նրա գործը»<sup>22</sup>:

\*\*\*

1905 թ. օգոստոսի 1-ի ցարի հրովարտակը չէր որոշում հայոց

<sup>19</sup> Վարդանյան Մ., նշվ. աշխ., էջ 527:

<sup>20</sup> Նույնը, էջ 528:

<sup>21</sup> Նույնը, էջ 532:

<sup>22</sup> Նույնը:

դըպրոցների վիճակը, որոնք փակվել էին տասը տարի առաջ: Այդ հրովարտակը հայ հոգևորականներին թույլատրում էր ժողովրդի օգտին լայն կրթական աշխատանք տանել 1874 թ. հուլիսի 19-ի կանոնների հիմունքներով: Թե ինչ բովանդակություն պետք է ունենար հայոց բացվելիք դպրոցը, ինչ պիտի դասավանդեին, և պետական իշխանությունների հետ դպրոցն ինչ հարաբերություններ պետք է ունենար, պարզ չէր: Միայն 1908 թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 28-ը Թիֆլիսում տեղի ունեցած հայ ներկայացուցիչների նիստերում փոխարքայի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը սկսեց զբաղվել հայոց դպրոցների հարցով: Այն պետք է որոշեր հայոց դպրոցների տիպը, կրթական ծավալը, բացման եղանակը և կառավարման հսկողության էությունը: Ըստ շրջանային հոգաբարձուի կողմից քննության դրված նախագծի՝ հայոց դպրոցը պետք է լիներ տարրական, մեկ և երկդասյան, 3-4 կամ 5-6 տարվա դասընթացով<sup>23</sup>: Այդ դպրոցներում թույլատրվում էր նաև արհեստի դասավանդումը: Հանրակրթական բարձր դասընթացով դպրոցները միջնակարգ էին, որոնց բացումը պետք է թույլատրվեր ընդհանուր կարգով, այսինքն՝ հատուկ թույլտվությամբ և կանոնադրությամբ: Այդ դպրոցներում ռուսաց լեզուն և աշխարհագրությունը պարտադիր էին: Դասատուները պետք է լինեին ռուսահպատակ և բարոյական հատկանիշներով օժտված: Ուսուցչական կազմը պետք է ունենար համապատասխան կրթական ցենզ: Դպրոցներն ամեն անգամ պետք է բացվեին փոխարքայի թույլտվությամբ: Սակայն հայոց կաթողիկոսի ներկայացուցչի համար այդ նախագիծն ընդունելի չէր<sup>24</sup>:

Արցախի թեմի համար ամենահրատապ խնդիրը փակված բոլոր դպրոցների և նոր դպրոցների վերաբացումն ու բացումն էր: Իսկ դրա համար ամենահիմնականը դրամական հարցի լուծումն էր: Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կոնդակով Աշոտ Եպիսկոպոսին իրավունք տրվեց դպրոցները վերաբացելու և նորերը բացելու համար դրամ հանգանակելու: Թեմակալը 1906 թ. ծնունդը լեռնային դժվար ճանապարհով գնաց Գանձակ (հայ-թուրքական բախումների հետևանքով Շուշի-Եվլախ ճանապարհը խիստ վտանգավոր էր), այնտեղից էլ՝ Թիֆլիս, ապա՝ Բաքու: Թեմակալի այդ ճանապարհորդությունը տևեց չորս ամիս: Այդ ժամանակամիջոցում Աշոտ Եպիսկոպոսը հանգանակեց 25130 ռուբլի<sup>25</sup>:

Թեմակալի վերադարձից հետո իրար հետևից բացվում էին

<sup>23</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 495:

<sup>24</sup> Նույնը, էջ 496:

<sup>25</sup> Լեռ, նշվ. աշխ., էջ 599:

դպրոցները: Առաջիններից մեկը 1906 թ. վերաբացվեց Շուշիի Մարիամյան օրիորդաց ծխական դպրոցը: Եվ քանի որ այն պահելու համար տարեկան պետք է ծախսվեր 5000 ռուբլի, որը դժվար էր ձեռք բերել, ուստի 1908 թ. օրիորդաց դպրոցը միացվեց թեմականին: Ապառիկները հավաքելու համար Աշոտ եպիսկոպոսը 1909 թ. կրկին մեկնեց Բաքու և Թիֆլիս ու կարողացավ ստանալ մնացած 3100 ռուբլին<sup>26</sup>: Որոշ միջոցներ ստացվում էին նաև թեմին պատկանող կալվածքներից:

Այո՛, դանդաղ, բայց հաստատ առաջ էր տարվում Արցախի դպրոցական գործը: Թե՛ թեմակալը և թե՛ ամբողջ թեմը մեծ ջանքեր էին գործադրում ավելի շատ դպրոցներ բացելու համար: Առանձնապես հաջողությամբ էին ընթանում թեմականի լրիվ վերականգնման աշխատանքները: 1908-1909 ուսումնական տարում թեմականի տեսուչն էր Ավետիք Տեր-Պողոսյանը, որի օրոք սովորողների թիվը հասել էր 374-ի՝ 11 դասարաններով<sup>27</sup>: Իսկ 1910 թվականի հուլիսի 30-ին երեք տարի ժամկետով թեմականի տեսուչ ընտրվեց ծնունդով շուշեցի բժիշկ Նիկոլայ Երամիշյանը: Նրա պարտականությունների մեջ էր մտնում նաև հսկել Մարիամյան օրիորդաց դպրոցը: Նրան հաջորդած Մովսես Սամվելյանը այդ պաշտոնը վարեց չորս տարի: Այդ տեսուչների օրոք շատ աշխուժություն էր ապրում թեմականի կյանքը: Դրան նպաստել էր նաև այն, որ Աշոտ եպիսկոպոսին հաջողվել էր թեմական տեսչությունը կապել թեմական դպրոցի հոգաբարձությանը:

Հայ-թուրքական ընդհարումների հետևանքով մեծ թվով երեխաներ մնացել էին որբ և անտեր: Նրանց ճակատագիրը անհանգստացնում էր թե՛ Շուշիի և թե՛ երկրամասի հասարակությանը, հատկապես Արցախի թեմին: Հետևաբար, Շուշիում երկսեռ որբանոց-դպրոցի բացումը դարձել էր հրատապ խնդիր, որը շատ էր մտահոգում Արցախի թեմին: Շուշիում որբանոց-դպրոցի հիմնադրմանը աջակցություն էր ցույց տալիս նաև Բաքվի եկեղեցիների գործակալ Ջավեն վարդապետը: Մկրտիչ Ա Վեհափառը 1906 թ. սեպտեմբերի 9-ին ստորագրած կոնդակով շնորհակալություն էր հայտնել Ջավեն վարդապետին և «խումբ մի տիկնաց և օրիորդաց Շուշի քաղաքէ», որոնց ջանքերով բացվել էր որբանոց-դպրոցը<sup>28</sup>: Որբանոց-դպրոցին նյութական օգնություն ցույց տալու համար տեղական ուժերը ցանկություն էին հայտնում կազմակերպել երեկույթներ և հասույթը նվիրել նրան<sup>29</sup>:

Այնուամենայնիվ, Շուշիում բացված երկսեռ որբանոց-դպրոցի

---

<sup>26</sup> Նույնը, էջ 600:

<sup>27</sup> Նույնը, էջ 609:

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1830, թ. 12:

վիճակը մնում էր ծանր, որովհետև նրանք, ովքեր խոստացել էին նյութական օգնություն ցույց տալ, ոչ բոլորն էին իրենց խոստումը կատարում: Որբանոց-դպրոցի հոգաբարձության կողմից 1907 թ. նոյեմբերի 24-ին Թիֆլիսի կենտրոնական նպաստամատույց հանձնաժողովին ուղարկված դիմումի մեջ կարդում ենք. «Անցյալի տարիների հայ-թուրքական ուժասպառ պատերազմը, որ Ղարաբաղում և Ջանգեզուրում կազմում էին Կովկասի\* ամենաարյունոտ շրջանները... առաջ բերեց չքավոր ու թշուառ ընտանիքների և կատարյալ որբերի մի ստվար թիվ, որոնց խնամքը հայ հասարակութեան համար հրամայական պահանջ էր դարձել: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մի խումբ տիկնանց և օրիորդների ջանքերով Շուշիում բացվել է մեկ որբանոց-դպրոց, որը ներկայումս պահում է 33 որբեր: Բացելով որբանոց-դպրոցը՝ ձեռքի տակ ոչ մի միջոց չի եղել, այլ հույս է դրվել հասարակության խղճի վրա: Կարծեն Կովկասում սա եզակի է, երբ որբերի կրթությունն ու խնամքը միացված է»: Ապա նշվում է, որ որբանոց-դպրոցը միջոցներ չունի և օգնություն է խնդրում նպաստամատույց հանձնաժողովից<sup>30</sup>: Այդ նույն որբանոց-դպրոցի հոգաբարձուների խորհուրդը 1908 թ. մի նոր գրությամբ դարձյալ խնդրում է նույն նպաստամատույց հանձնաժողովին՝ ֆինանսական օգնություն ցույց տալու, շեշտելով, որ որբանոց-դպրոցը պահելու համար տարեկան հարկավոր է առնվազն 700 ռուբլի<sup>31</sup>: Որբանոց-դպրոցի հոգաբարձությունը համանման խնդրագրով 1907 թ. նոյեմբերի 30-ին դիմել էր Բաքու՝ Ջավեն վարդապետին<sup>32</sup>: Որ իրոք Շուշիի երկսեռ որբանոց-դպրոցը նյութական ծանր պայմաններում էր, վկայում է մահ Մ. Ղարաբեկյանի՝ 1907 թ. դեկտեմբերի 21-ին Ջավեն վարդապետին ուղարկած նամակը, որտեղ գրված է. «Մեր յոյսը միայն դրսի կենտրոնների հասարակութիւնն է, ինչպէս սկզբուն, շնորհիւ ևս Ձեր եռանդուն աջակցութեան, որբանոցը ստանում էր խոշոր նպաստներ, յոյս ունենք և այժմ, որ մեր դրսի բարեկամները կշարունակեն իրենց գործունէութիւնը և թոյլ չեն տայ մեզ ականատես լինելու, թե ինչպէս մի ու կէս տարով խնամած, որոշ սովորութիւնների ընտելացած որբերը կընկնեն կրկին փողոցի նեխող ազդեցութեան գիրկը: Դառնութիւնը ավելի մեծ չափ է ընդունում, երբ մտածում էք, թե նրանք միայն ցաւալի

---

<sup>29</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, ..., էջ 450:

\* «Կովկաս» եզրը օգտագործված է կայսերական վարչական միավորների տեսակետից:

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 217, թ. 2:

<sup>31</sup> Նույնը, թ. 109:

<sup>32</sup> Նույնը, ֆ. 57, ց. 2, գ. 1830, թ. 17 և 19:

յիշողութիւն ու ցասուն պիտի տանին իրենց սրտի խորքում: Աշխատեցէք, ի սէր Աստծոյ, որբանոցի դրութիւնը անտանելի է»<sup>33</sup>:

Արցախում տարեցտարի ընդլայնվում էր դպրոցական ցանցը: Դա պարզ երևում է թեմականի տեսուչ Ստ. Տեր-Ավետիքյանի՝ 1909 թ. օգոստոսի 4-ին կազմած ծավալուն տեղեկագրից, ըստ որի՝ այդ ժամանակ Ղարաբաղի թեմն ընդգրկում էր 226 հայ գյուղ, որտեղ կային 64 հայ եկեղեցական-ծխական դպրոցներ՝ 1907-1908 ուսումնական տարում գործած 40 դպրոցի փոխարեն: Ըստ տեսուչի բացատրության, եթե ուսուցիչների պակաս չլիներ, ապա դպրոցների թիվը կհասներ 70-ի: Նա գրում էր. «Կան գիւղեր, որտիղ հասունացած պահանջ, հաստատուն ցանկութիւն ու որոշակի նւթական միջոցնիր կան դպրոց բանալու և պահելու: Բայց նրանք տես զուրկ ին մնում դպրոցներից շնորհիւ այն բանի, որ ազատ ուսուցիչ-ուսուցչուհինիր անցիալ նոյենբերից սկսած էլ չեն գտնուում ոչ մի տեղ: Նորաբաց դպրոցնիրը գոյութիւն են ստացիլ միծ մասամբ տոյն ուսումնական տարւայ առաջին քառորդում, այն էլ սիպտիմբիր ու հոկտեմբիր ամիսներում»<sup>34</sup>:

1908-1909 ուսումնական տարում Ղարաբաղի թեմի 64 դպրոցներից 25-ը գտնվում էին Վարանդայում, 13-ը՝ Դիզակում, 7-ը՝ Խաչենում, 6-ը՝ Ջրաբերդում, 10-ը՝ Նուխիի վիճակում, 3-ը՝ Շուշի քաղաքում<sup>35</sup>: Տեսուչ Տեր-Ավետիքյանի բացատրությունից պարզվում է, որ ուսուցիչների բացակայության պատճառով ուսուցիչը կամ ուսուցչուհին դասավանդում էին միդասյան դպրոցների ծրագրով պահանջվող բոլոր առարկաները: Իսկ երկդասյան դպրոցներում, որտեղ կար մի քանի ուսուցիչ, առարկաները դասավանդում էին տարբեր ուսուցիչներ՝ ելնելով նրանց «ծիռնհատութիանց ու մասնագիտական պատրաստութիանց»: Նրանք շաբաթվա ընթացքում դասավանդում էին 24-ից մինչև 42 դասժամ, յուրաքանչյուրը՝ 40-45 րոպե տևողությամբ: Գրեթե բոլոր ուսուցիչներն էլ երիտասարդներ էին: Գոյություն ունեցող դասագրքերն ունեին թերություններ, որոնց գնահատականը թողնված էր որոշելու ապագա թեմական և համակովկասյան հայ ուսուցչական համագումարներին<sup>36</sup>:

«Արօր» թերթը 1907 թ. հայոց դպրոցներին նվիրված մի հոդվածում նշում է, որ միջոցների պակասության պատճառով փակվում են ծխական դպրոցները և թեմականի առանձին դասարաններ: Հոդվածի հեղինակը մեկնաբանում է, որ քանի թեմական և ծխական դպրոցների «տերն ու տնօրենը թեմի ու ծխի աշխատաւոր ժողովուրդը չէ, այսինքն՝

<sup>33</sup> Նույնը, ք. 18:

<sup>34</sup> Նույնը, ք. 56, գ. 15, գ. 543, ք. 1:

<sup>35</sup> Նույնը:

<sup>36</sup> Նույնը, ք. 33-35:

նա, որը անհրաժեշտութեան ու կարիք է զգում այդպիսի դպրոցների, որովհետև իր որդիներին նրանք ռեալականում կամ գեմնազիօնում ուսում տալ չեն կարող, քանի որ դպրոցների բախտը և լինել-չլինելը կապված կը մնայ պատահական բարեգործութիւնների հետ, քանի որ յոյս կը դնեն դպրոցը մի կերպ քաշ տալ զանազան հանգանակութիւնների միջոցով, որի յաջողութիւնը սակայն կախած է տարւայ եղանակներից - մենք միշտ ականատես կլինենք կրթական գործի այս տիպի «առաջխաղութեանը»<sup>37</sup>: Հեղինակն առաջարկում էր արմատական փոփոխութիւնների ենթարկել «անախրոնիզմ դարձած կարգերը»: Նա գտնում էր, որ դպրոցների իրավունքները պետք է տրվեն աշխատավորներին, որոնք «պիտի դառնան տեր ու տնօրէն բոլոր թեմական թէ ծխական դպրոցների, որովհետև միայն նա կարիք ունի ներկա հասարակարգում այդպիսի ուսումնարանների և որովհետև կարիք ունի, ուրեմն և չափազանց սրտացավորեն և բարեխիղճ կը վերաբերվի դպրոցներին»: Եվ ապա՝ «Մինչև այդպես չլինի, միշտ վտանգված կլինի մեր դպրոցների գոյութիւնը և ժամանակով դասարանների տեղ ամբողջ դպրոցներ կունենանք փակված»: Հեղինակի կարծիքով՝ «Հարուստները չեն մտածում, որովհետև նրանց երեխաները սովորում են պետականներում (ռեալական, գեմնազիա): Պարզ է, որ նրանք չեն մտածի մյուս դպրոցների զարգացման ու գոյութեան համար: Նրանք նաև մտածում են, որ շատ անհանգիստ տարրեր դուրս են գալիս թեմականից, հետևապես նրա գոյութիւնը ցանկալի չէ: Ծանր վիճակում են նաև Շուշու ծխական դպրոցները...»<sup>38</sup>:

Ցարական հակահայկական քաղաքականության հետևանքով հարյուրավոր ուսուցիչներ մնում էին անգործ և ծանր պայմաններում: Արցախի թեմում և Էջմիածնում բազմաթիվ նամակ-բողոքներ էին ստանում նման ուսուցիչներից, որոնց հեղինակները աշխատանք և օգնություն էին խնդրում: Եվ չնայած դրան՝ արցախցիները չէին մոռանում այս կամ այն անվանի մանկավարժներին մեծարել: 1910 թ. լրանում էր Գաբրիել վարժապետ Ղուլիքևիյանի մանկավարժական գործունեության 35-ամյակը: Նա ծնվել է 1849 թ. Արցախի Խնձրիստան գյուղում: Վեց-յոթ տարեկան հասակում այբուբենը սովորել է հորեղբոր հարս Թամամի մոտ: Ամռանը անասուններ էր արածեցնում, իսկ ձմռանը հաճախում էր գյուղի քահանայի դպրոցը: Գաբրիելի մանրավաճառ փեսան անգրագետ էր և հաճախ կորցնում էր ապառիկի հաշիվները: Այդ հանգամանքը նպաստում էր Գաբրիելի՝ ուսում ստանալու գործին: Գալով Շուշի՝ նա մտնում է թեմականը: 1872 թ. ավարտելուց հետո

<sup>37</sup> «Արօր», N 6, 8.09.1907:

<sup>38</sup> Նույնը:

ծանոթ Հարունանց ապոր մոտ աշխատում էր որպես գործակատար: Նրա նախկին ուսուցիչ Մաղաքիա Պլուզյանը Գաբրիելին հրավիրում է իր մոտ և իր ժամերի մի մասը տալիս նրան: Գաբրիելն անցնում է մանկավարժական աշխատանքի: Նա նաև մասնավոր դասեր էր տալիս: Վերջապես 1874 թ.՝ Խորեն վարդապետ Ստեփանեի տեսչության օրոք, Գաբրիելը հրավիրվում է թեմական դպրոց: Մինևույն ժամանակ, դասավանդում էր Մարիամյան օրիորդաց դպրոցում: Աշխատել է նաև Նուխու հայոց ծխական երկդասյա դպրոցում: Այնուհետև՝ 35 տարի Շուշիի թեմականում: Իր աշխատանքի ընթացքում ունեցել է 16 տեսուչներ: Եվ բոլորն էլ գոհ են եղել Գաբրիել վարժապետի նվիրյալ աշխատանքից<sup>39</sup>: «Եվ ահա,- նկարագրում է թերթը,- 1910 թ. մարտի 14-ին տեսուչ Ավ. Տեր-Պողոսյանը և ծերունի ուսուցիչ պ. Գյուլզարյանը հոբեյանին թևանցուկ արած, երեկոյան ժամը 8-ին մտնում են թեմական դպրոցի դահլիճ»: Այն թնդաց ծափահարությունից: Ելույթ ունենալով՝ տեսուչը ասաց. «Բազումք են կոչեալ, սակաւք ընտրեալ և Դուք, վարժապետ, այդ ընտրեալներից էք, որ բրուտի նման մտեղեն զանգվածները Ձեր ձեռքին շունչ եք տվել նրանց: Յարգանք Ձեզ Ձեր այդ ազնիւ աշխատանքի համար և շնորհակալութիւն Ձեզ, որպես դպրոցիս պաշտոնյայի: Ապրեք, դեռ երկար ապրեք, որպեսզի նոր Գաբրիել վարժապետներ յաջորդեն Ձեզ...»<sup>40</sup>:

Հետո արտահայտվեցին շատերը՝ Երևանից, Թիֆլիսից, Բաքվից, Գորիսից եկած հյուրերը, տարբեր թերթերի ներկայացուցիչներ, ընթերցվեցին նամակներ և հեռագրեր<sup>41</sup>:

Արխիվային նյութերում հարուստ տեղեկություններ կան Արցախի թեմի դպրոցական գործունեության և, ընդհանրապես, երկրամասի դպրոցների մասին: Ըստ այդ նյութերի՝ արդեն 1910 թ. Շուշիում կային 6, Վարանդայում՝ 27, Խաչենում՝ 7, Դիզակում՝ 17, Ջրաբերդում՝ 9, Նուխիի շրջանում՝ 8 դպրոցներ, բոլորը միասին 75<sup>42</sup>: Այդ դպրոցների մեծամասնությունը նյութական կարիքի մեջ էին: 1910 թ. մարտի 3-ին Աշոտ եպիսկոպոսի՝ կաթողիկոսին ուղարկած նամակում նշված էր, որ միջոցները չեն հերիքում, աշխատավարձ չի վճարվում: Թեմակալը խնդրում է կաթողիկոսի աջակցությունը<sup>43</sup>: Թե հայթայթվող միջոցներն ինչ դժվարությամբ էին ձեռք բերվում, խոսվում է Մատթեոս Բ կաթողիկոսին Ղարաբաղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանի գրած նամակում<sup>44</sup>:

Ըստ Ստ. Տեր-Ավետիքյանի կազմած ծխական դպրոցների ցուցակի՝

<sup>39</sup> «Գավառ» (Գորիս), N 11, 14.03.1910:

<sup>40</sup> Նույնը, N 12, 21.03.1910:

<sup>41</sup> Նույնը, N 13, 28.03.1910:

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 905, թ. 14-15:

այն 1909-1910 ուսումնական տարում ունեւ հետևյալ պատկերը:

Շրջանները	Դպրոցների թիվը	Աշակերտ. թիվը	որից տղա	ուսուցիչ. թիվը
Շուշի	4	439	211	13
Վարանդա	25	1513	1021	28
Դիզակ	17	1112	818	25
Խաչեն	5	277	212	7
Զրաբերդ	7	308	181	7
Նուխիի վիճակ	10	857	593	28
Ընդամենը	68	4506	3036	108

Ծխական դպրոցների ծախսերը կազմում էին 50259 ռ., յուրաքանչյուր սովորողի հաշվով 11 ռ. 15 կ.<sup>45</sup>: Թեմի բնակավայրերում գործող 68 հայկական ծխական դպրոցներից 60-ը գործում էին գյուղերում, 8-ը՝ Շուշիում, Նուխիում և Խանքենդում: Գյուղերում գործում էին նաև 27 պետական տարրական դպրոցներ: Ընդհանուր առմամբ, 137 գյուղ գրկված էր դպրոցներից, որի հիմնական պատճառը, ըստ թեմական տեսուչի բացատրության, չքավորությունն էր և հարկերով ծանրաբեռնված լինելը: Մեկ երեխայի ուսուցման ծախսը տարեկան կազմում էր 12 ռ.: Գյուղական տնտեսությունների 30 տոկոսի համար այդ չափը շատ ծանր էր: Բացի այդ, չկային դպրոցական շենքեր, շատ գյուղերում դեռևս չէին զգում կրթության արժեքն ու կարևորությունը: Շատ ընտանիքներ աղջիկներին կրթություն տալը համարում էին ավելորդ, բազմաթիվ մայրեր բացարձակ հակառակ էին աղջիկներին կրթություն տալուն: Բնակչության շրջանում կրթության վերաբերյալ քարոզ չէր տարվում<sup>46</sup>:

Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը 1909 թ. օգոստոսի 19-ին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղարկած՝ թեմի ընդհանուր դրության վերաբերյալ տեղեկագրում հաղորդում էր, որ ցարի՝ օգոստոսի 1-ի հրամանից հետո Ղարաբաղում դպրոցական գործի

<sup>43</sup> Նույնը, թ. 20:

<sup>44</sup> Նույնը, թ. 27-28:

<sup>45</sup> Նույնը, գ. 932, թ. 18, «Ղարաբաղ», N 1, 1.01.1912:

համար 5000 դրամ է նվիրաբերել Ներսիսյան դպրանոցը, որոշ օգնություն են ցույց տվել նաև դարաբաղցի մի քանի մեծատուններ: Բացի այդ, հանգանակություն է կատարվել 24 հազար ռուբլի: Թեմակալը բողոքում էր, որ 1905-1906 ուսումնական տարում բարձր դասարանների աշակերտները հանդես են եկել իրենց «դասադուլներով» և բազմապիսի «պահանջներով», «որոնց շնորհիլ դպրոցական խաղաղ կեանքը խանգարուեալ, ուսումնական-կրթական մասը տուժել և յառաջադիմութիւնն ընդհանրապէս կաղացել է»<sup>47</sup>: «Անխռով չէր անցել նաև 1906-1907 ուսումնական տարվա դպրոցական կյանքը,- շարունակում է թեմակալը,- աշակերտական խլրտունների շնորհիլ պարապմունքները շաբաթներով դադարել են, իսկ ուսումնական տարուայ վերջը Ե և Ջ դասարանները փակուել են յաճախակի կրկնուող այդ խռովութիւններին վերջ տալու նպատակով»: «Բացի այդ, դեռ 1907-1908 ուսումնական տարին չը սկսած՝ բանտարկուել է դպրոցանոցի տեսուչը, նրա հետ և մի քանի ուսուցիչներ, ուստի և դպրոցական այդ տարին էլ անկանոն սկզբնաւորութիւն է ստացել»<sup>48</sup>: Այնուամենայնիվ, այդ ուսումնական տարին խաղաղ է անցել: Առավել խաղաղ է անցել 1908-1909 ուսումնական տարին՝ շնորհիվ նոր տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի ցուցաբերած ջանքերի: Թեմակալը բողոքում էր, որ թեմականը չունի որևէ պատմական քարտեզ, իսկ աշխարհագրական քարտեզներն էլ բանի պետք չեն, այսինքն՝ քրքրվել են: Թեմակալի հաղորդումից նաև իմանում ենք, որ ցարի հրամանից հետո 1909 թ. օգոստոսին բացվել էին 17 ծխական դպրոցներ, որոնց օգնություն էին ցույց տալիս հայրենակցական միությունները, հատկապես Բաքվի կուլտուրական միությունը<sup>49</sup>:

Հենց Աշոտ եպիսկոպոսի օրոք ստեղծվեց թեմական տեսչությունը, որը քիչ դեր չունեցավ Արցախի դպրոցների զարգացման գործում: Նրա օրոք նաև ծնվեց տարրական կրթության պարտադիր լինելու գաղափարը: Որոշվեց, որ դպրոցական տուրքը պետք է լիներ աճողական: Դրա դեմ արտահայտվեցին ունևորները և վաշխառուները: Շատ ունեցողը պետք է շատ տուրք տար, քիչ ունեցողը՝ քիչ: Հենց դա էլ հարուստները չէին ցանկանում ընդունել<sup>50</sup>:

Թեմում աշակերտների ուսումնավարձը կազմում էր 4-8 ռուբլի, իսկ այն դպրոցներում, որտեղ դրսից որևէ օգնություն չկար, 8-12 ռուբլի: Այդ պայմաններում դպրոցը արցախցի շատ երեխաների համար մնում էր

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 18:

<sup>47</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 468:

<sup>48</sup> Նույնը, էջ 469:

<sup>49</sup> Նույնը, էջ 470:

անմատչելի, և հայկական գյուղերից շատերը իսպառ զուրկ էին մնում դպրոցներից, որը ցավ էր պատճառում թեմակալին<sup>50</sup>:

Աշոտ եպիսկոպոսի՝ կաթողիկոսին ուղարկած զեկուցագրից նաև երևում է, որ, սկսած XIX դարի 80-90-ական թվականներից, գյուղացիներից հավաքում էին պետական դպրոցական տուրք: Օրինակ՝ հաչենի 5 հայ գյուղեր պարտադիր դպրոցական տուրք էին տալիս՝ տարեկան 150-ից մինչև 250 ռ.: հօգուտ Դաշբուլաղ գյուղի պետական միդասյան դպրոցի: Դրա համար էլ, ըստ թեմակալի բացատրության, այդ գյուղերը նյութապես հնարավորություն չունեին իրենց գյուղերում բացելու սեփական ծխական դպրոց: Վարանդայի գավառում 10-12 գյուղեր նման հարկեր մուծում էին պետական դպրոցներ ունեցող 5 գյուղերի օգտին, դրա համար էլ այդ գյուղերը դպրոց չունեին: «Այսպիսով,- եզրակացնում էր թեմակալը,- 100-ից ավելի հայ գիւղեր Ղարաբաղի թեմում ծանրաբեռնուած են պարտադիր տուրքերով յօգուտ պետական դպրոցների. այդ տուրքերը առանձնապէս գանձուող հողային ու «զեմսկի» տուրքերը չեն, այլ յատուկ սահմանուած գիւղացիների իրենց համախօսականներով (ստիպմամբ կազմուած) դպրոցական տուրքեր, որոնք գոյութիւն են ստացել այն ժամանակներում, երբ հայ դպրոցները փակ են եղել»: Թեմակալը եզրակացնում է, որ եթե դա գոյություն չունենար, ապա հայ ժողովրդի կրթության գործը իր մայրենի դպրոցներում կլիներ ոչ թե 65, այլ առնվազն 100: «Գոյութիւն ունեցող պետական դպրոցներում,- շարունակում է թեմակալը,- կրօնի և հայոց լեզուի դասատուութիւնը, համաձայն պետութիւնից սահմանուած օրէնքի, ենթարկոււմ է հայ հոգեւոր վարչութեան վերահսկողութեան: Այդ պատճառով էլ թեմական տեսուչը այցելոււմ էր նաև թեմական, դպրոցները, վերստուգում պարապմունքները, կրօնից ու հայոց լեզուից ցուցմունքներ ու խորհուրդներ տալիս դասատուներին»: Այդ առարկաները դասավանդում էին տեղական քահանաները<sup>52</sup>:

Ըստ պահպանվող նյութերի՝ թեմի բոլոր դպրոցներն ունեին ծրագրեր, և դասերը պարապում էին ըստ մանկավարժական գիտության պահանջների: Նորաբաց դպրոցներում աշխատելու համար դասատուներ էին հրավիրվում, որոնք ոչ համապատասխան կրթություն ունեցող մարդիկ էին: Պատահում էր, որ ուսուցիչներին վարձատրում էին կենսական մթերատեսակներով կամ էլ ամսական տալիս էին 5-12 ռ. աշխատավարձ: Ոչ օրինական ձևով բացված դպրոցները

<sup>50</sup> Նույնը, էջ 471-472:

<sup>51</sup> Նույնը:

<sup>52</sup> Նույնը, էջ 473:

բացահայտվելու դեպքում փակվում էին թեմի կողմից: Վերջին երկու տարում թեմական տեսչությունը Ղարաբաղում փակել էր 10-15 նման դպրոցներ: Թեմակալը եզրակացնում էր, որ եթե հանդուրժեին նման դպրոցները, ապա թեմը հիմա կունենար 100-120 տարրական դպրոցներ: Աշոտ եպիսկոպոսը գովեստով էր խոսում թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանի մասին<sup>53</sup>, որը լայն գործունեություն էր ծավալել Ղարաբաղի դպրոցներում:

Հետագա տարիներին, մանավանդ թեմի կառավարիչ Ջավեն վարդապետի օրոք, դանդաղ էր ընդլայնվում Արցախի դպրոցական ցանցը: «Ղարաբաղ» թերթում տպագրված «Կրթական գործը անցյալից» հոդվածում հեղինակ Ա. Գյանջիցյանը շեշտում է, թե ինչու Ղարաբաղում հետ էր մնում կրթական գործը: Նա բացատրում է, որ առաջ դպրոցական գործը գտնվում էր հոգևորականների ձեռքին, որովհետև նրանք էին գրագետ: Ավելի վատ էր պարսիկների տիրապետության օրոք: Ռուսաց տիրապետության ժամանակ հայերն ունեին լայն հնարավորություններ: Դանդաղորեն բացվում էին եկեղեցական և աշխարհիկ դպրոցներ: Եթե հայ հարուստը ձգտում էր պետական դպրոց, ապա հայ աղքատը ստիպված էր ապավինել հայ ծխական դպրոցին: Հեղինակը նշում է, որ 1911 թ. Արցախի թեմի 60 դպրոցներից 50-ը միդասյա են: Դպրոցներում սովորում են 4093 աշակերտներ, որոնց դասավանդում են 97 ուսուցիչներ: Այդ ժամանակ թեմականում սովորում էր 289 աշակերտ, Մարիամյան օրիորդաց դպրոցում՝ 269, Վերին թաղի Թաղևոսյան երկսեռ դպրոցում՝ 135, Ազուլեցոց ծխական դպրոցում՝ 122<sup>54</sup>: Հողվածի հեղինակը հանգամանորեն վերլուծել է նաև գավառներում տիրող կրթական գործը՝ իր բոլոր դրական և բացասական կողմերով<sup>55</sup>: Այդ դպրոցներից շատերը, ինչպես մշակել է, գտնվում էին դժվարին վիճակում: Օրինակ՝ ճարտարի դպրոցը, ըստ ժամանակի մանուլի նկարագրության, ամենկարագրելի աղքատ վիճակում էր: Այդ ծխական միդասյա դպրոցը չնայած ուներ սեփական շենք, սակայն ընդամենը մի քանի կոտրված նստատեղանով և մեկ գրատախտակով: Մոտ 500 ծուխ ունեցող գյուղի համար պատիվ չէր դպրոցը պահել նման ողբերգական վիճակում: Դպրոցն իր գոյությունը քարշ էր տալիս ծխական տուրքով<sup>56</sup>: Արցախի թեմի առաջնորդ Ջավեն վարդապետը 1911 թ. օգոստոսի 5-ին Գևորգ արքեպիսկոպոսին ուղարկած նամակում բողոքում է Արցախի

<sup>53</sup> Ստեփան Տեր-Ավետիքյանը ծնունդով Բանանց գյուղից էր, ավարտել էր Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը, երկար տարիներ աշխատել պետական և հայոց դպրոցներում (Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 474):

<sup>54</sup> «Ղարաբաղ», N 2, 20.11.1911:

<sup>55</sup> Նույնը, N 3, 24.11.1911:

դպրոցներում ստեղծված ծանր վիճակի մասին՝ նշելով, որ «Ղարաբաղի ընդարձակ թեմը մօտ երկու տարի է զրկուած թեմական տեսչից, ուստի և կրթական գործը զգալի չափով թուլացել է, շատ տեղեր դպրոցները փակուել են և ուսուցիչները հեռացել, որովհետև անմիջական հսկող չի եղել, ինչպես ուսուցիչների, այնպես էլ հոգաբարձութիւնների վերայ»<sup>57</sup>: Թեմականը խնդրում էր այդ պաշտոնում նշանակել Առաքել Առաքելյանին:

Ծնունդով արցախցի հարուստներից ոմանք մտածում էին հայրենի երկրամասում բացել դպրոցներ: Օրինակ՝ ժամհարյան եղբայրները որոշել էին իրենց մահացած եղբոր հիշատակին Ղարաբաղում բացել գյուղատնտեսական դպրոց: Դրա համար մտադիր էին հատկացնել մեկ միլիոն ռուբլի: Ենթադրվում էր այն կառուցել Խոնաշենում, Ամարասում, Առաջածորում, Ջանյաթաղում կամ այլ տեղ, միայն թե այն լիներ Ղարաբաղի տարածքում<sup>58</sup>: ժամհարյան եղբայրների այդ գաղափարն արժանացել էր շատերի համակրանքին<sup>59</sup>:

Ինչպես ակնարկվեց, 1910 թվականից հետո Արցախի եկեղեցական ժխական դպրոցների թիվը նվազում էր: Արդեն 1910-1911 ուսումնական տարում ժխական դպրոցների թիվը հասել էր 50-ի: Հաջորդ ուսումնական տարում դպրոցների թիվն ավելացել էր ընդամենը հինգով<sup>60</sup>: Եվ իբր այդ տատանման պատճառը թեմական տեսուչ չունենալն էր, որն այնքան էլ համոզիչ չէր:

Լևոն Ջառափյանը, իր մի հոդվածում վերլուծելով Արցախի գյուղական դպրոցների ընդհանուր վիճակը, շեշտել է, որ գյուղական դպրոցների ամբողջ ծանրությունն ընկած է ուսուցիչների վրա, որոնք և՛ ուսուցիչ են, և՛ հոգաբարձու, և՛ տուրք հավաքող, ինչպես նաև ամեն մեկի ձեռքին քմահաճույքի խաղալիք: «Գյուղում,- շարունակում է հեղինակը,- ամեն ինչ կատարվում է գյուղի ազդեցիկների և վաշխառուների ձեռքով»: Ուսուցիչն իր դառն աշխատանքի վարձատրությունն ստանալու համար ստիպված էր հարյուրավոր անգամ խնդրել նրանց, «դրա հետ միասին հազար ու մի վիրավորանք ստանալ և վերջն էլ ռոճիկի մի խոշոր մասից ձեռք վերցնելով, ստիպված է լինում դառնացած սրտով հեռանալ գյուղից: Ուսուցիչը հաճախ ինքն է ստիպված լինում իր ռոճիկը հավաքել: Այդ պատճառով էլ դպրոցները գյուղերում կորցրել են իրենց հարգանքը... Գյուղական դպրոցների դրությունը այնքան խայտառակ է, որ բոլորի մեջ էլ

<sup>56</sup> Լույնը, N 6, 4.12.1911:

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 245, թ. 12:

<sup>58</sup> «Ղարաբաղ», N 18, 8.03.1912:

<sup>59</sup> «Հորիզոն», N 95, 18.05.1912:

<sup>60</sup> «Ղարաբաղ», N 46, 28.06.1912:

տրամադրություն է նկատվում խմբովին հրաժարվել դպրոցներից»<sup>61</sup>:

Թեմականում առաջադիմությունը խիստ ցածր էր: Մի խումբ ուսուցիչների աշխատանքից ազատվելը, ըստ էության, բացասական հետևանք թողեց ուսումնադաստիարակչական աշխատանքների վրա: Իսկ ի՞նչ էին անում տեսուչն ու հոգաբարձուները: Վերջինս նույնիսկ որոշում ընդունեց արձակել բոլոր ուսուցիչներին: Պարզվեց, որ 231 աշակերտներից ավարտել կամ հաջորդ դասարան էին փոխադրվել ընդամենը 74-ը: Աշակերտների գիտելիքներն առանձնապես շատ ցածր էին հայերենից: Ուսուցիչները հաճախ ինքնական փոփոխություններ էին կատարում ծրագրերում<sup>62</sup>, որն անթույլատրելի էր: Եվ ահա Վեհափառ կաթողիկոսի հրամանագրով 3 տարի ժամանակով թեմականի տեսուչ նշանակվեց բժ. Երամիշյանը, և դրանով իսկ հաստատվեց հոգաբարձուների որոշումը ուսուցչական կազմը արձակելու մասին: Նոր տեսչին հաջողվեց կարգավորել թեմականի աշխատանքները և աստիճանաբար վերականգնել նախկին հեղինակությունը:

Արցախ-Ղարաբաղում և ամբողջ թեմի կյանքում կարևոր իրադարձություն էր թեմականի 75-ամյակի նշումը: Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ Ջավեն վարդապետը 1912 թ. փետրվարի 15-ին թիվ 338 հայտարարությամբ նշել է, որ ստիպված դիմում է Ղարաբաղի բարերարներին և ունևորներին ու նրանց ուշադրությունը հրավիրում մոռացության մատնված ուսումնական հաստատությունների վրա: Մինչ այդ Շուշիի քաղաքագլուխ և թեմականի հոգաբարձու Գ. Քալանթարյանը, ճարտարապետ և հոգաբարձու Ղոնղաղսազյանցի մասնակցությամբ, Թիֆլիսում մասնավոր խորհրդակցություն էր անցկացրել ծագումով Ղարաբաղի ունևորներ Դավիթ Ավան Յուզբաշյանի, Զովսեփ Խնունցի, Մնացական Խնունցի, Մովսես բեկ Յուզբաշյանի, Ս. Կաֆյանցի և ուրիշների հետ ու ստացել նրանց համաձայնությունը Շուշիի թեմականի 75-ամյակը նշելու համար: Ղարաբաղի թեմակալի պաշտոնակատարը խնդրում էր տեղակալ տ.տ. Գևորգ սրբազան արքեպիսկոպոսին իրեն իրավունք տալ գնալու Բաքու, Մոսկվա, Պետերբուրգ և այլ քաղաքներ ու այդ նպատակով կատարելու հանգանակություն<sup>63</sup>:

Թեմականի 75-ամյակը կազմակերպելու համար ստեղծվում է հանձնաժողով՝ Ջավեն վարդապետի գլխավորությամբ: Հանձնաժողովներ ստեղծվել էին նաև Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում և այլ տեղերում: Որոշվել էր հոբելյանը նշել 1913 թ.

<sup>61</sup> «Հորիզոն», N 164, 29.07.1910:

<sup>62</sup> Նույնը, N 174, 10.08.1910:

օգոստոսի 10-11-ը: Մի շարք հայեր կատարել էին նվիրատվություններ: Օրինակ՝ մոսկվաբնակ շուշեցի առևտրական Բաղդասար Արզումանյանը նվիրել էր 200 000 ռուբլի<sup>64</sup>:

1912 թ. փետրվարի 17-ին կաթողիկոսի տեղակալի կողմից Ղարաբաղի թեմի կառավարիչ Ջավեն վարդապետին հանձնարարվել էր Ղարաբաղի թեմական դպրոցի հոբեյլանի առիթով կատարել ձեռնարկումներ<sup>65</sup>: Հոբեյլանական հանձնաժողովի նախագահ Ջավեն վարդապետը, հանձնաժողովի անդամների ստորագրությամբ, Նորին Վեհափառության Տ.Տ. Գևորգ Ե-ին ուղարկել էր հետևյալ խնդրագիրը.

*«Վեհափառ Տէր*

*Ղարաբաղի Գ.Թ.Հ դպրանոցի կենտրոնական յօբիւեանական յանձնաժողովը պարտք է համարում իւր որդիական անկիղծ երախտագիտութիան զգացմունքը նատուցանելու Ձերդ Ս. Օծութիան թեմական դպրանոցի յօբելիանին ցույց տւած Հայրապետական հոգատութեան և յատուկ ուշադրութիան համար:*

*Ղարաբաղի հայ ժողովուրդը վաղուց զրկւած է իւր Հայրապետների հովևական այցիլութիւնից ու հոգևոր մխիթարութիւնից: Վաղուց ակնկալիլ է նա իւր մէջ տիսնիլ Մայր Աթոռի Աստուծընտիր Գահակալին. համբուրիլ նրա Ս. Աջը և ստանալ նրա Հայրապետական օրհնանքը:*

*Այժմ, երբ ժողովուրդը պատրաստոււմ է սրտի բիրկրանքով տօնիլու իւր մտաւոր-բարոյական դաստիարակութիան սիրելի հիմնարկութիւն 75-ամիայ պատկառիլի գոյութիան հանդէսը որդիական ակնածութիանբ խոնարհաբար խնդրում է Ձիրդ Ս. Օծութիան Հայրապետական շնորհ անիլ՝ այցիլիլ նրա և առաւիլ փառաւոր ու շքիղ դարձնիլ այդ հանդէսն ի մխիթարութիւն ժողովրդիան:*

*Նախագահ՝ Ջավեն վարդապետ  
Անդամներ՝ 20 հոգու ստորագրություն»<sup>66</sup>:*

Արցախի թեմի առաջարկությամբ Լեոն գրում է թեմական դպրոցի պատմությունը՝ սկսած 1838-ից մինչև 1913 թվականը: Այդ ժամանակաշրջանում թեմականն ունեցել է 28 տեսուչ, և այնտեղ աշխատել են շատ անվանի մանկավարժներ: Թեմական դպրոցի կյանքում թեմակալ առաջնորդները, սկսած թեմակալ Բաղդասար Մետրոպոլիտից մինչև Վահան Տեր-Գրիգորյանը, մեծ դեր են խաղացել: Եվ երբ Բաբվի եկեղեցիների գործակալ Ջավեն վարդապետը

<sup>63</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 963, թ. 3:

<sup>64</sup> Նույնը, գ. 1003, թ. 2:

<sup>65</sup> «Արարատ», 1912, N 9, էջ 196:

<sup>66</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, մաս I, գ. 1003, թ. 19, «Արարատ», 1913, N 2-3, էջ 688:

նշանակվել էր Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ, նրա հիմնական հոգսերից էր թեմական դպրոցի 75-ամյակի հեղինակավոր նշումը: «Քայքայված և ավերված մի քաղաք,- գրում է Լեօ-ն,- ստանում է կրթական գործի համար մոտ կես միլիոն ռուբլի»։ Ապա պատմում է, որ տոնախմբությունները սկսվել են 1913 թ. օգոստոսի 4-ին: Այդ օրը Գանձասարի վանքում հոգեհանգիստ կատարվեց Բաղդասար Մետրոպոլիտ Չասան-Ջալալյանի գերեզմանի վրա՝ Ջավեն և Բաբկեն վարդապետների, թեմական դպրոցի հոգաբարձության, հոբեյանական հանձնաժողովի, պատգամավորների և գյուղացիների մեծ բազմության ներկայությամբ: Այնուհետև Շուշիում տեղի է ունենում հոբեյանական շաբաթ: Կազմակերպվում են գրական և երաժշտական երեկույթներ ու դասախոսություններ: Ռուսաստանի տարբեր տեղերից, մանավանդ Անդրկովկասից, պատվիրակություններ էին եկել տոնակատարությանը մասնակցելու համար<sup>67</sup>: Ի միջի այլոց, Յովակ Ստեփանյանը, որը մասնակցել է հոբեյանական տոնակատարությանը, հետագայում հիշել է. Թիֆլիսից եկել էին Լեօ-ն, Յամբարձում Առաքելյանը, Տիգրան Նազարյանը, Բաբվից՝ Արամայիսը (Միսակ Տեր-Դանիելյան), Միտսարը (Միրզա Տեր-Սարգսյան), Տիգրան վարժապետ Տեր-Գրիգորյանը և ուրիշներ: Մի շքեղ ուխտագնացություն կատարեցին դեպի Գանձասարի պատմական վանքը, ուր գտնվում էր թեմականի հիմնադիր Բաղդասար Մետրոպոլիտի գերեզմանը: Յոբեյանից առաջ Ջավեն վարդապետը գնացել էր Մոսկվա, տեսակցվել բարերար հարուստ Բաղդասար Արզումանյանի հետ, մոտ 200 հազար ռուբլու նվիրատվություն հաջողացրել, ապա եղբայրներ Ղուկասյանների հոյակապ տունը հատկացրեց Մարիամյան օրհորդաց դպրոցին՝ մինևույն ժամանակ նվիրաբերելով 200 հազար ռուբլի<sup>68</sup>:

Լեօ-ն գրել է, որ բուն տոնակատարությունը բաղկացած էր եկեղեցական հանդեսներից: Օգոստոսի 10-ին թափորով հոգեհանգիստ է կատարվել Բաղդասար մետրոպոլիտի հոր՝ Դավիթ-բեկ Չասան-Ջալալյանի գերեզմանոցում, Շուշիի հին հանգստարանում: Յաջորդ օրը՝ օգոստոսի 11-ին, պատարագ է մատուցվել Ղազանչեցոց եկեղեցում, որից հետո կատարվել էին Կայսերական և Յայրապետական մաղթանքներ: Թափորն անցնելով փողոցներով՝ հասնում է առաջնորդարան, որտեղ՝ օրհորդաց դպրոցի բակում, կատարվում է հանդես: Այստեղ Ջավեն վարդապետն ընթերցում է Գևորգ կաթողիկոսի օրհնության կոմդակը: Այնուհետև ընթերցվում են շնորհավորանքներն ու ուղերձները, որոնց թիվը հասնում էր մի քանի

<sup>67</sup> Լեօ, նշվ. աշխ., էջ 637:

<sup>68</sup> «Յայրենիք», Բոստոն, 1964, N 1, էջ 1-2:

հարյուրի:

Բաքվից բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանը հեռագրել է. «Ողջունում եմ Արցախի հոգևոր բարոյական լուսավորության պանծալի օջախի նշանակալից հոբելյանը, ցանկանում եմ երկար տարիներ արդյունավետ գործունեություն»<sup>69</sup>: Բանաստեղծ Յովհաննես Թումանյանը Վրաստանից հեռագրել է. «Այսօր հայոց պատմական Ղարաբաղը հայրենի բարձունքներում այնպես ուժգնորեն ամրացնում է իր հոգևոր կրթության միջնաբերդը՝ տոնելով նրա գոյության 75-ամյակը, ես հրճվում եմ: Կեցցե պանծալի Ղարաբաղը: Թող նրա որդիները լինեն բարձր և անշարժ, ինչպես նրա հսկայական լեռներն են»<sup>70</sup>: Ահա և Շիրվանզադեի հեռագիրը Դիլիջանից. «Անկեղծ ցավում եմ, որ չեմ կարող մասնակցել դպրանոցի հոբելյանի հանդեսին: Յայտնեցեք ողջույններս և լավագույն ցանկություններս: Ձեր ղեկավարած դպրանոցին երկար տարիների բարգավաճում»<sup>71</sup>:

Թեմակահի դահլիճում տրվում է մեծ ճաշ, որին մասնակցում է մոտ 300 հոգի<sup>72</sup>:

---

<sup>69</sup> Մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի, թուղթ 3, վավ. 8, ք. 168:

<sup>70</sup> Նույնը:

<sup>71</sup> Նույնը:

<sup>72</sup> Լեօ, նշվ. աշխ., էջ 639:

\*\*\*

1908-1909 թվականներին Արցախում թերևս նկատվում էր տնտեսական և հասարակական կյանքի որոշ աշխուժացում: Քայլեր ձեռնարկվեցին մետաքսագործության զարգացման, խմիչքների և սպիրտի արտադրության, առևտրի զարգացման, արհեստագործության ընդլայնման, գյուղատնտեսությունն առաջ մղելու ուղղությամբ:

Ավատատիրական կարգերի մնացուկները դեռ պահպանվում էին, որոնք իրենց բացասական հետևանքներն էին թողել երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Ակնհայտ է, որ 1870 թվականից հետո, երբ օրենք էր ընդունվել Անդրկովկասում ավատատիրական իրավունքների վերացման և հողի հետգնման մասին, մինչև 1912թ. Արցախում չափազանց քիչ տնտեսություններ էին ազատվել ճորտատիրությունից: Նրանց թիվը կազմում էր հազիվ 4-5 տոկոս: 1912թ. դեկտեմբերի 20-ի օրենքով Անդրկովկասի 5 նահանգներում Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բաքվի, 1913թ. հունվարի 1-ից գյուղացիները դառնում էին իրենց հողաբաժինների տերը՝ սեփականատեր գյուղացիներին հավասար իրավունքներով: Այս օրենքը տարածվում էր նաև ուղղափառ և լուսավորչական եկեղեցապատկան գյուղացիների վրա: Առանց հողատերերին վճարելու՝ գյուղացիներին էին անցնում սեփականության իրավունքով այն հողերը, որոնց համար օրենքով ոչ մի պարտավորություն չէր նշանակված: Դրանք են տնատեղերը և բոլոր այգիները<sup>73</sup>:

Այդ օրենքից հետո գյուղական կյանքում նկատվում էր աշխուժություն: Գյուղացիները, հացահատիկի արտադրությունից և անասնապահությունից բացի, զբաղվում էին նաև խմիչքների արտադրությամբ և շերամապահությամբ: Սակայն արցախցիների համար կար մի ընդհանուր երևույթ, որը հարվածում էր նրանց. դա տարագրությունն էր: Ինչպես ազգամիջյան ընդհարումների տարիներին, այնպես էլ հաջորդ տասնամյակում տարագրությունը չէր նվազում: Հիմնական պատճառը թերևս այն էր, որ իբր հողատարածքները չէին հերիքում 5-10 շունչ ունեցող ընտանիքների հոգսերը ծածկելուն: Դա արդարացուցիչ չէր: Չէ՞ որ նման վիճակ էր նաև նախորդ դարերում, եթե չհաշվենք թուրք-պարսիկների ճնշումներից փրկվելու համար անհրաժեշտ հեռանալը: XIX դարում հայրենի հողից այդպիսի զանգվածային հեռացում տեղի չէր ունեցել: Դրան ավելացնենք նաև այն, որ թե՛ Շուշի քաղաքում և թե՛ գյուղերում ազգամիջյան ընդհարումների ժամանակ ավերված տները չէին

<sup>73</sup> «Արարատ», 1913, N 5, էջ 488-490:

վերականգնվել: Թուրքերն այդ հարցը ավելի արագորեն էին լուծել, և Շուշիի թուրքաբնակ թաղամասում չվերականգնված տուն գրեթե չէր մնացել: «Ղարաբաղ» թերթը 1912 թ. գրել է, որ չնայած տարագիրներից շատերը վերադառնում են հայրենի քաղաք, սակայն ավերված տների վերականգնումը շատ դանդաղ է գնում<sup>74</sup>: Թերթը գրում էր, որ արցախցիների պանդխտության հիմնական պատճառը բնակչության ծանր վիճակն էր<sup>75</sup>:

Արցախ աշխարհում շարունակում էր տիրել տնտեսության նահապետական ձևը: Մամուլը հաղորդում էր, որ Արցախի գյուղացին հաճախ չի զբաղվում արդյունավետ ճյուղերով: Նա պետք է իմանա, թե որտեղ ինչով զբաղվել: Գյուղացին չգիտե հող պարարտացնել: Գութանն ու ցաքանը շատ դանդաղ էին մուտք գործում գյուղ: Ոչ այգիներն ու ցանքսերը, ո՛չ էլ անասունները կանոնավոր չէին խնամվում: Շատ գյուղացիներ տնքում էին պարտքերի տակ<sup>76</sup>: Բացի այդ, ըստ ժամանակակիցների վկայության, ծանր էր նաև պանդուխտների վիճակը: Նրանք հեշտությամբ էին ենթարկվում անբարոյական ազդեցություններին և վարակվում զանազան հիվանդություններով: Սակայն դրա կողքին պանդխտությունը տալիս էր նաև որոշ օգուտ. ընտանիքներին փրկում էր սովից<sup>77</sup>:

Ժամանակի թերթերը, անդրադառնալով զավառական կյանքի մի շարք կնճռոտ հարցերի պարզաբանմանը, շեշտում էին, որ այնտեղ ժողովրդի առաջնորդները, ղեկավարները և վարիչները «հանդես են գալիս իրենց ամբողջ գորությամբ հարստահարելու դժբախտ ժողովրդին... այն ժողովուրդը, որ մաքուր զգացմունքներով ու մարդկային կոչման բարոյական հասկացությամբ աշխատելուց, տքնելուց և շատ քիչ բան վաստակելուց բացի ուրիշ ոչինչ չգիտի»<sup>78</sup>:

Բարվոք չէր նաև Արցախի բանվորների վիճակը, հատկապես մետաքսարդյունաբերության մեջ, որոնց տերերը ամեն կերպ ձգտում էին «իրենց տրամադրության տակ եղած աշխատավորներին շահագործել, բանեցնել այնքան, ինչքան կարող են և հնարավոր է»: Աղքատությունը և պակասը արցախցուն ստիպում էին որդուն կամ դստերը գործարան ուղարկել, չնայած նրանք դեռևս մանուկ հասակում էին: Այստեղ՝ «Ծնողը սուսկում է՝ հանկարծ ընտանիքը չընկնի քաղցի մեջ»<sup>79</sup>: Մետաքսագործարաններում օրվա աշխատանքի տևողությունը

<sup>74</sup> «Ղարաբաղ», N 1, 1.01.1912:

<sup>75</sup> Նույնը, N 18, 8.03.1912

<sup>76</sup> Նույնը:

<sup>77</sup> Նույնը, N 20, 15.03.1912:

<sup>78</sup> Նույնը, N 21, 18.03.1912:

<sup>79</sup> Նույնը, N 13, 19.02.1912:

շարունակվում էր մինչև 12 ժամ, իսկ կարճ օրերին՝ 9 ժամ: Ամենաբարձր աշխատավարձը օրական կազմում էր 30 կոպեկ: Աշխատավարձերը ձգձգվում էին 4-5 ամիս, և հաճախ այն չէր փակում տոկոսով կուտակված պարտքը<sup>80</sup>:

Այդ ամենը ստիպում էր մետաքսագործներին հաճախակի դիմել գործադուլի: 1912 թ. մայիսի 18-ին գործադուլի դիմեցին Ներքին թաղավարդում գտնվող եղբայրներ Տեր-Մկրտչյանների գործարանի բանվորները: Այդ գործարանը նոր էր, երկրորդ տարին էր աշխատում: Այն աշխատում էր տարեկան 8-9 ամիս: Նախորդ տարվա համեմատությամբ՝ բանվորները 1912 թվականին զգալիորեն պակաս աշխատավարձ պիտի ստանային: Այդ մասին իմանալով՝ դիմել էին գործադուլի: Գործարանը գտնվում էր Ջարդարաշենի տարածքում, սակայն աշխատավորների մեծամասնությունը Ներքին թաղավարդ գյուղից էին: Գործարանատիրոջ սպառնալիքները չէին օգնում. բանվորները մերժում են աշխատանքի դուրս գալ: Գործարանատերը ստիպված բարձրացնում է բանվորների աշխատավարձը և հարթում հարցը<sup>81</sup>: Գրեթե նույն վիճակն էր տիրում նաև մյուս ֆաբրիկաներում:

Կապիտալիստական տնտեսաձևի զարգացման գործում էական դեր էին խաղում վարկերը: Այն Արցախ էր մուտք գործել մի քանի տարի առաջ: Մինչդեռ վարկը հարկավոր էր թե՛ գործարանատիրոջը և թե՛ գյուղացուն: Փորձը համոզում էր, որ մանր վարկային ընկերությունները, գործելով կոոպերատիվ հիմունքներով, հասարակությանը ցույց էին տալիս բավականին օգնություն: Արցախի գյուղերում մնան վարկային ընկերություններ շատ դանդաղ էին կազմակերպվում: Պարզվում է, որ հաչենում, Ջրաբերդում և Գյուլիստանի կողմերում դեռ գաղափար չունեին վարկային ընկերությունների և նրա օգտավետ լինելու մասին: Ժամանակակիցը խիստ կարևոր էր համարում վարկի մասին քարոզչությունը և գյուղացիներին գիտակցության հասցնելը<sup>82</sup>:

Աշխարհից կտրված Արցախը խիստ կարիք ուներ երկաթգծի: Եվլախի երկաթուղին գտնվում էր բավականին հեռու՝ ավելի քան 90 վերստ, որից օգտվելը խիստ դժվար էր, հատկապես, երբ թուրքերը փակում էին ճանապարհները: Եվ ահա հայ մեծահարուստ Միրզա Սարուխանյանը որոշեց Եվլախ-Շուշի երկաթգիծ անցկացնել, այն էլ հայկական տարածքով: Երկաթգծի կառուցելու աշխատանքները

---

<sup>80</sup> Լույնը:

<sup>81</sup> Լույնը, N 38, 14.05.1912:

<sup>82</sup> Լույնը, N 21, 18.03.1912:

սկսվել էին դեռ 900-ական թվականների սկզբին: Սարուխանյանի ներկայացրած նախագիծըն արժանացել էր երկաթուղային հանձնաժողովի հավանությանը: Սարուխանյանն առաջարկել էր լայնուղու նախագիծ: Նրա բացատրության համաձայն՝ լայնուղին պետք է հասներ մինչև Խանին բաղ՝ Շուշիից 15 վերստ հեռավորության վրա, որից հետո նեղ ուղիով գնացքը պետք է հասներ Ղայբալիշեն, որտեղից ուղևորները Շուշի կբարձրանային հատուկ վերելակով<sup>83</sup>:

Բաքվի թուրք մամուլը, հատկապես Հաշիմ-բեկ Վեզիրովի խմբագրած լրագրերը, աղմուկ-աղաղակ էին բարձրացրել Սարուխանյանի այդ հայրենամկեր նախաձեռնության դեմ: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Աղդամը, կտրվելով երկաթուղուց, կտրվում էր նաև Կարյագինոյից և Պարսից սահմաններից: Թուրք մամուլը գրում էր, թե «Սարուխանյանի ընկերությունը երկաթուղային ահագին նյութական զոհողություններ է հանձն առնում մինիայն նրա համար, որ կոչվի զուտ հայկական երկաթուղի»: Եվ ահա թուրքերը Աղդամում հրավիրում են ժողով, որոշում պատվիրակություն ուղարկել Թիֆլիս՝ փոխարքայի մոտ, նրան խնդրելու, որ միջնորդի երկաթուղին Աղդամի միջով անցնի, կամ էլ թույլատրվի Եվլախից մինչև Աղդամ երկրորդ գիծ կառուցել: Սակայն Սարուխանյանը չի նահանջում իր որոշումից, ըստ որի՝ երկաթուղին պետք է անցներ բացառապես հայկական գյուղերով: Նրա կարծիքով, Բարդայից 6-7, իսկ Աղդամից 4 վերստ հեռավորություն ունեցող երկաթուղի հասնելը թուրքերի համար ողբերգությունն չէ<sup>84</sup>: Երկաթուղու ընդհանուր երկարությունը պետք է կազմեր 109,9 վերստ՝ օրական 7265 փութ բեռնափոխադրումով: Նախատեսված էր կայարաններ ունենալ Եվլախ, Տեր-տեր (Թարթառ), Խաչեն, Ասկերան, Շուշի, 3 ուղետրոհ Աղդամ, Բալլուջա, Խանքենդ, 3 պլատֆորմ՝ Սարով, Ախթալա և Տիգրանակերտ<sup>85</sup>:

Երկաթուղու շինարարությունն սկսվեց թափով: Սակայն այն դադարեցվեց 1917 թվականին՝ փետրվարյան հեղափոխությունից հետո: Մինչ այդ կատարվել էին բոլոր հողային աշխատանքները և կառուցվել կամուրջները<sup>86</sup>:

<sup>83</sup> Երկրագր, N 8, 11.12.1911:

<sup>84</sup> Երկրագր, N 26, 12.04.1912:

<sup>85</sup> «Հորիզոն», N 213, 29.09.1912:

<sup>86</sup> Խորհրդային իշխանության տարիներին Ադրբեջանի թուրքական իշխանությունը փոխեց երկաթուղու կառուցման նախագիծը, այն դարձրեց նեղ գիծ և հեռացվեց հայկական տարածքից: Երկաթգիծը Բարդայի վրայով հասնում էր Աղդամ, այնտեղից էլ Ստեփանակերտ, որը, սակայն, երկար չգործեց:

\*\*\*

Ռեակցիայի և դրան հաջորդած տարիներին Արցախի կյանքում բավականին ազդեցիկ դեր է ունեցել Ղարաբաղի թեմը: 1909թ. օգոստոսի 15-ին էջմիածին ուղարկած Աշոտ եպիսկոպոսի «Ղարաբաղի թեմի եկեղեցիների, վանքերի, եկեղեցականների, ժողովրդի թուի, կալուածների, թիրք-հայկական ընդհարումների, թեմական դպրանոցի եւ եկեղեցական-ծխական դպրոցների» մասին տեղեկագրից իմանում ենք, որ այդ ժամանակ Ղարաբաղի Հայոց թեմը իր մեջ ընդգրկում էր Շուշիի, Ջիվանշիրի, Կարյազինոյի (Ջեբրայիլ), Նախու և Արեշի ամբողջ գավառները, Գանձակի և Ջաքաթալայի շրջանից Կախավանը: Թեմն ուներ 26364 ծուխ, արական սեռի՝ 101143, իգական սեռի՝ 88857, ընդամենը՝ 190.000 մարդ: Ըստ տեղեկագրի՝ այդ 190000-ը տեղավորված էին այսպես. Շուշի քաղաքում՝ 15000, Շուշիի գավառում՝ 23600, Կարյազինոյի գավառում՝ 19386, Ջանգեզուրի գավառից՝ երեք գյուղեր՝ 5000 բնակչությամբ, Լանքարան քաղաք՝ 730, Նուխի և Արեշի գավառներում ու Կախ ավանում՝ 45000:

Թեմում կար 3 քաղաք՝ Շուշի, Նուխի, Լենքորան, և 226 գյուղ, որոնցից Շուշի գավառում՝ 96, Ջիվանշիրի գավառում՝ 40, Գանձակի գավառում՝ 10, Կարյազինոյի գավառում՝ 29, Ջանգեզուրի գավառում՝ 3, Նուխիի գավառում՝ 29, Արեշի գավառում՝ 18, Ջաքաթալայի շրջանում՝ 1: Թեմն ուներ մեկ փոխանորդություն և հոգևոր կառավարություն Նուխի քաղաքում, 14 գործակալություն, որոնցից 3-ը՝ Նուխիի փոխանորդությունում:

Այդ ժամանակ Ղարաբաղի թեմն ուներ 219 քահանա, որոնցից 197-ը գրեթե չունեին կրթություն: Թեմն ուներ 221 եկեղեցի, 9 վանք, որոնցից երեքը գործող, իսկ 6-ը՝ չգործող<sup>87</sup>:

Այնուհետև՝ 1912 թ., Ջավեն վարդապետը «Ղարաբաղ» թերթում հանդես եկավ «Համառոտ տեղեկագիր Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակ-չուրթեան» ծավալուն հոդվածով, որտեղ բերված տվյալներից իմանում ենք, որ 1886 թ. թեմն ունեցել է 21 հազար ծուխ՝ 193 հազար բնակիչով: Պարզապես, 25 տարում բնակչության թիվը պետք էր կրկնապատկվեր, սակայն ընդհանուր թիվը պակասել էր երեք հազարով<sup>88</sup>: Ըստ Ջավեն վարդապետի բերած տվյալների՝ թեմն ուներ 215 եկեղեցի, երեք տարում եկեղեցիների թիվը պակասել էր վեցով: Այդ ժամանակ թեմն ուներ 202 քահանա, որոնցից 151-ը ունեին ընտանեկան կրթություն: Ղարաբաղի թեմի ամբողջ տարածքը կազմում

<sup>87</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 465:

<sup>88</sup> «Ղարաբաղ», N 42, 7.06.1912:

էր 60-70 հազար դեսյատին տարածություն: Թեմի տարեկան մուտքը հասնում էր 13430 ռուբլու, իսկ ծախսերը՝ 13032 ռ. 50 կ.<sup>89</sup>:

Թեմի մի շարք կալվածքների վրա ապրում էին թուրքեր, մեծամասամբ այրում ցեղից, որոնք ցրված էին ամբողջ 15-18 հազար դեսյատին տարածքի վրա: Նրանք խոշոր վճառներ էին հասցնում թեմի կալվածքներին, մանավանդ անտառներին: Իրենց ցեղակիցների մոտ հաճախ հյուրընկալվում էին Մուղանի, Աղդամի և Ղարբանդի կողմերից ամառային արոտավայրեր գնացող թուրքերը, որոնք շահագործում էին արոտատեղերն ու անտառները և ստանում ահագին եկամուտներ, իսկ թեմին վճարում միայն կոպեկներ: Արոտավայրերն օգտագործվում էին առանց որևէ կանոնակարգի, իրենց ցանկությամբ: Պարզապես, թեմի հոգևոր իշխանություններն անզոր էին թուրքերին հեռացնել այդ կալվածքներից: «Թուրքերը,- գրում էր Ջավեն վարդապետը,- պատրաստ են մի քանի անգամ ավելի վարձ տալ, միայն թե տեղից չշարժվեն և ընդմիջտ բնակվեն այնտեղ: Թուրքերին թեմի կալվածքից հեռացնելը, ըստ էության, կապված էր մի շարք բարդությունների հետ: Ամենակարևորը՝ պետական իշխանությունները դրանում շահագործված չէին: Ուրիշ ելք չգտնելով՝ թեմակալը ստիպված էր համոզվել, որ այդ քոչվոր-ավազակները պետք է տեղավորվեն կալվածքների ազատ հողերում, յուրաքանչյուր ծխին տրամադրելով հինգական դեսյատին հողատարածություն: Թեմակալը առաջարկում էր բաց մնացած հողամասերում հիմնադրել հայկական գյուղեր, որպեսզի հայ աշխատող տարրը «չատանա և մեր կալվածքները արդյունավորվեն»<sup>90</sup>:

Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը չնայած աշխատում էր իր ուժերի և կարողությունների չափ, սակայն նրա նկատմամբ բողոքները չէին դադարում: Կաթողիկոս Մկրտիչ Ա-ի՝ 1907 թ. մահից հետո նոր կաթողիկոս ընտրված Մատթեոս Բ-ին 1909 թ. դեկտեմբերի 25-ին Շուշիից ուղարկված նամակում հեղինակները խնդրում էին Աշոտ եպիսկոպոսին ազատել Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնից: Նման բնույթի բողոք ուղարկվել է նաև սեպտեմբերի 18-ին, որտեղ խոսվել է թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի «վնասակարության և անընդունակության» մասին, այլապես բացատրում էին, «անհնարին կը լինի Ղարաբաղի թեմի երեսի վրայ ընկած գործերին ընթացք տալ, մանաւանդ դպրոցական գործերին, որ թէ՛ տնտեսական, և թէ՛ ուսման տեսակետից օրհասական վիճակում են գտնուում: Ժամանակն ոսկի է և անդառնալի, սակայն մեզ համար սահում են տխուր հետևանքներ

<sup>89</sup> Նույնը, N 47, 1.07.1912:

<sup>90</sup> Նույնը:

թողնելով»<sup>91</sup>:

1910 թ. հունվարի 20-ին Սինոդը, հանգամանորեն քննարկելով Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի հարցը, որոշում է նրան առաջարկել հանձնել բոլոր գործերը և վերադառնալ Էջմիածին<sup>92</sup>: Մինչ այդ՝ հունվարի 10-ին, կաթողիկոս Մատթեոս Բ-ի կոնդակով, իր դիմումի համաձայն, Աշոտ եպիսկոպոսն ազատվել էր թեմակալի պաշտոնից և հետ կանչվել Էջմիածին<sup>93</sup>: Մի քանի օր անց՝ հունվարի 26-ին, կաթողիկոսի կոնդակի համաձայն, Բենիկ վարդապետը նշանակվել էր Ղարաբաղի թեմի կառավարիչ<sup>94</sup>: Նա Շուշի հասավ փետրվարի 3-ին և անմիջապես անցավ գործի: Սակայն Բենիկ վարդապետի վիճակը բարենպաստ չէր՝ կապված Ապարանում քահանա հոր հետ, որին սինոդը մեղադրանք էր ներկայացրել՝ կապված անօրեն պսակ կատարելու և այլ գործերի հետ: Նույն թվականի մարտի 14-ին Բենիկ վարդապետը ազատվում է Ղարաբաղի թեմի կառավարչի պաշտոնից: Նրա փոխարեն նշանակվում է Եղիշե վարդապետ Ահարոնյանը: Եվ երբ մահանում է Մատթեոս Բ կաթողիկոսը, Շուշիի հասարակության անունից 240 ստորագրությամբ խնդրագիր է ուղարկվում տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցին՝ Բենիկ վարդապետին կրկին թեմի կառավարիչ նշանակելու վերաբերյալ<sup>95</sup>: Խնդրագիրը մերժվում է: Տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսի կոնդակով Արցախի թեմի ժամանակավոր առաջնորդ է նշանակվում Բաքվում եկեղեցիների գործակալ Ջավեն վարդապետը: Ջավեն վարդապետը փորձում է հրաժարվել, սակայն կաթողիկոսի տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսի՝ 1911թ. ապրիլի 21-ի հրամանով նա մնում է Ղարաբաղի կոնսիստորիայի նախագահ<sup>96</sup>:

Ջավեն վարդապետ Բաբայանը ծնունդով Արցախի Գիշի գյուղից էր: Նա թեմակալ է նշանակվել մի այնպիսի ժամանակ, երբ թեմի առաջ կանգնած էր բազմաթիվ կարևոր հարցեր լուծելու խնդիրը: Իսկ դրանք էին դպրոցական գործի կարգավորում, թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանի նշում, թեմի կալվածքների հետ կապված բազմաթիվ հարցերի կարգավորում և այլն: Ըստ կաթողիկոսի հրամանի՝ «Համաձայն Ամենապատիւ տեղակալ Կաթողիկոսի Ամենայն Հայոց առաջադրութեան կարգել Բագուի Հայոց եկեղեցիների գործակալ տ. Ջաւեն վարդապետին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի

<sup>91</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1856, թ. 1:

<sup>92</sup> «Արարատ», 1910, N Բ, էջ 113:

<sup>93</sup> Նույնը, էջ 107:

<sup>94</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 179, թ. 23:

<sup>95</sup> Նույնը, գ. 1892, թ. 1-8:

<sup>96</sup> Նույնը, գ. 1830, թ. 46:

նախանդամ, որը թեմի առաջնորդ չլինելու պատճառով պետք է վարի կոնստիտուորիայի և տեղական հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան նախագահողի պաշտօնը»<sup>97</sup>:

1913 թ. հունիսի 21-ին շուշեցի Իսահակ Տեր-Ղազարյանը 1911 թ. դեկտեմբերի 11-ին կաթողիկոս ընտրված Քևորգ Սուրենյանցին հղած նամակում զովասանքով էր խոսում Ջավեն վարդապետի կողմից Արցախի թեմում կատարած գնահատելի աշխատանքի մասին, որ Ջավեն վարդապետն սպասածից էլ լավ է ապահովում Ղարաբաղի թեմի դպրանոցը և օրհորդաց դպրոցը: «Դուք հոգով ուրախ պիտի լինեք, կարդում ենք այդ նամակում,- որ Ձեր սանը... այսքան յաջող, այսքան պատուով ելաւ իր վրայ դրած պարտականութիւնից... Դուք նախանձախնդիր էք, որ Ձեր ոգով կրթած Ձեր գաղափարների պաշտպանները հայ դպրոցներում ու թեմերում լինեն, ահա Ղարաբաղի թեմն ունի այդպիսի մէկը յանձին Ջաւենից: Դուք, կարծում են, կողջունէք նրան, սրտանց ոգևորէք Ձեր աշակերտին, որ աւելի ևս արդարացնէ Ձեր գաղափարները, Ձեր միտքը»<sup>98</sup>:

Ջավեն վարդապետը, բացի ընդհանուր գործերի մասին հոգալուց, մտածում էր նաև հոգևորականների ապրելու պայմանները բարելավելու ուղղությամբ: 1913 թ. հոկտեմբերի 10-ին Քևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում խնդրում էր թույլ տալ Շուշիում քահանայական նպաստից գանձարկղ հիմնել, որից կարող էին օգտվել քահանաները<sup>99</sup>: Ջավեն վարդապետը շատ էր մտահոգված դատապարտված վերոհիշյալ երեք քահանաների ճակատագրով: Այդ մասին խոսվում է 1913 թ. նոյեմբերի 30-ին Ս. Պետերբուրգից Ջավեն վարդապետին Սիքայել Պաբաջանովի ուղարկած նամակում: Հեղինակը Արցախի թեմի առաջնորդի պաշտոնակատարին հաղորդում էր, որ ինքը Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ խոսել է արդարադատության նախարարի հետ՝ դատապարտված երեք քահանաների առիթով, և քանի որ լրանում էր նրանց աքսորման ժամկետը, ապա պետք է մտածել նրանց իրավունքները վերականգնելու մասին: Նա հաղորդում է, որ նախարարը խոստացել է քահանաներին շուտ ազատելու վերաբերյալ միջնորդել թագավորի առաջ<sup>100</sup>: Հոգևորականների ազատվելուց հետո Ջավեն վարդապետը ջանքեր չէր խնայում նրանց իրավունքները վերականգնելու համար:

<sup>97</sup> Նույնը, ք. 47-48:

<sup>98</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ֆ.1, թուղթ 238, վավ. 133: Նամակի հեղինակը նախկինում եղել է Սուրենյանցի աշակերտը:

<sup>99</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1941, ք. 18:

<sup>100</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, 8.1, թուղթ 238, վավ. 214:

## 5. ԱՐՑԱԽԸ ԵՎ ՆՐԱ ԹԵՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1917 ԹԹ.)

1914թ. օգոստոսի սկզբին պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Այն մեծագույն չարիք էր մարդկության, հատկապես հայ ժողովրդի համար: Պատերազմն իր ծանր հետևանքը թողեց նաև արցախահայության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Ջորակոչվեցին և ռազմաճակատ ուղարկվեցին հազարավոր հայ երիտասարդներ, որոնց զգալի մասը չվերադարձավ պատերազմից: Արցախի բուլշևիկների օրգան «Նեցուկ» թերթը հաղորդել է հետևյալ տվյալները. Շուշիի գավառից, որն ուներ 9553 տնտեսություն 74173 բնակչությամբ (տղամարդ՝ 16584, կին՝ 22238, մինչև 7 տարեկան երեխա՝ 21364), մինչև 1916 թ. ռազմաճակատ էր մեկնել 7728 տղամարդ, որից 120-ը՝ կամավոր: Փաստորեն, պատերազմ էր մեկնել բնակչության 10,5 տոկոսը կամ տղամարդկանց 50 տոկոսը: Կարյազինոյի գավառից ռազմաճակատ էր մեկնել 2755 հայ տղամարդ, որից 90-ը՝ կամավոր: Այստեղից պատերազմ մեկնողները կազմել են բնակչության 16 տոկոսը կամ տղամարդկանց՝ 55 տոկոսը: Թերթը հաղորդում է նաև հետևյալ տվյալները. մինչև պատերազմը Շուշիի գավառում տարեկան ցանում էին 15184 դեսյատին աշնանացան, 5137 դեսյատին գարնանացան, իսկ 1916 թվականին՝ համապատասխանաբար 5711 և 3882 դեսյատին: Այդ նշանակում է, որ Շուշիի գավառում աշնանացանը կրճատվել էր 60 տոկոսով, իսկ գարնանացանը՝ 39:

Արցախում չափազանց դանդաղ էր ընթանում մամավանդ բնակչության աճը: 1914 թ. տվյալներով, Ելիզավետպոլի 8 գավառների մեջ Շուշիի գավառը Գանձակի և Ջանգեզուրի գավառներից հետո բնակչության քանակի տեսակետից գրավում էր երրորդ տեղը, Գանձակ՝ 248015 մարդ, Ջանգեզուր՝ 209951 մարդ, և Շուշի՝ 178081 մարդ<sup>2</sup>:

Յանեմատած 1897 թ. բնակչության քանակի հետ՝ այդ երեք գավառներում համապատասխանաբար կազմել է 52,35; 52,30 և 28,32 տոկոս: Շուշիի գավառի բնակչության դանդաղ աճը բացատրվում է հիմնականում ազգամիջյան ընդհարումներից հետո տեղի ունեցած արտագաղթով: Ըստ տարածության՝ Գանձակի գավառն ուներ 7695,7;

<sup>1</sup> «Նեցուկ», (Շուշի), N 3, 31.08.1917:

<sup>2</sup> «Գործ», (Բաքու), 1917, N 11-12, էջ 105:

Ձանգեզուրիցն՝ 6829,7, Շուշիցն՝ 4315,6 քառակուսի վերստ տարածք: Մեկ վերստի վրա, 1914 թ. տվյալներով, բնակվում էր համապատասխանաբար 32,2, 30,7 և 41,2 մարդ: Այդ ժամանակ Ջիվանշիրի գավառն ուներ 75730 բնակիչ՝ 4818,4 քառակուսի վերստ տարածության վրա, իսկ Շուշիի գավառը՝ 178081 բնակիչ՝ 4315,6 վերստ տարածության վրա<sup>3</sup>: Ստացվում է, որ Ջիվանշիրի գավառում մեկ քառակուսի վերստ տարածության վրա բնակվում էր 15.7, իսկ Շուշիի գավառում՝ 41.2 մարդ:

Անդրադառնալով Արցախում հայ ազգաբնակչության աճին՝ հարկ է նշել, որ եթե 1914 թ. Գանձակում բնակվում էր 56305 մարդ, Նուխիում՝ 54678, ապա Շուշիում այդ թիվը հասնում էր 42568-ի: 1897 թ. համեմատությամբ՝ աճը կազմել է համապատասխանաբար 67,19, 121,06 և 64,50 տոկոս: Պարզվում է, որ եթե 30 տարի առաջ Շուշին իր բնակչությամբ Թիֆլիսից և Բաքվից հետո բռնում էր երրորդ տեղը Անդրկովկասում, ապա հետագայում՝ ասեմք վերջին 11 տարում, Շուշիի բնակչությունը աճելու փոխարեն նվազել էր 3,57 տոկոսով<sup>4</sup>:

«Գործում» հանդես եկած Բախշի Իշխանյանը հանգել էր այն եզրակացության, որ Շուշի քաղաքի և գավառի բնակչության հետ մնալու հիմնական պատճառը հանդիսանում է «Հաղորդակցական միջոցների բացակայությունը, արդյունաբերության և առևտրի յետամնացությունը, և որ Ղարաբաղը ավելի, քան որևէ գավառ, պոկել է իր ծոցից և հեռուն նետել ահագին թվով բանակներ իր գավակներից, որոնք Կովկասի կենտրոններում առաջին տեղն են բռնում առևտրա-արդյունաբերական և հասարակական կեանքում»<sup>5</sup>: Ըստ Իշխանյանի՝ ազգամիջյան ընդհարումներից հետո հայկական գավառներում արագորեն ավելանում էր մուսուլմանների թիվը: Նա օրինակ է բերում, որ ազգամիջյան ընդհարումներից հետո 1912 թ. Ձանգեզուրի գավառում մուսուլմանները կազմել են 59,98 տոկոս, հայերը՝ 40, Շուշիի գավառում՝ մուսուլմանները՝ 43,55 տոկոս, հայերը՝ 53,27<sup>6</sup>:

Պատերազմի տարիներին, ինչպես նշվել է, մեծ չափով ընկել էր Ղարաբաղի գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակը, որովհետև հողը մնացել էր անմշակ: Եթե Վարանդայի և Խաչենի գավառներում պատերազմի նախօրյակին ցանվել էր 15438 դեսյատին հող, ապա 1916 թվականին այն կրճատվել էր 33,6 տոկոսով: Նույն վիճակն էր տիրում նաև Դիզակի և մյուս գավառամասերում: Այդ գավառներում պատերազմի առաջին տարիներին ցորենի բերքը

<sup>3</sup> «Գործ», (Բաքու), 1917, N 11-12, էջ 106:

<sup>4</sup> Նույնը, էջ 120:

<sup>5</sup> Նույնը, էջ 121:

<sup>6</sup> Ишханян Б., Народности Кавказа, С. Петроград, 1917, с. 34:

կրճատվել էր ավելի քան 7 անգամ, գարունը՝ 4, կորեկինը՝ 2, իսկ կարտոֆիլինը՝ 2: Վարանդայի և Խաչենի գավառաձևասերում մինչև պատերազմը յուրաքանչյուր ընտանիքի ընկնում էր միջին հաշվով 2,37 դեսյատին տարբեր կուլտուրաների ցանքս, 1916 թ. 1,29 դեսյատին, իսկ Դիզակի գավառում՝ համապատասխանաբար 1,8 և 0,75 դեսյատին: Պատերազմից առաջ Վարանդայի և Խաչենի գավառների յուրաքանչյուր 100 ընտանիքի ընկնում էր 208 լժկան անասուն (եզներ և գոմեշներ), 38 ձի, 106 կով, իսկ 1916-ին՝ 77 լժկան, 10 ձի և 52 կով: Դիզակի գավառում՝ համապատասխանաբար 85 լժկան, 9 ձի, 74 կով և 49 լժկան, 4 ձի, 43 կով: Պատերազմի հետևանքով այդ երեք գավառներում անասնազվխաքանակը կրճատվել էր ավելի քան 3 անգամ:

Պատերազմի տարիներին հատկապես տուժեց երկրամասի արդյունաբերությունը: Փակվեցին մի շարք մետաքսագործական ֆաբրիկաներ, արհեստագործական ձեռնարկություններ, անասելիորեն վատացավ աշխատավորների տնտեսական վիճակը: Այդ տարիներին Արցախը, զրկվելով մեծ թվով աշխատող ձեռքերից, կանգնել էր քայքայման եզրին: Առանձնապես ծանր էին հարկերն ու զանազան տուրքերը: Երկու և ավելի անգամ բարձրացել էին սննդամթերքի գները: Մեծ թվով ավելացել էր որբերի թիվը թե՛ տեղացիների և թե՛ Արևմտյան Հայաստանից գաղթածների հաշվին: Պատերազմի հետևանքով Արցախ-Ղարաբաղում ավելի էին սրվել տնտեսական-քաղաքական և ազգային հակասությունները, սոցիալական կյանքի պայմանները դարձել էին անտանելի: 1915 թ. հունվարի 26-ին թեմակալ Ջավեն վարդապետը Քևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում նշում էր, որ «Ղարաբաղի հայ ժողովուրդը շնորհիւ ներկայ մեծ և սահել պատերազմի՝ տագնապալից ծանր օրեր է ապրում, մի կողմ թողած պատերազմի հետ կապուած սարսափներն ու դժուարատար պայմանները և այն, որ նա խիստ ճնշւում է այլ և այլ ծանր հարկերի տակ, ապագայում գոնէ մասամբ շունչ քաշելու համար, հարկադրուած է նոր օրէնքով սահմանուած հողերի յետգնման խնդիրը վերջաւորել երկար տարիներից ի վեր իրենց մեծ ծանրութիւն պատճառող կալուածատերերի հետ, որի համար նա՝ ժողովուրդը չի խնայում մինչև անգամ իր եղած-չեղածը վաճառքի հանել»: Ըստ թեմակալի, քանի որ «կարկուտը և բնութեան այլ տեսակի պատուհասները զրկել են հայ գյուղացուն ապրուստի միջոցներից, և նա օրհասական պարեն հայթայթելու ու իր ընտանիքի գոյութիւնը պահպանելու հնարարութիւն չունի, տնտեսապէս քայքայուած է և գտնւում է ողբալի

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2238, թ. 1:

դրութեան մէջ»<sup>7</sup>:

Այո՛, ըմբոստացել էր արցախցին, որովհետև նա կանգնած էր կյանքի և մահվան եզրին: Դրան էլ գումարենք այն, որ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող հայասպան իրադարձությունները հայերին ստիպում էին գալարվել ինքնակալության ճիրաններում: Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն Նիկոլայ 2-րդին 1914 թ. նոյեմբերի 11-ին գրած նամակում հայտնում էր, որ հայ ժողովուրդը պատրաստ է իր կյանքը զոհել հանուն հայրենիքի պատվի ու փառքի<sup>8</sup>:

Եվ ի՞նչ արեց ցարական ինքնակալությունը մի այնպիսի ժողովրդի համար, որը պատրաստ էր իրեն զոհաբերել «հայրենիքի պատվի ու փառքի համար»: Բացարձակապես՝ ոչինչ:

Հայ կամավորներին օգնելու և գաղթականներին խնամելու համար լուրջ գործունեություն ծավալեց 1914 թ. հոկտեմբերի վերջին ստեղծված Ղարաբաղի «Եղբայրական օգնության բյուրոն»: Այն անմիջապես Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյին փոխանցեց 500 ռուբլի, մթերք և հագուստ: 1914 թ. դեկտեմբերի 11-ին Ղարաբաղի հայոց «Եղբայրական օգնության բյուրոն» Թիֆլիս՝ Հայոց ազգային բյուրոյին՝ երկրամասում հայ կամավորական խմբերի ստեղծման մասին ուղարկած նամակում, տեղյակ պահելով Բյուրոյի ծավալած գործունեության մասին, գրում էր. «Ներկա պատմական օրերին, երբ պետք է ամեն միջոցով օգնության գալ տարագիր տաճկահայ ժողովրդի դատի պաշտպանության, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը կարող է և պետք է ավելին անե, եթե ոչ դրանով, գոնե օգնական ուժերով: Քանի որ Ղարաբաղի հայ ժողովուրդն ևս իրապես զգում է, որ ներկայումս Տաճկահայաստանում հայի ինքնուրույն գոյության խնդիրն է ասպարեզի վրա դրած, այդ հարցի հաջող լուծմանը պետք է նպաստենք բոլոր հայերս, նա չէ կարող անտարբեր մնալ հայի այս ճակատագրական ռոպեին և նա պատրաստ է ամեն զոհողության հանձն առնել և յուր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի սրբազան գործին»: Շեշտելով, որ տաճկահայ դատի պաշտպանության համար Ղարաբաղի հայությունը տվել է մի շարք ակամավոր հերոսներ, վստահեցնում է, որ «այսօր ևս նա պատրաստ է հեծյալ և հետևակ կամավորների գնդերով օգնության գալ Տաճկահայաստանում գործող մեր եղբայրներին»: Բյուրոն հույս է հայտնում, որ իր ձեռքով կազմած ղարաբաղցի կամավորների գունդը «թե՛ բարոյապես, թե՛ գործնական մասնակցությամբ մեծ նեցուկ կարող է լինել ներկայումս գործող հայ կամավորներին»<sup>9</sup>: Պարզվում է, որ հայկական 5-րդ հրաձգային

<sup>8</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ֆ. 1, թուղթ 238, վավ. 162:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 4, թ. 2:

գումարտակը, որը գլխավորում էր արցախցի գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանը, հիմնականում կազմված էր ղարաբաղցիներից:

Արցախի Շուշիի կոմիտեն տուրք էր դրել քաղաքի բոլոր բնակիչների վրա և 1915 թ. սկզբի դրությամբ հավաքվել էր 2400 ռ.: Թիֆլիսում կազմակերպված ղարաբաղցիների կոմիտեն ևս հավաքել էր 2000 ռ.: Կազմակերպվել էին նաև բարեգործական և ինքնապաշտպանողական հանձնաժողովներ, որոնք ևս լայն աշխատանքներ էին ծավալել<sup>10</sup>:

Հովակ Ստեփանյանը հետագայում գրել է, որ 1914 թ. դեկտեմբերյան օրերին Ղարաբաղի հայությունը ապրում էր մեծ տագնապ: Կցկտուր լուր էր հասել Ղարաբաղ՝ Սալմաստի և Թավրիզի հայերի գաղթի մասին: Արցախահայերը թե՛ Շուշիում և թե՛ գյուղերում հարկադրված էին դիրքեր փորել ինքնապաշտպանության համար և սահմանել գիշերապահություն: Այդ խուճապային օրերին Աղձամի թուրքերը կազմակերպել էին մեծ խրախճանք: Հրճվանքի մեջ գտնվող մահմեդականների մեջ հակահայկական ատելություն էին սերմանել թուրք էմիսարները, որոնք «երազում էին կազմել մեծ համախալամական կայսրութիւն»<sup>11</sup>: Սակայն տագնապն անցավ, ռուսական բանակը կրկին հարձակման անցավ, և Շուշիի հայերը ազատ շունչ քաշեցին:

Պատերազմի տարիներին արցախցիների ներդրումների և հայրենակիցներին օգնելու մասին բազմաթիվ փաստեր կան արխիվներում և հրապարակված նյութերում: «Արարատ» հանդեսը 1916 թ. հաղորդել է, որ Շուշիի «Եղբայրական օգնության» հանձնաժողովը նվիրաբերել է 1000 ռ.<sup>12</sup>: Ղարաբաղի «Եղբայրական օգնության» կանանց կոմիտեի 1915 թ. կատարած աշխատանքների հաշվետվության մեջ նշված է, որ մուտք գործած 4556 ռ. 594 կ.-ը լրիվ ուղարկվել է օգնության հանձնաժողովին<sup>13</sup>: «Եղբայրական օգնության» կոմիտեի փոխնախագահ Ղազար Տեր-Ղազարյանը 1915 թ. փետրվարի 26-ին Քևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում նշում է, որ փետրվարի 20-ին փոխադրել է 500 ռ. և խնդրում է այն օգտագործել «յօգուտ փախստականների»<sup>14</sup>: Արցախի փոխանորդ Ջավեն վարդապետը 1915 թ. մարտի 13-ին Վեհափառին ուղարկած գրության մեջ, հաղորդելով Շուշիի «Եղբայրական օգնության» հայկական կոմիտեի գործունեության մասին, գրում էր, որ Շուշի քաղաքի և Ղարաբաղի թեմի «գիւղական հայ ժողովուրդը ևս չէ խնայում սուղ

<sup>10</sup> Երևան, գ. 3, թ. 4-5:

<sup>11</sup> «Հայրենիք», 1964, N 1, էջ 8-9:

<sup>12</sup> «Արարատ», 1916, N 5-6, էջ 317:

<sup>13</sup> Երևան, N 7, էջ 440:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1253, թ. 5:

միջոցներից լայն աջակցութիւն ցոյց տալ պատերազմի դաշտում զինուորների, նոցա ընտանիքների, հայ կամաւորների, գաղթականների և առհասարակ պատերազմից վնասուածների օգտին նուիրելով իր ունեցածից դրամ, տաք հագուստ, գուլպաներ և այլ տեսակի կապոցներ-ընծաներ»: Ձավեն վարդապետը տեղյակ է պահում կաթողիկոսին, որ իր կարգադրության համաձայն՝ «Եղբայրական օգնության» հայկական կոմիտեն իր հավաքած գումարներից և հանդերձներից մի մասն ուղարկում է Ս. Էջմիածին՝ տաճկահայ գաղթականների համար: Նաև հայտնում է, որ շրջաբերականով կարգադրել է թեմի բոլոր գործակալներին, որոնք գյուղերում նվերներ են ժողովում և ներկայացնում Կովկասի կոմիտեի Շուշիի մասնաճյուղը՝ «յօգուտ հիւանդ ու վիրաւոր զինուորների և պահեստի զինուորների ընտանիքների»: Թեմակալը կաթողիկոսին նաև տեղյակ է պահում, որ իր շրջաբերականի կարգադրությամբ նույն գործակալները ժողովել և պատերազմից վնասուածների օգտին հավաքել են 528 ռ. 75 կ., որն ուղարկվել է սրբազան Սինոդին<sup>15</sup>:

«Փայլակը» 1915 թ. հաղորդել է, որ Շուշիի գավառական վարչությունը ժողովել է մոտ 1500 տեսակ տոպրակ գատկական նվերներ և 300 կտոր շապիկ՝ Կովկասյան ռազմաճակատ ուղարկելու համար<sup>16</sup>: Թերթը նաև հաղորդել է, որ չնայած կազմակերպված են հանգանակություններ փախստականների օգտին, սակայն Շուշիի բարեգործական ընկերությունը գտնվում է ծանր վիճակում: «Փախստականների հարցը մի կողմից,- ընթերցում ենք թերթի ապրիլյան համարներից մեկում,- Ղարաբաղի գյուղերի տնտեսական տագնապը մյուս կողմից, թեմի դպրոցների և կրթական անճախանձելի վիճակը երրորդ կողմից կոչ են անում Շուշիի բարեգործական ընկերությանը և հիշեցնում նրա բարոյական պարտականությունը: Նա լռում է և հանցավոր ոչինչ չհանում»<sup>17</sup>:

Ընդհանրապես, ինչպես երևում է ժամանակի վավերագրերից և արխիվներում պահվող նյութերից, երկրամասի, հատկապես նրա կենտրոն Շուշիի վիճակը մնում էր բազմաթիվ հոգսերով լի: Այն մնում էր «քայքայված ու ավերակներով շրջապատված մի փոքրիկ և աննշան քաղաք, ուր բարեկարգելու ուղղությամբ ոչինչ չի արվում: Երկաթուղի են խոստանում քաղաքին, բայց իրական դառնալուց շատ է հեռու: Ամառը, ամենատաք ժամանակ, Շուշին անջուր է մնում: Քաղաքը

<sup>15</sup> Նույնը, թ. 6:

<sup>16</sup> «Փայլակ», N 2, 12.03.1915:

<sup>17</sup> Նույնը, N 10, 12.04.1915:

<sup>18</sup> Նույնը, N 1, 8.03.1915:

խարխափում է մթության մեջ: Վաղուց է, որ խոստանում են լույս, բայց չկա: Փողոցը փողոց չէ, այլ դժվարանցների լեռնային ճանապարհ... Շուշին մնում է այն, ինչ եղել է կես դար առաջ: Կուլտուրական օջախները միայն դպրոցներն են... Պետք է բարեկարգվի Շուշին»<sup>18</sup>: Նախկին քաղաքագլուխ Քալանթարյանի փոխարեն ընտրված նոր քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը գործնական միջոցների չէր դիմում: Թե՛ քաղաքում և թե՛ գավառներում տեղի էին ունենում գործադուլներ: Գործադուլավորները իշխանություններից պահանջում էին բարելավել բնակչության ծանր վիճակը: Փոխանակ ընդառաջելու գործադուլավորների պահանջներին՝ ընդհակառակը, ամեն կերպ պատժում էին նրանց: Օրինակ՝ 1915 թ. մայիսին գործադուլ անելու համար Շուշիի հացթուխներից յուրաքանչյուրը տուգանվել էր 25-ական ռուբլի<sup>19</sup>:

Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի գաղթի ալիքը հասել էր նաև Արցախ: Պահանջներն ու կարիքը չափազանց շատ էին: Շուշիի «Եղբայրական օգնության» կոմիտեն Վեհափառ կաթողիկոսին և Հայկական Կենտրոնական կոմիտեին ուղարկած հեռագրերում խնդրում էր դրամական օգնություն ցույց տալ, որ կոմիտեն հնարավորություն ունենար հոգալու Շուշիում և գավառի գյուղերում տեղավորված 15 հազար փախստականների կարիքները<sup>20</sup>:

Արցախի թեմի և «Եղբայրական օգնության» կոմիտեի կոչերով ամբողջ Արցախ-Ղարաբաղը, անկախ այստեղ ստեղծված տնտեսական ծանր պայմաններից, պատրաստ էր ընդունել փախստականներին և հոգ տանել նրանց մասին: Ելիզավետպոլի մահանգապետի կարգադրության համաձայն՝ Արևմտյան Հայաստանից Ղարաբաղ պետք է գալին 25 հազար փախստականներ, որոնցից 14 հազարը պետք է տեղավորվեին Վարանդա, Խաչեն և Դիզակ գավառներում, 9000-ը՝ Ջիվանշիրի գավառում: Մամուլը հաղորդել է, որ «Եղբայրական օգնության» Շուշիի կամանց կոմիտեն և քաղաքի ու ոստիկանական վարչությունները «ձեռք են առնում հնարավոր միջոցներ ընդունելու այդ թշվառներին, որոնց մեծագույն մասը կանայք ու երեխաներ են»<sup>21</sup>: Թեմի կառավարիչ Ջավեն վարդապետը այդ առթիվ օգոստոսի կեսերին հրավիրել էր թեմի և քաղաքի բոլոր հայ դպրոցների ուսուցիչների խորհրդակցություն, որտեղ քննարկվել է փախստականների երեխաների կրթության գործը կարգավորելու վերաբերյալ հարցը: Ուսուցիչների հավաքը որոշեց աջակցել փախստականների

<sup>18</sup> «Հորիզոն», N 100, 9.05.1915:

<sup>20</sup> Նույնը, N 179, 9.08.1915:

<sup>21</sup> Նույնը, N 185, 19.08.1915:

<sup>22</sup> Նույնը:

խնամատարության ընդհանուր գործին և նրանց երեխաների կրթությանը: Ստեղծվում է մի մարմին, որը պետք է մշակեր փախստականների երեխաների կրթության ծրագիրը<sup>23</sup>: Մինչ այդ, 1915 թ. հուլիսի 30-ին, «եղբայրական օգնության» կոմիտեն հրավիրել էր քաղաքի հասարակության ժողով՝ քննելու արևմտահայ փախստականներին ընդունելու և տեղավորելու հարցը ու որոշել էր՝ ա) ամեն մի ընտանիքի տալ 2-3 փախստական՝ պահելու և կերակրելու, բ) ստեղծել հանրակացարաններ՝ փախստականներին տեղավորելու, գ) մի քանի փախստականների հանձնել միաժամանակ մի քանի ընտանիքների խնամքին: Այդ ժողովը, որտեղ նախագահում էր Ջավեն վարդապետը, իր «սեպուհ պարտքը համարեց ընդառաջ գնալ իր հալածված եղբայրներին, թեև ներկայումս Շուշին ինքը գտնվում է աննախանձելի դրության մեջ»<sup>23</sup>:

Շուշիի հայկական թաղամասը կրկին բաժանվել էր 18 թաղամասի, և նշանակվել էին 18 թաղապետեր, ստեղծվել էր սանիտարական հսկողություն, որոնք հանձնարարություն էին ստացել շրջել թաղամասերը, ստուգել սանիտարական վիճակը և ցուցակագրել, թե ովքեր են ցանկանում տուրք տալ և ովքեր են ցանկանում փախստականներ պահել իրենց մոտ: Քաղաքում պետք է տեղավորվեր 2000 փախստական: Ընտրվել էին լիազորներ, որոնք պետք է գնային գյուղերը և հաշվառեին, թե ինչքան փախստականներ կարող էին ընդունել: «Ուրախալի է և չափազանց մխիթարական,- շարունակում էր «Հորիզոնը»,- այն սիրալիր վերաբերմունքը, որ ունեին քաղաքացիները դեպի գաղթականության գործը, և դարաբաղցիները առաջին անգամ չէ, որ պատսպարում են իրենց թշվառ տաճկահայ եղբայրներին: Քաղաքում պահվող փախստականների համար պիտի ամենաքիչը ամսական ծախսել 12000 ռուբլի, որը պետք է հոգա միայն Շուշին»<sup>24</sup>:

Փախստականների ֆոնդին մուծումներ կատարելու նպատակով Շուշիում կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ: Այդ ճանապարհով հավաքված գումարը թեկուզ մեծ չէր, սակայն ոգևորիչ էր: Օրինակ՝ թեմի կառավարիչ Ջավեն վարդապետը թեմական դպրոցում կազմակերպեց հասարակության ներկայացուցիչների շքահրավերք (payr)՝ տոնական շնորհավորանքներ փոխանակելու համար, որին մասնակցեցին քաղաքի բոլոր ազգությունների ներկայացուցիչները: Այդ միջոցառման ժամանակ հանգանակվեց 200 ռ., որը նվիրաբերվեց հօգուտ փախստականների<sup>25</sup>: Ներկաները բոլորը

<sup>23</sup> Նույնը, N 187, 21.08.1915:

<sup>24</sup> Նույնը:

<sup>25</sup> Նույնը, N 13, 20.01.1916:

գոհ էին թեմակալ Ջավեն վարդապետի կազմակերպած միջոցառումից: Ղարաբաղի «Եղբայրական օգնության» կոմիտեն, սեպտեմբերի սկզբին հանդես գալով մի կոչով, քաղաքի հասարակությանը տեղյակ պահեց, որ մոտ օրերին Շուշի կժամանի ծնողազուրկ տաճկահայ որբերի առաջին խումբը, որին պետք է ընդունել սիրով ու գիտակցությամբ<sup>26</sup>: Եկած որբերին հիմնականում տեղավորում էին քաղաքի որբանոցում:

\*\*\*

1916 թ. այդ օրերին, երբ արցախահայությունը, թեմի ղեկավարության գլխավորությամբ, մտահոգված էր փախստականների համար տանելի պայմաններ ստեղծելու հոգսերով, երկարատև հիվանդությունից հետո օգոստոսի 28-ին մահացավ բժիշկ Խաչատուր Բահաթրյանը, որը չափազանց մեծ աշխատանք էր կատարել հայրենի Արցախի համար: Նա ծնվել է 1856 թվականին Շուշիում: Հայրը հաշտարար դատավոր էր: Բահաթրյանը 1875 թ. ավարտել է Լազարյան ճեմարանը ոսկե մեդալով: Հետո ընդունվել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը և հաջողությամբ ավարտել 1881 թվականին: Վերադառնալով հայրենիք՝ նախ որպես գավառական բժիշկ աշխատել է Ջանգեզուրում, հետո տեղափոխվել է Շուշի և երկար տարիներ աշխատել որպես քաղաքային բժիշկ: Այստեղ նա ձեռք է բերել մեծ ժողովրդականություն և հարգանք հայրենակիցների շրջանում: 1903 թ. ցարի հրամանից հետո, ինչպես ասվել է. «Հայ ժողովրդի ամենալայն խավերը արդար զայրույթի և բողոքի զգացունքով համակված հանդես եկան պաշտպանելու իրենց ունահարված և բռնաբարված իրավունքները»<sup>27</sup>: Ոմանք տուժվեցին, ձերբակալվեցին կամ աքսորվեցին: Աքսորվածների թվում էր նաև Բահաթրյանը: Նա աքսորվել էր Օրենբուրգի նահանգ, որտեղ մնաց մինչև 1906 թ. սկիզբը: Հայրենի Շուշի վերադարձավ Պետական դումայի ընտրությունների նախօրյակին: Նա դումայի պատգամավոր ընտրվեց Գանձակի նահանգի հայության կողմից: Բահաթրյանը պատկանում էր կադետային ֆրակցիային: Նա մեծ դեր խաղաց հայ-թուրքական ընդհարումների ժամանակ: Խաղաղության ձիթենին ձեռքին՝ հայ և թուրք շրջաններում քարոզում էր ազգերի համերաշխության գաղափարը: Շուշիում հրդեհված տները վերականգնելու համար նա Կովկասում, Ռուսաստանում և Եվրոպայում հանգանակում է ավելի քան 200 հազար ռուբլի և ծախսում նախատեսված նպատակի համար:

<sup>26</sup> «Փայլակ», N 67, 1.09.1916:

<sup>27</sup> Նույնը:

<sup>28</sup> Նույնը:

Ժամանակի մամուլը հաղորդել է, որ «Ամեն տեղ նա վայելում էր սեր ու համակրանք, և սիրով իրենց դռները բացում էին նրա առաջ»<sup>28</sup>: Եվ չնայած 7 տարի շարունակ նա կռվում էր հիվանդության դեմ, սակայն չէր դադարեցնում հասարակական գործունեությունը: Նա «չէր կարողանում տանել մեր հասարակական ցավերը,- ասված է մահախոսականում,- նրա բյուրեղանման ոգու վրա անդրադառնում է մեր կյանքի ամեն մի վատ երևույթ, նա զայրանում էր, բորբոքվում՝ տեսնելով այդ կյանքի այլանդակությունները»: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները նրան ուղղակի շշմեցրել էին և «սրտի խորին կսկիծով նա քննադատում էր մեր ազգի ներկա ղեկավարների անուղղելի սխալներն ու անպատրաստությունն այսպիսի... Ժամանակամիջոցում»<sup>29</sup>: Բահաթրյանը տառապում էր հայ ազգի համար: Եվ չնայած հիվանդ էր ու գամված անկողնում, շատ էր մտահոգված հատկապես գաղթականների հարցով:

Սովը Արցախից չէր նահանջում: Օրինակ՝ 1916 թ. Ջիվանչիրի գավառի 250 գյուղերից 50 հայկական գյուղեր, որտեղ ապրում էին 18 հազար հայեր, սովի մեջ էին: Գյուղացիները կարիք ունեին ցորենի, լուցկու, աղի, հագուստի և այլն<sup>30</sup>: Վիճակը շարունակում էր ծանր մնալ Շուշիում: Քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի միջնորդությամբ, Թիֆլիսի քաղաքային վարչությունը ուղարկում է երկու վագոն ալյուր, որը ծով կարիքների համար մի կաթիլ էր<sup>31</sup>: Պատերազմի թողած ծանր հետևանքներից էր Շուշի քաղաքի տրանսպորտային ծառայության քայքայումը: Մի քանի անգամ թանկացել էին սննդամթերքի գները: Այդ ամենը ավերում էր տնտեսությունը:

Պատերազմն ամբողջ ուժով ծանրացել էր նաև Արցախի գյուղի վրա, որի դեմ անուժ էին մաքառել: Ծով կարիքների մեջ գալարվում էր Արցախի գյուղը: Ժամանակի մամուլի հաղորդմամբ, այստեղ վար ու ցանքը, զինագործությունը, շերամապահությունը, այգեգործությունը, անասնապահությունը, թռչնաբուծությունը և այլ ճյուղեր շարունակում էին մնալ իրենց զարգացման նախնական վիճակում և պապենական ժամանակի շրջանակներից չէին անցնում<sup>32</sup>:

Այդ ամենի հետ նաև երկրամասում անտանելի չափերի էին հասել գողությունները, ավազակությունները, յուրացումները: Մամուլը հաղորդում էր, որ ավազակությունը Ղարաբաղում դարձել էր

<sup>28</sup> Երևան, N 68, 4.09.1916:

<sup>30</sup> «Հորիզոն», N 210, 21.09.1916:

<sup>31</sup> «Փայլակ», N 63, 18.08.1916:

<sup>32</sup> Երևան, N 65, 25.08.1916:

<sup>33</sup> Երևան, N 63, 18.08.1916:

զանգվածային: Ավագակային խմբերը փակում էին ճանապարհները, հարձակվում գյուղերի վրա և սարսափ առաջացնում բնակչության շրջանում: Նրանց դեմ պայքարը դարձել էր հրատապ խնդիր<sup>33</sup>: Ավագակային խմբերը, որոնք հիմնականում կազմված էին թուրքերից, հարձակվելով ռուսաբնակ Կուրոպատկինո և Սկոբլևկա գյուղերի վրա, թալանել էին 250 տուն, տարել բավականին խոշոր եղջերավոր անասուններ և ձիեր: Սպանվել և վիրավորվել էին տասնյակ բնակիչներ: «Փայլակը» հաղորդում է, որ այդ կողմերի ավագակապետն է Կարյագինոյի գավառից Սուլեյման Քյազիմ օղլին, նույն ինքը՝ «Սուլեյմանխանը»<sup>34</sup>:

Երկրամասում շատ գյուղացիներ 1912 թ. հետզման օրերից հետո մնացել էին առանց հողի և ստիպված էին բատրակություն անել հողատեր խաների և բեկերի մոտ: Գյուղացիները շարունակում էին մնալ ոչ միայն ճնշված վիճակում, այլև անկարող էին ավագակների դեմ պայքարել: Շատերը, կարիքից ստիպված, վաճառում էին լծկանները, սերմացու չունենալու պատճառով հրաժարվում ցանքսից: Արցախում վիճակը հասել էր մի այնպիսի դրության, երբ գյուղացիությունը բացարձակ զրկվել էր «ամենակենսական և աշխատունակ տարրերից և բանվորական ուժի բացակայության պատճառով ի վիճակի չէ կատարելու տնտեսական աշխատանքի այն մինիմումը, որ կատարում էր նա առաջ»<sup>35</sup>:

Արցախցուն նաև հարվածում էր բնական աղետը, հիմնականում՝ կարկուտը: Որպեսզի հաց ունենա և սովի չմատնվի, արցախցին ստիպված էր վաճառել ամեն ինչ: Քանի որ թուրք քոչվորները զավթել էին Արցախ-Ղարաբաղի հարթավայրային շրջանները, և արցախցիները ստիպված էին ապավինել լեռներին, ուստի նրանք հացի կարիք ունեին, որն ամենաորոշիչն էր: Թուրքերը, որոնք անցել էին նստակյաց կյանքի, զբաղվելով բանբակագործությամբ, ապահովում էին իրենց ապրուստի եկամուտները: Նրանց ձեռքին էին գտնվում հիմնական շուկաները: Ստացվում է, որ արցախցին դարձել էր միայն գնող, որն իր վերջին կոպեկները վճարում էր թուրքին: Հայը իր արգավանդ հողատարածությունները թուրքին զիջել էր ոչ իր ցանկությամբ, այլ պատմական հանգամանքների հետևանքով: Բացի այդ, ցածր էր ամասունների և ցանքերի մթերատվությունն ու բերքատվությունը<sup>36</sup>: Ելքից դուրս գալու լավագույն միջոցը, ժամանակի մամուլի կարծիքով, կոոպերատիվների կազմակերպման ընդլայնումն էր: Արդյունավետ

<sup>34</sup> Նույնը, N 69, 8.09.1916:

<sup>35</sup> Նույնը, N 91, 8.12.1916:

<sup>36</sup> Նույնը:

<sup>37</sup> Նույնը, N 92, 11.12.1916:

գյուղատնտեսության զարգացումը միայն կարող էր փրկել արցախցուն: Առաջարկվում էր ձեռքի աշխատանքը փոխարինել մեքենայական աշխատանքով<sup>37</sup>: Թերևս դրանք էին այն պատճառները, որոնք ստիպեցին 1917 թ. հունվարի 30-ին հրավիրել Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական ընկերության Շուշիի մասնաճյուղի հիմնադիր անդամների ընդհանուր ժողով, որտեղ Ղարաբաղի գյուղատնտեսության վիճակի մասին զեկուցումով հանդես եկավ մենչևիկ Ստեփան Մանդինյանը: Ժողովն ընտրեց վարչություն և ուղիներ նշեց երկրամասի գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: Շուշիի մասնաճյուղի բացմանը նպաստել էր Պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանովը: Վերջինս հույս ուներ, որ ընկերությունը կգործի եռանդուն և արդյունավետ՝ «հոգուս փառավոր Ղարաբաղի»: Ստ. Մանդինյանը առաջարկում էր վերագնահատել բոլոր արժեքները, առանց որի՝ հնարավոր չէր երկրամասի գյուղատնտեսությունը դուրս բերել առաջավոր ուղի<sup>38</sup>:

Առաջին աշխարհամարտից հայերը բարոյապես, ֆիզիկապես և նյութապես շատ էին տուժել: Կովկասի հայությունը, ընդհանուր առմամբ, պատերազմ էր ուղարկել հասուն արական սեռի 60 տոկոսից ավելին: Ստ. Մանդինյանը վերոհիշյալ զեկուցման մեջ նշել է, որ ելնելով դրանից՝ հայը օգնության մեծ կարիք ունի: Կովկասի հայությունը հիմնականում թեքված էր հացահատիկի արտադրության կողմը և քիչ էր մտահոգվում անասնապահության զարգացման հարցով, որովհետև անասնապահությունն իբր քիչ եկամուտ է տալիս տիրոջը: Այն օգտավետ լինելու համար Մանդինյանն առաջարկում էր բարելավել անասունների ցեղայնությունը: Պակաս նշանակություն չունեին, ըստ Մանդինյանի, նաև պտղաբուծությունն ու այգեգործությունը:

Առանձնահատուկ տեղ ունեին թաբուծությունն ու խաղողագործությունը: Արցախցիները զբաղվում էին նաև շերամապահությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Այնուամենայնիվ, ըստ Մանդինյանի, արցախցու հիմնական եկամտաբեր ճյուղը մնում էր հացահատիկային տնտեսությունը: Ուրիշ հարց է, եթե նա զբաղվեր բամբակաբուծությամբ: Իսկ դրա համար նախ և առաջ պետք է ապավինել սպառողական և արտադրական կոոպերացիային:

Վերոհիշյալ ժողովում այգեգործ Գրիգորի Տեր-Ավետիքյանը, հանդես գալով զեկուցումով, նշել է, որ գյուղի տնտեսության և մտավոր հետամնացության հիմնական պատճառներն են զորահավաքը, բռնագրավումները, անբերրիությունը և թանկությունը: Այնուհետև նշել

<sup>38</sup> Նույնը, N 8, 5.02.1917:

է, որ բացակայում են հաղորդակցության միջոցները, սակավաջուր և սակավահող լեռնաստանը անհաշիվ կարիքներ ու հոգսեր ունի, որոնց լուծման գործում մեծ անելիքներ ունեն հատկապես մտավորականները, որոնցից, սակայն, գրկված է Արցախի գյուղը: Արցախը կարիք ունի վարելահողի, կոոպերատիվի, մանր վարկի ընկերության, ճանապարհների, դպրոցական ցանցի, հիվանդանոցների, գյուղատնտեսական գիտելիքների, տնտեսության զարգացման և այլն: Արցախը տուժում է սակավահողությունից, բնական պատահարներից, մորեխից, դաշտային մկներից, անասունների համաճարակից և սնկային հիվանդություններից: Արցախցին տուժում է նաև խանութպանից, վաշխառուներից, տնաբույս միջնորդներից, գավառական անխիղճ աստիճանավորներից, հարկահավաքներից և այլն: Գյուղացին դրամ չունի, ուստի ստիպված է առևտուր անել բնամթերքով: Նա, մշակելով բեկական հողը, եկամտի մեկ երրորդը տալիս է «աղին»: Նա գտնվում է սոսկալի վիճակում: Պետք է գյուղացուն փրկել մեռնելուց, ֆիզիկապես ոչնչանալուց, նրան հնարավորություն տալ իր ձեռքն առնել գավառի պարենավորման ամբողջ գործը<sup>39</sup>:

Ջեկուցողն այնուհետև խոսում է արցախցիների աշխատապայմանների մասին: Ըստ նրա՝ արցախցին 5 անգամ ավելի էր աշխատում և չարչարվում: Բերքահավաքի ժամանակ նա օրական աշխատում է 18 ժամ: Արցախցին չունի թեթև գութան կամ այլ մեքենա: Գյուղատնտեսական ընկերության պարտքն է դրանք ձեռք բերել և Արցախում տարածել: Արցախում պետք է բացվեն կոոպերատիվներ, գյուղատնտեսական տարրական դպրոցներ, գյուղատնտեսական թեմաներով դասախոսություններ կարդալ գյուղացիների համար: Արցախում հողը ցանվում է առանց ընդմիջման, որի պատճառով շուտ է ուժասպառվում: Գյուղացիները չգիտեն, թե հիվանդությունների դեմ ինչպես կարելի է պայքարել: Արցախում ամենից առաջ պետք է զարգացնել բամբակագործությունը, անասնապահությունը և գյուղատնտեսությունը<sup>40</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմից առանձնապես շատ էր տուժել Արցախի մշակութային կյանքը: Որպես ազգային դպրոց մնում էր թեմական հոգևոր դպրոցը: Թեմի առաջնորդ, հոգաբարձության նախագահ Ջավեն վարդապետը 1915 թ. հունվարի 26-ին Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում նշում էր, որ Ղարաբաղի համայն հայության մշակույթի ամենաբարձր հիմնարկներից մեկը՝ թեմական

<sup>39</sup> Նույնը, N 12, 23.02.1917:

<sup>40</sup> Նույնը, N 13, 26.02.1917:

հոգևոր դպրոցը, գերծ չի մնացել պատերազմի հարվածներից: «Այն եկամուտները,- շարունակում է թեմակալը,- որ հոգաբարձութիւնս սպասում էր պատերազմից առաջ, այժմ շնորհիւ հայ գիւղացիների ծայր աստիճան դաժանութեան, յոյս չկայ նոյն իսկ սպասածի կէսն ստանալու, որովհետև նախ, որ պսակների թիւն է զգալի չափով պակասել, երիտասարդները գտնուում են պատերազմի դաշտում, և երկրորդ, որ գիւղերում աշխատող ձեռք չկայ և ժողովուրդը վերև յիշուած այլ և այլ ծանր հարկերի հետ միասին դժուարանում է միաժամանակ լիովին վճարել նաև Վեհափառ Հայրապետի ս. կոնդակով յատկացուած և Սրբազան սինոդով սահմանուած թեմական դպրանոցի հասոյթներ-սրբադրամ, պսակադրամ, թոշակադրամ, մոնավաճար, ծննդեան վկայագրերի տուրք և այլ արդիւնք»: Թեմակալ Ջավեն վարդապետը խնդրում էր կաթողիկոսին՝ թույլատրելու Գանձասարի պղնձահանքի և երկանաքարի կապալավարծը գոնե որոշ ժամանակով հատկացնել թեմական դպրանոցին<sup>41</sup>:

«Փայլակը» գրում էր, որ կրթության գործը իր մենաշնորհը դարձրած հոգևորականությունը, կամա թե ականա, թելադրում է իր կամքը<sup>42</sup>: Ընդհանրապես չէր աճում թեմի դպրոցների թիվը: Ջավեն վարդապետը 1915 թ. հունիսի 30-ին կաթողիկոսին ուղարկած հայտարարության մեջ նշել է, որ թեմի 65 դպրոցները մի կերպ գոյատևում են՝ հիմնականում ծխական տուրքերով և արտաքին միջոցներով: Թեմակալը Վեհափառից օգնություն էր խնդրում Ջիվանչիլի և Նուխիի դպրոցների համար<sup>43</sup>:

«Փայլակը» 1916 թ. օգոստոսին հաղորդել է, որ Ղարաբաղի թեմի բոլոր կրթական հիմնարկները, սկսած թեմականից և վերջացրած ամենավերջին ծխական դպրոցով, ամենաողբալի վիճակում են: Սեփական հասոյթների բացակայությունը և ներկա պատերազմական պայմաններում ժողովրդի տնտեսական քայքայումը գյուղում ստեղծել էին այնպիսի պայմաններ, որ երկրամասի մշակութային հիմնարկների գոյությունը վտանգված էր մասամբ փակվելու, մասամբ իրենց աննախանձելի գոյությունը մի կերպ քարշ տալու: «Ղարաբաղի թեմի,- շարունակում էր թերթը,- գյուղական հայ մասսան ահագին կարիք է զգում դպրոցների. սոցիալությունը հսկայական չափերով թագավորում է տակավին հայ գյուղում. կան շրջաններ, ուր մի քանի տասնյակ գյուղերի մեջ չկա նույնիսկ մի հատիկ դպրոց»: Թերթը համոզված էր, որ յուրաքանչյուր մշակութային քայլ «անպայման կապված է տնտեսական հարցի հետ և այդ ուղղությամբ էլ պիտի գործել: Չպետք է հույս դնել

<sup>41</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2238, թ. 2-3:

<sup>42</sup> «Փայլակ», N 60, 7.08.1916:

<sup>43</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, I մաս, գ. 1054, թ. 28:

<sup>44</sup> «Փայլակ», N 64, 21.08.1916:

մասնավոր նվիրատվության վրա»: Թերթը առաջարկում էր դպրոցներ բացելու և պահելու համար եկեղեցական կալվածքներից ստացած գումարներից կատարել հատկացումներ<sup>44</sup>:

Դպրոցների հարցը հաճախ դառնում էր հասարակության քննարկման առարկա: 1916 թ. հոկտեմբերին տեղի ունեցած թեմի պատգամավորական ժողովը պետք էր քննարկեր հոգևոր կրթական հաստատությունների հետ առնչվող մի շարք հարցեր, որոնք իբրև Ձավեն վարդապետի օրոք մնացել էին չլուծված: Սակայն այդ պատգամավորները թեմական դպրոցի հոգաբարձուներ ընտրելուց բացի ոչ մի հարց չլուծեցին: Իսկ մինչ այդ, սեպտեմբերի 18-ին, բացվել էր Ղուկասյան եղբայրների ներդրված միջոցներով կառուցված Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցը, որը կարևոր իրադարձություն էր<sup>45</sup>:

Ձավեն վարդապետին փոխարինած Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Վահան ծայրագույն վարդապետ Տեր-Գրիգորյանի՝ 1916 թ. օգոստոսին կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղարկած զեկուցագրից իմանում ենք, որ, գալով Շուշի, նրա գլխավոր հոգսերից մեկը հանդիսացել է թեմական դպրոցը, որի դրամական հաշիվները գտնվում էին անկանոն վիճակում, «եկամուտները նւազած, դպրոցը իւրանչիւր տարի 8-10 հազար ռուբլի դեֆիցիտի ենթակայ, հոգեբարոյական կազմի մի մասի ժամանակը դեռ մի տարի առաջ լրացած և նորերի ընտրութեան համար ոչ մի կարգադրութիւն չէղած, յօբելեական նւերներից մի խոշոր գումար դեռ ապառիկ է պարզ անփութութիւն դպրոցի մուտքի գանձման և ծախքի գործադրման մեջ: Այս ամենից է, անտարակոյս, կախումն պիտի ունենայ դպրոցի յառաջադիմութիւնն ու մատաղ սերնդի բարեյաջող դաստիարակութիւնը»<sup>46</sup>: Իսկ մինչ այդ Վահան Տեր-Գրիգորյանի նախաձեռնությամբ օգոստոսի 24-25-ը տեղի ունեցած թեմի պատգամավորական ժողովն ընտրել էր մի վերստուգիչ հանձնաժողով, որը պետք է քններ հոգաբարձության հին կազմի հաշիվները<sup>47</sup>:

Կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են թե՛ թեմական և թե՛ մյուս դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը նկատելիորեն ընկնելու և ցածր մակարդակի վրա գտնվելու մասին: Օրինակ՝ թեմական հոգևոր դպրոցի տեսչի 1916 թ. հոկտեմբերի 14-ին հոգաբարձության անունից արած հայտարարության մեջ ասված է, որ թեմականի հեղինակությունը հետզհետե ընկնում է,

<sup>45</sup> Երկր, N 73, 22.09.1916:

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, I մաս, գ. 1091, թ. 1:

<sup>47</sup> Երկր:

<sup>48</sup> Երկր, 2. 28:

չրջանավարտներից շատ քչերն են ընդունվում բարձրագույն ուսումնական հաստատություններ: Հարուստների երեխաները առանց որևէ դժվարության ընդունվում էին պետական հաստատություններ: Թեմականի մանկավարժական ժողովը, հոկտեմբերի 3-ին քննարկելով այդ հարցը, պահանջել էր թեմականն ավարտածների համար սահմանել որոշ արտոնություններ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար: Այս ուղղությամբ մինչ այդ արված փորձերը դրականորեն չէին լուծվել<sup>48</sup>:

Քաղաքներում ապրող ծնունդով արցախցիներից ոմանք հաճախ կատարում էին նվիրատվություններ դպրոցական նոր շենքեր կառուցելու կամ էր հները վերանորոգելու համար: Նման նախաձեռնությունները արժանանում էին թեմի խրախուսանքին և աջակցությամբ: Շուշիի գավառի Փիրջամալից բաքվաբնակ Միրզա Սարուխանյանը, իր մոր մահվան կապակցությամբ գալով Շուշի, արել է հայտարարություն, որ իր եղբայր Սարգիս Սարուխանյանի հետ, ի հիշատակ իրենց ծնողների, գյուղում դպրոցական նոր շենք կառուցելու համար նվիրաբերում են 6000 ռ., գումար են հատկացնում նաև թեմականին, Մարիամյան դպրոցին, ռեալական ուսումնարանին, բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղին և այլ ձեռնարկությունների: Ընդհանուր նվիրատվության գումարը հասնում էր 37 հազար ռուբլու:

Արցախի թեմի շատ դպրոցներ շարունակում էին մնալ ծանր կացության մեջ: Հասարակությունը բազմիցս հարց էր բարձրացրել, որ թեմին պատկանող կալվածքներից ստացվող եկամուտների մի մասը հատկացվեր նաև դպրոցներին<sup>49</sup>: Սակայն Էջմիածինը դանդաղում էր ընդառաջել այդ պահանջին:

Արցախի հասարակությունը, բնական է, միատարր չէր: Օրինակ՝ Շուշիի հասարակությունը կազմված էր բանվորներից, ծառայողներից, վաճառականներից, արհեստավորներից, ազնվական դասից: Ժամանակակիցներից մեկը մշել է, որ շուշեցու համար գոյություն չունեն հասարակական շահ, նա ապրում էր սահմանափակված առօրյա անձնական շահերով: Նրա կարծիքով, Շուշիում իշխում էր քաղեքնությունը: Եվ ահա այդ մույն հասարակության խոսակցության թեմա էին դարձել թեմական դպրոցը և նրա կոլեկտիվը<sup>50</sup>:

Հասարակությունը պահանջում էր կարգավորել թեմականի գործերը, բարձրացնել նրա հեղինակությունը, հրավիրել ավելի որակյալ և գործունյա ուսուցիչների: Շուշիի հասարակությունը նաև

<sup>48</sup> Նույնը, գ. 1590, ք. 1:

<sup>50</sup> «Փայլակ», N 60, 7.08.1916:

պահանջում էր կարգ ու կանոնն ավելի ամրապնդել քաղաքում, հսկել ապրանքների գները: Չնայած պատերազմի առաջին երկու տարիներին քաղաքը չէր հասել ծայրահեղ աղքատության, այսինքն՝ շաքարի, ալյուրի և այլ մթերքի սուր կարիք չէր զգացվել, սակայն մնացած մթերքի գները բավական բարձր էին: Հենց պատերազմի սկզբից քաղաքի ինքնավարությունը կարողացել էր իր ձեռքը վերցնել պարենավորման գործի կարգավորումը և կենտրոնացնել քաղաք ներմուծվող ապրանքները: Միայն այդ քայլով հնարավոր եղավ լռեցնել բարձրացած տագնապը: Քաղաքում մտցվեց քարտային սիստեմ, որի օգնությամբ կարգավորվեց շաքարի վաճառքը<sup>51</sup>:

Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ Ջավեն վարդապետը աշխատում էր իր ուժերի չափ, հաճախ էլ ավելին: Սակայն կային մարդիկ, որոնք թերագնահատում էին նրա կատարածը: Այդ առթիվ բողոքներ էին ուղարկվում Էջմիածին, նրան վերաբերող նյութեր էին տպագրվում մամուլում: Օրինակ՝ Ղարաբաղի կոնսիստորիայի անդամ Հակոբ ավագ քահանա Այվազյանցը 1914 թ. օգոստոսի 31-ին Էջմիածին Ս. Սինոդին ուղարկած բողոք-մամակում նշում էր, որ ինքը, ավելի քան 30 տարի լինելով պաշտոնյա, ապա կոնսիստորիայի անդամ, տեսել է թեմի շատ կառավարիչների, սակայն ոչ մեկի օրոք ատյանը և թեմը այնպիսի խառնաշփոթ դրության մեջ չեն եղել, ինչպես հիմա են: Այժմ ատյանը, որպես այդպիսին, գոյություն չունի, ամեն ինչ անում և կարգադրում է թեմի կառավարիչ Ջավեն վարդապետը: Նա անում է այն, ինչ ինքն է ցանկանում: Իբրև թեմակալ՝ առանց ատյանի համաձայնության վիճակային գումարներից կատարում է զանազան կողմնակի ծախսեր: Կոնսիստորիայի անդամներն ասես նշանակվել են միայն թղթեր ստորագրելու համար: Վերջում՝ քանի որ Ջավեն վարդապետի մեղքով ամեն ինչ անկարգ դրության մեջ է, և որպեսզի ինքը ապագայում ազատ լինի պատասխանատվությունից, խնդրում է իրեն «ազատ կացուցանի կոնսիստորիայի անդամութիւն պաշտօնից»<sup>52</sup>:

Արդյունքը լինում է այն, որ կաթողիկոսի կոնդակով Ջավեն վարդապետն ազատվում է զբաղեցրած պաշտոնից, և 1916 թ. մայիսի 20-ին Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանը: Վերջինս նույն թվականի հուլիսի 1-ին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան<sup>53</sup>: Նույն ամսվա

<sup>51</sup> Նույնը, N 61, 11.08.1916:

<sup>52</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 5315, ք. 1-2:

<sup>53</sup> «Փայլակ», N 145, 2.07.1916, «Արարատ», 1916, N Թ-Ժ, էջ 625:

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 760, ք. 7:

22-ին Ս. Սինոդին ուղարկած Վահան վարդապետի գրությունից տեղեկանում ենք, որ նա արդեն ընդունել էր առաջնորդական գործերը, գույքը և հուլիսի 8-ին կոնսիստորիայի ատյանում տվել երդում ու ստանձնել պաշտոնը<sup>54</sup>:

Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանը ծնվել է 1860 թվականին Մեղրիում: Սովորել է Ս. Էջմիածնի ճեմարանում և ավարտել դասարանական բաժինը: Քահանայական աստիճան է ստացել 1885 թվականին: Կնոջ մահից հետո մտել է վանք: 1913 թ. նշանակվել է Տաթևի վանքի փոխանորդ: 1917 թ. ապրիլի 16-ին ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Արցախի թեմի կառավարիչ<sup>55</sup>:

1916 թ. դեկտեմբերի 22-ին Շուշիի դպրոցական, ծխական հոգաբարձությունները և հասարակությունը մի խնդրագիր էին ուղարկել Գևորգ Ե կաթողիկոսին, որտեղ ասված է, որ 1830-ական թվականներից հետո Ղարաբաղի թեմն ունեցել է շատ արքեպիսկոպոս և եպիսկոպոս առաջնորդներ, նաև փոխանորդ վարդապետներ. սակայն «վերջին տասն տարին մեզ շարունակ տրուում են վարդապետ կառավարիչներ, որոնք որքան էլ իրենց պաշտոնի արժանապատվութեան տեղը լինեն, այնուամենայնիւ ժողովրդի, առհասարակ հասարակութեան, պաշտոնական մարմինների, կառավարութեան և մեր հարևան ազգերի առաջ չեն կարող ունենալ այն նշանակութիւնը, որ կարող են ունենալ իսկական առաջնորդը և եպիսկոպոսը»: Ապա նշելով, որ կաթողիկոսի ուղարկած «վերջին կառավարիչ Վահան ծայրագույն վարդապետ Տեր-Գրիգորյանը, ըստ ամենայնի, գոհացում է պատճառում հասարակութեանս իղծերին, իբրև եկեղեցատէր, դպրոցատէր, անաչառ և շիտակ պաշտօնեայ եկեղեցւոյ, և իւր առաջնորդական կառավարութեան»: Թվարկելով Վահան Տեր-Գրիգորյանի բոլոր արժանիքները՝ հեղինակներն իրենց նամակն ավարտում են հետևյալ խնդրանքով. «Ամենախոնարհաբար խնդրում ենք տ. Վահան ծայրագույն վարդապետին արժանացնել Ձեր Վեհափառ շնորհաց՝ ձեռնադրելով նրան եպիսկոպոս և նշանակելով մեր թեմի հաստատուն առաջնորդ»<sup>56</sup>:

Կաթողիկոսը ջերմորեն արձագանքել է արցախցիների այդ խնդրանքին:

<sup>54</sup> Նույնը, ֆ. 57, ց. 2, I մաս, գ. 932, թ. 18:

<sup>56</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 626:

## 6. ԱՐՑԱԽԻ ԵՎ ՆՐԱ ԹԵՄԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ (1917-1920 թթ.)<sup>1</sup>

1917 թ. փետրվարի վերջին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը տապալեց Ռոմանովների երեքհարյուրամյա տիրապետությունը: Ռուսաստանը դարձավ ժողովրդական պետություն, որի հիմնական ձեռքբերումներից էր Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների ազգային ինքնորոշման պահանջը: Հեղափոխությունից հետո, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Արցախ-Ղարաբաղում, վերելք էր ապրում ազգային շարժումը և աշխուժություն ապրում հասարակական-քաղաքական կյանքը: Կամա թե ակամա, երկրամասի հոգևոր կյանքը ևս պետք է առնչվեր այդ ամենին և թողներ իր ազդեցությունը: Եվ ահա Վահան ծայրագույն վարդապետը, որը, ինչպես նշվել է, ապրիլի 16-ին ձեռնադրվելով որպես եպիսկոպոս և հաստատվելով թեմի կառավարիչ, Եղիշե Իշխանյանի բնորոշմամբ, «չատ համեստ մարդ էր», «հարգված ժողովրդի կողմից» և «հեզ ու համեստ պաշտոնյա եկեղեցում»<sup>2</sup>: Նա ակտիվորեն ներքաշվեց բազում հարցերի լուծմանը, և չկար որևէ խնդիր, որտեղ նրա օգնության կարիքը չզգացվեր:

Այդ օրերին Թիֆլիսի քաղաքապետից ստացված հեռագիր-հանձնարարականը Շուշիի քաղաքապետին առաջարկում էր քաղաքում և գավառում կարգը պահպանելու համար կազմակերպել քաղաքի բնակիչներին՝ ու ընթացք տալ քաղաքական կուսակցություններին: Խորհուրդ էր տրվում հարաբերությունների մեջ մտնել «գավառի իշխանության հետ, որպեսզի չստեղծվի անարխիական անիշխանություն թեկուզ ամենակարճ ժամանակով»<sup>3</sup>:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակին նվիրված միտինգներ ու ցույցեր էին տեղի ունենում թե՛ Շուշիում և թե՛ գավառի մի շարք այլ բնակավայրերում: Մարտի 11-ին մեծ միտինգ տեղի ունեցավ Վարարակն ավանում, որտեղ ելույթ ունեցան Հարություն Թունյանը, Հայրապետ Սուսայեյանը և Լևոն Բաբայանը, որոնք հավաքվածներին բացատրեցին հեղափոխության նշանակությունը<sup>4</sup>:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո իշխանության

<sup>1</sup> Քանի որ արցախահայության 1917-1933 թթ. սոցիալ-քաղաքական խնդիրների մասին խոսվել է մեր «Մարտչնող Արցախը» մեմագրության Ա և Բ գրքերում, հետևաբար, այդ հարցին այստեղ կանդորադառնանք համառոտակի:

<sup>2</sup> Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Ե., 1999, էջ 140 և 307:

<sup>3</sup> «Փայլակ», 12.03.1917:

<sup>4</sup> «Հորիզոն», 29.03.1917:

եկած ժամանակավոր կառավարությունն ստեղծեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿՕՍ), որի կարգադրությամբ հիմնվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ: Մարտի 13-ին՝ երկար վարանումներից և ձգձգումներից հետո, կազմակերպվեց 39 հոգուց բաղկացած Ղարաբաղի գործերի կոմիտե (ՂԳԿ), որը ղեկավարում էր երկրամասը<sup>5</sup>: Կոմիտեն ընտրեց 8 հոգուց բաղկացած նախագահություն և ստեղծեց վարչական, կազմակերպչական, պարենային և քարոզչական հանձնաժողովներ: Բոլշևիկյան «Պայքար» շաբաթաթերթի վկայությամբ, Ղարաբաղի նահանգային գործադիր կոմիտեի մեջ մտնող պատգամավորներից շատերը «հին ռեժիմի գործակալներ էին և ժողովրդի թշնամիներ»<sup>6</sup>:

Փաստորեն, ցարական նախկին պաշտոնյաներն ամբողջ նահանգում մնացին տեղերում և շարունակում էին իրենց հակաժողովրդական քաղաքականությունը: Մարտի 17-ին պաշտոնից ազատվեց Շուշիի գավառապետ Դղեբուաձեն, և կոմիսար հաստատվեց Կոբիևը: Մինչդեռ երկրամասում գործող քաղաքական ուժերը՝ դաշնակները, էսեռները, մենշևիկները, բոլշևիկները և կադետները, պայքարում էին երկրամասում ժողովրդական իշխանություն հաստատելու համար:

1917 թ. մարտի կեսերին Ղարաբաղում առաջ եկան բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների առաջին խորհուրդները: Ստեղծված թաղային կոմիտեները զբաղվում էին թաղամասերի բնակիչների ներքին կյանքով՝ պարենավորում, ոստիկանության կազմակերպում, մարդկանց կյանքի պաշտպանում, մաքրության հետևում և այլն:

Ժամանակի հրատապ խնդիրներից էր քաղաքի բնակչությանը պարենով ապահովելու հարցը: Ստեղծվում է պարենային կոմիտե, որը գլխավորում է իրավաբան Ստեփան Մանդինյանը: Շուշի քաղաքի չքավորներին էժան գնով հաց մատակարարելու համար հայկական և թուրքական թաղամասերում ստեղծվում են հանձնաժողովներ: 1917 թ. գարնանը և ամռանը Ղարաբաղում ստեղծված տնտեսական ծանր պայմանները նկարագրում է Արամայիսը՝ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին Խաչենի, Վարանդայի և Դիզակի գավառներից ստացած իր տպավորությունների մեջ<sup>7</sup>: Նա գրել է. «Բացի տնտեսական ողբալի կացութանը, Ղարաբաղի վրայ մղջավանջի նման ծանրացած է ընդհանուր անապահովութիւնն ու ֆիզիկական գոյութիւն

<sup>5</sup> «Փայլակ», 16.03.1917:

<sup>6</sup> «Պայքար», 30.04.1917:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 22, թ. 1-31:

<sup>8</sup> Նույնը, թ. 9:

վտանգուածութիւնը, մանաւանդ հայկական մասերում»<sup>9</sup>:

Թուրք ազգայնամուլներն իրենց ազգակիցներին գրգռում էին հայերի դէմ և փորձում վերականգնել 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների մթնոլորտը: Դրա համար նրանք ազգակիցներին համոզում և ստիպում էին զենք գնել, կուտակել և նախապատրաստվել հայերի դէմ պայքարելու: Եվ պատահական չէ, որ Արամայիսը իր հուշերում պատմում է. «Յիդափոխութիւնից յիտոյ, մեր հարեւան թուրքերը սկսեցին... զինել. առանց այն էլ նրանցում զենքերն անպակաս էին»: Դա խոստացել էին թուրք պարագլուխները՝ շեշտելով, որ թուրքերը «առանց զենքի ապրիլ չէին կարող», իսկ հեղափոխությունից հետո «նրանք գլխովին զինուիցին»<sup>9</sup>: Բավականին բարձրացել էր զենքի գինը: Արամայիսը նշում է, և որ սոված «հայ զավառականը շլացաւ այդ բարձր գներից» և որ մեկ հրացանը վաճառվում էր 800-1000 ռ., մի փամփուշտը՝ 50 կոպեկ: Յենց այդ բարձր գնի հետևանքով է, որ «հայկական մասից զենքերը կամաց-կամաց չուիցին դեպի թրքական մասը»<sup>10</sup>: Ու մի օր էլ հայկական զավառները կանգնեցին կատարված փաստի՝ անզենության առաջ: Յեղիմակը օրինակ է բերում հայրենի Փիրջամալ գյուղը, որն առաջ ուներ 12 մոսիմի, 19 բերդանկա, 6000 փամփուշտ, 8000 պիստո, 2000 զիլզ, մի փութ վառող, իսկ 1917-ի գարնանը ընդամենը մնացել էր 4 բերդանկա, 3 մոսիմի, 700 փամփուշտ, ոչ մի զիլզ, ոչ մի պիստո, ոչ մի գրամ վառող: Բոլորը վաճառել էին թուրքերին<sup>11</sup>:

Թուրքերը հլու-հնազանդ ենթարկվում էին իրենց պարագլուխներին և կատարում նրանց բոլոր պահանջները՝ առանձնապես զենք գնելու և պահեստավորելու հարցում:

Յեղափոխությունից հետո Արցախ-Ղարաբաղում դժվար լուծելի հարց էր դարձել նաև հողային հարցը: Դա արդեն արցախցու համար «...հին խնդիր է, երկար ու ձիգ, անհիշելի ժամանակներից ի վեր սպասում է յուր լուծմանը»: Սակայն ակնհայտ է, որ երկրամասի «հողերի ահագին մասը, քաղաքական իրավունքների ու տնտեսական շահերի ամբողջ ուժը կենտրոնացած» էր «բեգերի ու մելիքների դասի ներկայացուցիչների ձեռքում, որոնց հանդէպ սակավահող, երբեմն իսկ հողազուրկ գյուղացիությունն օրհասական տնտեսական պայքար» էր «մղում միշտ կաշկանդված, հալածված յուր իրավունքներում, յուր շահերում»<sup>12</sup>:

Ղարաբաղի գործադիր կոմիտեի ուշադրության կենտրոնում էր

<sup>9</sup> Նույնը:

<sup>10</sup> Նույնը:

<sup>11</sup> Նույնը, էջ 10:

<sup>12</sup> «Փայլակ», 9.05.1917:

գտնվում ազգային հարցը: Սակայն կոմիտեն վճռական ոչինչ չէր կարող անել, որովհետև նրա կազմի մեծամասնությունը, լինելով մոսուլման ունևոր, հիմնականում վարում էր ազգայնամոլ քաղաքականություն: Հենց նրանց քաղաքականության հետևանքով հետզհետե սրվում էին ազգային հարաբերությունները:

Եվ այսպես՝ թե՛ պարենի, թե՛ հողի, թե՛ ազգային և թե՛ այլ հարցեր մնում էին անլուծելի: Հետագայում՝ 1918-1920 թվականներին, Արցախ-Ղարաբաղի հիմնահարցերը փորձում էին լուծել երկրամասի հայության համագումարներում: Այդպիսի համագումարներ հրավիրվել են 10 անգամ: Իսկ ի՞նչ դիրքորոշում ուներ Արցախի թեմը այդ խառն ու խռովահույզ շրջանում:

Ինչպես նշվել է, Առաջին համաշխարհային պատերազմը մեծ հարված էր հասցրել Արցախի ոչ միայն տնտեսությանը, այլև հասարակական-քաղաքական կյանքին ու մշակույթին: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով փակվել էին տասնյակ դպրոցներ, որոնց վերաբացման համար Վահան եպիսկոպոսը բազմիցս դիմումներ ու խնդրագրեր է հղել Էջմիածին, Երևան, Բաքու և Թիֆլիս: 1918թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղարկած նամակում նա հայտնում է, որ վերջին երկու տարում Արցախում դրությունն այնքան ծանր է, գլխավորապես տնտեսական տեսակետից, որ երկրամասի կրթական հիմնարկները, ամենից առաջ թեմական դպրոցը, ենթարկվել են վտանգի: «Այդ կրթարանները,- շարունակում էր թեմի առաջնորդը,- պահելու համար ժողովուրդը ուժ չունի, իսպառ ցամաքեցին սովորական եկամտի աղբյուրները»: Եվ ապա՝ «... Ազգային այդ հիմնարկները պահպանելու, մատաղ սերնդին կորստից փրկելու համար մնում է մի ելք, հույսի մի ճանապարհ, որին պետք է ձեռք կարկառվի: Եվ այս հույսը մեր փայփայած Հայաստանի Հանրապետությունն է, որին ստիպված են ձեռք մեկնել»: Վահան եպիսկոպոսը խնդրում է օժանդակություն ցույց տալ Արցախի դպրոցներին, որտեղ գյուղական դպրոցներից ոչ մեկը չէր գործում, չէին գործում նաև Շուշիում եղած ծխական հինգ դպրոցները: Իսկ վերջում՝ «Թեպետ գիտեմ, որ Հայաստանի Հանրապետությունը, որպես մի նորածին կառավարություն, որն ունի ավելի մեծ հոգսեր ու կարիքներ, բայց և այնպես հավատացած եմ, որ կրթության գործը պետք է թանկ լինի հանրապետության համար և նա չի խնայի ըստ հնարավորության օգնության ձեռք մեկնելու մեր կրթական հիմնարկներին»<sup>13</sup>:

Արցախում շարունակում էր գործել Շուշիի ռեալական

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5:

ուսումնարանը, որի հոյակապ շենքը, ինչպես նշվել է, կառուցվել է շուշեցի մեծահարուստ Գրիգոր Առաքելյանի միջոցներով 1901-1908 թվականներին: Ուսումնարանը բացվել էր 1881 թվականին և Կովկասում գործող 9 ռեալական ուսումնարաններից մեկն էր: Ռեալականի աշակերտների թիվը տարեցտարի ավելանում էր: Այն գրեթե գործում էր անխափան: Եթե առաջին տարում ունեցել է 234 աշակերտ, 1905-1906 ուսումնական տարում՝ 354, ապա 1919-1920 ուսումնական տարում՝ 466<sup>14</sup>:

Արցախ-Ղարաբաղում քաղաքական վիճակը սկսել էր ավելի բարդանալ 1918 թ. գարնանը թուրքերի հարձակման հետևանքով: Հենց նրանց հրահրմամբ թուրք-ազերիները հարձակումներ էին գործում Արցախի ծայրամասային գյուղերի վրա, սրախողխող անում մարդկանց, թալանում, վառում տները, տանում անասունները, փակում Բաքու և Գորիս տանող ճանապարհները, հրաժարվում սննդամթերք վաճառելուց:

Այդ ժամանակ ևս շատ լուրջ խնդիր էր անասուններին ամառային արոտավայրեր տանելու հարցը: Ամեն ամառ թուրք անասնապահները իրենց հոտերով բարձրանում էին Ղարաբաղի լեռնային արոտավայրերը: Նրանք ճանապարհին մեծ վնասներ էին հասցնում արցախցիների ցանքերին ու այգիներին: Քոչին՝ Արցախի տարածքով ամառային արոտավայրեր բարձրանալու թույլտվություն տալու հարցը, քննարկվեց 1918 թ. ապրիլի 26-ին Ղաշբուլաղ գյուղում հրավիրված Ասկերանի շրջանի գյուղացիների համագումարում: Այդ համագումարի աշխատանքներին մասնակցում էր նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսը<sup>15</sup>: Նա միաձայն ընտրվում է համագումարի պատվավոր նախագահ: Թեմի առաջնորդը «խրախուսանքի խոսք ուղղեց ժողովուրդներին, որ աչալուրջ լինեն դրունձ ժանրակշիռ խնդիրը լուծելու, և ջանում էր այնպիսի որոշում կայացնել, որ չխախտի խաղաղութիւնը և չվնասի մեր ժողովուրդը»: Նա կոչ արեց՝ պատգամավորներն իրենց գյուղերը վերադառնալ, «ամեն կերպ ջանան ժողովրդի մէջ համերաշխութեանը զարկ տալ և խուսափեն անիշխանական քայլերից և թիկունք հանդիսանան ազգային իշխանութիւններին, մեր ժողովրդի կեանքի փրկութեան համար»<sup>16</sup>:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Արցախի առաջադեմ ուժերը պայքարում էին երկրամասում աշխատավորների քաղաքական իշխանություն հաստատելու համար: Այստեղ

<sup>14</sup> Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Ե., 2001, էջ 24:

<sup>15</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 140-141:

<sup>16</sup> Նույնը, էջ 141:

գյուղացիները կազմակերպված գրավում էին կալվածատիրական ու վանքապատկան հողերը և հրաժարվում հարկեր մուծելուց: Այնուամենայնիվ, քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները խիստ անհանգիստ էին, հատկապես նրա համար, որ երկրամասից սկսել էին հեռանալ զորամասերը: Արդեն 1918թ. հունվարի վերջին Անդրկովկասում այլևս ռուսական բանակ չկար<sup>17</sup>:

1917թ. դեկտեմբերի 16-ին, սպա Նիկոլայ Իսախանյանի նախաձեռնությամբ, կազմվեց Հայ զինվորական միության Ղարաբաղի ճյուղը, որը շտապ ստեղծեց 150 հոգուց բաղկացած վաշտ: Այն պետք է տեղավորվեր զորանոցում և պահպաներ քաղաքի անդորրը: Այդ ժամանակ Շուշիում և գավառում ստեղծվել էր խիստ տազնապալի վիճակ: Երկրամասը բոլոր տեսակի սադրանքներից զերծ պահելու և ժողովրդի անդորրը պահպանելու համար քաղաքական ուժերը որոշում են հրավիրել հայ քաղաքական ուժերի ներկայացուցիչների ժողով և վճռել հետագա անելիքները: Ժողովը տեղի է ունենում դեկտեմբերի 23-ին իրավաբան Լևոն Վարդապետյանի բնակարանում, որին մասնակցում էին քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները: Ժողովը, հանգամանորեն քննության առնելով ստեղծված լարված դրությունը, միաձայն հանգում է այն եզրակացության, որ պետք է ստեղծել մի քաղաքական մարմին, որը պետք է կազմակերպի երկրամասի աշխատավորներին, վերջ տա գլուխ բարձրացրած անիշխանությանը, հնարավոր բոլոր միջոցներով ապահովել խաղաղությունն ու համերաշխությունը հայերի և մուսուլմանների միջև և երկրամասը դուրս բերել շրջափակումից: Ժողովը, ելնելով երկրամասում ստեղծված իրավիճակից, որոշում է ստեղծել ժամանակավոր մի մարմին, որը պետք է իր ձեռքում կենտրոնացներ երկրամասի օրենսդիր և գործադիր իշխանությունները: Այն պետք է գոյություն ունենար մինչև Ղարաբաղի հայության համագումար հրավիրելը: Այդ մարմինն անվանվեց ժամանակավոր խորհուրդ կամ Միջկուսակցական բյուրո: Դեկտեմբերի 24-ին տեղի է ունենում ընտրություն: Ժամանակավոր խորհրդի կազմում ընտրվում են Դաշնակցությունից` Հայրապետ Մուսայեյան, Անուշավան Տեր-Միքայելյան, Եղիշե Իշխանյան, Հարություն Թումյան, Ասատուր Ավետիսյան, մենչևիկներից` Լևոն Վարդապետյան, Աշոտ Մելիք-Հովսեփյան, Նիկոլայ Իսախանյան, էսեռներից` Ջիփսիմե Տեր-Միքայելյան, Արամ Միքայելյան, Ալեքսանդր Մելքունյան, բոլշևիկներից` Ալեքսանդր Ծատուրյան (Ռուբեն), Արմենակ

<sup>17</sup> Քաջագունի Չոփ., ՀՀ Դաշնակցությունն անելիք չունի այլևս: Թիֆլիս, 1924, էջ 27:

Ղարագոյոյան (Կարակոզով) և Մելիքսեթ Եսայան: Ժողովը բաց քվեարկությամբ բյուրոյի նախագահ է ընտրում Հայրապետ Մուսայեյանին, տեղակալներ՝ Աշոտ Մելիք - Հովսեփյանին և Եղիշե Իշխանյանին, քարտուղար՝ Արամ Միքայեյանին<sup>18</sup>: Երկու օր անց բոլշևիկների ներկայացուցիչները հրաժարվում են մասնակցել խորհրդի աշխատանքներին: Բոլշևիկների այդ քայլը վրդովմունք առաջացրեց մյուս քաղաքական կուսակցությունների, մտավորականության և աշխատավորության շրջաններում:

Մուսուլմանների հետ հարաբերությունները կարգավորելու համար դեկտեմբերի 25-ին քաղաքի Հասարակական ակումբում տեղի ունեցավ հայ և թուրք ներկայացուցիչների միացյալ ժողով, որտեղ որոշվեց գավառական գործադիր խորհրդի փոխարեն ստեղծել Հայ - թուրքական կոմիտե անունով նոր մարմին, որը պետք է ղեկավարեր ամբողջ երկրամասը: Այդ ժողովում էլ ժամանակավոր խորհրդի կազմի մեջ են մտնում յոթ հոգի: Երկու կողմերի համաձայնությամբ, միացյալ կոմիտեի նախագահ ընտրվեց Շուշիի նախկին հաշտարար միջնորդ, ազգությամբ վրացի Յոսիֆ Իլարիոնովիչ Կոբիևը: Դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած Հայ - թուրքական կոմիտեի առաջին համատեղ միստը Կոբիևի տեղակալներ ընտրեց Հայրապետ Մուսայեյանին և Լյուֆտալի բեկ Բեհբուդովին: Չմայած կոմիտեն բավականին աշխատանք կատարեց Արցախ - Ղարաբաղում, այնուամենայնիվ, երկրամասը դուրս չբերվեց ճգնաժամային վիճակից: Արցախում հետզհետե վիճակը դառնում էր անտանելի, լցվել էր ժողովրդի համբերության բաժակը, և կայուն իշխանության կարիք էր զգացվում<sup>19</sup>:

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասի հանրապետությունը փլուզվեց. մայիսի 26-ին և 27-ին վրացական ու ադրբեջանական ազգային խորհուրդների կողմից հռչակվեց Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների անկախությունը, իսկ մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: Ավելի քան հինգ դար առաջ կորցրած պետականության վերականգնումը հայ ժողովրդի դարավոր իղծն էր: Այդ բաղձալի լուրը աշխարհին հայտնեցին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը: Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն» և «ժամանակավորապես ստանձնում է կառավարական

<sup>18</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 83:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.33, ք.11:

բուրո ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»<sup>20</sup>:

Հայկական պետության վերականգնումը բեկունճային իրադարձություն էր հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ:

Այդ ժամանակ Բաքվում իշխում էր Կոմունան: Թուրք մուսավաթականները որոշեցին Թուրքիայի հովանավորությամբ ծնված իրենց նորահայտ պետությունը անվանել «Ադրբեջան» և այն կազմակերպել Ելիզավետպոլի նահանգում: Այնտեղ բնակվում էին շուրջ 300 հազար հայեր: Նորաստեղծ թուրքական այդ պետության նստավայր հայտարարվեց հայոց Գանձակը, որը թուրքերը վերանվանեցին Գյանջա: Թուրք-ազերիների քաղաքականության մեջ էր մտնում Գանձակից մինչև Բաքու ընկած տարածքում բնակվող հայերին լիովին բնաջնջել: Եվ այդ ոճրի իրագործումը չուշացնելու հանգամանքներ էին որոնում: Ամբողջ Նուխի-Արեշի հայությունը, որը մտնում էր Ղարաբաղի թեմի մեջ, ընկավ շրջափակման մեջ: Նախիջևանում, Օրդուբադում, Ազուլիսում և Գանձակում զանգվածային ջարդեր կազմակերպելուց հետո թուրքերը նույն ոճրագործությունը շարունակեցին Շամախու, Գյոզչայի, Արեշի, Նուխի հայության նկատմամբ: 1918թ. փետրվար-մարտ ամիսներին Նուխի-Արեշում ոչնչացվեց 18 հայկական գյուղ, և սրի մատնվեց 17 հազար մարդ, տեղահանվեցին Խաչմազի և Լենթրոռնի հայերը, ծանրացավ Ղուբայի հայության վիճակը: Մարտին թուրքերը ավերեցին Շամախու հայկական թաղամասը և 20-25 հայկական գյուղեր: Մոտ 25000 հայեր ապաստան գտան Մազրա և մյուս ռուսական գյուղերում: Նույն թվականի մայիս-հունիսին Նուխի-Արեշի 52 հայկական գյուղերից արդեն 42-ը ոչնչացվել էին, սրի էին մատնվել 40 հազար տեղաբնակ հայեր<sup>21</sup>:

Այսպիսով, Արցախի թեմը զրկվեց իր արևելյան շրջաններից:

«Ադրբեջանի» թուրքական իշխանությունը փորձում էր ավագ եղբայր թուրք դահիճների օգնությամբ տիրանալ ամբողջ Արցախ-Ջանգեզուրին և Գանձակի հայկական շրջաններին: Հետզհետե ավելի էին ծավալվում ադրբեջանական թուրքերի իշխող խավի ծավալապաշտական նկրտումներն ու ախորժակը: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրով հայկական հանձնաժողովը իրաժարվել էր նախկին Ելիզավետպոլի նահանգի մեջ մտած հայկական շրջաններից, նախ և առաջ Արցախ-Ջանգեզուրից: Թուրքերը, ձեռքի տակ ունենալով

<sup>20</sup> Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 161:

<sup>21</sup> Նույնը, էջ 169, նաև՝ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 161:

Բաթունի պայմանագիրը, մտածում էին ճանապարհ բացել Նախիջևան-Ջանգեզուր-Ղարաբաղ գոտիով, իսկ դա նշանակում էր այդ տարածքները խլել Հայաստանից, ամբողջովին հայաթափել և բնակեցնել մուսուլմաններով: Այդ ամենի դեմ ոտքի ելավ Արցախ-Ջանգեզուրի հայությունը և վճռեց հայրենի ոստանը պաշտպանել թուրքերի ոտնձգություններից: Դրանում ավելի վճռական արտահայտվեց 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցած Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Համագումարի աշխատանքներին մասնակցեց թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը: Համագումարը Արցախ-Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած կառավարություն, որն իրագործում էր թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր մարմինների գործառույթներ: Սրանով հռչակվում էր Ղարաբաղի ինքնիշխան և անկախ վարչատարածքային միավոր լինելը: Համագումարն ընտրում է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն<sup>22</sup>:

Համագումարը կարևոր նշանակություն ունեցավ բիրտ ուժերի դեմ երկրամասի աշխատավորների հետագա պայքարը կազմակերպելուն և երկրամասում ժողովրդավարական կարգեր հաստատելուն միտված գործում:

Երկրամասի անվտանգությունն ապահովված չէր: Արցախի նորաստեղծ կառավարությունը նախ և առաջ սկսեց ամրապնդել երկրամասի պաշտպանությունը: Թուրք դահիճների հայաջինջ քաղաքականությունը չսահմանափակվեց 1915 թ. եղեռնով: Այն շարունակվեց նաև հետագա տարիներին՝ առանձնապես 1918-1920 թվականներին, երբ նրանք քայլեր ձեռնարկեցին բնաջնջելու Անդրկովկասի հայությանը: Այս ծրագիրը դարձավ թուրք նվաճողների քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Այդ նոր ոճրագործությունն արագացնելու համար 1918 թ. գարնանից սկսած թուրք նվաճողները շտապում էին Երևան և Բաքու: Թուրք դահիճները ձգտում էին դառնալ ամբողջ Անդրկովկասի տերն ու տիրակալը: Այդ օրերին Էնվեր փաշայի հրամանով Թավրիզի վրայով թուրքական կադրային զորքեր էին փոխադրում Ելիզավետպոլ՝ մուսավաթական իշխանության և Ադրբեջանի խան-բեկական հետադիմական ուժերի կենտրոն: Թուրքական զորամասերը տեղ հասան մայիսի 25-ին՝ Անդրկովկասի սեյմի լուծարման նախօրյակին: Հավաքակալյան ժամանեց նաև Նուրի փաշան, որի հրամանատարության տակ դրվեց

<sup>22</sup> Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Ա, էջ 50-51:

նուսավաթականների վերակազմավորած և 1918 թ. ռազմաճակատից տուն վերադարձող ռուսական զորամասերին ոչնչացրած ու թալանած զենքերով զինված «վայրի դիվիզիան»: Քանի որ Արցախ-Ղարաբաղը խոչընդոտ էր Ջուլֆայի գծով և Գանձակից դեպի Բաքու շարժվող թուրքական զորամասերի միացման համար, ուստի Կովկասում թուրքական բանակի հրամանատար Ֆերիք Նուրի փաշան շտապում էր, որքան հնարավոր էր, շուտ հնազանդեցնել Ղարաբաղն ու Ջանգեզուրը: Այդ նպատակով նա հուլիսի կեսերին Գանձակից Շուշի ուղարկեց հայերից և թուրքերից կազմված մի պատվիրակություն, որ Ղարաբաղի բնակչությանն ահաբեկեն՝ առանց դիմադրության ընդունելու թուրքական իշխանությունների և Ադրբեջանի նուսավաթական կառավարության կարգադրությունները՝ «Ղարաբաղի դեմ ձեռնարկվելիք լուրջ միջոցառումներից խուսափելու» համար<sup>23</sup>:

Թուրք դահիճը, ստանալով արցախահայության մերժումը, օգոստոսի 18-ին հանդես գալով զրպարտչական մի կոչով, նախ՝ մեղադրեց այդ ժամանակ Ջանգեզուրում գտնվող զորավար Անդրանիկին, թե իբր նրա հրահանգով են հայերը մերժում թուրքազերիների իշխանության պահանջները, և հետո՝ Ղարաբաղցիներին զգուշացնում էր, թե նրանց հետ կվարվեն այնպես, ինչպես արել են Ադանայում: Նա առաջին անգամ հայտարարեց, թե «Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի հանրապետության անքակտելի մասը»: Ապա սպառնում է զենքի դիմել, եթե հայերը չդադարեցնեն դիմադրությունը<sup>24</sup>:

Արցախ-Ջանգեզուրում և մյուս հայկական շրջաններում հայերը գայրույթով ընդունեցին Նուրի փաշայի հորդորանքներն ու սպառնալիքները: Նրանք պատրաստ էին մինչև վերջին շունչը դիմադրել թուրք-նուսավաթական հորդանքերին, քանի որ նրանց համար անկախ ապրելն ու միասնական լինելը վեր էին ամեն տեսակի զգացումներից: Դրա առաջին քննությունը 1918 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին տեղի ունեցած Բերդաձորի հերոսամարտն էր, որտեղ արցախցիներն ապացուցեցին, որ իրենք պատրաստ են հայրենի հողը պաշտպանել արյամբ:

Հայության համար հաջորդ ողբերգությունը տեղի ունեցավ Բաքվում 1918 թ. սեպտեմբերի 15-18-ին: Բախշի Իշխանյանի հաշվումներով, Բաքվի հայերի զոհերի թիվը հասել է մոտ 30 հազարի, իսկ նյութական կորուստը՝ 945724017 ռուբլու<sup>25</sup>:

Այդ ամենի մասին դառնությամբ ու գայրույթով իմացան

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 62:

<sup>24</sup> «Մշակ», 18.02.1918, «Աշխատավոր», 18.09.1918:

<sup>25</sup> Իշխանյան Բ., Բաքվի մեծ սարսփները, Թիֆլիս, 1920, էջ 187:

արցախցիները: Չէ՞ որ այդ զոհերի մեջ շատերը նրանց հարազատներն էին ու հայրենակիցները:

Թուրքերի կողմից Բաքվի գրավման և տեղի ունեցած ողբերգության լուրը Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսն ընդունեց խոր դառնությամբ: Նա չէր կասկածում, որ թուրք-դահիճներն իրենց ուժերը կշրջեն նաև դեպի Արցախ-Չանգեզուր: Այդ ժամանակ Վրաստանում գտնվող Հայաստանի Հանրապետության հավատարմատարը գերմանացի գեներալ Ֆոնկրեսսի հետ ունեցած զրույցի ժամանակ նրան զգուշացրել է, որ այդ «ձեռնարկը կարող է թուրքերին և ադրբեջանցիներին արժան չնստել, որովհետև Ղարաբաղի հայերը ռազմական այլ ընդունակութիւններ ունին, քան ուրիշ վայրերինը»: Հավատարմատարը ենթադրում էր, որ եթե «այդ առաջխաղացումը յաջողութեամբ պսակուի, դա հաւասար կը լինի հայերի զանգվածային բնաջնջումին»<sup>26</sup>:

Բաքուն արյան մեջ խեղդելուց հետո Նուրի փաշայի հրամանով թուրք-ազերիների հրոսախմբերը ներխուժեցին Արցախ-Ղարաբաղ: Թուրքական մի բրիգադ, ազգությամբ չերքեզ Ջեմիլ Ջահիդ-բեյի հրամանատարությամբ և թուրք բեկերի առաջնորդությամբ, Եվլախից շարժվում են դեպի Շուշի՝ ճանապարհին սփռելով մահ և ավերածություն: Դավիթ Անանունը գրել է, որ թուրքերը հասնելով Աղդամ, երկու գրոթյուն են ուղարկում Ղարաբաղի հայոց հոգևոր առաջնորդին և հայ ազգաբնակչությանը: Թուրքական հրամանատարն արցախցիներից պահանջում էր ենթարկվել իրեն, հակառակ դեպքում սպառնում էր հայկական բոլոր բնակավայրերն ավերել<sup>27</sup>:

1918 թ. սեպտեմբերյան այդ օրերին հրավիրված Ղարաբաղի հայության 2-րդ և 3-րդ համագումարները, քննարկելով թուրքերի պահանջները, մերժում են և երկրամասի բնակչությանը կոչ անում ոտքի ելնել հայրենի հողը պաշտպանելու համար: Սեպտեմբերի 18-22-ին Շուշիի ռեալական ուսումնարանի դահլիճում տեղի ունեցած Ղարաբաղի հայության երրորդ արտակարգ համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր մոտ 300 հոգի, որոշեց ստեղծել երկու հանձնախումբ. ա) Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան, Տիգրան Յուզբաշյան և Բախչի Մուրադյան՝ Ասկերան և նրա ձախ թևի երկարությամբ գտնվող Խաչենի գյուղերը գնալու, բ) Ասկերանի աջակողմի՝ Վարանդայի գյուղերը գնալու համար՝ Գարեգին քահանա Հովհաննիսյան, Եղիշե քահանա Թարխանյան և Կարապետ քահանա Վարդապետյան: Այդ հանձնախմբերը խնդիր ունեին համագումարի

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 49, ք. 30-31:

<sup>27</sup> «Մշակ», 22.02.1919:

որոշումները հասցնել բնակչությանը և «ժողովրդի մտքերը խաղաղացնել»<sup>28</sup>:

Ուժերն անհավասար էին: Ոսոխը, ներխուժելով Արցախ-Ղարաբաղ, ավերելով բազմաթիվ բնակավայրեր, շարժվում էր դեպի Շուշի: Նրանք զինաթափ արեցին և 24 գյուղերից տարան 715 մոսին, 406 բերդան և 50830 փամփուշտ<sup>29</sup>: Հակառակորդին օգնում էին թուրքական գյուղերի և Շուշիի թուրքերը: Աղդամից Շուշի տանող խճուղու երկու կողմերի հայկական գյուղերն ավերելով՝ Ջահիդ բեյի զորամասը սեպտեմբերի 26-ին մտնում է Շուշի: Թուրք բարբարոսները ստիպված էին մարտերով գրավել յուրաքանչյուր բնակավայր: Ամբողջ Արցախը ոտքի ելավ հայրենի հողը պաշտպանելու: Այսպիսով՝ «սկսվեց Ղարաբաղի հայ գյուղացիության փառապանծ հերոսապատումը թուրքական նվաճողների դեմ»<sup>30</sup>: Թուրքերը, գրավելով Շուշին, փորձում էին «լուծել Ղարաբաղի հարցը հակառակ սահմանափոխութեան ծրագրի և մեզ դնել կատարուած փաստի առաջ», այդ օրերին գրել է «ժողովուրդ» թերթը և շարունակել. «Մինչդեռ Ջանգեզուրի և Շուշու գաւառի հայկական մասում կար մոտ 250 000 հայ ազգաբնակչութիւն և միայն 15 հազար մահմեդականութիւն, և այդ շրջանները պատմականօրէն և տնտեսապէս կապուած են Հայաստանի Հանրապետութեան հետ... Հայ ժողովուրդը չի կարող ոչ մի դեպքում զիջել այս գաւառները...»<sup>31</sup>:

Թուրքերը, ներխուժելով Շուշի, ձերբակալեցին և բանտ նետեցին ավելի քան 50 հասարակական-քաղաքական գործիչների, որոնց բանտում ենթարկեցին կտտանքների: Ջահիդ-բեյը փորձում էր նույնիսկ ստանալ Ղարաբաղի թեմակալ Վահան եպիսկոպոսի աջակցությունը, սակայն նրա ջանքերն անցնում են ապարդյուն: Եվ չնայած Շուշին անձնատուր եղավ, սակայն Արցախ-Ղարաբաղի գավառները մնացին անառիկ: Թուրք-ազերիների մի զորք, որը բաղկացած էր չորս-հազարամոց ասկյարներից, հոկտեմբերի 5-ին ներխուժեց Ջրաբերդ, սակայն Մարտակերտի մոտ այն ջախջախվեց: Արցախցիներից վրեժխնդիր լինելու համար թուրքական մեկ ուրիշ զորամաս, ավելի քան 400 ասկյարներով, հոկտեմբերի 18-ին ներխուժեց Վարանդա և լիովին ջախջախվեց Մսմնա գյուղի մոտ<sup>32</sup>: Այս հերոսական պայքարում ժողովրդի հետ էր Արցախի թեմը: Թեմի հոգևորականներից ոմանք,

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, ք. 4:

<sup>29</sup> Նույնը, ֆ. 221, ց. 1, գ. 8, ք. 4:

<sup>30</sup> Սարգսյան Ե.Ղ., Թուրքական և նրա նվաճողների քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Ե., էջ 1964, էջ 463:

<sup>31</sup> «ժողովուրդ», 23.10.1918:

<sup>32</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Աբրահամյան Հ., Արցախի հերոսամարտը (1918), Ե., 1998:

զենքը ձեռքին, խիզախաբար կռվում էին թշնամու դեմ:

Արցախահայությունը բազմաթիվ բողոքներ էր ներկայացրել թուրքերի կողմից իրենց բռնությամբ զինաթափ անելու վերաբերյալ: Հարավ գյուղի բնակիչները համաշխարհային պատերազմից հայերի կրած վնասները հաշվառող քննիչ հանձնաժողովին 1919 թ. հունիսի 6-ին ուղարկած նամակում հայտնել են, որ 1918 թ. սեպտեմբերի վերջերին՝ Շուշին գրավելուց հետո, թուրքական և ազերիների «1-ին դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջեհիդ-բեյ, Շուշու կոմենդատ բինբաշի Հասան էֆ. Բասրի-բեյ՝ հոկտեմբերի 1-3-ին պահանջ դրին մեզ՝ ճանաչել Ազերբեյջանի իշխանութունը և յանցնել հետևեալ զենքերը. Մոսինի (եռագծեան) յուսուն և երկու հատ (52), Լեբլ (ֆրանսիական) երեք հատ (3), տաճկական մաուզեր հրացան՝ տասն և հինգ հատ(15), Բերդան՝ պետական, քսան և հինգ հատ (25), նագան ատրճանակ՝ երկու հատ (2), ամեն տեսակի փամփուշտ՝ տասն ու երկու հազար (12.000), փամփուշտակալներ՝ քսան և հինգ (25)»<sup>33</sup>:

Վարանդայի Կաղարծի գյուղի հասարակության անունից գյուղի տանուտերը 1919 թ. հունվարի 6-ին վերոնշյալ հանձնաժողովին ուղարկած նամակում հաղորդել է, որ թուրք-ազերիների հրամանատարությունը պահանջել է «հանձնել տասն ու վեց հատ Մոսինի (16), Բերդան՝ քառասուն և մեկ հատ (41), Լեբել՝ ֆրանսիական մեկ հատ (1), մաուզեր ատրճանակ՝ մեկ հատ (1), զանազան տեսակի փամփուշտ՝ ութ հարիւր հատ (800), փամփուշտակալ՝ տասն ու երկու հատ (12)»<sup>34</sup>:

1919 թ. հունվարի 8-ին Փիրջամալ գյուղի հասարակության անունից տանուտերի տեղապահ Աղասի Պողոսյանը հանձնաժողովին հաղորդել է, որ թուրքերի հարձակման ժամանակ իրենց գյուղը շրջապատվել և ենթարկվել է զինաթափման: Խլել են «հերևեալ զենքերը՝ Մոսինի՝ (եռագծեան) տասն հատ (10), տաճկական մաուզեր հրացան՝ երեք (3), ֆրանսիական Լեբել՝ հինգ հատ (5), Բերդան՝ ինն հատ (9), այնպիսի (նախկին տաճկական) չորս հատ (4), այլևայլ տեսակի փամփուշտ՝ երկու հազար հինգ հարիւր (2500), դաշույն՝ տասն ու երկու հատ (12), փամփուշտակալներ՝ 31 հատ»<sup>35</sup>:

Խաչենի երեք հասարակությունների լիազոր Մ. Արզումանյանը 1919 թ. հունվարի 14-ին քննիչ հանձնաժողովին հաղորդել է, որ գյուղեր ներխուժած թուրքերը հոկտեմբեր ամսին «ծեծով, բռնութեամբ, բանտարկութեամբ և տաճկական ասկերների յաճախակի

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 88, թ. 23:

<sup>34</sup> Նույն տեղում, թ. 31 ա.:

<sup>35</sup> Նույն տեղում, թ. 32:

էկզէկուցիաներով խլեցին ժողովրդի բոլոր զենքերը և մեր իսկ սայլերով ուղարկեցին Ադդամ:

Ձինաթափվել են գրեթէ բոլոր գիւղերը և տարւել հետեւեալ զենքը. Սօսինի՝ 715, Բերդան՝ 406, փամփուշտ՝ 50830»<sup>36</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմում թուրքերը պարտութիւն կրեցին և հեռացան Անդրկովկասից: Նրանք, 1918 թ. սեպտեմբերի վերջին Շուշի մտնելով, անմիջապէս լուծարել էին Արցախի ազգային խորհուրդը: 1918 թ. դեկտեմբերի 4-ին Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում շարադրելով թեմական գործերի ընդհանուր վիճակի մասին, որը արել էր նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղարկած նամակում, մշել է, որ Ղարաբաղի թեմում նախկինում գործած 60 դպրոցներից և ոչ մէկը չի գործում, որի պատճառը «սարսափելի թանգութիւնն է, գիւղոցոց թշուառ կացութիւնը և երերուն, անհանգիստ վիճակը»: Թեմակալը նաև հաղորդում է, որ գործում է միայն Շուշիում նոր բացված Մարիամ-Ղուկասյան դպրոցը, իսկ դեկտեմբերի 1-ից գործում է նաև թեմական դպրոցը՝ կիսով չափ հավաքված աշակերտներով, որը, հազիվ թէ նյութական պատճառներից ելնելով, կարողանա շարունակել իր գոյութիւնը: Վահան եպիսկոպոսը հնարավոր էր համարում գյուղերում բացել 25-ի չափ դպրոցներ, մանավանդ որ երկրամասը առատ բերք էր ստացել, սակայն դրան էլ խանգարեց թուրքերի ներխուժումը<sup>37</sup>: Թեմի առաջնորդը հաղորդում էր, որ թուրքերի արշավանքի հետևանքով երկրամասում ավերվել են 35-ի չափ հայ գյուղեր, որոնցից 23-ը՝ Նուխիի փոխազդեցութեան Գյոզչայ գավառում, որտեղ ժողովուրդը «ցիր ու ցան փախստական է ընկած զանազան կողմեր մեր և Տփլիսի վիճակում, տներն ավերուած են, կողոպտուած, ժողովրդի մի մասը կոտորած, եկեղեցիները նույնապէս կողոպտուած»<sup>38</sup>:

Արցախի թեմի առաջնորդի այդ նամակից նաև իմանում ենք, որ թուրքերի կողմից ավերվել էր նաև Ամարասի վանքը, շինութիւնները քանդվել և ամբողջ ունեցվածքը տարվել: Վահան եպիսկոպոսը, նախօրոք զգալով, որ հնարավոր է վանքը ենթարկվի վայրագների հարձակման, դեռ մի տարի առաջ «սրբոց մասունքը» վանքից փոխադրել էր սպահով տեղ: Թուրքերը նույնիսկ քանդել և տարել էին վանքի տանիքի թիթեղը, իսկ «վանքի այգիները, վարելահողերը գտնւում են զինուած թուրք Եաղլաւանդ, Դիլաղարդու և Ղաջար

<sup>36</sup> Նույնը, թ. 4:

<sup>37</sup> Նույնը, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 9:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույնը:

գիւղացիների ձեռքին»<sup>39</sup>:

Թեմի կառավարիչը հաղորդում է, որ վիճակային եկամուտներն այնքան նվազ են, որ ստիպված էր կոնսիստորիայի ծառայողների կեսին ազատել պաշտոնից: Պարզվում է, որ իշխանությունների մեղքով ժողովուրդը «ոչ իշխանութուն ճանաչել են ուզում և ոչ եկամուտ տալը»: Վահան եպիսկոպոսը նաև հաղորդել է, որ գյուղերում ու քաղաքում տարածված են վարակիչ հիվանդություններ, և յուրաքանչյուր գյուղից մահանում է օրական 5-ից 25 հոգի: Վերջում տեղեկացնում է, որ դեկտեմբերի 3-ին Շուշի է հասել անգլիական զինվորական շտաբը, որն իբր նպատակ ունի «խաղաղութիւն վերականգնել երկրում և ճանապարհները բանալ, թողնելով երկրի ներքին կառավարութիւնը տակաւին Ադրբեջանի հանրապետութեան»<sup>40</sup>:

Թուրքերի ներխուժումից հետո Արցախում տիրում էր անիշխանություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը զբաղված էր և ակտիվ միջամտություն չէր ցուցաբերում: Դրանից, անշուշտ, օգտվում էր մուսավաթական Ադրբեջանը: Բաքվում ծվարած անգլիական բանակի հրամանատար Վ. Թոմսոնը, սերտ կապի մեջ գտնվելով Ադրբեջանի մուսավաթական իշխանությունների հետ, խոստանում էր Արցախ-Ձանգեզուրը ենթարկեցնել Ադրբեջանին: Եվ սհա այդ նույն Թոմսոնի ներկայացուցիչ մայոր Գիբոնը, դեկտեմբերի սկզբին ժամանելով Արցախ, նախ ներկայանում է Վահան եպիսկոպոսին և նրան բացատրում իր գալու նպատակը. իբր եկել էր ծանոթանալու Ղարաբաղ-Ձանգեզուրում գտնվող գաղթականների վիճակին և անհրաժեշտ օգնություն ցույց տալու: Հետո խնդրում է Սրբազանին կարգադրություն անել, որ գործին տեղյակ մարդիկ օժանդակեն իրեն և «արդարութեամբ բաշխեն նպաստները», որը բերել էր իր հետ<sup>41</sup>:

Անշուշտ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, անգլիական միսիան երբեք էլ նպատակ չունեւր զբաղվել գաղթականների հարցով. դա միայն խաբուսիկ պատրվակ էր: Անգլիացիները, պարզապես, մի կարևոր խնդիր ունեին ամեն ջանք գործադրել Արցախ-Ձանգեզուրը բռնակցել Ադրբեջանի բռնատիրության ճիրաններին, իսկ դրա դիմաց ստանալ Բաքվի նավթը: Սակայն խորաթափանց Սրբազանը անգլիացի մայորին հասկացնում է, որ Արցախում ամեն տեղ գործի գլուխ են կանգնած ժողովրդի ընտրյալները և իրենց պատասխանատվությանը գիտակ մարդիկ, որոնք ցույց կտան անհրաժեշտ աջակցություն, եթե դրա կարիքը իրոք

<sup>40</sup> Նույնը, ք. 10:

<sup>41</sup> Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 302:

զգացվի:

Արցախի քաղաքական վիճակը հստակեցնելու և ազգային նոր խորհուրդ ստեղծելու համար Ղարաբաղի հայության 4-րդ համագումարի հրավիրումը դարձել էր հրատապ խնդիրներից մեկը, որի նախապատրաստմանը ձեռնամուխ եղան Արցախի թեմը և երկրամասի առաջադեմ ուժերը: Քանի որ այդ օրերին հնարավոր չէր հրավիրել համագումար, ուստի նպատակահարմար գտան ստեղծել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը պետք է միավորեր երկրամասի բոլոր հասարակական-քաղաքական ուժերը և նախապատրաստվեր համագումարին: Դրա հիմնական նախաձեռնողներից մեկը Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսն էր: 1918թ. դեկտեմբերի 2-ին նրա մոտ էին հավաքվել Արցախի զորահրամանատարների<sup>42</sup> նշանակած ներկայացուցիչները և երկրամասի քաղաքական ուժերի պատվիրակները: Հավաքը բացում է Հայ հեղափոխական դաշնակցության «Ապառաժ» ԿԿ ղեկավար Հայրապետ Մուսայելյանը: Նա զգուշացնում է, որ, հնարավոր է, անգլիական հրամանատարությունն արցախահայությունից պահանջի ենթարկվելու Ադրբեջանին: Դրա համար պետք է ունենալ պատրաստի պատասխան, մանավանդ որ Ջանգեզուր-Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժան մասն է: Հայրապետ Մուսայելյանի տեսակետը պաշտպանում են թե՛ թեմի առաջնորդը և թե՛ բոլոր ներկաները: Հավաքի մասնակիցները համգում են այն մտքին, որ ընտրվելիք ժամանակավոր Ազգային խորհուրդը պետք է առաջնորդվի այդ վճռականությամբ<sup>43</sup>:

Այդ ժամանակ, ինչպես նշվել է, Շուշիի քաղաքագլուխն էր Գերասիմ Մելիք-Շահնազարյանը: Ժամանակակցի բնորոշմամբ, նա «նիւթամուլ ու կաշնառակեր չէր... սակայն ջղագար, քմահաճ ու կամակոր, հիւանդագին անձնասէր, դիտողութիւն չհանդուրժող մէկն էր»<sup>44</sup>: Նա իր ազգակից, Վարանդայի զորահրամանատար Սոկրատ Շահնազարյանի հետ հոկտեմբերին խոչընդոտել էր զորավար Անդրանիկի մուտքը Շուշի: Քաղաքագլխի այս և այլ արարքներ քննադատության էին ենթարկվել Հայրապետ Մուսայելյանի կողմից: Դրա համար քաղաքագլուխը չէր ցանկանում տեսնել Հայրապետ Մուսայելյանին:

1918 թ. դեկտեմբերյան այդ օրերին Արցախի զորահրամանատարների ներկայացուցիչները մի քանի անգամ հանդիպել էին քաղաքագլուխ

<sup>42</sup> Շրջանային զորահրամանատարություններն ստեղծվել էին 1918 թ. սեպտեմբերի սկզբին՝ երկրամաս ներխուժած թուրք բարբարոսների դեմ դիմադրություն կազմակերպելու համար:

<sup>43</sup> Նույնը, էջ 303:

<sup>44</sup> Նույնը, էջ 306:

Գերասիմ Մելիք-Շահազարյանին և փորձել նրան համոզել մտնելու ժամանակավոր Ազգային խորհրդի կազմի մեջ, մանավանդ որ դա նաև Վահան եպիսկոպոսի բուռն ցանկությունն էր: Սակայն քաղաքագլուխը համառորեն հրաժարվում է՝ բացատրելով, որ այդ մարմնի անդամ է նաև Հայրապետ Մուսայեյանը:

Արցախի քաղաքական ուժերի ներկայացուցիչները և զորահրամանատարները որոշում են կրկին դիմել Վահան եպիսկոպոսին, որ նա իր վրա վերցնի ժամանակավոր Ազգային խորհուրդ կազմելու պատասխանատվությունը: Սրբազանը գիտեր քաղաքագլխի վճռի մասին: Նա խոր ցավ էր ապրում, երբ պատմական այդ պատասխանատու ժամանակաշրջանում հանդես էին եկել այնպիսի եսակենտրոն մարդիկ, ինչպես, օրինակ, քաղաքագլուխը, որոնք համբերատար և հանդուրժող չէին: Չնայած դրան՝ Վահան եպիսկոպոսը սիրով համաձայնվում է իր ձեռքը վերցնել ժամանակավոր Ազգային խորհուրդ ստեղծելու պատասխանատվությունը: 1918թ. դեկտեմբերի 15-ի երեկոյան, Վահան եպիսկոպոսի հրավերով, Արցախի զորահրամանատարները, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը, քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները և միջկուսակցական խորհրդաժողովի ներկայացուցիչ Հայրապետ Մուսայեյանը հավաքվում են թեմի առաջնորդարանում: Վահան եպիսկոպոսը, հայտնելով հավաքի նպատակը, առաջարկում է ընտրել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը պետք է նախապատրաստեր և հրավիրեր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը, որտեղ կընտրվեր նոր Ազգային խորհուրդ, որը կներկայացներ Արցախը:

Սրբազանի խոսքի ավարտից հետո ամմիջապես ելույթ է ունենում քաղաքագլուխը և հայտարարում, թե ինքը չի խուսափի իր վրա դրվող պարտականությունից, սակայն չի կարող աշխատել մի մարմնում, որի անդամ կլինի նաև Հայրապետ Մուսայեյանը: Վահան եպիսկոպոսը, կրկին ելույթ ունենալով, շեշտում է, որ ինքը՝ որպես թեմի հոգևոր առաջնորդ, «իր սեպուհ պարտականութիւնն է՝ հակառակութիւնները վերացնել հասարակութեան մեջ» և հենց այդ նպատակով էլ բոլորին հրավիրել է իր մոտ և իր անկեղծ ցանկությունն է՝ «մոռացութեան տանք մեր միջև եղած թիրիմացութիւնները, ձեռք-ձեռք տանք և համբերութեամբ աշխատենք մինչև չորրորդ համագումարը, որից յետոյ իւրաքանչիւրը ազատ կը լինենք»<sup>45</sup>:

\* Բնիկ Դաշբուլաղ գյուղից, Վարարակնում մեծացած, Հայ հեղափոխական դաշնակցության անդամ Հայրապետ Մուսայեյանը Շուշիի թեմական ավարտելուց հետո 1903 թ. ընդունվել է Լայպցիգի համալսարանի պատմափիլիսոփայության ֆակուլտետը և 1907 թ. ավարտելուց հետո վերադարձել հայրենիք ու զբաղվել ուսուցչությամբ:

<sup>45</sup> Նույնը, էջ 307-308:

Երկարատև վիճաբանությունից հետո Հայրապետ Մուսայելյանը հրաժարվում է մտնել ժամանակավոր Ազգային խորհրդի մեջ, որ քաղաքագլուխն անպայման մնա խորհրդի կազմում: Իսկ դա անհրաժեշտ էր, մանավանդ որ ժամանակավոր Ազգային խորհրդին հարկավոր էր քաղաքագլխի ֆինանսական աջակցությունը: Սրբազանի առաջարկությամբ խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունենում դեկտեմբերի վերջին քաղաքագլխի բնակարանում, որտեղ լուծվում են հետևյալ հարցերը. ա) դիվանի ընտրություն, բ) ժամականավոր Ազգային խորհրդի գոյության և նրա գործի անցմելու մասին ժողովրդին ծանուցում տալու մասին, գ) Բաքվի, Գանձակի, Գորիսի և վերջինիս միջոցով Երևանի հետ հարաբերությունների մեջ մտնելը: Ժամանակավոր Ազգային խորհրդի դիվանի նախագահ է ընտրվում Եղիշե Իշխանյանը:

Արցախ-Ղարաբաղում ստեղծված այդ մարմինն անվանվում էր Ղարաբաղի հայոց ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը գոյություն է ունեցել մինչև 1919 թ. փետրվարի 10-ը, մինչև չորրորդ համազումարի բացման օրը: Ազգային խորհուրդը բոլոր հարցերում համագործակցում էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի հետ: Վերջինիս հանձնարարությամբ թեմի ողջ հոգևորականությունը նպաստում էր Ղարաբաղի հայության չորրորդ համազումարի նախապատրաստական աշխատանքներին: Թե՛ արցախահայության և թե՛ նրա թեմի համար առանձնապես ծանր էր, երբ 1918 թ. դեկտեմբեր 8-ին Շուշի եկած զեներալ Վ. Թոմսոնի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ կապիտան Սերրայտը, դեկտեմբերի 23-ին ժամանակավոր Ազգային խորհուրդ էր ներկայացրել զեներալ Թոմսոնի պահանջը, ըստ որի՝ արցախցիները ժամանակավորապես պետք է ճանաչեն Ադրբեջանի գերիշխանությունը մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը միջազգային ատյաններում: Ժամանակավոր Ազգային խորհուրդը կտրուկ մերժում է Թոմսոնի պահանջը՝ պատասխանելով, որ դրանում պիտի սպասել Ղարաբաղի հայության չորրորդ համազումարի վերջնական պատասխանին: Ժամանակավոր Ազգային խորհրդի դիրքորոշումը պաշտպանում էր Ղարաբաղի թեմի կառավարիչ Վահան եպիսկոպոսը:

Ադրբեջանի մուսավաթական կառավարության որոշմամբ 1919 թ. հունվարի 15-ին ստեղծվում է Ղարաբաղ-Ջանգեզուրի նահանգապետություն, և զեներալ Վ. Թոմսոնի համաձայնությամբ ժամանակավոր նահանգապետ է նշանակվում ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, հայերի դահիճ Խոսրովբեկ Սուլթանովը: Ղարաբաղում գտնվող անգլիական միսիան ատամներով պաշտպանում էր Սուլթանովին, տոն տալիս նրա ավազակային գործողություններին, մինևույն ժամանակ

շողոքորթում Ղարաբաղի Ազգային խորհրդին<sup>46</sup>:

Արցախի տնտեսական և քաղաքական վիճակը մնում էր ծանր:

Մեկուկես տարի էր, ինչ արցախահայությունը կտրված էր դրսի աշխարհից և թուրք-ազերիների կողմից գտնվում էր շրջափակման մեջ: 1918 թ. օգոստոսից մինչև դեկտեմբերի սկիզբը կտրված էր Ջանգեզուրից: Թուրք-ազերիները, գրավելով Բաքու-Ջուլֆա երկաթգիծը, թալանեցին սահմանապահ ռուս զորամասերի ամբողջ զենքն ու զինամթերքը, նույնիսկ ռուս զորամասերի մի ջոկատ Ջեբրայիլի շրջանում թաղեցին ջրհորների մեջ: Ղարաբաղից հեռացող ռուսական զորամասերը ոչ մի զենք չթողեցին արցախցիներին, մինչդեռ Բարդա կայանում իրենց ամբողջ զենքը հանձնեցին թուրքերին:

Արցախցիները իրենց կյանքը և հողը պաշտպանելու համար ստիպված էին դիմել վճռական քայլերի: Նախ՝ ստեղծեցին Միջկուսակցական բյուրո, որը միավորում էր քաղաքական ուժերին, հետո 1918 թ. հուլիսին ստեղծեցին ժողովրդական կառավարություն, որը զբաղվում էր տնտեսական, ռազմական, ֆինանսական, պաշտպանական և այլ հարցերով: Այդ ժամանակ Հայաստան ուղարկած մի նամակում ասված է, որ «հաղորդակցութեան ճանապարհներից զուրկ, առանց միջնական որևէ միջոցի, Ղարաբաղի կառավարութեան այդ օրգանները մի կերպ հայ ժողովրդի վիճակը տնօրինեցին, հազար ու մի զրկանքով ու զոհողութեամբ միջոց տւին բերքը ժողովել, որովհետև նախանցեալ տարւայ երաշտը, ճանապարհների ու փոստերի փակւելը անդունդի ափ էին հանել հայ ժողովրդին և նա տառապում էր սովի ճանկերում»: «Ապա,- շարունակում է հեղինակը,- երբ 1918 թ. մայիսին երևացին թուրքերը, նրանք տեղացիների հետ արցախցիներից պահանջում էին հպատակություն և զենքի հանձնում: Արցախցիները մերժեցին նրանց պահանջները: Անգամ չկարողացան Շուշիի գնդի<sup>47</sup> ռազմամթերքը տեղափոխել Շուշի: Թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո «մի դիվիզիա զուտ տաճիկ զորք ուղարկվեց Բաքուց դեպի Շուշի բաւականաչափ թնդանօթներով, գնդացիներով և մեծ ռազմամթերքով»: Թուրքերը, ավերելով Ասկերանի աջ ու ձախ կողմերի մի քանի հայ գյուղեր, իրենց համար ճանապարհ բացեցին և մտան Շուշի, որտեղ ձերբակալում են հայ մտավորականությանը և տանջում բանտում, իսկ երեք գյուղացու, ի սարսափ հայ ժողովրդի, կախում Շուշի քաղաքում: Ղարաբաղի հայությունը խնդրում է Ջանգեզուրում

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 32, «Մշակ», 10.03.1919:

<sup>47</sup> Գունդը ստեղծվել էր Թիֆլիսում 1918 թ. հունվարին՝ ծնունդով արցախցիներից և գանգեզուրցիներից: Այն եկել և մնացել էր Գորիսում թուրք-ազերիների կողմից ճանապարհի փակելու պատճառով:

գտնվող Անդրանիկին մտնել Արցախ, սակայն չի հաջողվում: Ապա Արցախում երևում է անգլիական միսիան: Ադրբեջանը սկսում է զորամասեր ուղարկել հարձակման շրջանները: Եվ ահա հունվարի 15-ին Ադրանում տեղի է ունենում մահմեդականների համագումար, որը, «քննադատութեան առնելով Ղարաբաղի հայութեան ըմբոստութեան հարցը, որոշել է արցախցիներին չեզոքացնել»: Նամակի հեղինակները չեն թաքցնում, որ այդ ամենի կազմակերպողն ու ոգևորողն անգլիացի գեներալ Վ. Թոմսոնն էր: Նամակի հեղինակները դառնությամբ նշում են, որ Արցախի բնակչությունը դրսի աշխարհից ոչ մի օգնություն չի ստանում, մինչև իսկ Արարատյան Յանրապետությունից, որը չէր կարողանում «իր ձեռքը կարկառել և քիչ ու շատ ամոքել մեր ծանր դրութիւնը»: Արցախցիները չէին թաքցնում, որ եթե «Անդրանիկի ներկայութիւնը չը լիներ Ջանգեզուրում, գուցէ Ղարաբաղը նաև ակերակների կոյտ ներկայացնէր»: Այդքանից հետո «Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը սորանով դիմում է Ձեզ և խնդրում նախ դրան և ռազմամթերք ուղարկել Ղարաբաղ, որով մի կողմից սովամահ եղած ժողովրդին հնարավոր կը լինի ֆիզիքական գոյութիւնը պահպանել և ներքին վարչութիւնը ստեղծել, միւս կողմից կունենանք մեր անկախութիւնը պաշտպանել մինչև մեր վիճակի վերջնական որոշումը»<sup>48</sup>:

1918 թ. ամռան կեսերից Ջանգեզուրում գտնվող հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը անտարբեր չէր արցախահայության ճակատագրի նկատմամբ: Արցախցիները բազմիցս խնդրել էին Անդրանիկին օգնության ձեռք մեկնել իրենց: Անդրանիկը հայտնում է իր պատրաստակամությունը: Արցախցիներն անհամբեր սպասում էին զորավարի մուտքին: Նրանք համոզված էին, որ զորավարի ներկայությունը Ղարաբաղում կսանձի թուրք-մուսավաթական ազգայնամուլներին, վերջ կտրվեն ազգամիջյան բախումները, և Արցախը կմիավորվի մայր Հայաստանի հետ: Ձորավարն ուշի ուշով հետևում էր Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Այդ օրերին զանգեզուրցիները ևս բազմաթիվ նամակներ էին ուղարկում Անդրանիկին և խնդրում օգնություն ցույց տալ արցախցիներին, իսկ Ջանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը երկրամասի բնակչությանը կոչ էր անում՝ «խմբվենք մեր պաշտելի ազգային հերոս Անդրանիկի շուրջ և կրծքներս դեմ տանք թշնամուն»<sup>49</sup>:

1918 թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբներին զորավար

<sup>48</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 204-207:

<sup>49</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, ք. 43:

Անդրանիկը թափով նախապատրաստվում էր մտնել Արցախ: Նախատեսված էր հարձակումը սկսել նոյեմբերի 5-ին: Ջորավարն այդ մասին տեղյակ է պահում Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանին և Վարանդայի զորահրամանատար Սոկրատեկ Շահնազարյանին: Այդ վճռական պահին Անդրանիկը ստանում է Սոկրատեկի նամակը, որում խնդրվում էր հարձակումը հետաձգել 10 օրով: Անդրանիկը կատարում է նրա խնդրանքը: Նա ամենահարմար պահը բաց է թողնում ձեռքից, որը կարող էր Արցախի ճակատագրում էական դեր խաղալ<sup>50</sup>: Ջորավար Անդրանիկը, 1918 թ. նոյեմբերի 15-ին Տեղից իջնելով Ջաբուխի կիրճը, սկսում է իր առաջխաղացումը դեպի Արցախ: Արցախցիներն անհամբեր սպասում էին նրա մուտքին Շուշի: Մեծ ոգևորություն էր ապրում նաև Արցախի թեմը: Անդրանիկի զորամասերը, գրավելով մահմեդական մի քանի բնակավայր, անցնում են Հագարու գետը և մտնում Ավդալար (Ճերկայիս՝ Բերձոր): Հիմնական խոչընդոտները հաղթահարվել էին, և ճանապարհը բաց էր դեպի Շուշի, որտեղից թուրքերի շատ ընտանիքներ հեռացել էին Ադրամի կողմը: Որոշված էր նոյեմբերի 19-ին գիշերել Թթու ջրում (Լիսագորսկ), իսկ 20-ին՝ մտնել Շուշի: Անդրանիկը Դիզակի և Վարանդայի զինյալ ուժերի հրամանատարներին հայտնում է, որ «Սաղսաղանի և Թթու ջրի ուղղությամբ բարձունքները բռնեն ու սպասեն իրեն»<sup>51</sup>: Բայց ահա այստեղ զորավարին են հանձնում Բաքվից ուղարկված անգլիական զորավար Մարտ Թոմսոնի 501-րդ համարը կրող հեռագիրը<sup>52</sup>, որով Անդրանիկից պահանջվում էր դադարեցնել երթը դեպի Շուշի և վերադառնալ Գորիս, հակառակ դեպքում դա խիստ բացասական կազդի հայկական հարցի վրա: Ջորավար Անդրանիկը, միամտորեն հավատալով անգլիական երեսպաշտ հրամանատարության կեղծ խոստումներին, ընդունում է ճակատագրական ոչ ճիշտ որոշում և վերադառնում Գորիս: Նրա այդ քայլը խստորեն ազդում է արցախահայության հոգեկան վիճակի և հետագա ճակատագրի վրա:

Բոլոր առումներով շատ ծանր էր Արցախի վիճակը: Ելնելով դրանից և Արցախից ուղարկած օգնություն ստանալու խնդրագրերից՝ Թիֆլիսում գործող Ղարաբաղ-Ջանգեզուրի հայրենակցական միության վարչությունը 1919 թ. փետրվարի 21-ին Հայաստանի Հանրապետություն կառավարությանն ուղարկած գրությամբ խնդրում էր Արցախի Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի գավառներում

<sup>50</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 284-298:

<sup>51</sup> «Հայրենիք», 1929, դ. 8, էջ 128:

<sup>52</sup> ՀԱԱ, ֆ.370, ց. 1, գ. 39, թ. 2:

գործող հասարակական մարմիններին ցույց տալ ֆինանսական օգնություն<sup>53</sup>:

Սովի և ծանր պայմանների դեմ պայքարում կարևոր ներդրում ուներ մանավանդ Արցախի թեմը, որը բազմաթիվ մամակ-խնդրագրեր է ուղարկում տարբեր տեղերում բնակվող ունևոր դարաբաղցիներին ու խնդրում օգնություն ցույց տալ հայրենի երկրամասի բնակչությանը: Արցախի թեմի համար ստեղծվել էր նաև մեկ այլ դժվարություն: Վերջին ամիսներին վախճանվել էին ավելի քան 15 քահանաներ, և մի շարք եկեղեցիներ մնացել էին առանց հոգևոր հովվի: Թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը 1919 թ. փետրվարի 15-ին Պևորգ Ե կաթողիկոսին ուղարկած հեռագրում խնդրում էր, որպես բացառիկ երևույթ, իրեն թույլ տալ քահանաներ ձեռնադրել այն եկեղեցիների համար, որտեղ չկան<sup>54</sup>: Վահան եպիսկոպոսը էջմիածնից ստանում է պատասխան, ըստ որի՝ «առանց նախապես գործերն, ըստ ընդունած կարգի, սինօդ առաջարկելու», «Ն. Սրբութիւն ի նկատի ունենալով թեմիդ կարիքները, ներկայիս հաղորդակցութեան անկանոնութիւնն ու դժվարութիւնները, բարեհաճեց արտօնել Ձեզ և թույլ տալ ժամանակաւորապէս, մինչև հաղորդակցութեան վերականգնումը քահանայացուների նկատմամբ ծխական կանոնադրութեամբ պահանջուող բոլոր ձևականութիւնները կատարելուց յետոյ, ձեռնադրել Ձեր պատասխանատուութեամբ արժանաւոր քահանայացուներին, թեմիդ այն գիւղերի համար, որոնք չունենալով սեփական քահանայ, խզուած են հայ գիւղերից, իւրաքանչիւր անգամ զեկուցանել այս մասին ս. Սինօդին»<sup>55</sup>: Կաթողիկոսի այդ քայլը ավելի է բարձրացնում Վահան եպիսկոպոսի հեղինակությունը, և շուտով բոլոր այն եկեղեցիները, որոնք չունեին քահանա, արդեն ունենում են: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ քահանաների դերը բավականին մեծ էր բնակչությանը ոգևորելու և պայքարի կոչելու գործում, հատկապես, երբ մուսավաթական Ադրբեջանն օր օրի ավելի էր ուժեղացնում ճնշումը Արցախ-Ղարաբաղի նկատմամբ:

1919 թ. փետրվարի սկզբին Ադրբեջանական Հանրապետության ռազմական նախարար Մեհմանդարովի ուղեկցությամբ Շուշի է ժամանում Ղարաբաղ - Ջանգեզուրի ժամանակավոր նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը: Նա Ղարաբաղ էր եկել՝ իր հետ բերելով մեծ գումար: Նա փորձում էր կաշառել բոլոր ծառայողներին, նրանց տալ աշխատավարձ, միայն այն պայմանով, եթե նրանք ստորագրություն

<sup>53</sup> Նույնը, գ. 38, թ. 18:

<sup>54</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 674:

<sup>55</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 14:

տային, թե իրենք 1918 թ. հունիսի 1-ից ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այնուհետև ևս «կշարունակեն ծառայել ամբողջ եռանդով ու պատվով»<sup>56</sup>: Այդ պահանջագիրը ձևաթղթի վրա ուղարկվել էր բոլոր ուսումնական հաստատություններին և հիմնարկ-ձեռնարկություններին: Ղարաբաղի թեմը, Շուշիի հայ մտավորականությունը և երկրամասի ամբողջ հայությունը զայրույթով ու ատելությամբ են ընդունում Սուլթանովի այդ ստոր պահանջը և մերժում:

1919 թ. փետրվարի 10-20-ին թեմական դպրոցի դահլիճում տեղի է ունենում Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը: Այն միաձայն որոշում է չճանաչել Ադրբեջանի մուսավաթական իշխանությունը, քանի որ Ղարաբաղը (Արցախը), լինելով պատմական Սյունիքի մի մասը, հանդիսանում է Հայաստանի տարածքներից մեկը, որը պետք է կցվի Հայաստանին՝ որպես նրա անբաժան մասը<sup>57</sup>:

Համագումարն ընտրում է Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդ, որն իր վրա է վերցնում երկրամասը կառավարելու բոլոր գործառույթները: Այն և՛ Ազգային խորհուրդ էր, և՛ օրենսդիր ու գործադիր մարմին: Ղարաբաղի թեմն իր աջակցությունն է հայտնում արցախահայության չորրորդ համագումարին: Թեմակալ Վահան եպիսկոպոսն ակտիվորեն մասնակցում է համագումարի աշխատանքներին: Սակայն գեներալ Թոմսոնը նահանջելու միտք չուներ: Նա հեռագրով պահանջում է ճանաչել Ղարաբաղում Ադրբեջանի իշխանությունը: Ստանալով համագումարի մերժումը՝ Թոմսոնը պահանջում է Արցախից Բաքու ուղարկել պատվիրակություն՝ իրեն հանդիպելու համար:

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի ընտրած Հայոց ազգային խորհուրդը գտնում է, որ Բաքու պետք է մեկնեն Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը և Ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթյանը: Երկուսով անմիջապես մեկնում են Բաքու և հանդիպում գեներալ Թոմսոնին: Այդ հանդիպումից դժգոհ մնացած Թոմսոնը պահանջում է Բաքու ուղարկել նոր պատվիրակություն: Այս անգամ մեկնում են Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը, Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և էլի երկու հոգի՝ Գրիգոր Մինասբեկյանը և Անուշավան Տեր-Միքայելյանը: Երկու պատվիրակություններին մարտի 26-ին ընդունում է արդեն Բաքվից Թիֆլիս տեղափոխված՝ գեներալ Թոմսոնին փոխարինած գնդապետ Շատելվորտը: Վերջինս Արցախի

<sup>56</sup> Նույնը, ֆ. 4033, ց. 5, գ. 448, թ. 25:

<sup>57</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 342:

ներկայացուցիչներից պահանջում է Ղարաբաղը ենթարկեցնել Ադրբեջանին: Սակայն Արցախի պատվիրակները, ելնելով Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի ընդունած որոշումից, մերժում են անգլիական հրամանատարության այդ ծախու պահանջը և դա համարում անհնարիմ<sup>58</sup>:

Շատելվորտը, իր հանդգնությամբ գերազանցելով գեներալ Թոմսոնին, բոլոր ջանքերը գործադրում էր Արցախը ենթարկեցնել Ադրբեջանին և ստիպել կատարելու նահանգապետ հորջորջված խտրովբեկ Սուլթանովի բոլոր պահանջները:

1919 թ. ապրիլի 4-ին Բաքվից վերադառնում են Վահան եպիսկոպոսը, Յրանտ Բահաթրյանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանը և պատվիրակությունների մյուս անդամները: Սակայն գնդապետ Շատելվորտը Արցախի Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանին արգելել էր վերադառնալ Ղարաբաղ: Ազգային խորհրդի նիստը, ապրիլի 5-ին լսելով Վահան եպիսկոպոսի և Յրանտ Բահաթրյանի զեկուցումները Շատելվորտի և Բաքվի հայոց Ազգային խորհրդի ու հասարակական կազմակերպությունների հետ ունեցած հանդիպումների մասին, հավանություն է տալիս պատվիրակությունների գործունեությանը և կարծում, որ հետագայում ևս պետք է շարունակել նույն ժխտողական քաղաքականությունը: Թե՛ Վահան եպիսկոպոսը և թե՛ պատվիրակությունների մյուս անդամները Շատելվորտի հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել էին, որ Ջանգեզուր-Ղարաբաղը անբաժան է և հանդիսանում է Հայաստանի մեկ նահանգը: Սակայն Շատելվորտը չի ընդունում Ղարաբաղի պատվիրակությունների ներկայացրած պատճառաբանությունները՝ կտրուկ պահանջելով առանց երկմտանքի կատարել Թոմսոնի պահանջը և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Արցախցիները անգլիական հրամանատարությանը հայտարարել էին, որ Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը ամբողջ երկրամասի հայության չորրորդ համագումարի կողմից ընտրված գործադիր մարմին է և չի կարող ինքնուրույն որոշում ընդունել, և որ չորրորդ համագումարի ընդունած որոշումը փոխելու համար պետք է հրավիրվի նոր համագումար: Ղարաբաղի թեմի առաջնորդի այդ պատասխանը լսելով՝ Շատելվորտը անմիջապես առաջարկում է հրավիրել նոր համագումար, որին ներկա կլինի նաև ինքը, որովհետև ցանկություն ունի անմիջապես խոսել Ղարաբաղի ժողովրդի ներկայացուցիչների հետ:

Եվ ահա անգլիական հրամանատարության պահանջով հրավիրված

<sup>58</sup> ՀԱԱ, գ. 200, ց. 1, գ. 243, թ. 107-108:

Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը, որը տեղի ունեցավ նույն թվականի ապրիլի 23-29-ին, լսեց Բաքվից եկած Շատելվորտի ճառը: Նրա խնդրանքով համագումարին մասնակցում էր նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսը: Նա միաձայն ընտրվել էր համագումարի պատվավոր նախագահ: Արդեն գեներալի աստիճան ստացած Շատելվորտը իր ելույթում հրապարակում է անգլիական հրամանատարության որոշումը, ըստ որի՝ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը և ենթարկվի նրան, մինչև Ադրբեջանի և Հայաստանի սահմանները կճշտվեն հետագայում:

Այստեղ տեղին է հիշել մի դիպված. երբ Հրանտ Բահաթյանը Վահան Եպիսկոպոսի հետ մեկնել էր Բաքու՝ Թոմսոնի հետ հանդիպելու համար, օգտվելով առիթից, մի քանի օրով մեկնել էր Թիֆլիս, որտեղ հանդիպել էր Հայաստանի վարչապետ Յովհաննես Քաջազունուն և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանին: Ջրույցի ժամանակ Քաջազունին բացատրել է, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական ծանր կացության մեջ, հայ ժողովուրդը բոլորովին ուժասպառ է եղել, նա չի կարող ռազմական անհրաժեշտ քայլեր կատարել և պաշտպանել արցախցիներին: Նա արցախցիներին խորհուրդ է տվել բանակցությունների մեջ մտնել Ադրբեջանի իշխանության ներկայացուցիչ Սուլթանովի հետ, համաձայնության եզրեր գտնել, «քանի որ Ղարաբաղի և մեր այլ հողերի՝ Հայաստանին կցելու հարցը պիտի որոշվի հրախրելիք համաշխարհային վեհաժողովում»<sup>59</sup>: Ի՞նչ միանություն:

Իսկ Ալեքսանդր Խատիսյանը տվել էր միանգամայն հակառակ խորհուրդ: Նա արցախցիների բռնած դիրքը համարել է ուղիղ և ճիշտ, պատշաճ և համապատասխան իր պատմական անցյալին: Նա խորհուրդ էր տվել Ղարաբաղը պահել անսասան, շարունակել ընդդիմությունը, չենթարկվել անգլիական հրամանատարության պահանջին և Ադրբեջանի իշխանությանը:

Վահան Եպիսկոպոսը, տեղյակ լինելով Հ. Քաջազունուն և Հ. Բահաթյանի վերոհիշյալ գրույցին, Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարում ունեցած իր ելույթում ասում է. «Սիրելիներս, ինչպես գիտեք, Ադրբեջանի իշխանութիւնը ճանաչելու եւ նրան ենթարկելու խնդիրը շատ սուր կերպարանք է ստացել: Ջօրաւարի առաջարկից պիտի հասկանալ, որ Ադրբեջանի իշխանութիւնը ժամանակաւոր կերպով պիտի ճանաչել, իսկ Ղարաբաղի հարցը պիտի լուծւի հետագային, միջազգային վեհաժողովում: Այժմ միայն ժամանակաւոր

<sup>59</sup> Իշխանյան Ե., նշվ. աշխ., էջ 382:

կերպով Ադրբեջանի իշխանութիւնը ճանաչելու մասին է խօսքը»<sup>60</sup>:

Թեմի առաջնորդն իր ելույթում գիտակցաբար շեշտը դնում էր «Ժամանակավոր ճանաչելու» առաջարկության վրա՝ համոզված լինելով, որ համագումարի պատգամավորներն իրեն ճիշտ կհասկանան: Սակայն Ջրաբերդից եկած պատգամավորներից մեկը, խոսքն ուղղելով եպիսկոպոսին, ասում է. «Սրբազան Հայր, գեներալը որ ասում է, թե այսօր մենք ժամանակավոր ընդունենք Ադրբեջանի իշխանութիւնը, վաղը կը դառնայ մշտական, դրա համար էլ մենք ժամանակաւոր էլ չենք կարող ընդունել Ադրբեջանի իշխանութիւնը»<sup>61</sup>: Մյուս բոլոր ելույթ ունեցողները ևս մերժում են Շատելվորտի պահանջը և պաշտպանում չորրորդ համագումարի ընդունած որոշումը: Ղարաբաղի հայության հիմնգերրորդ համագումարը, պատասխանելով գեներալ Շատելվորտի պահանջին, նշում է, որ քանի Ադրբեջանի կառավարութիւնը հայերին ճնշելու համար դարձել է պետական համակարգ, ուստի «Համագումարն անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչութիւն ունեցող որևէ վարչական ծրագիր...»<sup>62</sup>:

Կատաղած Շատելվորտն ու Սուլթանովը համագումարից հեռանում են արցախցիներից, անշուշտ, վրեժ լուծելու վճռականութամբ: Եվ դա չուշացավ: Նույն թվականի մայիսի վերջին և հունիսի սկզբին Սուլթանովի դրդմամբ հայ-թուրքական ընդհարումներ են սկսվում Շուշիում և հարևան բնակավայրերում: Հայոց Ազգային խորհրդի որոշմամբ, թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթրյանը և Եղիշե Իշխանյանը հունիսի 4-ի առավոտյան այցելում են Շուշիում գտնվող անգլիական հրամանատարության ներկայացուցիչ մայոր Մոնկ Մեսսոնին և խիստ բողոքում այդ սադրիչ գործողութիւնների դեմ ու պահանջում դադարեցնել հայ-թուրքական ընդհարումները: Մոնկ Մեսսոնը, փոխանակ որևէ վճռական քայլ կատարելու, միայն արդարանում էր, որ այդ ամենի մասին հեռագրել է Բաքու՝ Շատելվորտին: Հետո հայոց պատվիրակությանը տեղյակ է պահում, որ Սուլթանովը պահանջում է՝ քաղաքից հեռանան հայոց Ազգային խորհրդի անդամները: Սրբազանը ստիպված է լինում քաղաքում գտնվող Ազգային խորհրդի անդամներին համոզել կատարելու Սուլթանովի պահանջը, «քանի որ դա կարող է դյուրացնել վիճակը»<sup>63</sup>:

Անգլիական հրամանատար Շատելվորտը համառորեն պաշտպանում էր Սուլթանովի պահանջը: Քաղաքում գտնվող Ազգային խորհրդի անդամներ Եղիշե Իշխանյանը, Հարություն Թունյանը և

<sup>60</sup> Նույնը, էջ 395:

<sup>61</sup> Նույնը:

<sup>62</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, ք. 27:

<sup>63</sup> Արամայիս, Ղարաբաղի տագնապ..., Ե., 1993, էջ 59:

Ասատուր Ավետիսյանը անգլիական միսիայի ավտոմեքենայով հունիսի 5-ին տեղափոխվում են Եվլախ, այնտեղից էլ՝ գնացքով Թիֆլիս: Այդքանը քիչ համարելով՝ անգլիական հրամանատարությունը նույնիսկ հայտարարում է, թե արցախահայերը պետք է Ղարաբաղը թողնեն Ադրբեջանին և տեղափոխվեն Ալաշկերտ ու Վան - Բասեն<sup>64</sup>: 1919 թ. հունիսյան այդ դաժան օրերին սարսափելի սպանդ էր կազմակերպվել Ղայբալիշենում, Կրկժանում, Փահլուրում, Ջամիլիում, Խանածախում, Դաշուշենում և այլ գյուղերում: Ղայբալիշենի 700 հայ բնակիչներից կենդանի էին մնացել միայն 11 տղամարդ և 87 կին ու երեխա<sup>65</sup>:

Վահան եպիսկոպոսը այդ ամենի մասին 1919 թ. հունիսի 12-ին Վեհափառին ուղարկած նամակում նշում էր, որ հունիսի 4-ին թուրքերը շրջապատել էին Շուշին և անցել հարձակման: Հայերը դիմել էին ինքնապաշտպանության: Ապա հայտնում է, որ անընդհատ և սարսափահար հրացանածգությունը շարունակվել է 28 ժամ: Երկու կողմից զոհվել է մոտ 20 հոգի: Հայերից թուրքերի թաղում մոտ 40 մարդ է սրի քաշվել: Հաջորդ օրը «թրդերը ադրբեջանական զօրքի մասնակցութեամբ յարձակվեցին Ղայբալի գյուղի վրա և ժողովրդի երեք քառորդին, գլխավորապես տղամարդկանց սրի քաշեցին, գիւղն ավերեցին, հրդեհեցին ու հիմնահատակ կործանեցին»: Նրանք այնուհետև հարձակվել են հարևան հայկական գյուղերի վրա: «Թուրքերն, - շարունակում է Վահան եպիսկոպոսը,- ուզում էին այդպիսով քաղաքի հայերին կտրիլ դրսի հաղորդակցութիւնից՝ խլելով միակ իլ ու մուտ պահպանող այդ կապիրը: Այդ ջարդերից ու ավերածութիւններից յետոյ գեներալ նահանգապետ Սուլթանովի հետ իմ ունեցած տիսակցութիւն հետևանքն ու ջարդերը այն եղան, որ մի կերպ խաղաղ դրութիւն ստիղծուի իրկու ազգերի մեջ և հրդեհը բռնկուիլով լայն ծավալ ու ավելի աղիտաբեր հետևանք չունենա գավառում... Ինձ մոտ ընտրուից քաղաքի հայերից խորհրդի նման մի մարմին դրութիւնը բարուրքող միջոցնիր մշակելու համար, որի միջոցով և պահպանում ինք կապ Սուլթանովի և գավառի հայերի հետ»: Սակայն, ինչպես հաղորդում է Վահան եպիսկոպոսը, «գավառի հայութիւնը դժուար է համաձայնուում թուրքերի հետ որևէ համաձայնութիւն գալ հպատակութիւն հողի վրայ, այլ պնդում է խաղաղ ու չէզօք կացութիւն, ինչպես մինչև այժմ է եղել՝ մինչև խաղաղարար խորհրդաժողովի վերջնական որոշմամբ Ղարաբաղի հարցի լուծումը»: Հետո հաղորդում է, որ հայերի համագումարը մշանակված է հունիսի 28-ին Շոշ գյուղում<sup>66</sup>:

Արցախ-Ղարաբաղի քաղաքական հարցը ավելի է բարդանում

<sup>64</sup> «Հայրենիք», 1923, N 9, էջ 100:

<sup>65</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 165:

1919թ. օգոստոսին հրավիրված Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի օրերին: Համագումարը տեղի է ունեցել 1919թ. օգոստոսի 13-ից մինչև 22-ը, Վարանդայի Շոշ գյուղում, չնայած Սուլթանովը պահանջում էր համագումարը հրավիրել Շուշի քաղաքում և իր ներկայությամբ լուծել Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու հարցը: Համագումարն ընթացել է բուռն վիճաբանությունների պայմաններում: Ի վերջո, Ադրբեջանի իշխանության ճնշման տակ համագումարի ընտրած պատվիրակությունը օգոստոսի 22-ին հարկադրաբար, «ոչ թե իրենց ազատ կամքով ու համոզմունքով, այլ հարկադրանքով ու բռնությամբ»,<sup>67</sup> ստիպված ստորագրել է համաձայնագիրը, ըստ որի՝ Ղարաբաղի հայկական գավառները՝ Դիզակը, Վարանդան, Խաչենը, Ջրաբերդը և Շուշի քաղաքը, որտեղ բնակիչները հիմնականում հայեր էին, մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը «ժամանակավորապես իրենց համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում»: Համաձայնագիրը բաղկացած էր 26 կետից<sup>68</sup>:

Թեմակալ Վահան Եպիսկոպոսի՝ օգոստոսի 26-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակից պարզվում է, որ համագումարի օրերին Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի և Սուլթանովի միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Սրբազանը կարևոր դեր է խաղացել: Նա գրում է. «Իմ Սուլթանովի հետ տեղի ունեցած տեսակցութիւնից ու խօսակցութիւնից յետոյ որոշւեց հարցը լուծել խաղաղ ճանապարհով...»: Այս հաղորդում է, որ Ղարաբաղում մշակված և Ադրբեջանի խորհրդարանում ընդունված Ղարաբաղի և Ադրբեջանի միջև կնքվելիք համաձայնագիրը հետ բերվեց Ղարաբաղ, որը քննարկվեց 7-րդ համագումարում: Պատգամավորները Սուլթանովից պատասխանատվություն էին պահանջում նրա կատարած հանցագործությունների համար: «Այդ օրը,- շարունակում է Վահան Եպիսկոպոսը,- ես գնացել էի Շօշու, որպէսզի համոզեմ համագումարին հարցի խաղաղ լուծման համաձայնութեանը գալու անգիտակ այդ պահանջներին յանկարծ ստանում են Սուլթանովից մի ուլտիմատուն-գրութիւն, թէ համագումարի ինձ ուղղած պահանջագիրը ոչ մի կասկած չի թողնում իմ մէջ, որ նա խաղաղ բանակցութեան ճանապարհի վրայ չէ կանգնած, ուստի տալիս եմ ձեզ 48 ժամ ժամանակ կամ ընդունելու պայմանագիրը, կամ մերժելու, որից յետոյ առաջ կը շարժիմ մեր գորքերը իրենց պատերազմական գործողութիւններով: Մեծ

<sup>66</sup> Նույնը, ֆ. 57, ց. 2, I մաս, գ. 557, ք. 26: Թեմապետի ակնարկած համագումարը վերաբերում է Ղարաբաղի հայության 6-րդ համագումարին:

<sup>67</sup> ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, էջ 206-207:

<sup>68</sup> Նույնը, ֆ. 199, ց. 1, գ. 21, ք. 67-68:

դժուարութեամբ է լինում ինձ համոզել համագումարին...»<sup>69</sup>:

Վահան Եպիսկոպոսը, այդ նույն նամակում հանգամանորեն պատմելով Ղարաբաղի հայության 6-րդ և 7-րդ համագումարների մասին, խոսում է նաև Ադրբեջանի կողմից ֆինանսական օգնություն ստանալու առաջարկության մասին և հարցնում. «Արդեօք կարո՞ղ ենք մենք ընդունել Ադրբեջանի Հանրապետութիւնից մեր եկեղեցական-ծխական և միջնակարգ դպրոցների, այլև կոնսիստորիայի դիւանատան ծառայողների պահպանութեան համար նպաստ-ռոճիկ, ինչպէս առհասարակ ընդունուած է հանրապետական երկրներում, և քանի որ մեր ժողովուրդը միջոց չունի նրանց համար այժմեան պայմաններում պահանջուող մեծաքանակ ծախքերը տալու»: Հետո եզրակացնում է. «Եթէ այդ նպաստը տրուի, մենք չենք կարող բանալ այս տարի թէկուզ 10 դպրոց»<sup>70</sup>:

Այդ մասին Գևորգ Ե կաթողիկոսը, հայտնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին, նշում է, որ Ղարաբաղի ծխական և միջնակարգ դպրոցները վերաբացելու և կոնսիստորիան պահպանելու համար պետք է Արցախի թեմին ցույց տալ օգնություն՝ շեշտելով, որ Ղարաբաղը գերադասում է այդ ծախքերը ստանալ ամենից առաջ Հայաստանի Հանրապետությունից: Հայոց կաթողիկոսը, ընդառաջելով Արցախի թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարից խնդրում է նրա «աջակցութիւնն ու միջնորդութիւնը Հայկական Հանրապետութեան կառավարութեան առաջ», որպէսզի կառավարության «միջոցներով գոհացնեն առ ժամանակ այդ ծախքերը, մինչև որ մօտիկ ապագայում կլուծուի Ղարաբաղի քաղաքական դրութեան հարցը»: Հայոց կաթողիկոսը հավատացած էր, որ ՀՀ կառավարությունը սիրով ընդառաջ կգնա «ժամանակաւորապէս այս նիւթական օժանդակութիւնն ընձեռնելու Ղարաբաղին, որի ժողովուրդը հոգով միացած է մեր երկրին և մեր կառավարութեան»<sup>71</sup>:

Օգտվելով այն բանից, որ գործում էր օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը, մուսավաթական Ադրբեջանը փորձում էր խաղաղ ճանապարհով տիրանալ Արցախ-Ղարաբաղի բնական հարստություններին: Այսպէս. 1919 թ. դեկտեմբերի 25-ին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիան հանդես է գալիս մի հայտարարությամբ, որը բողոք էր Ադրբեջանի մուսավաթական իշխանության դեմ: Այդ հայտարարությունից իմանում ենք, որ մուսավաթական Ադրբեջանի

<sup>69</sup> Եւրոպ. ց. 5, գ. 202, թ. 58:

<sup>70</sup> Եւրոպ. ց.:

<sup>71</sup> Եւրոպ. ց. 9:

երկրագործական և պետական գույքերի վարչության նախարարությունը 1919 թ. դեկտեմբերի 13-ից իր վարչության տակ էր առել Ղարաբաղի վանքապատկան բոլոր անտառները, իսկ դա կոպիտ խախտում էր Հայոց եկեղեցու սեփականատիրական իրավունքների նկատմամբ: Բացի այդ, հայոց եկեղեցական-վանքապատկան կալվածքների եկամուտները հիմնականում ծախսվում էին դպրոցական, մշակութային հաստատությունների և պատմական-հնագիտական խոշոր արժեք ունեցող հնությունների և հուշարձանների պահպանության վրա:

Հայտարարության մեջ նաև ասված է, որ հայկական Ղարաբաղի այն մասը, որտեղ գտնվում են հայ եկեղեցու կալվածքները, շուրջ 60.000 դեսյատին, մնում է զուտ հայկական գավառ<sup>72</sup>:

Մինչև 1919 թ. օգոստոսյան համաձայնագիրը Արցախ-Ղարաբաղի քաղաքական ուժերը գործում էին համատեղ և համերաշխ: Սակայն հետո դա խախտվել էր հիմնականում բոլշևիկների վարած ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով: Այդ ժամանակ ավելի էր ծանրացել երկրամասի քաղաքական դրությունը: Ադրբեջանը պահանջում էր Ղարաբաղը վերջնականապես ենթարկվի իրեն: Դրան պետք է պատասխան տար Ղարաբաղի հայության ութերորդ համագումարը, որը նախատեսված էր 1920 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին: Համագումարը, քննության առնելով Արցախ-Ղարաբաղի ներքաղաքական դրությունը, գտնում էր, որ «7-րդ համագումարից հետո Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակաւոր համաձայնության ամենագլխավոր կետերը» և շարունակում է հայասպանության իր քաղաքականությունը: Ելնելով դրանից՝ համագումարը «վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ ճանապարհի վրա տեղի ունեցած կոտորածների առթիվ և քաղաքակիրթ աշխարհին կոչ է անում վերջ տալ Ադրբեջանի այսօրինակ քաղաքականությանը»:

Համագումարը զգուշացնում էր, որ «նման դեպքերի կրկնությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը կստիպի իր կյանքի ու պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների...»<sup>73</sup>: Համագումարը հրաժարվում է օգոստոսյան համաձայնությունից, որովհետև այն կնքվելուց հետո Ադրբեջանի կառավարությունը չէր կարողացել ոչ մի կարգ ու կանոն պահպանել Ղարաբաղում: Համագումարը մի անգամ ևս մերժեց Ղարաբաղն Ադրբեջանին

<sup>72</sup> Նույնը, ց. 2, գ. 2166, թ. 63:

<sup>73</sup> Նույնը, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 12:

ենթարկելու մուսավաթականների պահանջը:

Մուսավաթական Ադրբեջանը տենդագին նախապատրաստվում էր Արցախ-Ղարաբաղ ներխուժելու համար: Եվ դա չուշացավ: 1920 թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը՝ մուսուլմանական ամանորին (նովրուզ), ընդհանուր հարձակում սկսեցին Ղարաբաղի դեմ: Շուշի ներխուժեցին Խոսրովբեկ Սուլթանովի եղբայր Սուլթանբեկ Սուլթանբեկովի քրդական հրոսակները: Ոմանց վկայությամբ, այդ օրերին Ղարաբաղ էին ներխուժել ոչ պակաս 80 հազար թուրք-ազերի դահիճներ<sup>74</sup>: Ամենաողբերգական իրադարձությունները տեղի էին ունեցել Շուշի քաղաքում: Այնտեղ հայոց քաղաքամասը լիովին ոչնչացվել էր: Բաշխի Իշխանյանի հաշվումներով, զոհվել էր 8988 հայ<sup>75</sup>:

Արցախի թեմը, մանավանդ Վահան եպիսկոպոսը, այդ օրերին մեծ աշխատանք էր տանում օգոստոսյան համաձայնագիրը պահպանելու, հայ-թուրքական կոտորածները կանխելու և հայերի կյանքն ապահովելու համար: Հայերի կողմից Վահան եպիսկոպոսին առաջարկվեց հեռանալ քաղաքից ավելի ապաստվ տեղ, սակայն նա կտրուկ հրաժարվեց՝ պնդելով, որ ինքը կմնա իր ժողովրդի հետ: Վանդալները, ներխուժելով առաջնորդարան, գլխատեցին Ղարաբաղի թեմի առաջնորդին, գլուխը ցից հանեցին և շրջեցրին քաղաքի թուրքական թաղամասում: Նույն թվականի մայիսի 15-ին այդ բարբարոսության մասին Արցախի թեմի կոնսիստորիայի անդամ, Կարապետ քահանա Վարդապետյանցի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղարկած նամակից իմանում ենք, որ այդ ժամանակ քաղաքի 12-13 հազար հայերից «6 հազար հոգին փախան գիւղերը, 4 հազար հոգին, մեծ մասը տղամարդ, սրի քաշեցան, գնդակահարւիցան ու հրկիզւեցան և մօտ 3 հազար հօգի մնացին քաղաքում, գերի թուրքերի ձեռքին, որոնց մի մասը՝ 400 հոգի երիտասարդ օյժեր տներում և բանտում սրածւեցան, 700 հոգի կին ու երեխայ, ծեր ու պառաւ, արձակեցան և հասին գիւղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջկերանց հետ, գտնուում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մօտ և բանտում»: Իսկ թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի մասին Կարապետ քահանան գրել է, որ նա «սպանեց Առաջնորդարանում, չջանկանալով դուրս գալ... Կոնսիստորիայի կազմից սպանված են անդամ՝ Խորէն ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տեր-Դանիէլյանը և դիվանապահ Յովհաննէս Ղարաբեկեանը: Քահանաներից սպանված է Յարութիւն ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ա.քահ. Յովհաննիսեան ազատւել է

<sup>74</sup> Նույնը, ֆ. 314, ց. 1, գ. 34, ք. 224:

<sup>75</sup> «Հառաջ», 1.04.1920:

բանտից կիսամեռ դրութեան մէջ և միանգամայն մերկ. սպանւած են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիել Ղուլիքեխայեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշեանը և այլն»<sup>76</sup>:

Ահա թե ինչպիսի ողբերգական ճակատագիր ունեցավ Արցախը և նրա թեմը՝ ենթարկվելով թուրք-ազերիների հոշոտմանը:

---

<sup>76</sup> ՀԱԱ, ֆ.57, ց. 5, գ. 216, ք. 16-17:

## 7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՐՑԱԽԻ ԹԵՍԸ (1920-1933 թթ.)

Խորհրդային կարգերի հաստատման նախօրյակին Արցախ-Ղարաբաղն արդեն վերածվել էր ավերածությունների ենթարկված մի տարածքի, որտեղ թուրք-մուսավաթական ուժերը բարբարոսաբար ոչնչացրել էին 59 գյուղ, անօթևան էր մնացել 37 հազար բնակիչ, փոշիացվել էր 7000 տնտեսություն, զոհվել էր 25 հազար մարդ, այրվել էր երկրամասի տնտեսական ու մշակութային կենտրոն Շուշի քաղաքի հայկական թաղամասը, փակվել կամ ոչնչացվել էր ֆաբրիկաների ու արհեստանոցների 90 տոկոսը<sup>1</sup>:

Արցախ-Ղարաբաղը զրկվել էր նաև իր թեմից: Այն վերականգնելու համար արցախցիները բազմաթիվ նամակ-խնդրագրեր են ուղարկում Էջմիածին: Արձագանքելով արցախահայության խնդրանքին՝ 1922 թ. մարտի 27-ին Գևորգ Ե կաթողիկոսի Սրբատառ կոնդակով Անանիա արքեպիսկոպոս Համազասայանը կարգվեց Արցախի թեմի առաջնորդ՝ նստավայր ունենալով Վարանդայի Ավետարանոց գյուղը: Սինչև կժամաներ Անանիա արքեպիսկոպոսը, թեմական առաջնորդի փոխանորդն էր Բյուզանդ ծայրագույն վարդապետը, որին հաջորդեց Սուրեն վարդապետը: Իր պաշտոնավարության հենց սկզբից թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի՝ Էջմիածին ուղարկած զեկուցագրերից և նամակներից պարզվում է, որ Արցախի թեմը լրիվ կազմալուծվել էր խորհրդային իշխանության կողմից: Ըստ նրա հաղորդումների՝ 1922 թ. թեմի մեջ մտնող 159 բնակավայրերից 27-ը չունեին եկեղեցի, քահանաներ ունեին միայն 39-ը: Այդ ժամանակ թեմն ընդգրկող բնակավայրերն ունեին 19004 ընտանիք՝ 109526 բնակիչներով<sup>2</sup>: Նրանցից շատերը, չնայած խորհրդային իշխանության ճնշումներին, Արցախի թեմակալ առաջնորդին ու Էջմիածին ուղարկած իրենց դիմումներում և համախոսականներում ցանկություն էին հայտնում վերականգնել իրենց եկեղեցիները և նշանակել ծխական քահանաներ:

Սակայն Ադրբեջանի թուրք կառավարությունը ամեն կերպ ձգտում էր փակել հայոց եկեղեցիները: Օրինակ՝ 1925 թ. փակվեց Շամախու հայոց եկեղեցին, և Վարդգես քահանա Գրիգորյանին արգելվեց

<sup>1</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 1930, N 31, Шагинян М., Нагорный Карабах, М., 1930, ст. 9, “Революция и национальности”, 1936, N 11, ст. 52.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492, ք. 137:

ծիսակատարությունների անցկացումը<sup>3</sup>:

1922 թ. դեկտեմբերից լույս տեսնող «Բեզբոժնիկ», ինչպես և «Ազատ եկեղեցի», «Անաստված» և այլ պարբերականներ իրենց կեղտոտ գործն էին կատարում և լայն քարոզարշավ ծավալում երկրում գործող եկեղեցիների ու հավատացյալների դեմ: Բուլձևիկների հակաեկեղեցական քարոզչությունը խիստ բացասական հետևանք էր թողնում բնակչության վրա: Կոպտորեն խախտելով խորհրդային օրենքները՝ հակակրոնական լայն պայթար էր ծավալվում ամբողջ երկրում, բռնագրավվում էր եկեղեցու սեփականությունը, հետապնդվում էին հավատացյալները և նրանց նկատմամբ իրագործվում էին բռնություններ: 1922 թ. մարտի 19-ին Վ. Ի. Լենինի՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին ուղարկած խիստ զաղտնի մամակը հոգևորականությանը ճնշելու անհրաժեշտության և Կենտգործկոմի 1922 թ. փետրվարի 23-ի դեկրետը կենսագործելու մասին էր: Լենինի հիմնական պահանջը հետևյալն էր. «Ինչ էլ որ լինի, մեզ անհրաժեշտ է կատարել եկեղեցական արժեքների առգրավում ամենավճռական և ամենաարագ ձևով, որով էլ մենք կկարողանանք ապահովել մեզ հիմնադրամ մի քանի հարյուր միլիոն ռուբլե դրամով... Մենք պետք է հատկապես այժմ անողոք և վճռական մենամարտի ելնենք... հոգևորականության դեմ և ճնշենք նրա դիմադրությունը այնպիսի դաժանությամբ, որ նա մի քանի տասնամյակների ընթացքում չմոռանա այդ...»<sup>4</sup>:

. Դեռևս 1921թ. օգոստոսի 9-ին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, քննարկելով հակակրոնական պրոպագանդայի դրվածքի մասին հարցը, կուսակցության մեջ ընդունվողներից կտրականապես պահանջեց խզել կապերը եկեղեցու հետ, «ինչ դավանանքի էլ վերջինս լինի, և եթե նրանք չխզեն այդ կապը, վտարել նրանց կուսակցությունից»<sup>5</sup>: Այդ որոշման մեջ նաև նշվում է. «Կուսակցության այն անդամները, որոնք պատասխանատու պաշտոններ են գրավում, սովետական կամ կուսակցական ակտիվ աշխատանք են կատարում՝ կրոնի բնագավառում կուսակցության ծրագիրը խախտելու, այս կամ այն կրոնական պաշտամունքի հետ կապ պահպանելու համար վտարվում են կուսակցությունից»<sup>6</sup>: Պլենումը պահանջում էր ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան՝ կուսակցական մարմինների խմբագրություններից պահանջելով «ձևափոխեն իրենց

<sup>3</sup> Նույնը, ֆ. 409, ց. 1, գ. 601, թ. 1:

<sup>4</sup> “Собеседник”, 1990, N 16.

<sup>5</sup> ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների քանակներում և որոշումներում, հ.2, 1986, Ե., էջ 583:

<sup>6</sup> Նույնը, էջ 584:

մղած հակակրոնական պրոպագանդան, դարձնեն այն շատ ավելի լուրջ և խորացնեն այն»<sup>7</sup>: Պլենումը, ի լուր բոլորի, հայտարարում է, թե «ՌԿԿ-ն պայքարում է ոչ թե ինչ-որ առանձին կրոնական խմբերի դեմ, այլ ընդհանրապես ամեն տեսակ կրոնական աշխարհայացի դեմ»<sup>8</sup>: Իսկ 1923 թ. ապրիլին տեղի ունեցած ՌԿ (բ)Կ տասներկուերորդ համագումարը «Հակակրոնական ագիտացիայի և պրոպագանդայի դրվածքի մասին» բանաձևով հատուկ պահանջում էր ուժեղացնել հակակրոնական ագիտացիան և պրոպագանդան՝ այդ նպատակի համար օգտագործելով «սովետա-կուսակցական լուսավորության բոլոր ձևերը՝ սկսած կուսհամալսարաններից»<sup>9</sup>:

Ելնելով Լենինի և կուսակցության այդ ցուցումից՝ երկրում ամենուր հոգևորականներին վտարում էին եկեղեցիներից ու վանքերից և շարունակում ավելի դաժանորեն իրագործել բռնագրավման քաղաքականությունը:

Հակակրոնական և հավատացյալների դեմ լայնածակատ պայքար էին տանում հատկապես Անաստվածների միությունը և նրա հարյուրավոր բաժանմունքները: ԽՍՀՄ Անաստվածների միությունը, որը ձևավորվել էր 1925 թվականին, և որի բաժանմունքը Հայաստանում ստեղծվել էր 1928 թվականին, հետագայում դարձավ ԽՍՀՄ մարտնչող անաստվածների կազմակերպություն, որի բերած վնասները չափազանց մեծ էին: Եվ չնայած դրան՝ Արցախ-Ղարաբաղում չէր դադարում թեմի գործունեությունը վերականգնելու և ընդլայնելու պայքարը: Հիմնականում պայքարում էին եկեղեցիներից վտարված քահանաներին վերադարձնելու կամ մորերին ձեռնադրելու ուղղությամբ:

Արցախահայությունը հավատում և վստահում էր եկեղեցուն, որին ապավինել էր դարեր շարունակ: Այդ են ապացուցում 1921-1922 թվականներին Մայր Աթոռ ուղարկված համախոսականները: Խաչենի գավառի Ղշլաղի և Սեյդիչենի հասարակությունների անունից 168 հոգու ստորագրությամբ ուղարկված համախոսականում խնդրվում էր իրենց ընտրած ընծայացու ուսուցիչ Միքայել Տեր-Անդրեաս Սարունյանին ձեռնադրել քահանա<sup>10</sup>: Նման խնդրագրեր ուղարկվել էին նաև Դիզակի Հադդութ, Խաչենի Դաշբուլաղ, Պտրեցիք, Ջիվանչիրի Գանձասար, Հոռաթաղ, Դրմբոն, Չափար, Վարանդայի Ղզղալու, Սոս, Գյունե ճարտար, Ներքին Թադավարդ, Սարուշեն և այլ գյուղերից:

Արխիվային նյութերում փաստեր կան այն մասին, որ տեղական

<sup>7</sup> Նույնը, էջ 585:

<sup>8</sup> Նույնը, էջ 586:

<sup>9</sup> Նույնը, հ.3, Ե., 1987, էջ 147-151:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 340, թ. 12:

խորհրդային իշխանություններն իրենք էին հովանավորում եկեղեցու դեմ «հանդես եկող» հոգևորականներին: Օրինակ՝ նրանք Անանիա արքեպիսկոպոսին և Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակներում պաշտպանում էին Ամարասի վանքի վանահայր Սուրեն վարդապետի հակաեկեղեցական ելույթները: Անանիա եպիսկոպոսը, դատապարտելով Սուրեն վարդապետին, նրան զրկել էր վանահայրությունից, ինչպես և թեմական պաշտոններից: Մինչդեռ հասարակության մի շարք համայնքներ (Ավետարանոց, Սոս, Սխտորաշեն, Սարուշեն) փորձում էին պաշտպանել Սուրեն վարդապետին<sup>11</sup>, որին աջակցում էին տեղական իշխանությունները:

Արցախ-Ղարաբաղի թեմում կատարվում էին նաև այլ բնույթի քայլեր, որոնք պարզ են դառնում քահանա Ադամյանի և Անանիա արքեպիսկոպոսի նամակագրությունից: Արցախի թեմի հոգևոր խորհրդի անդամ, Վարարակն ավանի նախկին ծխատեր Ջավեն քահանա Ադամյանը 1923 թ. օգոստոսի 19-ին Անանիա արքեպիսկոպոսին հաղորդել է, որ Վարարակի Ս. Գևորգ եկեղեցին և նրա ունեցվածքը բռնագրավվել է խորհրդային կառավարության կողմից, իսկ քահանայի սենյակը դարձրել են արհեստանոց, եկեղեցին էլ՝ պահեստատեղի<sup>12</sup>: Դրանից վորդովված՝ թեմի առաջնորդը 1924 թ. մարտի 12-ին բողոքի նամակ է ուղարկում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի գործադիր կոմիտե, որում Ղարաբաղի իշխանություններին հիշեցնում է, որ եկեղեցին թողնվել է «ժողովրդի ազատ կամքին և խղճին»: Սակայն «նորաբողբոջ ինքնավար Ղարաբաղի զանազան գյուղերում» ժողովրդի նվիրած տուրքերի «զանձումը խիստ արգելքների է հանդիպում մի քանի անմարդասեր իսպալկույնների շնորհիվ և մինչև անգամ բռնանում են, ժողովրդի զգացմունքներն ավելի վիրավորում, եկեղեցին ժողովրդատեղի և թատերգության բեմ դարձնում, նրա սեփականությունը բռնագրավում»:

Անանիա արքեպիսկոպոսն օրինակ է բերում, որ Դերիեր գյուղում ժողով գումարելով՝ Մարկոս Ադամյանն իր համախոհների հետ որոշել է եկեղեցին դարձնել թատերական բեմ: Մի կողմ են նետել սրբազան մատյանները և ծխական առարկաները, իսկ Մուշկապատում բռնագրավել են եկեղեցուն պատկանող շինանյութը: Շատ գյուղերում եկեղեցիները դարձրել են ժողովատեղի: Անշուշտ, այդ ամենից «քահանաները վիրավորված են և վշտացած հեռանում են»: Բացի այդ, տուրքերը զանձվում էին չափից շատ: Արցախի թեմի առաջնորդը «ի նկատի ունենալով այդ տարօրինակ երևույթները և քրիստոնեական

<sup>11</sup> Նույնը, գ. 522, թ. 3:

<sup>12</sup> Նույնը, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 2:

եկեղեցու ծաղրելը» և, քանի որ «նորա առաջն առնելն» իր ուժերից վեր էր, ուստի ստիպված էր «հեռանալ» իր պաշտոնից: Նա բողոքում էր Ստեփանակերտի խորհրդի նախագահ Հարություն Շաղունցից, որը «հատուկ անմարդասեր բնավորություն ցույց տվեց և արգելք հանդիսացավ» հավատացյալների գործունեությանը: Թեմի առաջնորդը խնդրում է կարգադրել «վերոգրյալ երևույթներին վերջ տալ» և հնարավորություն տալ 78-ամյա ծերունուն հեռանալ Արցախից<sup>13</sup>:

Ձավեն քահանա Ադամյանի՝ Անանիա արքեպիսկոպոսին ուղարկված վերոհիշյալ նամակից նաև իմանում ենք, որ ինքը, արքեպիսկոպոսի հանձնարարությամբ, շրջելով Վարանդայի Ա մասի գործակալության բոլոր գյուղերը, տեսել է բարեպաշտությունից հիասթափված ժողովրդին, իսկ ծխական քահանաները զանգատվում էին, որ «իրենց բարոյապես ընկճելուց զատ, տնտեսապես գտնվում են չքավոր վիճակում: Ամեն գյուղում, առանց բացառության, քահանան հայտնում էր, որ ուզում է հրաժարվել քահանայագործությունից, պարապել այլ գործերով, որպեսզի կարելի լինի գոյությունը մի կերպ քարշ տալ»: Պաշտոնից հրաժարվող որոշ քահանաներ, տեղական իշխանությունների պահանջով, հաճախ ներկայացնում էին անբարո հրաժարականներ: Շեխեր գյուղի քահանա Տ. Խաչատրյանը Վարանդայի շրջանի լուսավորչական բաժնին գրել է. «Խորհրդային կարգերը Ղարաբաղ մտնելուց, ես միանգամայն համոզված եմ, որ հոգևորականությունը սկզբից մինչև մեր օրերը եղել է ժողովրդին խաբող մի դասակարգ՝ շահագործելով զանազան աստվածների ու սրբերի անվան տակ»<sup>14</sup>:

Արցախի թեմի առաջնորդը, 1924 թ. մայիսի 1-ին նոր նամակով դիմելով Պերագույն Հոգևոր Խորհրդին, հաղորդում է, որ բացի Ստեփանակերտում տեղի ունեցածից, «երից մանկաց վանքի տանիքի համար պատրաստված թախտափուշի տախտակներն 1900 կտոր, բռնագորավել են տեղական խուզարկուները», իսկ «Դիզակի գավառի Ջրակուս գյուղի եկեղեցու տանիքի երկաթյա թիթեղները, որ սաստիկ քանուց քայքայվել էր», նույնպես բռնագորավել են<sup>15</sup>:

Այս և համանման մյուս բոլոր գործողություններին մասին չնայած նոր բողոք ուղարկվեց մարզխորհուրդ, սակայն այն մնաց անհետևանք:

Արցախի թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, որը բնավորությամբ թույլ էր, սակայն իր ամբողջ կյանքը նվիրել էր Հայ

<sup>13</sup> Նույնը, թ. 34:

<sup>14</sup> Նույնը, թ. 2:

<sup>15</sup> Նույնը, թ. 1:

առաքելական եկեղեցուն ծառայելուն, այլևս չկարողանալով հանդուրժել Արցախում տեղի ունեցող անօրինությունները և «ի նկատի ունենալով ժամանակիս ծանր ու անտանելի անցուդարձն»՝ հաստատվեցում է հրաժարվել «այդպիսի պատասխանատու ծանր պաշտոն վարել»<sup>16</sup>: 1924 թ. հունիսի 3-ի Գևորգ Ե կաթողիկոսի հրամանով նա ազատվում է Արցախի թեմի առաջնորդի պաշտոնից և վերադառնում է Զմիածին<sup>17</sup>:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Մայր Աթոռի միաբան Վրթանես վարդապետ Հակոբյանը (1875-1943) 1925 թ. փետրվարի 26-ին կարգվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ և Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր<sup>18</sup>: Թեմի նստավայր է ճանաչվում պատմական Գանձասարի վանքը, ուր թեմակալ առաջնորդը հասավ ապրիլի 7-ին, մի այնպիսի ժամանակ, երբ թեմում «ոչ միայն որևէ հոգևոր ներկայացուցչություն գոյություն չուներ, այլև ամբողջ շրջաններ, քահանայք և ժողովուրդ դադարել էին եկեղեցական ծես և արարողություն կատարելուց, նույնիսկ հայի համար ամենամուկրակալ տոներին՝ Ծննդեան և Ջատկին»<sup>19</sup>:

Վրթանես վարդապետը, ժամանելով Արցախ, «Շնորհիւ իւր եկեղեցական, քարոզչական, վարչական ունակութեան և անդուլ աշխատանքի», կարողացավ թեմում վերականգնել աստվածապաշտական կարգը: Նա, շրջելով և քարոզելով բոլոր գյուղերում, նշանակեց թեմական խորհուրդ, գործակալներ, հոգաբարձուներ: Եվ այդ ամենի շնորհիվ թեմի հոգևոր գործերը մտան իրենց բնականոն հունի մեջ: Թեմի առաջնորդը «եպիսկոպոսական իրեն արժանի պաշտոնը վարելով, վայելում» էր բոլոր հավատացյալների սերն ու հարգանքը: Ելնելով այդ ամենից՝ Արցախի թեմի խորհուրդը խնդրում է Սրբազանակատար Սուրբ Հայրապետին թեմի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վրթանես ծ. վարդապետին շնորհել եպիսկոպոսի աստիճան՝ «ի հնարաւորութիւն թեմիս ավելի քան հարիւր ամհովիւ գիւղերին քահանաներ ձեռնադրելու և ի վարձատրութիւն ու ի խրախոյս իւր առաջնորդական և եկեղեցական գործունէութեան յօգուտ ընդարձակ թեմիս հաւատացեալ ժողովրդին»<sup>20</sup>: Գևորգ Ե կաթողիկոսը արցախցիների խնդրանքը կատարեց և 1928 թվականին Վրթանես ծ. վարդապետին ձեռնադրեց եպիսկոպոս:

Վրթանես ծ. վարդապետը, գալով Արցախ, իր առաջնահերթ պարտքը

<sup>16</sup> Նույնը, թ. 8:

<sup>17</sup> Նույնը, թ. 7:

<sup>18</sup> Նույնը, գ. 2722, թ. 11:

<sup>19</sup> Նույնը, թ. 1:

<sup>20</sup> Նույնը, թ. 1-2:

համարեց այցելել Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական նախագահ Արմենակ Ղարաբյոքյանին: Ստեփանակերտում նրան ընդունում են հարգանքով և խոստանում օգնել՝ կարգավորելու թեմի գործերը: Եկեղեցու նկատմամբ արցախցիների ունեցած վերաբերմունքի մասին մանրամասն նկարագրված է 1925 թ. թեմի առաջնորդի՝ Վեհափառին ուղարկված ընդարձակ զեկուցագրում, որտեղ ասված է, որ երկրամասի տնտեսությունը քայքայված է, բերքը չափազանց ցածր, եղածին էլ մեծ վնաս են հասցրել դաշտամկները: «Երկու տարի է, ինչ եկեղեցու զանգի ձայն ոչ մի տեղ չի լսուել... Ս. Պատարագ չի մատուցուել, մկրտութիւն ու պսակ եկեղեցու ծեսով չի կատարուել...»: Եվ չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, «Ժողովրդի մեջ վառ է կրօնական զգացմունքը...»:

Այդ զեկուցագրից մաս իմանում ենք, որ անցած երկու տարիների ընթացքում իրենց կարգը թողել էին Նորաշենի, Մաշիդիշենի, Հացիի, Կաղարծիի, Հաղորտիի, Ղուզե ճարտարի, Խնուշինակի, Գիշիի, Սարուշենի, Խաչնաչի, Տոնավարգի, Շուշիի, Շեխերի, Ղարաբուլաղի, Հարավի, Քռասնիի, Բալլուջայի, Խանաբաղի, Ծնակահողի, Վաղուհասի, Կուսապատի, Մարտակերտի, Մաղաղսի, Խժաբերդի, Նախիջևանիկի, Ղզղալայի և Տողի քահանաները: Նրանք, «չդիմանալով արտաքին և նյութական ճնշումներին», հայտարարել էին, թե իրենք մինչև օրս խաբել են ժողովրդին: Այդ ժամանակաշրջանում տեղական իշխանությունները բռնագրավել էին Ստեփանակերտի, Սուշկապատի, Սխտորաշենի, Հաղորտի, Խնուշինակի, Նեգիի, Կուսապատի և այլ գյուղերի եկեղեցիները, ինչպես և Ամարասի, Երից մանկանց վանքերի և Ավետարանոցի եկեղեցու սրբություններն ու հնությունները, այդ այն դեպքում, երբ կուսակցության Անդրկովկասի երկրային կոմիտեի նախագահությունը առաջարկել էր Ադրբեջանի ժողովուրդին անհապաղ դեկրետ հրապարակել ԼՂՀՄ-ում «հավատի և եկեղեցու» նկատմամբ բոլոր տեսակի ճնշումներն «արգելելու մասին» և «բացել բոլոր փակված եկեղեցիները»<sup>21</sup>:

Ղարաբաղի թեմի առաջնորդը բազմիցս խնդրել էր ԼՂՀՄ իշխանություններին՝ վերադարձնել բռնագրավված եկեղեցիներն ու նրանց գույքը: Նա Լեռնային Ղարաբաղ գալուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, մի շարք քահանաների վերադարձրել էր եկեղեցի, ստեղծել էր թեմական հոգևոր ատյան, 13 գործակալություն, հաշվառվել էր բոլոր վանքերի գույքը, բազմաթիվ անքահանա գյուղերում մատուցվել էին Սուրբ պատարագներ, շրջել էր Խաչենի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գյուղերը և ժողովրդին կազմակերպել «եկեղեցու շուրջը»:

<sup>21</sup>К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918-1925. Документы и материалы, Баку, 1989, с. 313.

Բացի այդ, նախատեսել և հրավիրել էր թեմական պատգամավորական ժողով<sup>22</sup>:

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդն Արցախի թեմի առաջնորդին հանձնարարում է «աշխատել ամեն կերպ փակուած եկեղեցիները վերաբանալ և թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել և յորդորել հոգեշունչ քարոզներով, ու կապուել եկեղեցու ու նրա անբաժան նախնաւանդ ծեսերի ու սովորութիւնների հետ»<sup>23</sup>:

Թեմից հեռացած տասնյակ քահանաներ մեղայական նամակներով և հայտարարություններով դիմում էին Վրթանես Ծ. վարդապետին և խնդրում ընդունել իրենց մեղայականները և քահանայական կարգը վերականգնելու համար անել համապատասխան կարգադրություններ: 1925-1927 թվականներին նման խնդրագրերով դիմել էին Սյուրիշենի, Ավդուռի, Շուշիի, Ղզղալայի, Սարուշենի, Խաչմաչի, Սխտորաշենի, Կարմիր գյուղի (Տոնավարգ) և Ղավախանի գյուղերից նախկին քահանաները:

Վրթանես Ծ. վարդապետը 1925 թ. դեկտեմբերի 1-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած հայտարարությամբ խնդրում էր թույլատրել ընդունելու այդ քահանաների մեղայականները և նրանց վերադարձնել քահանայագործության: Քահանայությունից հեռացած քահանաները հեռանալու հիմնական պատճառը համարում էին իրենց նյութական ծանր վիճակը և տեղական իշխանությունների ու կազմակերպությունների ճնշումը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1925 թ. սեպտեմբերի 19-ին Վրթանես Ծ. վարդապետին տեղյակ է պահում «կարգալոյծ չեղած քահանաների մեղայականները ընդունել և նրանց թույլ տալ քահանայագործելու»<sup>24</sup>:

Արցախի թեմի առաջնորդի համար աշխատելը խիստ դժվար էր: Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ փակվում էին քրիստոնեական եկեղեցիները, և դուրս էին վտարվում հոգևորականները: Դրան, անտարակույս, ակտիվորեն նպաստում էր Արմենակ Ղարաբյոզյանն իր ադրբեջանամետ քաղաքականությամբ: Նրա և ներքին գործերի նախարարի հասցեով ուղարկած՝ թեմի առաջնորդի բազմաթիվ բողոք-նամակները շարունակվում էին մնալ անպատասխան և անհետևանք: Արցախում, որտեղ 1914 թվականին գործում էին մի քանի հարյուր եկեղեցի և 198 հոգևորական<sup>25</sup>, 1920-ական թվականների կեսերին հազիվ գործում էին մի քանի տասնյակ

<sup>22</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2722, թ. 3-5:

<sup>23</sup> Նույնը, թ. 6:

<sup>24</sup> Նույնը, թ. 29:

<sup>25</sup> «Արարատ», 1914, էջ 637:

եկեղեցիներ, իսկ մյուսները բռնագրավվել էին տեղական իշխանությունների կողմից<sup>26</sup>: Դա այն դեպքում, երբ Ադրբեջանում ազատ և անարգել գործել են մուսուլմանական մեջիդներն ու մզկիթները: Խորհրդային իշխանության տարիներին այնտեղ մուլաները զանգվածային բռնաճնշումների չեն ենթարկվել և ոչ մի մեջիդ չի փակվել:

Խորհրդային պայմաններում մահանում էին հայոց եկեղեցու նվիրյալներ թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս: 1927 թ. դեկտեմբերի 1-ին մահացավ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը, որը սրտացավ մոտեցում ուներ և բավականին օգնել էր Արցախի թեմին: Նրա մահվան առթիվ իր կասկածներն արտահայտեց Արցախի թեմի առաջնորդը: Նա Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած նամակում գրել է. «Գյուտ եպիսկոպոսի մահվան բոթը ցնցող տպավորություն թողեց ինձ վրա, այրեց և մրրկեց իմ ամբողջ էությունը և դեռ երկար տարիներ այս կսկիծի մուխը չպիտի մարի իմ սրտում և մղկտացող սիրտս միշտ պիտի հոսի աչքերիցս նրմուռի արցունքներ»<sup>27</sup>:

1927 թ. փակվեց Վրաստանի հայոց հոգևոր թեմը, և առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը հետ կանչվեց Էջմիածին: Հայ եկեղեցու դեմ ավելի կոպիտ արարքներ էին տեղի ունենում Ադրբեջանում: Արցախում եպիսկոպոսները ճնշվում էին պետական հարկերի տակ, ենթարկվում ծաղր ու ծանակի: Այդ սարսափելի հարկերից ազատվելու համար շատերն օգնություն էին խնդրում թեմի առաջնորդից կամ Մայր Աթոռից: Դաշբուլաղ գյուղի ծխատեր Սարգիս քահանա Քոչարյանը 1926թ. օգոստոսի 9-ին Վրթանես վարդապետին տեղյակ է պահել քահանայությունից իր հրաժարվելու որոշման մասին: Նա իր այդ քայլը բացատրում է հետևյալով. «Ղարաբաղի գյուղացիությունը ներկայումս ապրում է խեղճ ու չքավոր դրության մեջ: Այսպիսի պայմաններում քահանայությունից ոչ մի օգուտ չկա, նույնիսկ քահանաները ապրուստի միջոց չունեն, նրանք զրկված են բոլոր միջոցներից»<sup>28</sup>:

Արցախի թեմի անմխիթար վիճակի ողջ պատասխանատվությունն ընկնում էր խորհրդային իշխանությունների վրա: Բերենք այսպիսի մի օրինակ. որոշվել էր 1925 թ. սեպտեմբերի 5-ին հրավիրել թեմական պատգամավորական ընդհանուր ժողով, որտեղ ընտրվելու էին թեմական մարմիններ և թեմի հոգևոր իշխանությունը պահպանելու համար գտնելին եկամուտների աղբյուրներ: Սակայն խորհրդային

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 616, թ. 1:

<sup>27</sup> Նույնը, գ. 919, թ. 6:

<sup>28</sup> Նույնը, գ. 2727, թ. 12:

տեղական իշխանություններն արգելեցին և թույլ չտվեցին հրավիրել նախատեսված ժողովը, ժողովականներին «մէկիկ-մէկիկ հարց ու քննութեան ենթարկեցին»՝ իբրև իրենց հետ նախօրոք չպայմանավորվելու պատճառով<sup>29</sup>:

Տեղական իշխանությունների ճնշման հետևանքով շատ հավատացյալներ վախենում էին գնալ եկեղեցի և նվիրատվություններ անել: Ժողովուրդը հեռացել էր եկեղեցուց, իսկ «շատերի մէջ այն համոզմունքն էր կազմուել, որ այլևս հոգևոր իշխանութիւն գոյութիւն չունի, հոգևոր խորհուրդները դադարած են գրեթէ ամեն տեղ, ոչ մի հոգևոր պաշտոնեայ չի վարձատրուել և 34 քահանայ հեռացել են, որովհետև միջոցներ չեն ունեցել<sup>30</sup>»:

Զնայած Գերագույն Հոգևոր Խորհուրդը նույնպես նյութական ծանր պայմաններում էր, սակայն ֆինանսական օգնություն էր կարողանում ցույց տալ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Ծ. վարդապետին՝ որոշ հարցեր լուծելու համար: Մայր Աթոռն այդ զոհաբերություններն անում էր «ի սէր դէպի ժողովրդի կրօնական-բորայական կեանքի բարգաւաճման»<sup>31</sup>:

Եկեղեցիները բռնագրավելուց բացի, պարբերաբար ավելացնում էր քահանայավարձը և քահանաներին զրկում հողաբաժիններից ու ապրելու միջոցներից<sup>32</sup>: Վերոհիշյալ Դաշբուլաղի ծխատեր Սարգիս քահանան, թեմի առաջնորդին ներկայացնելով նոր հրաժարական, իր քայլն այսպես է բացատրում. «Սեփականութիւնից զուրկ են, հող, այգի չունեն, հինգ շնչից բաղկացած ընտանիքս հաց է ուզում, պետութիւնն էլ՝ քահանայագործութեան համար վարձ չի տալիս: Ինչ անեն, ինչով կերակրեն ընտանիքս, երբ քահանայագործութիւնից ոչ մի արդիւնք չունին, քահանայական պաշտօնս էլ արգելք է հանդիսանում ինձ որևէ գործի մտնել և աշխատել: Այժմ էլ ճար չունիմ. դորայ համար էլ, սորանով խնդրում են ինձ հայ հաւատի, ծեսի համաձայն հրաժարւած համարէք քահանայութիւնից...»<sup>33</sup>:

Տեղական իշխանությունները և կազմակերպությունները Արցախի թեմի հոգևորականներին դուրս էին մղում եկեղեցուց, այլև երկրամասի քահանաներից շատերը ստիպված տեղափոխվում էին Բաքու, Միջին Ասիա, Ռուսաստան, Հայաստան և Վրաստան: 1926 թ. հուլիսի 30-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գյուտ Եպիսկոպոսի ստորագրությամբ Խորհրդային Ղարաբաղի ժողկոմխորհի նախագահ

<sup>29</sup> Երևան, գ. 2722, թ. 13:

<sup>30</sup> Երևան:

<sup>31</sup> Երևան, գ. 2725, թ. 3:

<sup>32</sup> Երևան, գ. 2722, թ. 32:

<sup>33</sup> Երևան, գ. 2727, թ. 12:

Արմենակ Ղարազյոզյանին ուղարկված նամակում շարադրված է Արցախի գյուղերում կուսակցական գործիչների և տեղական իշխանությունների հակակեղեցական տգեղ ու պատիվ չբերող պահվածքը, և խնդրվում է դրա դեմն առնել: Այդ փաստաթղթում նշված է, որ Արցախում գյուղական եկեղեցիները «փակելուց, թատրոնի և ակումբի վերածելուց և այդպիսով գիւղական հաւատացեալ համայնքները կրօնական մխիթարութիւնից զրկելուց յետոյ, գիւղական իշխանութեան ներկայացուցները և կուսակցական անփորձ գործիչները թոյլ են տալիս իրենց գիւղերում վերին աստիճանի տգեղ ու վրդովեցուցիչ ձևերով և անվայել արտահայտութիւններով վիրաւորել գիւղացի հաւատացեալների կրօնական սրբութիւններն ու զգացումները»:

Գյուտ եպիսկոպոսը հույս ուներ, որ ԼՂ ղեկավարությունը կդադարեցնի համակեղեցական այդ վայրագությունները, նրանց «կամայական վարմունքն ու հակաօրինական ճնշումները, որոնք իսկապես իրենց այդպիսի վարմունքով... վարկաբեկում են խորհրդային իշխանութեանը գիւղական հաւատացեալ համայնքների աչքում»: Գյուտ եպիսկոպոսը խնդրում է «Ա. վերաբանալ տալ փակուած եկեղեցիները և յանձնել հաւատացեալ համայնքներին, Բ. պատասխանութեան ենթարկել... հանցաւորներին և Գ. յստակ կարգադրութիւն անել, որպիսզի հաւատացեալներին և քահանաներին այլևս կրօնական վիրաւորանքներ չհասցնեն գիւղական վարչական ամձները»<sup>34</sup>: Ինչ խոսք, Գերագույն Հոգևոր Խորհրդի գրած այդ բողոք-նամակը մնաց «ձայն բարբառոյ», և ոչինչ չփոխեց եկեղեցու նկատմամբ իշխանությունների ունեցած վերաբերմունքում:

Արցախի թեմի առաջնորդը մտածում էր թեմն ապահովել նյութական միջոցներով, առանց որի հնարավոր չէր հետագա գոյությունը: Նրա խնդրանքով, առաջնորդարան գալով խորհրդային իշխանության մի խումբ ներկայացուցիչներ, 1926 թ. դեկտեմբերի 21-ին որոշում են Գանձասարի վանքի չորս կողմի վարելահողերը (երեք մեծ, երեք փոքր) հանձնել թեմին<sup>35</sup>:

Տեղական իշխանությունների այդ քայլը հույս էր ներշնչում, ինչպես ասում են, սայլ տեղից շարժել: Այդ հողամասերը ցանելու համար Գերագույն Հոգևոր Խորհուրդը ֆինանսական օգնություն է ցույց տալիս Ղարաբաղի թեմին:

Տեղական իշխանությունների կողմից կարգ էր սահմանվել, որ թեմի առաջնորդն իր բոլոր կատարածների և հետագա անելիքների մասին

<sup>34</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 860-861:

<sup>35</sup> ՀԱԱ, ֆ. 409, գ. 1, գ. 2728, ք. 1:

պետք է մանրամասն զեկուցեր մարզային իշխանություններին և ստանար նրանց հավանությունը: Վրթանես վարդապետը, 1927 թ. մարտի 16-ին ԼՂՀՍ ներքին գործերի նախարարին ուղարկած զեկուցագրում պատմելով այդ տարվա մի քանի ամիսներին իր կատարած աշխատանքների և հետագա անելիքների մասին, շեշտում է, որ առաջիկայում իր քարոզները լինելու են «գուտ կրօնական բովանդակութեամբ, կատարել պաշտօնների փոփոխութիւններ, ծանօթանալ եկեղեցիների կարիքների հետ, պատմական, գեղարվեստական արժեք ներկայացնող վանքների մասին մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարել»: Նաև տեղեկացնում է, որ «թեմի եկեղեցական-կրօնական այլևայլ գործեր՝ գործակալական, քահանայական-թեմական ժողով կամ խորհրդակցութիւն չեն լինելու առանց պատշաճ իշխանութեան կանխօրոք թույլտուութեան, որին պիտի ներկայացուի և օրակարգի խնդիրները»:

Արցախի իշխանություններին թեմակալ առաջնորդը հիշեցնում է, որ «բանւորագիւղացիական կառավարութիւնը եկեղեցուն և հաւատացեալներին տւել է ազատ գործելու լուրջ իրաւունք և հնարավորութիւններ», սակայն Լեռնային Ղարաբաղում դրանից օգտվում էին միայն համեստ չափով: Թեմի առաջնորդը կոմիսարին նաև տեղյակ է պահում, որ ներկայացրած «կետերից որևէ մեկը եթէ չպիտի» կատարվի իրեն անհայտ պատճառով, ապա խնդրում է այդ մասին իրեն տեղյակ պահել<sup>36</sup>:

Ինչպես երևում է այդ զեկուցագրից, եկեղեցու գործերով ու հոգսերով ապրող թեմակալը լիովին շղթայված էր, ինքնուրույն գործելուց զրկված: Եվ չնայած դրան՝ Վրթանես Ծ. վարդապետը իր եռանդուն և նվիրված աշխատանքով կարողացավ կենդանություն հաղորդել Արցախի եկեղեցուն, կարգավորել թեմի հոգևոր գործերը և նույնիսկ առաջ մղել օժանդակ տնտեսություն ստեղծելու գործը<sup>37</sup>: Նա աշխատում էր չափազանց համբերատար, հանդիպումներ էր ունենում գյուղական, շրջանային և մարզային իշխանությունների ներկայացուցիչների հետ ու փորձում թեթևացնել նրանց վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ:

Սուս գյուղն ուներ դպրոցական հարմարավետ շենք, թատերական դահլիճ, խրճիթ-ընթերցարան, բայց Լեռնի մահվան տարեդարձի օրը տեղի իշխանությունը գրավում է եկեղեցին և այնտեղ ներկայացում կազմակերպում: Այդպես են վարվում նաև Ջրաբերդի շրջանի Ղազանչի, Դիզակի շրջանի Տող, Խաչենի շրջանի Դահրավ, Նորագյուղ և մարզի

<sup>36</sup> Նույնը, գ. 2723, թ. 9:

<sup>37</sup> Նույնը, գ. 2735, թ. 1:

այլ գյուղերում: Թաղավարդ գյուղի քահանա Ներես Շահրամանյանը 1927 թ. հունիսի 27-ին Պետրոս Ե կաթողիկոսին ուղարկած խնդրագրում ասում է, որ չորս շնչից բաղկացած ընտանիքը դժվարությամբ է կարողանում կառավարել: Ապա և պետական ու քահանայական հարկերն ուժեղացնելու վեր են, բոլոր եկամտի աղբյուրները կտրված են: Քահանային ամենից առաջ շփոթեցրել էր «տնտեսական անձուկ դրութիւնը», որի պատճառով էլ չէր կարողանում մտածել «հոգևոր պարտականութիւնների մասին», ուստի խնդրում էր ազատել զբաղեցրած պաշտոնից<sup>38</sup>:

Կան բազմաթիվ փաստեր, որ տեղական իշխանություններն աշխատանքով կաշառում էին որոշ քահանաների և նրանցից պահանջում հանդես գալ եկեղեցու դեմ ու հրապարակայնորեն հրաժարվել քահանայությունից: Թեմի առաջնորդը ջանում էր նման քահանաներին հետ պահել այդպիսի արարքներից և բարձր պահել եկեղեցու հեղինակությունը: Նա, լավ իմանալով Մայր Աթոռի անձուկ վիճակը, Գերագույն Յոզևոսի տնօրինի խնդրում էր թե՛ Ներսես քահանա Շահրամանյանցին և թե՛ նման 5-6 քահանաների նյութական օգնություն ցույց տալ «գէթ պետական տուրքերը հոգալու համար»: Գերագույն Յոզևոսի տնօրինի ստիպված էր դիմել Բաբվի հայոց եկեղեցու առաջնորդ Գեր. Տ. Մատթեոս արքեպիսկոպոսին՝ բաբվաբնակ թաղավարդիցիների մեջ հանգանակություն անել հօգուտ Ներսես քահանայի, քանի որ նրան այլ տեղ տեղափոխելը հնարավոր չէր, և ոչ էլ Մայր Աթոռը կարող էր նրան օգնել<sup>39</sup>:

Արցախի թեմի վիճակն ավելի ծանր էր 1929-1930 թվականներին, հատկապես կոլտնտեսային շարժման տարիներին: Այդ ժամանակ մնացած եկեղեցիների գրավումը և դրանք կոլտնտեսությունների կարիքներին ծառայեցնելը, մասավանդ պահեստներ և շտեմարաններ դարձնելը, համարում էին խիստ անհրաժեշտ: Թե՛ թեմի առաջնորդը և թե՛ հոգևորականները համառորեն պայքարում էին այդ երևույթի դեմ: Այդ նպատակով 1929 թ. հունվարի 20-ից մինչև 1930 թ. փետրվարի 7-ը թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը գտնվել է Ստեփանակերտում և հանդիպումներ ունեցել մի շարք պաշտոնյաների հետ: Նա Գանձասար վերադարձավ հուսահատված, որովհետև հասկացել էր, որ Ադրբեջանի պարագլուխների պահանջով ԼՂՅՄ-ի ղեկավարները բացահայտորեն որոշել էին փակել Արցախի թեմը:

Վրթանես եպիսկոպոսը 1929 թ. փետրվարի 11-ին Էջմիածին ուղարկած զեկուցագրում Գերագույն Յոզևոսի տնօրինի խնդրում է, որ

<sup>38</sup> Նույնը, թ. 11:

<sup>39</sup> Նույնը, թ. 9:

Արցախի 18 վանքերից խնամքով պահվում են միայն Գանձասարը, Երից մանկանց, Ամարաս, Ս. Չակոբ, Ինն մասանց, Ս. Ղևոնդյանց վանքերը, իսկ մնացածը անտեր վիճակում են: Այդ զեկուցագրում նաև ասված է, որ Արցախի 164 գյուղերի 112 եկեղեցիներից 79-ը 1929 թ. փետրվարի 1-ի դրությամբ վերացվել էին: Փակվելու վիճակում էր 27 եկեղեցի: Եվ եթե այդ նույն թվականի սկզբին թեմում գործում էին 91 քահանաներ, ապա մի ամսում քահանայությունից հեռացել էին 62-ը, 22-ն էլ գտնվում էին ծայրաստիճան հուսահատ վիճակում<sup>40</sup>:

Տեղական իշխանությունների կողմից քահանաներին ներկայացված պահանջները նոր ձևեր էին ընդունում և նոր դաժանություն ստանում: Ամենից առաջ պահանջում էին հարկերը մուծել միանգամից: Բողոքելու դեպքում հարկաչափը կրկնապատկվում էր, եռապատկվում, կամ էլ ունեցած սեփականությունը բռնագրավվում էր<sup>41</sup>:

Գործադրվում էին նաև այլ տեսակի բռնություններ: Ջրաբերդի Չաթերք գյուղի 80-ամյա քահանա Սարգիս Մինասյանը 1929 թ. նոյեմբերի 3-ին Վրթանես եպիսկոպոսին ուղարկած աղերսագրում պատմել է հետևյալը. գյուղական խորհրդի նախագահի պահանջով հրաժարվել էր հաղորդություն տալ մահացածների: Նրանից պահանջել էին մուծել 187 ռ. 5 կ. հարկ այն դեպքում, երբ նա հրաժարվել էր հաղորդություն տալուց: Այդ առթիվ նա դիմել էր իշխանություններին: Նրան պատասխանել են, որ հաջորդ տարում կմուծի կրկնապատիկը: Եվ չնայած նա տվել էր հրաժարական և դիմել չքավորական ժողովին, այնուամենայնիվ, նրանից պահանջել են խուզել գլխի մազերը, մորուքը սևացնել, շորերը կարկատել և այդ ճանապարհով ստանալ չքավորի վկայական: Այդ ամենից հետո ալեհեր քահանայից պահանջել են հանդես գալ պատի թերթում և հայտարարել քահանայությունից իր հրաժարվելու մասին: Քահանան կատարում է այդ պահանջը ևս: Իսկ շրջանային խորհրդում էլ պահանջել էին եթե քահանայությունից հրաժարվի, ապա քահանայական հարկից լրիվ կազատվի: «Արցունքը իմ աչքից չի պակասիլ,- իր պատմությունն ավարտում է Սարգիս քահանան,- խնդրում են ձեզ էս ծանր նեղ դրութիւնից փրկէք: Գյուղում ասում են, որ ով ինձ տերտեր ասի, օրհնհիա տեր ասող լինի, նրան տուգանք ենք տալու, իրան ամուռը տվէք, բայց հասարակութիւնը էլի օրհնհիա տեր են ասում»<sup>42</sup>:

Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ, զանազան

<sup>40</sup> Նույնը, գ. 2731, թ. 2:

<sup>41</sup> Նույնը, թ. 23:

<sup>42</sup> Նույնը, գ. 2730, թ. 1:

կեղծիքներ էին հորինվում, և զրպարտվում էին Արցախի թեմի հոգևորականներն ու թեմի առաջնորդը: 1930 թ. փետրվարի 7-ին ձերբակալվում է թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը և երեք տարի տառապում Շուշիի ու Բաքվի բանտերում: Առաջնորդին պաշտպանում են թե՛ Մայր Աթոռը և թե՛ արցախցիները: Իրավապահ մարմիններն ստիպված էին Վրթանես եպիսկոպոսին ճանաչել անմեղ և ազատել բանտից: 1932 թ. փետրվարին նա Բաքվից վերադառնում է Արցախ, շրջում գյուղերը, ապա մեկնում էջմիածին և մանրամասն զեկուցագիր ներկայացնում Գերագույն Հոգևոր Խորհուրդ, որից իմանում ենք, որ 1932 թ. դրությամբ Արցախում արդեն չէր գործում որևէ եկեղեցի, թեմը չուներ ոչ մի քահանա, բռնագրավվել և պետականացվել էր եկեղեցիների ու վանքերի ամբողջ սեփականությունը<sup>43</sup>:

Գևորգ Ե կաթողիկոսի մահից հետո՝ 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովին Արցախի թեմից մասնակցում են համապատասխան թվով պատգամավորներ՝ Վրթանես եպիսկոպոսի գլխավորությամբ: Թեմակալ առաջնորդը ցանկություն է հայտնում վերադառնալ Արցախ՝ իր պարտականությունները շարունակելու համար: Այդ մասին հայտարարությամբ տեղյակ է պահում Գերագույն Հոգևոր Խորհրդին: Սակայն 1933 թ. ապրիլի 7-ին Սրբազանին հաղորդվում է, որ Ադրբեջանի կառավարությունը «ընդհանրապես ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտոնավարությունը Ադրբեջանում»<sup>44</sup>:

Ահա այդպիսի ճակատագիր ունեցավ Արցախի թեմը, որը վերականգնելու համար պահանջվեց ավելի քան 50 տարվա հերոսական պայքար: Այն վերականգնվեց 1989 թ.՝ Վազգեն Ա կաթողիկոսի հրամանագրով: Թեմի առաջնորդ նշանակվեց Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյանը<sup>45</sup>:

<sup>43</sup> Երևան, գ. 2736, թ. 1:

<sup>44</sup> Երևան, գ. 2740, թ. 1:

<sup>45</sup> Պարզև Սրբազանը ծնվել է 1954 թ. Սումգայիթում, սակայն մինչև 6 տարեկանը ապրել է Չարդախլուում: 1966 թ., երբ 10 տարեկան էր, Սումգայիթից նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1971 թ. ավարտել է Երևանի թիվ 132 մաթեմատիկական թեքունով միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Վ. Բրյուսովի անվան ինստիտուտ, որն ավարտել է 1976 թ. գերազանցության դիպլոմով: Որպես ուսուցիչ՝ աշխատել է Արմավիրի շրջանի Եղեգնուտ գյուղում: Հետո զորակոչվել և զինծառայությունն անցկացրել է Գերմանիայում: 1980 թ. ընդունվել է էջմիածնի հոգևոր ճեմարան: Երեք տարի անց ձեռնադրվել է սարկավագ: Ճեմարանը 1984 թ. ավարտելուց հետո ձեռնադրվել է կուսակրոն աբեղա: 1985-1987 թթ. ուսանել է Սանկտ Պետերբուրգի հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում, պաշտպանել ատենախոսություն և ստացել աստվածաբանական թեկնածուի աստիճան: 1987 թ. ձեռնադրվել է վարդապետ, իսկ 1988-ի հոկտեմբերին ծայրագույն վարդապետ: 1988-ի նոյեմբերին ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հոգևոր առաջնորդ: Նրան հոգևորական

Պարզև անունը տվել է Վեհափառ Վազգեն Ա-ն: Աշխարհական անունը Գուրգեն է: Արցախի թեմի, հատկապես նրա առաջնորդ Պարզև սրբազանի դերը զգալիորեն մեծ է Արցախի ազգային-ազատագրական պայքարում տարած պատմական հաղթանակի գործում:

## Մատենագիտություն

### ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

- Ֆ. 57, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ց. 2, 3, 5:
- Ֆ. 56, Էջմիածնի Սուրբ Լուսավորչական սինոդ, ց. 3, 14, 15, 16, 17:
- Ֆ. 409, Էջմիածնի զերբազույն հոգևոր խորհուրդ, ց. 1:
- Ֆ. 4047, Ղաշնակցության գործ, ց. 3
- Ֆ. 4033, Ղարաբաղի ժամանակավոր Ազգային խորհուրդ, ց. 1, 2, 4,5:
- Ֆ. 370, Օզանյան Անդրանիկ Թորոսի, ց. 1:
- Ֆ. 1, Հայաստանի կոմկուսակցական Կենտկոմ, 1, 4, 87, 127:
- Ֆ. 201, ՀՀ ներքին գործերի նախարարություն, ց. 1:
- Ֆ.314, Անձնական ծագում ունեցող վավերագրական նյութերի հավաքածու, ց.1:
- Ֆ. 199, ՀՀ նախարարների խորհուրդ, ց. 1:
- Ֆ. 200, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ց. 2:
- Ֆ. 278, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում:
- Ֆ. 276, Դիվանագիտական միսիան Վրաստանում, ց. 1:
- Ֆ. 223, Բաքվի հայոց ազգային խորհուրդ, ց. 1:
- Ֆ. 221, Իմպերիալիստական պատերազմում հայերի կորուստները որոշող բյուրո, ց. 1:
- Ֆ. 113, Կովկասի փոխարքայի գրասենյակ, ց. 2:
- Ֆ. 150, Տեր-Ղանիելյան Միսակ Գաբրիելի, ց. 1:
- Ֆ. 228, Թիֆլիսի ազգային հայոց կենտրոնական բյուրո:
- Ֆ. 319, Ղաղյան Խաչիկ վարդապետ, ց. 1:
- Ֆ. 252, Ղարաբաղի հայկական ազգային խորհուրդ, ց. 1:
- Ֆ. 323, Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ, ց. 1:
- Ֆ.1022, ՀՀ(Բ)Կ կուսկոմիտեին կից կուսպատմության ինստիտուտի արխիվային նյութեր, Ֆ. 2, 3, 4, 5:
- Ֆ. 93, Երևանի արքունական պալատ, ց. 1:
- Ֆ.198, Պառլամենտ Հայաստանի հանրապետության, ց. 1:

### բ) Մատենադարան

- Արխիվ՝ կաթողիկոսական դիվանի, Ֆ. 1, թուղթ 237, 273<sup>ա</sup>, 238:
- Արխիվ՝ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի, թուղթ 3:
- Արխիվ՝ Այլ և այլ հեղինակների:

### գ) Լրագրեր

- Արշալույս, Թիֆլիս, 1906:
- Արցախական, Երևան, 1991:
- Արև, Բաքու, 1914-1919:

Անկախ մամուլ, Թիֆլիս, 1906-1907:  
 Արօր, Թիֆլիս, 1907:  
 Աշխատանք, Երևան, 1918-1919:  
 Աշխատավոր, Թիֆլիս, 1917-1920:  
 Ապառաժ, Շուշի, 1917:  
 Գավառ, Գորիս, 1909-1910:  
 Գործ, Թիֆլիս, 1908:  
 Երկիր, Թիֆլիս, 1906:  
 Զանգ, Երևան, 1917-1919:  
 Ընկեր, Թիֆլիս, 1906-1907:  
 Ժայռ, Թիֆլիս, 1907-1908:  
 Ժամանակ, Թիֆլիս, 1906-1907:  
 Ժողովուրդ, Թիֆլիս, 1918:  
 Խարիսխ, Թիֆլիս, 1907:  
 Խորհրդային Ղարաբաղ, Ստեփանակերտ, 1923-1933:  
 Կոմունիստ, Բաքու, 1920-1933:  
 Կայծ, Թիֆլիս, 1906:  
 Հոսանք, Թիֆլիս, 1906-1907:  
 Հառաջ, Թիֆլիս, 1919:  
 Հառաջ, Բաքու, 1917:  
 Ղարաբաղ, Շուշի, 1911-1912:  
 Ղարաբաղի սուրհանդակ, Շուշի, 1919:  
 Սշակ, Թիֆլիս, 1901-1921:  
 Նոր խոսք, Թիֆլիս, 1906:  
 Նեցուկ, Շուշի, 1917:  
 Նոր օրեր, Բաքու, 1909:  
 Նոր - Հորիզոն, Թիֆլիս, 1918:  
 Նոր կյանք, Երևան, 1918:  
 Պրոլետարիատի կռիվը, Թիֆլիս, 1905:  
 Պայքար, Թիֆլիս, 1917:  
 Սուրհանդակ, Թիֆլիս, 1909-1912:  
 Սյունիք, Գորիս, 1920:  
 Տեղեկատու, Բաքու, 1918:  
 Փայլակ, Թիֆլիս, 1907:  
 Փայլակ, Շուշի, 1915-1917:  
 Азербайджан, Баку, 1918-1919.  
 Борьба, Тифлис, 1917-1919.  
 Вперед, Баку, 1919.  
 Знамя труда, Баку, 1917-1919.  
 Закавказское слово, Тифлис, 1919.  
 Кавказское слово, Тифлис, 1917-1919.  
 Наше время, Баку, 1918-1920. -----  
 -----  
 -----

## դ) Ամսագրեր և հանդեսներ

Անաստված, Երևան, 1928-1934:

Արարատ, Էջմիածին, 1900-1917:

Գործ, Բաքու, 1917:

Դրոշակ, ժնկ, 1900-1910:

Էջմիածին, Էջմիածին, 2002-2006:

Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1960-1990:

Հայաստանի կոոպերացիա, Երևան, 1919-1920:

Հայրենիք, Բոստոն, 1921-1965:

Մուրճ, Թիֆլիս, 1900-1907:

Безбожник, Москва, 1922-1925.

Революция и национальности, Москва, 1936.

Собеседник, Москва, 1990.

### ե) Ժողովածուներ, հաշվետվություններ, որոշումներ, փաստաթղթեր

Բենիկ վարդապետ, Տեղեկագիր 1900/1901 ուսումնական տարվա: Կարդացած 1901թ. հունիսի 10-ին տարեկան հանդեսի ժամանակ, Թիֆլիս, 1901:

Բենիկ վարդապետ, Տեղեկագիր 1901/1902 ուսումնական ամի: Կարդացել է 1902թ. սեպտեմբերի 19-ին տարեկան հաշվետվության հանդեսին, Թիֆլիս, 1903:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Անցյալը, ներկան և ապագան: Միջազգային գիտաժողով, Երևան, 2006:

Հեղափոխական պայքարի վավերագրեր, Երևան, 1984:

Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813 - 1933թթ.): Կազմեց՝ Սանդրո Բեհրուդեանը, Երևան, 2001:

Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, (1921 - 1938թթ.), Երևան, 1994:

К истории образования Нагорно - Карабахской области Азербайджанской ССР 1918 - 1925, документы и материалы, Баку, 1989.

Кавказский календарь на 1905 год, Тифлис, 1906.

Кавказский календарь на 1907 год, Тифлис, 1908.

Кавказский календарь на 1916 год, Тифлис, 1917.

Отчет по управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорском высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 - 6 декабря 1872гг., Тифлис, 1873.

## գ) Գրականություն

- Աբրահամյան Հրանտ, Արցախյան զոյամարտ, Երևան, 1991:
- Աբրահամյան Հրանտ, Մարտնչող Արցախը, գիրք Ա, Երևան, 2003:
- Աբրահամյան Հրանտ, Մարտնչող Արցախը, գիրք Բ, Երևան, 2005:
- Ավետիսյան Հրանտ, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
- Ակնունի Է., Դեպի կռիվ, ժընև, 1904:
- Ակնունի Է., Բողոքի ձայնը, Պոսթըն, 1911:
- Արամյախ, Սի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից, մասն առաջին, Թիֆլիս, 1907:
- Արամյախ, Ղարաբաղի տագնապը, Երևան, 1993:
- Անանուն Դավիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918), հատոր երրորդ, Վենետիկ, 1926:
- Ա-ՂՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.), Երևան, 1907:
- Գնդունի, Հիշողություններ: Մոտիկ ապագայից: Առաջին պրակ, Թիֆլիս, 1907:
- Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Երևան, 2001:
- Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:
- Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838 - 1913, Թիֆլիզ, 1914:
- Լեօ, Անցյալից, Թիֆլիզ, 1925:
- Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
- Իշխանյան Բ., Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920:
- Իշխանյան Եղիշե, Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Երևան, 1999:
- Հովհաննիսյան Գ.Ա., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:
- Հովհաննիսյան Սիքայել, Կովկասեան վանդեան, Թիֆլիս, 1907:
- Հովհաննիսյան Սիքայել, Գորոյան հանգույցը, Թիֆլիս, 1907:
- Հարությունյան Հ. Ս., Լեռնային Ղարաբաղը 1918-1920թթ., Երևան, 1996:
- Հովհաննիսյան Աշոտ, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969:
- Ղարաքյան Գևորգ (Ս.Ս.Արկունետ), Անցեալի հիշողութիւններից, Թիֆլիս, 1918:
- Մակար Բարխուդարյան, Արցախ, Երևան, 1996:
- Մանուկյան Արմենակ, Քաղաքիական կյանքը Հայաստանում, 1920-1940թթ., Երևան, 2002:
- Մանուկյան Արմենակ, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920 - 1953թթ., Երևան, 1999:
- Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Է հատոր, Լոս Անճելըս, 1952:
- Սարգսյան Ե. Ղ., Թուրքական և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, 1964:
- Սիմոնյան Հրաչիկ, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1 և 2, Երևան, 2003:

ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների  
բանաձևերուն և որոշումներուն, հ.2, Երևան, 1986: -----  
Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:  
Վարանդյան Միքայել, Չ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992:  
Ուլուբաբյան Բագրատ, Արցախի գոյապայքարը, Երևան, 1994:  
Ուլուբաբյան Բագրատ, Արցախի պատմությունը, Երևան, 1994:  
Заварян С., Экономическая условия Карабаха и голод 1906-1907 гг., С.  
Петербург, 1907.  
Шагинян М., Нагорный Карабах, Москва, 1930.  
Ишханян Б., Народности Кавказа, С. Петроград, 1917.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն -----
1. Արցախը XX դարի սկզբին (1901-1904 թթ.) -----
  2. Ազգամիջյան բախումները 1905-1906թթ. և Արցախի թեմի ձեռնարկած քայլերը -----
  3. Արցախը դիմակայում է ստեղծված դժվարություններին (1907թ.) -----
  4. Արցախի և նրա թեմի իրադարձություններից -----
  5. Արցախը և նրա թեմը Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1917 թթ.) -----
  6. Արցախի և նրա թեմի ողբերգական ճակատագիրը (1917-1920 թթ.) -----
  7. Խորհրդային իշխանության կողմից բռնությունների ենթարկված Արցախի թեմի ճակատագիրը (1920-1933 թթ.) -----
- Մատենագիտություն -----

Հրանտ Աբրահամյան

Արցախահայ հասարակական – քաղաքական կյանքը և  
արցախի թեմը  
(1901-1933)

Абрамян Грант

Общественно – политическая жизнь армян Арцаха и арцах-  
ская епархия  
(1901-1933)

HRANT ABRAHAMYAN

SOCIAL-POLITICAL LIFE OF THE ARMENIANS OF ART-  
SAKH AND THE DIOCESE OF ARTSAKH  
(1901-1933)



















